Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

2826

Дашу

цигарки

К-д

1927

9(47)
Т-78

1595 №902

30 JUL 2011

24 JAN 2006

Մ. ՊԱԿՐՈՎՍԿԻ

ՌՈՒՍԱՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾ

ՄԱՍՆ Գ.

ՓՍԱՆԵՐՈՐԴ ԳԱՐ

БИБЛИОТЕКА
ИН-ТА
ИСТОРИИ
Академии Наук
СССР

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՅԵՐՎԱՆ 1927

9(47)
П-78

Ա
Ա 693

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

Մ. ՊԱԿՐՈՎՍԿԻ

(47)
-78

ՌՈՒՍԱՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ,

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ՅԵՎ ԳՈՐԾԱԾՈՂՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ

Նախկին պրոպագրչի անհոգութեան հետևանքով շատ վրիպակներ են մնացել այս գրքի մեջ։ Թարժադրած ծախսը նկատի ունենալով, Հրատարակչութիւնս անհնարին համարեց գոյն գիրքը նորից տպելու, այլ վերջում նշեց գլխաւոր վրիպակները։ Խնդրում է գործածելուց առաջ ուղղել այդպիսիները։

Թարգմանված է յերկրորդ վերամշակված հրատարակությունից

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԵՎԱՆ 1926

ՎԻՍԼՈՎԻՍԿԻ Ա.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՓՈՔՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԵՎԱՆ 1931

693
(47)
-78

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք f

Մ. ՊԱԿՐՈՎՍԿԻ

ՌՈՒՍԱՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾ)

ՄԱՍՆ Գ.

ՔՍԱՆՅԵՐՈՐԴ ԴԱՐ

ՊՐԱԿ I

1896 – 1906 ԹՎԱԿԱՆՆԵՐԸ

Թարգմանված է յերկրորդ վերամշակված հրատարակությունից

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ 1926

ՎԻՍՔՈՊԻՍ Ա.

ՅԱՍԱԺՈՂ
ՔԱԺՈՒՄՔԱԺՈՂՈՎ

ՄՈՍԿՎԱ ՀԱՄԱՀՈՂՄԱՅԻՆ ՄԻՔՄՇԱԿՄԱՆ

ՊՐԻՄԻՄ 1931

08 NOV 2013

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ГОСУДАРСТВЕННАЯ БИБЛИОТЕКА
АРМЯНСКОЙ СОВЕТСКОЙ СОЦИАЛИСТИЧЕСКОЙ РЕСПУБЛИКИ
ՍՍՀՄ–Арм ССР
Ա. ԱՄԱՍՅԱՆԻ ԱՆՎ.
Ш. АМАСИАНА
59912-66

Գրատեսվար № 745 (բ). Պետհր. № 392 Տիրաժ 4000. Պ. 1763
Պետհրատի IV տպարան Լենինգրադում

ԱՌԱՋԱԲԱՆ 2-ՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ

Հեղինակի հույսը՝ գրքույկը վերաժշակել ամբողջովին «Հինգ թվականի» քանանմյակին հասցնելու, վորի պատմությանը, եյապես, գրքույկը նվիրված է, չիրականացավ, մասամբ հենց այդ քանանմյակի հետ կապված աշխատանքի շատության պատճառով։ Դրան ավելացնենք և այն, վոր այդ շրջանին վերաբերող նոր նյութի գլխավոր մասը հենց այժմ հրապարակ է դուրս գալիս այս հրատարակությունը տպագրության հաձար պատրաստելու հետ զուգընթաց, և այդ նյութի միայն աննշան մասը կարող եյի հենց այժմ ոգտագործել։

*Այդ պատճառով ստիպված չեղա սահմանափակվել ամենից ավելի քիչ հետաձգելի ուղղումներով։ Դրանք, մեծ մասամբ, վերաբերում եյին չերեք կետի. նախ՝ արխիվի վավերագրերի ավելի մոտից ուսումնասիրությունը ստիպեցին հեղինակին վերջնականապես հրաժարվել 1904—1905 թվերի ռուս-յապոնական պատերազմի՝ իբրև իմպերիալիստական պատերազմի, հայացքից և այդ պատերազմը ընդունել դեռ Պյոտր I-ից սկսած Ռոմանովների գաղութային քաղաքականության չեզրափակող ողակը։ Սրան կից կորյալ ա-վանտյուրան պատերազմի պատճառ լինելուց դարձավ նրա առիթը։ Յերկրորդ՝ հեղինակին վերջապես հաջողվեց վավերագրերում գտնել բանվորական և գյուղացիական հեղափոխության կապը—միացումը, սրան համապատասխան ուղղել առաջին հրատարակության գյուղացիական շարժման պատկերը, իբրև գյուղական մանր-բուրժուական շարժման։ Այժմ գյուղի թե պրոլետարական յեվ թե կիսապրոլետարական շերտերն իրենց տեղում դրվեցին։ Յերրորդ՝ ինչպես հեղինակին և թվում ավելի պարզ բանաձևումն և տրված 1905 թվի գինված ապստամբության հարցին։ Միայն այդ վերջինի անհաջողության պատճառաբանությանը պետք և ավելացնել մենշեվիկների մասին հետաձգելի ուղղումներով։ Դրանք, մեծ մասամբ, վերաբերում եյին չերեք կետի. նախ՝ արխիվի վավերագրերի ավելի մոտից ուսումնասիրությունը ստիպեցին հեղինակին վերջնականապես հրաժարվել 1904—1905 թվերի ռուս-յապոնական պատերազմի՝ իբրև իմպերիալիստական պատերազմի, հայացքից և այդ պատերազմը ընդունել դեռ Պյոտր I-ից սկսած Ռոմանովների գաղութային քաղաքականության չեզրափակող ողակը։ Սրան կից կորյալ ավանտյուրան պատերազմի պատճառ լինելուց դարձավ նրա առիթը։ Յերկրորդ՝ հեղինակին վերջապես հաջողվեց վավերագրերում գտնել բանվորական և գյուղացիական հեղափոխության կապը—միացումը, սրան համապատասխան ուղղել առաջին հրատարակության գյուղացիական շարժման պատկերը, իբրև գյուղական մանր-բուրժուական շարժման։ Այժմ գյուղի թե պրոլետարական յեվ թե կիսապրոլետարական շերտերն իրենց տեղում դրվեցին։ Յերրորդ՝ ինչպես հեղինակին և թվում ավելի պարզ բանաձևումն և տրված 1905 թվի գինված

ԱՌԱՋԱԲԱՆ 1-ԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ

«Ռուսաց Պատմության համառոտ ուրվագծի» յերրորդ մասը այնպես մեծացավ, որ պետք է բաժանել մի քանի պրակների։ Այժմ հրատարակվող առաջին պրակն ընդգրկում է 19-րդ դարի վերջից մինչև 1906 թվի ամբան շրջանը—այն է՝ առաջին պետական դումայի ցրումը։

Այդ մոմենտը հեղինակին պատկերանում է վորոշ չափով բնական սահման, վոչ իհարկե այն պատճառով, վոր նա դումային վորևե հատուկ նշանակություն է տալիս։ Ամենևին վոչ, ինչպես կըտեսնեն այդ համապատասխան գլուխը կարդացողները։ Բայց առաջին դումայի ցրելուց հետո շուտով պարզ կերպով վերջանում է մասսայական շարժումը, վորի համար է միայն վոր կարելի յե 1905 թվի հեղափոխության մասին խոսել։ Յերկրորդ դուման, իհարկե, առաջինից ավելի հեղափոխական եր տրամադրված, բայց քանի վոր յերկրորդ դուման չեր հենվում մասսայական շարժման վրա, նրա հեղափոխական նշանակալիությունը հակառակ հարաբերական եր նրա տրամադրության հեղափոխականության։ Իսկապես հեղափոխությունը մինչև դումայի նիստերի բացումը 8 ամիս առաջ վերջացել եր։

Իր լույս տեսնող աշխատանքի ահագին պակասությունները հեղինակը գիտակցում է վոչ պակաս, քան յուր ապագա քննադատներից վորևե մեկը։ Իսկապես հենց այժմ, յերբ նոր է սկսվում այդ շրջանին վերաբերող վիթխարի հում նյութի հրատարակությունը, գուցե ամենից ավելի քիչ հարմար է «դումաներ տալը»։ Հակառակ «համառոտ ուրվագծի» առաջին յերկու մասերի, վորոնք առանց փոփոխությունների նորից տպագրվում են (յեթե չհաշվենք նոր վերնագիրները), յերրորդ մասը հավանորեն պետք է յուրաքանչյուր նոր հրատարակության համար վերամշակել։ Բայց յերբևե և վորևե մեկը պետք է սկսեր։ Մարդիկ սկսում են արդեն «սովորել» այն սրբագրական թերթերի հիման վրա, վոր լույս են տեսել 1917 թվին Նիկոլայ Ռոմանովի գահընկեցության առթիվ։ Այս շատ վատ գրքույկ է, ասում եմ առանց վորևե կեղծ համեստության, բայց համենայն դեպս սրբագրության թերթ չե, այլ գիտական դասընթացքի սկզբնավորություն։

Հետևյալ քայլերը՝ ռուսական մեծ հեղափոխության գիտական պատմությունը կազմելու ուղիում իհարկե հնարավոր են միայն խըրճ հավաքական աշխատանք։ Ցնս շատ ուրախ եմ հաստատելու, վոր այդ ուղղությամբ ել իմ գրքույկը «սաղմ է» հանդիսանում։ Մի շարք դեպքերի վերաբերմամբ գրքույկը խմբական աշխատանքի վրա է հիմնված, աշխատանքներ, վորոնք կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտի ռուսաց պատմության սեմինարներինն են։ Մասնավորապես այստեղ ոգտագործված են ընկերներ՝ Գուսևի, Դուբրովսկու, Սլեպկովի և Տոմսինսկու դեկույցները։ Ընթերցողն այդ

կըգտնե ինստուտուտի «Труды»-ի («Աշխատանքներ») առաջին հատորի մեջ, այն հատորի, վորը այնուամենայնիվ յերբևիցե լույս կըտեսնի գուցե և այս գրքույկի լույս տեսնելուց առաջ։

Յերկու խոսք ծրագրի մասին։ Յես միտք չունեյի այդ շրջանի լիակատար նկարագրությունը տալ, վոչ ել ռուսական առաջին հեղափոխության ժամանակագրությունը։ Իմ առաջ դրած խնդիրն եր բացատրել պրոցեսսը իր ամբողջությամբ առած։ Ահա թե ինչու բավական մանրամասնություններ, վորոնք իրենց նշանակալիության պատճառով իրավունք ունեյին մուտքի չարվելու նույնիսկ «համառոտ ուրվագծերում» (բայց կազմված ժամանակագրության ձևով), այստեղ բաց են թողնված։ Պրոցեսսը հասկանալու համար դրանք վոչինչ նոր բան չեյին տալիս։ Այնուամենայնիվ նկատի ունենալով այն, վոր այս գրքույկը մի քանի ընթերցողների համար կարող է նենալով այն, վոր այս գրքույկը մի քանի ընթերցողների համար կարող է միակ աղբյուրը դառնալ տվյալ շրջանը հասկանալու, յես միացնում եմ մի գլուխ ծայրամասերի շարժման մասին ժամանակագրության բնույթով կազմված, նաև 1896—1906 թվերի դեպքերի ժամանակագրությունը, առանց սակայն դրանց հավատ ընծայելու արևմտյան պատմության, ինչպես առաջին յերկու մասերի համար արվել է։ Այստեղ բացի արտաքին քաղաքականության մասից) այդպիսի համագրությունը վոչինչ չեր տա։

Մ. Պ.

25-ն ոգոստոսի 1923 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ռուսաց պատմության վերջին շրջանը, որը ծնացել է մեզ ուսումնասիրելու (1897—1922) ամբողջն էլ վերաբերում է մի մեծ դեպքի՝ Ռուսական մեծ հեղափոխության նախապատրաստության և մերձակա հետևանքներին։ Մենք կրճատ «Հոկտեմբերյան Հեղափոխություն» ենք անվանում այն, նկատի ունենալով նրա շրջման կետը՝ կերենսկու կառավարության տապալումը, որ տեղավ 1917 թվի հոկտեմբերի 25-ին հին տոմարով։ Սակայն ամբողջ նախընթացը պատրաստեց Հոկտեմբերը, իսկ ամբողջ հետագան Հոկտեմբերի նվաճումների պաշտպանություն եր և այդ պաշտպանությունը նույնիսկ այժմ էլ դեռ շատ հեռու է վերջացած լինելուց։ Ցերեկ այդ մենք մոռանայինք, հենց միայն այնպիսի մի դեպք, ինչպիսին ընկեր Վորովսկու սպանությունն է, բավական կըլիներ, որ մեզ հիշեցներ այդ մասին։ Ընկ. Լենինը միշտ էլ այդ պաշտպանությունը նվաճումից ավելի դժվար եր համարում։ «Ցերեկ ռուս միապետությունը չկարողանա դուրս պրծնել,—գրում եր նա 1905 թվի մարտին, յերեկ նա վոչ միայն խախտվի, այլ իսկապես տապալվի, այն ժամանակ, անկասկած, հարկավոր կըլինի բոլոր առաջավոր դասակարգերի հեղափոխական յեռանդի հսկայական լարումն այդ նվաճումը պաշտպանելուն»։ Հենց դրա համար էլ ընկեր Լենինը դեռ 1905 թվին պնդում եր պրոլետարիատի և գյուղացության հեղափոխական դիկտատուրայի վրա, հենց դրա համար էլ այդ դիկտատուրան նրան անհրաժեշտ եր յերևում։ Ցեվ միայն պրոլետարիատի վճռական հաղթանակը Արևմտյան Յեվրոպայում կարող եր այդ դիկտատուրայի վերջ տալու հարցը դնել, կարող եր ռուսական Հոկտեմբերյան հեղափոխության վերջնակետը դնել։

Հակառակ «Համառոտ ուրվագծի» առաջին յերկու մասերի, ուր մենք անդարձ անցյալով եյինք զբաղված, այժմ մենք այսպիսով պետք է բացատրենք ներկան։ Այս ունի իր ոգուտները և վնասները։ Ոգուտն այն է, որ այսպես ավելի քիչ պիտի պատմենք ու բացատրենք դուռ արտաքին փաստերը։ Մանավանդ կարիք չի լինի պատմել Հոկտեմբերյան հեղափոխության մասին, այդ հարկավոր է անել յերեխաների դասագրքերում, իսկ հասակավորների գրքույկում համարձակ կարելի կլինի յենթադրել, որ ամեն ընթերցող ինքն էլ իր աչքերով տեսել է դեպքերը։ Սեղմ, համառոտ պատմությունը նրան վոչինչ չի տա։ Շատերն, ի հարկե, հիշում են նաև 1914—1918 թվերի իմպերիալիստական պատերազմը։ Պրոլետարիատի միապետության հետ 1905 թվին ունեցած առաջին մենամարտության փաստական կողմը դուցե հարկավոր կըլինի հիշեցնել, բայց դրա համար կա այնպիսի լավագույն գիրք, ինչպիսին ընկեր Տրոցկու «1906 թիվը»-ն է։ Այս գրքից հետո պատմել այդ թվի մասին, միևնույն է թե «քու տանել Աթենք», ինչպես հին հունական առածն է ասում*). այսինքն բոլորովին ավելորդ աշխատանք կատարել։

Սակայն բացատրել այդ բոլոր դեպքերն ամենևին էլ ավելորդ գործ չե, նույնիսկ ընկեր Տրոցկու գրքից հետո էլ, վորովհետև նրա վոչ բոլոր բացատրությունների հետ կարելի յե համաձայնվել։ Այստեղ էլ սկսվում են մեր ու ընթերցողի դրության աննպաստավորությունները և դժվարությունները։ Հեշտ է իսպառ ավարտված դեպքը բացատրել, վորի և սկիզբը և վերջը մեր առաջ են դրված. այդ դեպքում ամեն ինչ հասկանալի յե։ Բայց յերբ դեպքի կիսին ես գրում, ապա ակամա ճրա ներս էլ շարժվում ես։ Ցեվ ինչպես լեռներից ցած իջնելիս ճանապարհի յուրաքանչյուր նոր պտույտներից հետո նոր տեսարան է բացվում, այնպես էլ այստեղ, դեպքի նոր, աճող մանրամասնությունները նոր հայեցակետների յեն բերում, վորոնք առաջ մարդու մտքին էլ չեյին գալիս։ Պարզորեն խոստովանում եմ ընթերցողիս. «Ուրվագծի» 3-րդ մասի այս ներածությունը յես մի անգամ գրել եմ, 1920 թվի նոյեմբերին և այժմ այն վոչնչի պետք չե։ Հարկավոր յեղավ բոլորն էլ դուրս ձգել. հետագայում ես կոգտվեմ այդ ժամանակ գրածի մի քանի փաստական նյութերից։ Ցեվ այդ բոլորովին վոչ նրա համար, վոր յես ինքս «փոխեցի դրոշակաձողը» (вехи)։ Այն, ինչ վոր այն ժամանակ յես կարծում եյի, այժմ էլ եմ կարծում, բայց այն, ինչ վոր ինձ այն ժամանակ թվում եր ամենից գլխավորը, այժմ պարզ է, վոր ամենագլխավորը չե։ Պետք է նույն խոսքը, բայց վոչ նույն ձևով արտասանել և ավելացնել նրան շատ նոր խոսքեր, վորոնք այն ժամանակ մտքիս չեյին գալիս կամ թվում եյին ավելորդ։

Ահա թե ինչու հեղափոխությունների պատմությունները, վոր գրել են ականատեսները և մասնակցողները, սովորաբար հիշողությունների արժեք ունեն, կամ հրապարակախոսական գրվածքներ են դառնում, ուր հեղինակը՝ յերբեմն էլ գերեզմանից, ավարտում է քաղաքական հակառակորդների հետ իր վեճերը։ Մենք՝ մարքսիստներս սակայն այս դեպքում ավելի հաջող դրության մեջ ենք, քանի մեր բուրժուական նախորդները. մենք ունենք այն, ինչ վոր նրանք չեն ունեցել. ունինք մեթոդ, ունինք բանալի բացատրելու ամեն տեսակ անցքեր, միևնույն է՝ պատահած լինին սրանք յերեկ թե յերեք հազար տարի առաջ։ Մեր մեջ յեթե վեճը հնարավոր էլ է ապա միայն այդ մեթոդի ուղիղ գործադրելու շուրջը։ Այդպիսի վեճեր հնարավոր են ի հարկե նաև բացատրությունների առթիվ, վորպիսին ընթերցողը կըտեսնի հետագայում այս գրքույկում։ Բայց մեր վեճի գաշտը խիտ զծագրված կըլինի մարքսիստական մեթոդի պահանջներով։ Ցեվ ընթերցողը պիտի հաշտվի մեծ մասամբ այն բանի հետ, վոր չվերջացած անցքին չի կարելի լրիվ—վերջացած նկարագրություն տալ։ Մեր պատմական ճանապարհի նոր պտույտները կարող են հոկտեմբերի նոր կողմերն առաջ քաշել, վորոնց մենք առաջ չեյինք նկատում և սովերի մեջ ձգել այն, ինչ վոր յերեկ ժեզ թվում եր ամենից գլխավորը։

Այդ բոլոր պտույտների ժամանակ, ի հարկե, մի բան չի փոխվի՝ ինչ եր ամենից գլխավորը։

---

*) Բուն Աթենաս ասպվածուհու սրբարան թաչունն եր, Աթենք քաղաքի պաշտպանի, ուստի մի տեսակ աթենական դինանշանի թաչուն եր, ինչպես մեզանում ցարի ժամանակ արծիվը. այդ պատճառով բվի պատկերը Աթենքում ամեն քայլափոխում կարելի յեր տեսնել։

հայեցակետի եւ լինես, Հոկտեմբերը միշտ եւ կըմնա Ռուսական Մեծ Հեղափոխություն։ Այդ ինչ է նշանակում. արդյոք շողոքորթական մի տիտղոս, վորպիսին հնում ցարերին եյին տալիս՝ Պյոտր «մեծ», Յեկատերինա «մեծ»։ Վոչ. այս դեպքում «մեծ» խոսքի մեջ կարելի չե վորոշ միտք դնել։ Հեղափոխությունները վերջանում են կամ հին կարգի տապալումով, կամ նա զիջումներ է անում նրանց, ով նորն է պահանջում. հինը նորին փոխանցիվ վճարելով ազատվում է։ Յերբ մեր բուրժուական հակառակորդները տեսնում եյին իրենց առաջ 1905 թվի հեղափոխությունը, ապագայում եւ տեսնում եյին նրա անխուսափելիությունը. նրանք իրենց աստծուն աղոթում եյին մի քանի համար՝ վոր այդ հեղափոխությունը վերևը նկարագրածներից յերկրորդ տիպինը լինի, և վոչ առաջինը։ Պարզ լինելու համար նրանք նույնիսկ թվեր եյին բերում՝ թող այդ լինի 1848 թիվը, ասում եյին նրանք, և վոչ 1789-ը։ Ահա այդ յերկու թվերը լավ առիթ են տալիս բացատրելու, թե ինչումն է «մեծ» և «վոչ մեծ» հեղափոխությունների տարբերությունը։

Յերբ խոսում են 1848 թվի մասին, սովորաբար նկատի չեն ունենում վոչ թե Ֆրանսիայի բանվորական անհաջող հեղափոխությունը, վոր մեծ մասամբ նման եր մեր 1905 թվին, այլ Պրուսիայի և Ավստրիայի այսպես կոչված «բուրժուական» հեղափոխությունները։ Թե ինչ կընշանակե «բուրժուական» և «վոչ բուրժուական» հեղափոխություն, այս մասին մենք հետագայում կընխոսենք, իսկ այժմ խոսենք «1848 թվի» և 1789 թվի» մասին։ Ավստրիայում և Պրուսիայում 1848 թվին կառավարությունները չտապալվեցին, Ավստրիայում կառավարությունը, միայն փախավ կարճ ժամանակով, հետո շուտով վերադարձավ. Պրուսիայում այդ ել չեղավ։ Այդտեղերում հեղափոխությունները վերջացան նրանով, վոր կառավարությունները ստիպված յեղան սահմանադրություն տալ (Ավստրիայում շուտով այն յետ վերցրին և միայն 20 տարի հետո վերականգնեցին). այսինքն կառավարության մեջ մասնակցության վորոշ բաժին տալ բուրժուազիային և ունևոր ժառավորականության, ընդհանրապես ունևոր դասակարգերին։ Բանվորները և գյուղացիները, վորոնք հենց, ի հարկե, հեղափոխությունն առաջ բերին, պետական գործերի վորոշման մեջ ամենից չնչին մասն ստացան, ավելի թղթի վրա, քան իրականության մեջ։ Այս ել ահա 1905 թվի ուս «լիբերալներին» ամենից ցանկալին եր թվում։

Ընդ վորում հին կարգի «հիմքերը»—միապետություն, դասեր, ազնվականություն, բյուրոկրատիկ, աստիճանավորների կառավարություն անձեռնմխելի ճացին։ Հեղափոխությունը իշխանությանը խախտեց, բայց նրան չտապալեց։ Ընդհակառակը Ֆրանսիայում 1789-ին հեղափոխությունը սկսվեց, վոր հին իշխանությանը գետին տապալեց։ Արդեն այդ տարում թագավորն անում եր այն, ինչ վոր նրանից պահանջում եր բուրժուական ազգային ժողովը։ Հետագա պայքարը մղվում եր ավելի խաղոր բուրժուազիայի և նրան միացած ազնվականության և հոգևորականության ճացորդների դեմ։ (Ազնվականության մեծ մասը փախել եր արտասահման)։ Այդ պայքարի ընթացքում թագավորական իշխանությունը ձևականապես ել տապալվեց (1792 թ. ոգոստոսի 10). Ֆրանսիայում հայտարարվեց հանրապետություն, վորը շուտով դարձավ դեմոկրատիկ (1793 թվի սահմանադրություն)՝ ուր իշխողն եր քաղաքային մանր բուրժուազիան և գյուղացությունը։

Այդ դեպքում «հին կարգի» վերին հարկերը խոպան քանդվեցին։ Թագավորական իշխանության հետ կորան և դասերը և հին բյուրոկրատիան. քահանաները նկուղներում եյին թագնվել. այս վերջին տեսակետից Ֆրանսիական հեղափոխությունը մերից առաջ անցավ։ Նա արտաքինի կողմից գործում եր կարծես ավելի սուր, նրա մեջ կային արտաքին ավելի հատու փոփոխություններ, ավելի թատերականություն։ Որինակ՝ մենք տարիները հին ձևով չենք հաշվում, մեծ հեղափոխության ֆրանսիացիները նոր տարեհաշիվ մտցրին, սկիզբը համարելով հանրապետության հայտարարության որը, ամիսների և շաբաթվա որերին նոր անուններ տվին և այլն։ Բայց դրանք, կրկնում եմ, արտաքին փոփոխություններ եյին։ Հին ցնխի վերին շերտերը սրբելով, Ֆրանսիական հեղափոխությունը ձեռք չտվեց ամենից ավելի հաստ շերտին՝ ներքինին՝ հողի և արտադրության գործիքների մասնավոր սեփականությունը ճաց անձեռնմխելի։ Ազնվականների հողերի մեծ մասը և յեկեղեցական բոլոր հողերը գրավվեցին, բայց վոչ ընդհանուր որենքի հետևանքով, այլ վորևե մասնավոր առիթներով. որինակ՝ ազնվականների հողերը գրավում եյին դրանց տերերին պատժելու համար, վորոնք փախել եյին ոտար յերկրներ։ Այդ հողերը աշխատավորների մեջ չբաժանվեցին, այլ վաճառվեցին հեղափոխության ստեղծած նոր բուրժուազիային, վոր իր հերթին վաճառում եյին գյուղացիներին խոշոր գնով։ Հեղափոխության պատճառով աշխատանքի պայմանները վոչ միայն չլավացան, այլ նույնիսկ ավելի վատացան. որինակ՝ արգելվեցին գործադուլները, մինչդեռ գործարանատերերը ճացին իրենց տեղերում իրենց բոլոր իրավունքներով, գործարանները չազգայնացրին։

Աշխատավորները, գլխավորապես արհեստավորները յեվ գյուղացիները, բանվորները դուրս չեյին գալիս իբրեվ մի դասակարգ. իշխանությունը ձեռք ձգելով վճռականություն չեյին ցույց տալիս ոգտագործելու այն մինչև վերջը։ Նրանց ղեկավարող բուրժուական մտավորականությունը—մեր «ձախ եսերների» նման մի բան—միայն խոսում եր «հողային որենքի» մասին, ավելի շուտ բուրժուազիային վախեցնելու համար, բայց իրոք սնափառական յերկյուղ ուներ «սրբազան սեփականության» առաջ։ Հետեվաբար տարեհաշիվ ստեղծեցին ֆրանսիայում ոգնական յեղավ. նրանք աշխատավորների դիկտատուրան վերջնականապես իշխանության գլուխ կանգնեցին 1793 թվի հունիսի ըկզբին, իսկ հետևյալ 1794 թվի հուլիսի 27-ին (հեղափոխական որացույցով թերմիդորի 9-ին *) նրանց առաջնորդ Ռոբեսպիերին տապալեցին և գլխատեցին բուրժուական կուսակցությունները, վորոնք մտավորապես համապատասխանում են մեր աջ եսերներին և կադետներին և արագությամբ վերջացրին դեմոկրատիկ հանրապետությունը և վերականգնեցին բուրժուազիայի իշխանությունը. (վերականգնեցին ընտրական ցենզը և այլն)։ Այսպիսով ֆրանսիական մեծ հեղափոխությունը ավելի հիչ խորություն ուներ յեվ ավելի արագ, ավելի շուտ անցնող եր, քան ռուսականը։ Այդ յերկու կողմը սերտ կապված են միմյանց հետ։ Ինչու ընկավ Ռոբեսպիերը. նրա համար վոր ժողովրդական մասսաները, վոր սկզբում նրան շատ եյին սիրում,—նա նույնպես ժողովրդականացած եր, ինչպես մեր Լլիչը—վերջ-

*) Տարվա ամենաուշ ամիսը, հունական «տերմոս»—տաք բառից։

վերջո դադարեցին նրան պաշտպանելուց, վորովհետև վոչ մի ոգուտ չեյին տեսնում հեղափոխական դիկտատուրայից։ Բոլոր հարուստները, վաճառականները, գործարանատերերը, կապալառուները, նույնպես այն կալվածատերերը, վորոնք հպատակվել և ճանաչել եյին հանրապետությունը, ինացին իրենց տեղերում ու միայն ավելի ևս հարստացան։ Իսկ հեղափոխության բոլոր ծախսերը ժողովրդական մասսան հոգաց։ Զարմանալի չե, վոր վերջինս բավական արագ հիասթափվեց և պայքարելուց հոգնեց։ Ահա ինչու Ֆրանսիայում հեղափոխական դիկտատուրան չշարունակվեց նույնիսկ մեկ ու կես տարի, մինչդեռ Ռուսաստանում այն գոյություն ունի ահա ութերորդ տարին։

Այսպիսով հեղափոխություններից ամենամեծը, վորպիսին Յեվրոպան անցյալում տեսել ե, այնուամենայնիվ ավելի քիչ խորություն ուներ, քան ռուսականը։ Ահա ինչ պետք ե նկատի ունենալ, վոր ուղիղ չափանիշ ստացվի գնահատելու այն անցքերը, վորոնց ականատես և մասնակից յեղանք մենք։ Յեվ յեթե 1789—1794 թվերի ֆրանսիական հեղափոխությունը «մեծ» են անվանում, ապա մերն այդ անվան ավելի ևս իրավունք ունի։

Բայց ֆրանսիական հեղափոխության հետ համեմատելը զուգընթացար պատասխան ե տալիս և մյուս հարցին, վոր վերը դրինք՝ բուրժուական և վոչ բուրժուական հեղափոխության մասին։ «Բուրժուական հեղափոխություն» տերմինը յերկու կերպ կարելի յե հասկանալ. կամ այդ նշանակում ե այնպիսի հեղափոխություն, վոր ստեղծում ե պայմաններ, վոր անհրաժեշտ են բուրժուական, կապիտալիստական կարգի գոյության համար, կամ այդ նշանակում ե այնպիսի հեղափոխություն, վորը ղեկավարում ե բուրժուազիան։ Առաջին մտքով «բուրժուական հեղափոխություն կոչումը» գլխավորապես հասկանում ենք՝ մենք բոլշևիկներս 1905—07 թ. թ.։ Յերկրորդ մտքով հասկանում եյին մենշևիկները, հատկապես Պլեխանովը, վորն այդ հիման վրա պնդում եր, վոր պրոլետարիատը բոլոր ուժով պաշտպանում ե բուրժուազիային, վորն իբր թե «հեղափոխություն ե անում»։

Ֆրանսիական հեղափոխությունը բուրժուական եր յերկու մտքով էլ։ Նախ նա հեռացրեց այն բոլոր բազմաթիվ արգելքները, վորոնք հին Ֆրանսիայում կային կապիտալիստական արդյունաբերության զարգացման ճանապարհի վրա։ Հին Ֆրանսիայում և յերկիրը, և հասարակությունը բազմաթիվ մնջնորդներով բաժանված եյին անթիվ մանր վանդակների։ Մի պրովինցիան (նահանգ) մյուսից բաժանված եր մաքսային գծով—որինակ՝ մի նահանգից հացը չեր կարելի մյուսը տեղափոխել առանց իշխանության հատուկ թույլտվության։ Ամեն նահանգում իրեն որենքները կային, վորոնք հարյուրավոր տարիներից ի վեր գոյություն ունեյին, այսինքն բոլորովին անհամապատասխան եյին ժամանակի կապիտալիստական շրջանառության։ Յուրաքանչյուր գյուղում կային ամեն տեսակ «արտոնություններ» կալվածատերերի, յեկեղեցու համար հայլն, նույնպես շատ դարերից ի վեր գոյություն ունեցող և բոլորովին անմիտ։ (Ինչպես որինակ գյուղացիների պարտքն եր կալվածատիրոջ լճի գորտերին վախեցնել, վոր նրանք արգելք չլինեին պարոնին քնելու)։ Ի հարկե վոչ վոք արդեն այդ արտոնություններից անմիջապես չեր ոգտվում, վորովհետև խիստ միամիտ եյին, բայց և այնպես գյուղացիներին ստիպում եյին այդ արտոնությունները յեթ գնել և այդ ձևով գյուղացիական տնտեսության հավելյալ արդյունքի ահագին մասը ընկնում եր կալվածատիրոջ և քահանայի, չարատգրող դասակարգերի ձեռքը։ «Արտոնությունները» այնքան ծանր հին աշխատավոր մասսաների համար, վոր 1789 թվին հեղափոխությունը սկսվեց «կորչեն արտոնությունները» լոզունգով։

Յեթե նահանգի արտոնությունները խանգարում եյին առևտրին և առհասարակ կապիտալի գործադրության, ապա դասային արտոնությունները, ավերելով գյուղացիներին, վորոնք միշտ աղքատ եյին ապրում, վորքան ել աշխատում եյին, արգելում եյին ներքին շուկա կազմելու, առանց վորի անհասկանալի յե խոշոր կապիտալիստական արդյունաբերությունը։ Վորպեսզի Ֆրանսիայում կապիտալիզմը զարգանար, պետք եր վերջացնել «արտոնությունները»։ Հեղափոխությունը այդ ել արավ։ Միջնադարյան նահագները նա փոխեց մինչև այժմ ել գոյություն ունեցող դեպարտամենտների, զուտ վարչական շրջանների, վորոնք կազմված են շատ մեկերով և իրարից բաժանված չեն վոչ մի ուղեկալով (застава)։ Հոգուտ կալվածատիրոջ և յեկեղեցու յեղած բոլոր արտոնությունները վոչնչացրին։ Սկզբում վերը հիշված «Ազգային ժողովը» ցանկանում եր ստիպել գյուղացիներին այնուամենայնիվ հետ գնել մի անգամ ընդմիշտ, արտոնությունների ամենից խոշորները, այդ ել մի զարկ յեղավ հեղափոխությունը շարունակելու և աշխատավորների դիկտատուրան հաստատելու։ Հին արտոնությունները վոչնչացնելն առանց վորևե հետ գնումի, այն գլխավոր բանն եր, վոր դեմոկրատիկ հանրապետությունը տվեց Ֆրանսիայի գյուղացուն։ Դրանից հետո գյուղացին զարձավ աղատ մանր հողատեր և ֆրանսիական արդյունաբերությունն ել վերջապես ստացավ բավական լայն և տարող (емкий) ներքին շուկա։

Ինչպես տեսնում ենք ֆրանսիական հեղափոխությունը իսկապես վերացրեց այն արգելքները, վորոնք կային կապիտալիզմի զարգացման ճանապարհին Ֆրանսիայում, և միայն այդքանը.—կապիտալիզմի, հողի և արտադրության միջոցների մասնավոր սեփականության հիմքերին նա, ինչպես հիշում ենք, ձեռք չտվեց։ Սրան միանգամայն համաձայն Ֆրանսիական հեղափոխության մեջ բուրժուական գաղափարախոսությունը վճռական նորեն իշխում եր, վոր մենք նույնպես տեսանք։ Քիչ թվով սոցիալիստներ, վորոնց հեղափոխությունը առաջ քաշեց, պետք և հրապարակ գային իրրև դավադիրներ հեղափոխական կառավարության դեմ, վորոնք և գլխատվեցին։ Սրանք ել բավական ուշ հրապարակ յեկան, արդեն Ռոբեսպիերի տապալումից հետո։ Սակայն վերջինս ել չեր զուրգուրում սոցիալիստներին, չնայելով վոր յերբեմն ինքն ել սոցիալիստական ֆրազներ եր արտասանում և անխնա գլխատում եր նրանց, վորոնք փորձում եյին ձեռնամուխ լինել «արբազան սեփականության»։

Այսպիսով ֆրանսիական մեծ հեղափոխությունը «բուրժուական» եր ամեն տեսակետից։ Այդպիսին եյին նաև «վոչ մեծ» գերմանական հեղափոխությունները 1848—49 թվերին։ Այդպիսին եր արդյոք և ռուսական Մեծ հեղափոխությունը։

Ամենից առաջ մեզանում կապիտալիզմի զարգացման ճանապարհին կայրն արդյոք նույն արգելքները, ինչ վոր հին, նախահեղափոխական Ֆրանսիայում։ կային, բայց ավելի քիչ։ Տեղական, շրջանային արտոնություններ, վորոնք նեղելին առևտուրը և կապիտալի գործադրությունը, մեծ

դանում XX-րդ դարի սկզբում բոլորովին չկային։ Ռուսական առևտրական կապիտալիզմը այստեղ լայն չափով հարթել եր ճանապարհը իր կրտսեր յեղբոր՝ արդյունաբերական կապիտալիզմի համար։ Ինչ վերաբերում է դասային արտոնություններին, ապա սրանց մեջ գլխավոր ճորտական իրավունքն եր, վորը, ինչպես գիտենք, վերացվել եր 1861 թվին։ Սրա ծնացորդները, վոր գուրգուրանքով պահպանվում եյին, շարունակում եյին կաշկանդել ռուս գյուղացու և ռուսական կապիտալիզմի վոտքերը։ Սրանցից գլխավորը գյուղացուն արհեստական կերպով հողային համայնքին ամրացնելն է վերջինիս համապարտ յերաշխավորությամբ (круговая порука)։ Թե այդ ծնացորդները վորքան պետք է ռուսական կապիտալիզմի զարգացման նեղեյին, ցույց կըտան մի յերկու թիվ։ Ռուսաստանի արտադրության 4 տեսակի հարցը (հաճար, ցորեն, գարի և վարսակ) 20 տարվա ընթացքում՝ 1870-ից մինչև 1890 ավելացել եր ընդամենը 15%-ով 270 միլիոն չերվոնեցից մինչև 12 միլիոն. մինչդեռ բնակչությունը այդ ժամանակում աճել եր մեկ ու կես անգամ։ Այն գարկը վոր տվել եր «ազատագրությունը» (տես II մաս 89 յեր.) յերկար չտևեց։ Յեվ յեթե մեր արդյունաբերությունը այնուամենայնիվ շարունակեց աճել, այդ բացատրվում է մասամբ յերկաթուղագծեր շինելով, մասամբ գյուղում բնատնտեսության քայքայումով, գյուղացու աղքատանալով (տես II մաս 168 յեր.)։ Գյուղացին, ինչպես Չերնիշևսկին դեռ 1861-ին ասել եր, դադարում եր տանը գործած քաթան հագնելուց—արդեն նյութ ել չկար գործելու համար և սկսում եր գործարանից չիթ գնել։

Ինչպես տեսնում ենք հեղափոխությունը ռուսական «արտոնություններին» ասպարիզում վոչնչացնելու բան ուներ։ Սակայն Ֆրանսիայի համեմատությամբ այնուամենայնիվ տարբերությունը մեծ եր։ Այնտեղ նույնիսկ հեղափոխական իշխանությունը՝ «ազգային ժողովը» վճռականություն չուներ արտոնությունները ձրի վերացնելու, մեզանում նույնիսկ հին՝ ցարական կառավարությունը շատ ել չեր գնահատում գյուղի ճորտական իրավունքի ծնացորդները և համապարտ յերաշխավորությունը, որինակ, դեռ մինչև հեղափոխության սկիզբը 1903 թվին, վերացրեց. իսկ 1905 թվի առաջին հեղափոխության ազդեցության տակ ձեռնարկեց բոլորովին լուծարքի յենթարկելու գյուղական հողային համայնքը։ Դրա համար մեզանում հեղափոխությունը միանգամից դրեց այն հարցը, վորի մասին Ֆրանսիայում վախվխելով եյին խոսում, այն է՝ բռնագրավում բոլոր խոշոր մասնավոր հողային սեփականության և հանձնումը նրան, ով հողը մշակում եր՝ գյուղացիության։ Արդեն 1906 թվին բոլշևիկները հրապարակ յեկան հողերի ազգայնացման ծրագրով (Լենինը այս մասին գրում եր դեռ 1905 թվի աշնանը) և յերբ հեղափոխությունը վերջնականապես հաղթանակեց 1917 թվի հոկտեմբերին, իսկույն հրատարակեց հենց այն «որենքը հողի մասին», վորով Ֆրանսիայի հեղափոխականները յերեխաներին եյին վախեցնում։

Ռուսական հեղափոխությունը սկսում եր նրանից, վորով Ֆրանսիականը չհամարձակվեց իսկ վերջացնել։ Բոլոր խոշոր կալվածների գրավումը դեռևս սոցիալիզմ չե, բայց այդ այնպիսի հարված է «սրբազան սեփականության», վորպիսին յերբեք ամբողջ բուրժուական աշխարհում չի տրվել։ Նույնիսկ իբր բուրժուական հեղափոխություն ռուսականը այդ

պատճառով սահմանային հեղափոխություն է. ավելի հեռու գնալու տեղ չկա։

Բայց, ինչպես հայտնի է, մենք չսահմանափակվեցինք հողերի բռնագրավումով. 1918 թվին ազգայնացրինք բոլոր խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները։ Այդ առանց վորևե կասկածի բուրժուական նույնիսկ ամենաանսահման հեղափոխություններից դենն է անցնում, վորովհետև բուրժուականի նպատակն է անարգել կուտակել մասնավոր կապիտալը և վոչ յերբեք այդ մասնավոր կապիտալը պետության սեփականություն դարձնել։ Այսպիսի բան ամեն տեղ ու ամեն ժամանակ պահանջում եյին միայն սոցիալիստները։ Վոչ մի բուրժուական, հեղափոխական նման պահանջ չեր կարող դնել։ Արդյունաբերության ազգայնացում, ազգայնացրած ձեռնարկությունների վերադարձնելը «օրինական» տերերին---այս է լոզունգը մեր դեմ կռվող ամբողջ բուրժուազիայի, ինչպես մեր՝ սպիտակ գվարդիականների, այնպես և արտասահմանի՝ Անտանտայի։ Յեվ հենց հակահեղափոխության այդ լոզունգը բավական է, վոր մեր հեղափոխության այդ մասը բնորոշենք իբր սոցիալիստական հեղափոխություն։

Սոցիալիստական եր և մեր հեղափոխության գաղափարախոսությունը, ըստ վորում սոցիալիստական գունավորում և նույնիսկ սոցիալիստների անուն եյին իրենց վրա առնում մեզանում բոլորովին բուրժուական տիպի հեղափոխականները։ Այդպիսի եյին եսերները՝ ժողովրդական սոցիալիստները, վոր հապես բուրժուական դեմոկրատներ եյին։ Մեր բուրժուական դե

բարձրացնելով գինը, քանի ժողովրդական մասսան հաջողություն ը ունենում, վորին ինքը չեր կռվի տարել։ Իսկ յերբ քաղաքային մասսան՝ պրոլետարիատը 1905 թվի դեկտեմբերին ջարդվեց, դժվար է ասել, թե ով եր ավելի հաղթանակ տոնում՝ բուրժուազիան, թե միապետությունը և նրա ծառաները։

Իսկ յերբ միապետությունը, բուրժուազիայի համար ժիանգամայն անսպասելիորեն, պրոլետարիատի ձեռքով տապալվեց 1917 թվի փետրվարին հին տոմարով, բուրժուազիան խիստ համառությամբ սկսեց հին կարգից պաշտպանել այն, ինչ վոր դեռ կարելի յեր պաշտպանել։ Այստեղ հատկապես ուսանելի յե համեմատությունը ռուս բուրժուազիայի վարմունքի 1917 թվի հեղափոխության ժամանակ, Ֆրանսիականի հետ 1792 թվին։ Այն ժամանակ բուրժուական ծայրահեղ ձախ կուսակցությունը, վոր հանդատասխանում եր մեր կադետներին, վորոշ կերպով հանրապետական եր և առաջին ժամանակներում հանրապետական շարժման գլուխ եր անցել. թագավորական իշխանությունը տապալելուց անմիջապես հետո գումարվեց սահմանադիր ժողով (կոնվենտ) ընդամենը միայն վեց շաբաթ հեղաշրջումից հետո (թագավորական իշխանությունը ընկավ 1792 թվի օգոստ. 10-ին, իսկ կոնվենտը բացվեց սեպտեմբերի 20-ին)։ Ֆրանսիայում բուրժուազիան հանդես միայն տնտեսական հարցում, յերբ հեղափոխությունը սկսեց «սըրբազան սեփականությանը» ձեռք տալ։

Մեզանում 1917 թվի փետրվարից հետո բուրժուական կուսակցությունները ամենից առաջ աշխատում եյին փրկել միապետությունը։ Միայն այն ժամանակ, յերբ պարզվեց, վոր նոր ցարը իր գահին կես ժամ ել չի կարող նստել, վոր նրան ավելի շուտ կըտապալեն, քան նա կարող կըլինի թագադրվել, բուրժուազիան համաձայնեց, խոսքով միայն, հաշտվել հանրապետության հետ։ Գործնականում նա ձգձգում եր, վորքան կարելի յեր, հանրապետության հաստատվելը, հետաձգելով սահմանադիր ժողովի գումարումը, կարծես 1917 թվին Ռուսաստանում յերկաթուղու գծերով և հեռագրաթելերով ավելի դժվար եր գումարել այն, քան 1722 թվի Ֆրանսիայում, ուր բացառապես ձիով եյին ճանապարհորդում և հարաբերություն պահում եյին փոստի միջոցով։ Հեղափոխության հաղթանակի մոմենտից սկսած Ռուսաստանում բուրժուազիան պարզ կերպով հակահեղափոխական, հեռադիմական ուժ է դառնում։

Ցնվ հենց մենակ այդ պետք է արգելեր ռուսական հեղափոխությանը «բուրժուական» հեղափոխության սահմաններում մնալու։ Ինչպես Ֆրանսիական հեղափոխությունը չեր կարող կալվածները թողնել հակահեղափոխական կալվածատիրոջ ձեռքին, վորը արտասահման եր փախել և այնտեղ համաձայնության եր գալիս ռոաբյերկրացիների հետ հեղափոխական Ֆրանսիայի վրա հարձակվելու վերաբերմամբ, այնպես ել ռուսական հեղափոխությունը չեր կարող գործարանը թողնել հակահեղափոխական կապիտալիստի ձեռքին, վորը դանագան ռոաբերկրյա «միսսիաներիս» հետ փափսում եր այն մասին, թե ինչպես անեն, վոր ճնշեն բանվորների և գյուղացիների շարժումը։

Ցնրե նույնիսկ հեղափոխությունը առաջ տանող պրոլետարիատը սոցիալիստական լոզունգներ առաջ չքաշեր ել, խոշոր արդյունաբերության ազգայնացումը այնուհետև պետք է կատարեր զուտ բաղաքական նպատակներից յելնելով՝

իբրեվ պայքարի միջոց բուրժուական հեռադիմական շարժման դեմ։ Սոցիալիստական գաղափարախոսությունը այստեղ արդարացրեց այն, ինչ վոր քաղաքական անհրաժեշտության գործ եր։

Մնում է ավելացնելու և այն, վոր այդ նույն բանին եր տանում և տնտեսական անհրաժեշտությունը։ Պատերազմի առաջ բերած գյուղատնտեսության քայքայումը (հացի արտադրությունը 1915-ից մինչև 1917 թիվը ցորենի համար ընկել եր 40% և հաճարի համար 30% և տրանսպորտի (փոխադրության) քայքայումը բոլորովին փոխել եյին գյուղատնտեսության հում նյութի (մեծ մասով ուտեստի նյութերի) և մշակող արդյունաբերության արտադրությունների գների սովորական փոխհարաբերությունը։ Քաղաք ժամանակ մի զույգ կոշիկը կարելի եր փոխարինել 4 փութ ցորենի ալյուրով, այժմ մեկուկես փութն արժեր այնքան, վորքան մի զույգ կոշիկը։ Բանվորին պահելը այժմ ավելի թանգ եր նստում, քան նրա արտադրվածները արժեյին շուկայում։ Ձեռնարկողը կամ պետք է իր բանվորներին սովի մատներ, իր ոգուտները պահելով — իսկ այդ թույլ չեյին տա դեռ նոր քաղաքական հաղթանակ տարած բանվորները — կամ առայժմ հրաժարվելով ոգուտից, ժամանակավորապես փակել գործարանը։ Յնթե պրոլետարիատը չհաղթեր Հոկտեմբերին, մենք հսկայական լոկաուտի տեսարան կունենայինք, պատմության մեջ նմանը չեղած, գործարանների մասսայական փակում և կապիտալիստների կողմից բանվորների արձակում։ Վորպեսզի ռուսական արդյունաբերությունը գոնե մասամբ պահպանվեր, պետք եր գործարանները և ֆաբրիկանները հանձնել այն տիրոջը, վորը ոգուտ անելու կարիքը չեր զգում և հարկավոր դեպքում կարող եր բանվորներին իր գրպանից վճարել։ Իսկ այդպիսի տեր կարող եր միայն պետությունը լինել։

Այսպիսով վոչ միայն սուբյեկտիվ տեսակետից, իր առաջնորդների գիտակցությամբ, այլև օբյեկտիվ տեսակետից, իրերի ընթացքով, ռուսական հեղափոխությունը պետք է դառնար և չեր կարող չլիներ սոցիալիստական հեղափոխություն։

Բայց այդպիսին դարձավ նա համենայն դեպս վոչ միանգամից։ Մեր այժմ նկարագրած օբյեկտիվ պայմանները իրենց վոլջ թափով առաջ յեկան 1917 թվին, իսկ Ռուսաստանի հեղափոխության առաջին որն եր 1905 թվի հունվարի 9|22։ Ռուսական հեղափոխության առաջին պայթյունը յեղավ դեռ բուրժուական լոզունգներով՝ սահմանադիր ժողով և դեմոկրատիկ հանրապետություն։ Իրապես 1905 թվի հեղափոխությունը կանգ առավ, նույնիսկ այդ լոզունգները իրականացնելուն չհասնելով և կարող եր թվալ, վոր Ռուսաստանում վերջացավ հեղափոխությունը, ինչպես Գերմանիայում 1848 թվին, վոր միապետությանը հաջողվեց ազատվել հեղափոխությունից փրկանք տալով սահմանադրությունը։ Միայն յերկրորդ անգամ միապետությունը վերջնապես դեն շպրտվեց։ Այսպիսով ռուսական հեղափոխությունը անցավ յերկու աստիճան, վորն և տալիս է բոլոր հիմքերը հետագա շարադրանքը բաժանելու յերկու մասի։ Առաջինի նյութը կըլինի հենց 1905 թվի հեղափոխությունը իր անմիջական պատճառներով և մերձակա հետևանքներով։ Յերկրորդ մասի նյութը կըլինի՝ բանվորական շարժման հարությունը սկսած 1910 թվից, պատերազմը և յերկրորդ հեղափոխությունը։

—1912 թվերից,

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԵԿՈՆՈՄԻԿԱՆ (1900—1910)

1905—1907 թվերի ռուսական առաջին հեղափոխությունը հասկանալու համար անհրաժեշտ է ավելի մոտից ծանոթանալ 20-րդ դարի առաջին տասնամյակի տնտեսական վիճակի հետ։

Ցեթե Ռուսաստանում կիսաճորտական ռեժիմը գոյություն ունեցավ մինչև 20-րդ դարը, սրանում մեղավորը միայն կալվածատերերի և նրանց կառավարության գիտակցական ջանքերը չեյին, մեղավոր եյին հացի ցած գները, վորոնք նորից համաշխարհային շուկայում իշխող դարձան։ Այս մասին խոսվել է նաև այլ կապակցությամբ (տես «Ռուսաց պատմության հանառոտ ուրվագծիւմ. II.) Պետք է միայն այդ հիշեցնել։ Ամենից ավելի պարզ այդ յերևում է հողի գների փոփոխության մեջ։ Սկսած 60-ական թվականներից չերնոզյոմի շրջանում՝ Որլովի, Տուլայի, Ռյազանի, Տամբովի, Պենզայի, Վորոնեժի և Կուրսկի նահանգներում հողի գինը անընդհատ աճում եր։ Առաջինում գինը բարձրացավ 1880 թվին մի դեսյատինին 105 ռ. իսկ 1883-ին՝ 145 ռ. իսկ 1889-ին Որլովի նահանգում մի դեսյատինը արժեր միայն 116 ռ.։ Նույն պատկերը նկատվում է նաև Վորոնեժի և Պենզայի նահանգներում։ Վորոնեժի նահանգում հողի գինը մի դեսյատինի համար 54 ռուբլուց 60-ական թվականներին բարձրացավ մինչև 133 ռ. 1883 թվին, վոր նորից ընկնի մինչև 129 ռուբլին 1889-ին։ Պենզայի նահանգում դեսյատինը արժեր 60-ական թվերին 36 ռ. 1883-ին՝ 100 ռ. և 1889-ին միայն 80 ռ.։

Այդ ժամանակ ով եր առավելապես հող գնողը։ Անկասկած գյուղացությունը։ Այդ նրանից է յերևում, վոր մասնավոր հողատերերի մեջ գյուղացիների տոկոսը 1878 թվին 5,46-ից բարձրացավ 19,5-ի 1900 թվին։

Ցեթե հաշվենք գյուղացիական գնած հողի տարածությունը 100. 1862-ին, կըստանանք այսպիսի տախտակ.

Տարիները	Տոկոս 1862 թվին հարաբեր.
1872	127
1872	187
1892	285
1902	402

Միաժամանակ 1899 թվին չերնոզյոմի շրջանի կալվածատերերի կալվածների գրեթե կեսը (49 տոկ.) իր սեփական ինվենտարը չուներ. այդքան ցած աստիճանի վրա եր գտնվում կալվածատիրական կապիտալիզմը։

1900-ից համաշխարհային շուկայում հացի գինը նորից սկսում է բարձրանալ։ Ցեթե 1893—97 թվի գները հաշվենք 100, ապա 1898—1904 թվերին հացի գները կարելի յե արտահայտել 122-ով, իսկ 1905—12 թվերին՝ 165-ով։ 20-րդ դարի առաջին տասնամյակը անցնում է հացի գների բարձրացման նշանով, այսինքն այն նշանով, վորով Ռուսաստանը գնում եր 1825 թվի դեկտ. 14-ից առաջ և 1861 թվի փետր. 19-ից առաջ։ Համաշխարհային ընդհանուր «կոնյունկտուրան» (շուկայի պայմանները) կրկնվում է, և այնել ավելի կայուն ու հաստատ ձևով, քան առաջ, վորովհետև հացի գների բարձրացումը 1861 թվից առաջ յերբեք չհասավ առավելագույն տոկոսին՝ 65 տոկոսի, վորին նա հասավ այժմ։ Այն ժամանակ առավելագույն բարձրացումը 20—25 տոկոսն եր։ Բայն այն է, վոր 19 րդ դարի վերջին Հյուսիսային Ամերիկայի Միացյալ-Նահանգները հացի արտահանությանը մասնակցում եյին կիսից ավելի չափով. Ցևրոպայի գործադրած հացի 52 տոկոսը շուկա եյին հանում Միացյալ Նահանգները։ Իսկ 1908—12 թվերին Միացյալ Նահանգները արտահանվող հացի միայն 18 տոկոսը տվին։ Այդ առաջ յեկավ վոչ իհարկե նրանից, վոր Միացյալ Նահանգներում հողագործությունն ընկավ, այլ նրա համար, վոր Միացյալ Նահանգներում յերևաց ծուխ յունն ընկավ, այլ նրա համար, վոր Միացյալ Նահանգներում յերևաց այն, ինչվոր 70-ական թվականներին չկար, այն է հսկայական խոշոր արդյունաբերությունը, առաջ յեկավ պրոլետարիատը, վորը կարիք ուներ հաց գնելու։ Այդ փոփոխությամբ ել վորոշվեց համաշխարհային կոնյունկտուրան, վորով խոշոր չափով բացատրվում է այն, ինչվոր կատարվում եր ռուսական գյուղում 20-րդ դարի առաջին տասնամյակում։

Ըստինքյան հասկանալի յե, վոր հացի գների աճումը առաջ բերեց Ռուսաստանում հացի արտադրության ուժեղացում և ցանվող տարածության մեծացում։ Ցեթե հաշվենք 20-րդ դարի առաջին քառամյակի ցանված տարածությունը 100, ապա 1909—13 թվերի հնգամյակը կարտահայտվի 100 թվանշանով։ Նույնը կըտեսնենք, յեթե հիշենք, վոր հաճարը (рожь) մեզանում ցանվում է առավելապես սեփական սպառման համար, իսկ ցորենը՝ ծախելու. մինչդեռ հաճարի ցանքսը առաջին քառամյակի համար ամբողջ ցանքսի 31 տոկոսն եր, նշված վերջին հնգամյակի՝ 1909—13 թ. համար հաճարի ցանքսը կազմում եր միայն 28 տոկ.։ Միաժամանակ գարնացան ցորենի ցանքսը 18,6-ից բարձրացավ մինչև 21,4 տոկ.։

Ընդհանուր խոսքով հացի արտադրությունը վոչ միայն ըստինքյան մեծացավ, այլև նա ավելի ապրանքային դարձավ, այսինքն վաճառելու համար սկսվեցին ավելի ցանել։ Հացի արտադրությունը, ամբողջությամբ առած վերցրին ավելի ցանքս։ Հացի արտադրությունը, ամբողջությամբ առած վերցրած նշված հնգամյակում աճեց 5,5 միլիարդ փթից մինչև 6,2 միլիարդ փութ։ Ցեթե դուք հիշեք, վոր առաջ քան տարվա ընթացքում՝ 1877—1898 թվը՝ մեր արտադրությունն աճեց միայն 15 տոկոսով, այժմ 8 տարվա ընթացքում աճեց 23 տոկոսով, դուք կարող կըլինիք գնահատել այն գարկը, վորպիսին համաշխարհային կոնյունկտուրայի փոփոխությունը տվեց ռուսական գյուղատնտեսության։

Վիճակագրության համաձայն, վորը, ճիշտ է, խիստ պակասավոր է, ցանքսերի ճնշող մեծամասնությունը գյուղացիական եր—92,1 տոկ., իսկ մասնավոր հողատերերին ամբողջ տարածության միայն 7,9 տոկ. եր ընկնում։

Այսպիսով հացի արտադրությունը մեծ մասամբ, գյուղացիական տընտեսության։

12-66
59912
ՀԱՅԿ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ
АН СССР
ՄԵՏ ԿԱՌ ԳՐ.-ԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ZUUՌ-Arm.SSR
Ա. ԿԻՄ Ա. ՄԱՍՏՈՑԻ ԱՆՎԱՆ

տեսութեան եր պատկանում։ Ապրանքային հացից, այսինքն այն հացից, վոր շուկա յեր արտահանվում վաճառելու, վորը մոտ 1 միլիարդ 100 միլիոն փութ եր՝ գյուղացիներին բաժին եր ընկնում 78,4 տոկ.։ Դուք տեսնում եք բավական խոշոր տարբերություն գյուղացիական հողի տարածության չափերի և հացի քանակի մեջ։ Այդ յերկու թվերը իրարից հեռանում են։

Այդ բացատրվում է գյուղացիական հողի սակավ բերքատվությամբ։ Յեթե հաշվենք 1861—71 թվի բերքատվությունը 100, կըստանանք հետևյալ թվերը՝

70-ական	թվերի	համար	գյուղացիական	հող	107,	կալվածատիրական	112
80	»	»	»	»	117	»	127
90	»	»	»	»	134	»	142
900	»	»	»	»	148	»	164

Տեսնում եք, ինչպես գյուղացիները բոլոր ուժով գնում են կալվածատերերի յետևից։ Տեսնում եք, վոր գյուղացիական տնտեսությունն անպայման առաջադիմում է, բայց այնուամենայնիվ կալվածատիրականից յետ է մնում։ Ինչով է բացատրվում այդ։ Առաջին բանը, վոր մեր միտքն է գալիս, այդ կալվածատիրական հողերի մշակման ավելի կատարյալ միջոցներն են։ Բայց մենք գիտենք, վոր ամբողջ Ռուսաստանի կալվածատիրական 70 միլիոն դեսյատին հողից միայն 3 միլիոնն եր մշակվում կատարելագործված միջոցներով։ Այդ այնքան չնչին տոկոսն է, վոր չեր կարող զգալի ազդեցություն անել գյուղացիների և կալվածատերերի շուկա հանվող հացի քանակության տարբերությունների վրա։

Բանն այն չէ, վոր կալվածատերերը ավելի լավ եյին մշակում իրենց հողը. այդ քիչ դեպքերում միայն գոյություն ուներ և այն էլ վոչ չերնոզյոմի շրջանում, այլ խոշոր կենդրոնների՝ Մոսկվայի և Պիտերի շրջակայքում. բանն այն է, վոր կալվածատերերը «ազատագրության» ժամանակ կըստրեցին գյուղացիներից լավ հողերը, այնպես վոր գյուղացիները միևնույն է պետք է կալվածատերերից յետ ճնշին։ Այսպիսով, մինչդեռ թե ներքին, թե արտաքին հացի շուկայի մատակարարումը առավելապես թեև գյուղացիների ուսերին եր ծանրացած, ամենաշատ ոգուտը այնուամենայնիվ ստանում եյին կալվածատերերը։

Գյուղացիները վարում եյին այն բոլորը, ինչվոր հնարավոր եր՝ արոտատեղերը և նույնիսկ 1861-ին անհարմար ճանաչված հողերը, բայց և այնպես նրանք չեյին կարող հասնել կալվածատերին, և կալվածատիրական դաշտերը, վորոնք ծածկված եյին խիտ, լավ արտով, պետք է շատ գրգռեյին գյուղացիներին։ Նրանք գուցե և կալվածատերերից հողը կըշնեյին, բայց կալվածատերերը հացի գները բարձրանալուց հետո հողի գները այնպես ուռցրին, վոր գյուղացիները չեյին կարող գնել։ Յեթե 1900 թվի գները հաշվենք 100, ապա Խարկովի նահանգում հետևյալ թվերը կունենանք. 1898-ին—85, 1902-ին—132. Կուրսկի նահանգում՝ 1896-ին—122, 1902-ին 207։

Յեվ իրոք, յեթե կալվածատերն իր հողից կարող եր լավ ենթատնտեսություն անել, ապա ինչ միտք ուներ հողը գյուղացիներին վաճառելը։ Նա գերադասում եր ինքը մշակելու այն և գյուղացիներին խեղդում եր հողերի կտրտումով։ Դուք գիտեք յեք ընկնում, վոր այդ եական ազդեցություն պետք է ունենար գյուղացիների դեպի կալվածատերերն ունեցած հարաբերության վրա։ Գյուղացիների և կալվածատերերի մեջ այժմ հակասություն առաջ յեկավ, վորը վոչ մի բանով չեր կարելի մեղմացնել կամ նսեմացնել՝ հակասություն արտադրության ասպարեզում։ Կալվածատերը խանգարում եր գյուղացուն շուկայի համար հաց արտադրելու, գյուղացիական տնտեսությունը չեր կարող զարգանալ, նրա ճանապարհին կանգնած եր կալվածատիրությունը։ Այս յերկու տնտեսություններից մեկը պիտի մեռներ, վոր մյուսը կարողանար ապրել։

Տեսնում ենք, թե ինչպես և փոխվում գյուղացու և կալվածատերի մեջ յեղած հակասության եությունը Ռուսաստանում, կապիտալիզմի զարգացման կապակցությամբ։ Առաջ այդ հակասությունը դասային եր «բարինի» և «մուժիկի» մեջ։ Տնտեսական կողմը նսեմացած եր դասային, իրավական այդ կողմով։ Այժմ տնտեսական կողմը հրապարակ յեկավ պարզ կերպով. պայքարը խոշոր, արտոնություններ վայելող հաց արտադրողի և մանր, արտոնություններ չունեցողի մեջ եր։ Յեվ մեկն այդ արտոնությունն եր հիշեցնում, վոր ամբողջ վեճը ֆյոդալական ծագում ունի։ Իրապես գյուղացին վոչ միայն ժառանգ ֆյոդալիզմի մնացորդների դեմ եր գնում, այլև նոր սկսվող ագրարային կապիտալիզմի դեմ։ Բայց վորովհետև նա ապատամբում եր կապիտալիզմի դեմ վոչ հանուն գյուղատնտեսական սոցիալիզմի (վորը քաղաքային մտավորականությունն առանց վորևե հաջողության աշխատում եր գյուղացուն հրամցնել), այլ հանուն հենց մանրավոր, բուրժուական, միայն մանր տնտեսության, ապա առաջվում եր ահա թե ինչ՝ սոցիալիստ չլինելով գյուղացին իմիր օբյեկտիվ կերպով (այսինքն իրապես, անկախ նրանից, թե ինքը այդ ուզում եր, թե վոչ) սոցիալիստորեն տրամադրված պրոլետարիատի դաշնակիցն եր դառնում։

Այդ իհարկե անդրադարձավ նաև գյուղացիական շարժման դասակարգային բնույթի վրա։ Սակայն այս մասին հետո. առայժմ կանգ առնենք հաստատենք միայն կոնյունկտուրայի փոփոխության ուրիշ հետևանքների վրա։

Փոփոխված կոնյունկտուրան միայն գյուղի վիճակի վրա չանդրադարձավ։ Ռուսական տեղական կուտակումը մեծ մասամբ կապված եր հացի արտադրության հետ. բնական է, վոր հացի ցած գների շրջանում կուտակումը շատ դանդաղ եր առաջ գնում։ Յեթե արտասահմանի կապիտալի ներմուծումը չլիներ, XIX-րդ դարի վերջին յերկու տասնամյակում, Ռուսաստանում կըտեսնեյինք տնտեսական կյանքի կատարյալ լճացում։ 1893—6 թվերի քառամյակում ռուսական ամբողջ արտահանության միջին արժեքը 661,4 միլոն ռուբլի եր, իսկ կուտակումը այդ 4 տարվա ընթացքում՝ 104 միլիոն ռուբլու. իսկ 1905—8 թվերի քառամյակում, չնայելով այդ ժամանակ տեղի ունեցած հեղափոխության և ճգնաժամին, վորի համար վողբում եր բուրժուազիան, տարեկան արտահանության միջին արժեքը 1 միլարդ 55 միլիոն ռուբլու եր հասնում (իհարկե վոսկու ռուբլի, ինչպես և միացած բոլոր հաշիվներում և նկատի առնված), իսկ կուտակումը տվեց 332 միլիոն ռուբլի։ Թե հացի գների բարձրացումը ինչ դեր խաղաց այստեղ, կերևա, յեթե մենք հաշվենք հացի արտահանության աճումը փթերով մի կողմից և նրա արժեքի բարձրացման աճումը վոսկու ռուբլիներով մյուս կողմից։ 1900 թվին Ռուսաստանից արտահանվել է 418,8 միլ. փութ հաց, իսկ 1910-ին—847,1 միլ. փութ։ Յեթե 1900 թվի արտահանությունն ընդունենք 100, 1910 թվի արտադրությունը կըլինի 196։ 1900 թվին ամբողջ արտահանած հացն արժեր 304,7 միլ. ռուբլի, իսկ 1910-ին—735,3 միլ. ռ.,

յեթե առաջին թիվը ընդունենք 100, յերկրորդը հավասար կըլինի 245-ի։ Հացի արտադրությունն աճել է յերկու անգամից պակաս։ Իսկ արտադրության յեկամուտը — $2^1/_2$ անգամ։

Պարզ է, վոր կուտակումը պետք է արագ առաջ գնար և մենք XX-րդ դարի առաջին տասնամյակում շատ հետաքրքիր յերևույթ ենք տեսնում, վորը կարելի յե անվանել ռուսական կապիտալիզմի ազգայնացումը։ XIX-րդ դարի վերջին ռուսական կապիտալիզմն ապրում էր մեծ մասամբ ոտարյերկրյա կապիտալով։ Նրա միայն 21%-ը տեղական, ռուսական ծագումն ուներ, մնացածը այս կամ այն կերպ արտասահմանից էր ստացվում։ Իսկ 1901—1904 թվերին ռուսական արդյունաբերության մեջ դրված էր արտասահմանի կապիտալ 182 մլլ. ռ., իսկ ռուսական՝ 209 միլիոնի։ Առաջին տասնամյակի վերջում արտասահմանի կապիտալի դերը ռուսական արդյունաբերության մեջ չնչին չափի հասավ։ 1910 թվին թուլյատրված ոտարյերկրյա բոլոր ընկերությունների (սրանց թիվը 17 էր) կապիտալը 33,7 մլլ. ռուբլու յեր, մինչդեռ ռուսական ընկերություններ այդ տարում թուլյատրված եյին 181,—199,4 մլլ. ռուբլու կապիտալով, վեց անգամ ավելի։ Յեթե չլինեյին պետական պարտքերը և առաջուց ռուսական արդյունաբերության մեջ դրված ոտարյերկրյա կապիտալները, ռուսական արդյունաբերությունը վորոշ իրավունքով իրեն կարող էր «հայրենի» արդյունաբերություն անվանել։

Յեթե գյուղում հացի գների բարձրացման քաղաքական հետևանքը յեղավ գյուղացու և կալվածատիրոջ մեջ յեղած հակամարտության սրվիլը, ապա այստեղ այդ անդրադարձավ վոչ պակաս կարևոր քաղաքական հետևանքով՝ փոխվեց բուրժուազիայի վերաբերմունքը դեպի կառավարությունը։ Վաղուց, դեռ Ենգելի ժամանակից, հայտնի է, վոր վորքան դեպի Յեվրոպայի արևելակողմը գնանք, այնքան բուրժուազիան ավելի սատար է։ Ռուս բուրժուազիայի այդ ստորությունը մատնանշվել է նաև մեր կուսակցության առաջին մանիֆեստում։ Բայց ինչ խորհրդավոր պատճառներով է բացատրվում այդ զարգացող ստորացումը։ Մինչև ռուս բուրժուազիայի արյան մեջ կա այդպիսի հատկություն։ Վոչ ըրա պատճառները տնտեսական եյին. Ռուսաստանում կապիտալիստական կուտակումը 1880—1890 թվերին կատարվում էր ի հաշիվ արտասահմանյան վարկի։ Նույնիսկ անվանապես ռուսական ձեռնարկությունները գոյություն ունեյին հաճախ ոտարյերկրյա դրամի հաշվին, վոր կառավարությունը իրրև արտասահմանյան փոխառություն էր ստանում և գործարանատիրոջն էր տալիս իրրև ժամանակություն։ Սակայն արտասահմանյան վարկ XIX-րդ դարում տըրվում էր պետությանը և վոչ մասնավոր ձեռնարկություններին։ Յեթե սկսես կառավարության դեմ խոսություն հանել, առանց վարկի կըմնաս — այսպես պիտի մտածեր ռուս կապիտալիստը. և իրոք հենց առաջին հեղափոխության ժամանակ 1905 թվին արտասահմանի կապիտալի հոսանքը չափազանց կրճատվեց, նույնիսկ սկսվեց տեղատվությունը՝ ոտարյերկրացիները սկսեցին ռուսական արժեքաթղթերը մեծ քանակով վաճառել։ Այնուամենայնիվ ռուս բուրժուազիայի ձայնը կառավարության հետ խոսելիս հետզ այդ տարիներում շատ բարձրացավ. դեռ յերբեք ռուս բուրժուազիան այնպես չեր «հոխորտացել» ցարի դեմ, ինչպես այդ տարիներում։ Իսկ առաջին հեղափոխությունից հետո ոտարերկրյա կապիտալները վոչ այնքան պետական

գանձարանի միջոցով եյին արդյունաբերության մեջ մտնում, վորքան բանկերի։ Ծարը կոորցնում էր արտասահմանի վարկը, բուրժուազիան ձեռք էր բերում։ Այդ յերևույթը չենք հասկանա, յեթե մոռանանք, վոր միաժամանակ Արևմուտքից հոսող վոսկու գետի նվազումով, վոսկին սկսեց ռուսական հողից շատրվանի նման խփել։

Իսկ յեթե դուք սրան ավելացնեք և այն, վոր ռուս արդյունաբերությունը ինքն էլ ահագին չափերով աճեց այդ ժամանակում (սրա արտադրությունը 1 միլիարդ 800 մլլ. վոսկու ռուբլուց 1897 թվին, բարձրացավ մինչև $4^1/_2$ միլիարդ ռուբլի 1913 թվին), այն ժամանակ դուք կըհասկանաք, վոր այդ խմբակի տեսակարար կշիռն էլ պետք է նույնքան անգամ բարձրանար։ Արդյունաբերողները դարձան ավելի լիբերալ և ավելի ուժեղ։ Միայն շնորհիվ հացի բարձր գների մեր գյուղատնտեսական արտադրությունը նույն բարձրության վրա էր մնում, իսկ յեթե հացի գները լինեյին այն, ինչվոր XIX-րդ դարի վերջում եյին, ապա արդյունաբերությունը էր արտադրականության մեջ գյուղական տնտեսության համեմատությամբ շատ առաջ կերթար։

Յեթե XIX-րդ դարի վերջի Ռուսաստանը ավելի բուրժուական յերկիր էր, քան այդ դարի կեսին, ապա XX-րդ դարի սկզբին նա դարձավ յերկուսից ու կես անգամ ավելի բուրժուական, քան XIX-րդ դարի վերջին էր։ Իսկ յերկրի կառավարության ձևերը «Ռոմանովները» աշխատում եյին նույնը պահել, ինչ վոր 1861-ին կային, այս էլ բավական է, վոր ամենակոպիտ ձևով բացատրվի 1905 թվի հեղափոխությունը։ Մեր արդյունաբերությունը շատ փոթորկալի յեր աճում և իր զարգացման բնույթով նույնիսկ վոչ թե արոպական, այլ ամերիկական բնույթ ուներ։ Յեթե առնենք ամենամանր ձեռնարկությունները, ուր բանվորների թիվը ամեն մեկում 100-ից ավելի չե, կըտեսնենք, վոր Ռուսաստանում XX-րդ դարի սկզբին այդպիսի ձեռնարկություններում զբաղված էր բանվորության միայն 10 տոկոսը, իսկ Գերմանիայում՝ 22 տոկոսը։ Յեթե առնենք խոշոր ձեռնարկությունները, 500 մինչև 1000 բանվորով, Ռուսաստանում գարձյալ կըտեսնենք այդտեղ-րում բանվորության 10 տոկոսը, Գերմանիայում միայն 6 տոկոսը։ Վերջապես յեթե առնենք հակառակ ձեռնարկությունները, ուր բանվորների թիվը ամեն մեկում 1000-ից ավելի յե, կըտեսնենք, վոր Գերմանիայում այդպիսիներում ամբողջ բանվորության միայն 8 տոկոսն էր զբաղված, իսկ Ռուսաստանում՝ 24 տոկոսը։ Արտադրության համակենդրոնացումը Ռուսաստանում՝ 24 տոկոսը։ Արտադրության համակենդրոնացումը Ռուսաստանում շատ ավելի բարձր է, քան Գերմանիայում։ Իր կազմությամբ ռուսական արդյունաբերական կապիտալիզմը Յեվրոպայի ամենաառաջավորներից մեկն էր, իսկ նրան աշխատում եյին քաղաքական հին արկղում պահել, վոր հարմարեցրած էր նույնիսկ վոչ արդյունաբերական, այլ առևտրական կապիտալի համար։ (Տես II V)։

Բայց հենց այդ ռուսական արդյունաբերական կապիտալիզմի, հարաբերաբար առած, բարձր կատարելությունը ստեղծում էր ավելորդ արգելք ռուս բուրժուազիայի համար լիբերալիզմից հեղափոխականության անցնելու։ Բարձր զարգացած արդյունաբերությունը յենթագրում և նաև բանվորի ավելի ինտենսիվ շահագործում ձեռնարկողի կողմից, և ավելի խորություն ու սրություն դասակարգային հակասությունների։

Այստեղ պատկերը լավ պարզում և ռուս բանվորի վիճակի համեմա-

տութիւնը փոթորկալի զարգացող ռուս արդյունաբերութեան արտադրութեան մէջ հին, դանդաղ զարգացող կապիտալիստական յերկրի, որինակ՝ Անգլիայի բանվորի վիճակի հետ։

Ցեթե մենք ընդունենք 100 այն աշխատավարձը, վոր անգլիացի բանվորը ստանում եր 1850 թվին, ապա 1900 թվի աշխատավարձը կարտահայտվի 178 թվանշանով, այսինքն ավելացել և ավելի քան մեկ ու կես անգամ։ Իսկ յեթե ուտեստի նյութերի գինը մենք ընդունենք Անգլիայում 1850 թվին 100, ապա 1900 թվի համար մենք կունենանք 97։ Դրամական աշխատավարձն աճել եր, իսկ ապրուստի գինը պակասել, կընշանակե ռեալ աշխատավարձը, ուրիշ խոսքով, անգլիայի բանվորի կենսական հարմարութիւնը այդ 50 տարում լավացել եր։ Անգլիայի կապիտալիստը բանվորին ավել եր վճարում։ Վոր տեղից, իր գրպանից, իր բարութեան պատճառով։ Ամենևին. ընդհակառակը կապիտալիստի բանվորին շահագործելը Անգլիայում ել իհարկե ավելացել եր, և վոչ թե նվազել։ Ոգավելով աշխատանքի արտադրողականութեան աճումից, ձեռնարկողն ավելի ու ավելի պակասում եր գինը արդյունքի գնից բանվորին, միշտ ավելին ու ավելին իրեն թողնելով։ 1816—21 թվերին Անգլիայում ամեն մի մշակած մի գրվանքա բաժակի մեջ աշխատավարձը կազմում եր 15,5 պենս.*) իսկ 1880—1882 թվերին միայն 2,3 պենս, գլեթե 7 անգամ քիչ։ Բայց աշխատավարձն այնուամենայնիվ ավելանում եր, վորովհետև առաջին դեպքում բանվորը տարեկան 322 ֆունտ ստերլինգի**), իսկ յերկրորդ դեպքում—4,039-ի արդյունք։ Ինչով եր սրան հասնում. իհարկե արտադրութեան տեխնիկան լավացնելով, մեքենանները կատարելագործելով. այդ շրջանի անգլիական մեքենաներն աշխարհում առաջինն եյին։ Իսկ այդ ել աշխարհում առաջինն եր դարձնում անգլիական գործարանի արդյունքները։ Անգլիան XIX-րդ դարում համաշխարհային շուկայում նվաճեց մեծաքնորհ (մոնոպոլ) վիճակ, նա ամեն տեղ ել առևտուր եր անում և ամեն տեղ ել այնպիսի գներ եր հաստատում, վոր և կապիտալիստը «չվիրավորվեր», բայց և բանվորին ել մի բան մնար։ Հենց վոր Գերմանիայի հետ մրցելու ազդեցութեան տակ գործերը փոխվեցին, Անգլիան սկսեց կորցնել համաշխարհային մենաշնորհը, արագութեամբ սկսեցին վատանալ նաև անգլիացի բանվորի հարաբերութիւնները իր հետ։ Մենք այդ իր տեղում կքննենք։

Բայց դուք կասեք. այնուամենայնիվ, ուրեմն, տնտեսատերը այնքան ել ագահ չեր, բանվորին բաժին եր հանում, թեև վոչ իր գրպանից, այլ ուրիշի։ Ավելի պարզ լինելու համար պետք և յերկու խոսք ասել այն մասին, թե ինչն եր դրդում անգլիացի ձեռնարկատերին այդպիսի հարաբերական առատաձեռնութեան։

Բանն այն և, վոր Անգլիայի բնակչութիւնը բացառիկ արագ աճեց XIX-րդ դարի առաջին կեսին (20 տարվա ընթացքում 1821 թվից մինչև 1841 թիվը, բնակչութիւնը աճեց մի յերրորդով, 12 միլիոն անձից 16 միլիոնի հասավ)։ Բայց վորքան աճում եր Միացյալ Նահանգների և անգլիական գաղութների (Կանադա, Ավստրալիա) տնտեսութիւնը և այնտեղի բանվորական ձեռքերի պահանջն ավելանում եր, Անգլիայի «ավել ճնացած բնակչութիւնը սկսեց այնտեղ տեղափոխվել։ 1853 թվից մինչև 1906-ը Ան-

*) Պենսը հավասար և մոտ 4 կոպեկի վոսկու հաշվով։

**) Ֆունտ ստերլինգը հավասար և մոտ 10 ռուբլու վոսկու հաշվով։

գլիայից այնտեղ գաղթեց 5 և կես միլիոնից ավելի։ Այդ գաղթումը չդադարեց նաև XX-րդ դարի սկզբին. 1903 թվին Անգլիայից գաղթեց 178 հազար մարդ, իսկ 1906-ին—220 հազար։

Ցեթե դարի առաջին կեսին անգլիացի գործարանատերը ձեռքի տակ վորքան ցանկանար բանվորական ձեռք ուներ և նրանց վերաբերմամբ կարող եր չճնշվել, բայց հետո քանի գնում, այնքան ավելի յեր ստիպված լինում մտածել, վոր չլինի բանվորները իր մոտից փախչեն։ Դրա համար ել անգլիական կապիտալիստի անգլիական «ազատութեան» և «առատաձեռնութեան» տնտեսական աստառը, անգլիացի բանվորն ինքն այդ գիտակցելով այնպես ստիպված եր նրանց «լավ կերակրել»։ Ահա այսպիսով ինչուից եր անգլիացի բանվորն ուներ իր ձեռնարկատերերին դոպելու, վորպիսին չուներ մայր ցամաքի վրա գտնվող իր ընկերներից և վոչ մեկը։

Յեվ ահա հենց այդ պայմանները Ռուսաստանում բոլորովին չկար։ Մեզանում XIX-րդ դարի վերջին ձեռնարկատերը կարիք չեր զգում մտածելու այն հարցի մասին, թե արդյոք միշտ ել բավարար չափով ինքը բանվորական ձեռք կունենա, թե վոչ։ Գյուղացիության պրոլետարացումը, այսինքն «աշխատանքի պահեստի բանակ» կազմվելը մեզանում քանի գնում, այնքան արագանում եր։ Սրա մի քանի որինակները մենք արդեն տեսանք (տես՝ II մ) ահա մի ուրիշը։ 1888—1893 թվերի հնգամյակում չերնոզյոմի 9-ը կենդրոնական նահանգներում գյուղացիների ձիերի թիվը ընկավ գրեթե 25 տոկոսով, (ընդհանուր 4 միլիոն թվից պակասեց 931 հազար). 1000 հոգուն ցանքսը 60-ական թվերին 825 դեսյատին եր, իսկ 1900-ին արդեն 547։ Գյուղացիների Սիբիր գաղթեցնելը սիստեմատիկ կերպով հետաձգվում եր կալվածատերերի շահերի պատճառով, վորոնք չեյին ցանկանում զրկվել եժան բատրակներից և շահավետ վարձակալներից։ Գյուղացիները գաղթում եյին «կամովին». 90-ական թվերին 4/5-րդը այդ ձևով հեռացավ, բայց այդ «կամովին» գաղթելը, վորի ժամանակ յերեխաները բոլորն ել մահանում եյին, մեծերից ել տեղ եր հանում կիսից վոչ ավելին, այնպիսի սարսափելի բան եր, վոր այդ բանին կարելի յե համաձայնել միայն հուսահատութիւնից դրդված։ Քիչ թե շատ ապահով գաղթում եյին միայն ունևոր գյուղացիները, վորոնք ունեյին անասուն, ինվենտար և այլն. ուրեմն հենց վոչ պրոլետարիատը։ Գյուղացիական պրոլետարիատը գերազանցում եր բատրակ ֆերմով ուժասպառ լինել. գործարան մտնելը բախտավորութիւն եր համարվում։ Կործանվող գյուղը ուղղակի կենդանանում եր, յերբ իր կողքին գործարան եր բացվում։ Զարմանալի չե, վոր արդյունաբերական ճահճացներից Սիբիր գաղթող գրեթե չի յեղել։

Այն ժամանակվա ստատիստիկան 21 նահանգում, գյուղում հաշվում եր առնվազն 5 միլիոն «ավելորդ» բանվոր, վոր գյուղատնտեսության մեջ իր աշխատանքի համար գործադրության վոչ մի տեղ չեր գտնում։ Արդյունաբերության մեջ զբաղված բանվորների թիվը այն ժամանակ մոտ 2 և կես միլիոն եր. «պահեստի բանակը» այսպիսով «գործող բանակի ուղիղ 100 տոկոսն եր կազմում։ Ույժերի այդպիսի փոխհարաբերության դեպքում գործարանատերը իրեն համարում եր, այդպես եր համարում նրան նաև գործ փնտրող գյուղական պրոլետարիատը, «բարեգործ», յեթե նա վորևե բան վճարում եր. մենք տեսանք, թե այդ հոդի վրա ինչ կարգեր եյին առաջ յեկել նույնիսկ Մոսկվայում և Մոսկվայի նահանգներում. (տես՝ II

մաս)։ Զարմանալի չէ, որ ռուս գործարանատերը վոչ մի դրդիչ չուներ իր բանվորին «լավ կերակրելու» և նա միշտ, բանվորին կխաթ եր վճարում։ Յեթե մենք հաշվենք ռուս գործարանի բանվորի աշխատավարձը 1892 թվին 100, ապա 1902 թվի աշխատավարձը կարտահայտվի 105 թվանշանով, իսկ յեթե մենք 90-ական թվականների կեսերի հացերի գները հաշվենք 100, ապա 1902 թվի համար կըստանանք 125։ Ռուս բանվորի ռեալ աշխատավարձը միշտ պակասում եր, մինչդեռ անգլիականինը՝ ավելանում եր։ Կյանքը անգլիացի բանվորից դիմակավորում, ծածկում եր բուրժուական շահագործումը, ռուսականին կյանքը ամենաանխիղճ կերպով այդ մասին հիշեցնում եր յուրաքանչյուր վայրկյան։ Զարմանալի չէ, որ ռուս բանվորը, հենց վոր գիտակից եր դառնում, սկսում եր իր դասակարգային շահերը հասկանալ. այնպես եր հեղափոխական դառնում, վոր Ռուսաստանում «գիտակից բանվոր» և «հեղափոխական» սկսեցին միևնույն բանը նշանակել։

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Ռուսական բանվորական մասսայի այդ դրությունը վորոշ քաղաքական հետևանքներ եր տալիս դեռևս 1890 թվերի կեսերին։ Արդեն 1895—97 թվերի միջոցին գործադուլավորների թիվը՝ համաձայն գործարանային տեսչության հաշվետվության ավելացել եր յերկու անգամ։ Դեռ 1895 թվի վերջին ֆինանսների մինիստրը գործարանային տեսուչներին ուղղված գաղտնի շրջաբերականում գրում եր. «Ռուսաստանում, բարերախտաբար, բանվոր դասակարգ գոյություն չունի այն ժամով և նշանակությամբ, ինչպես Արևմուտքում է, ուստի և գոյություն չունի նաև բանվորական հարց, և մեկը և մյուսը չեն կարող ունենալ մեզանում իրանց ծննդի համար հող», —յեթե միայն գործարանային տեսչությունը չքնի։ Իսկ յերկու տարի յել չանցած ներքին գործերի մինիստրը գրում եր, նույնքան գաղտնի, նահանգապետներին... «Գործարանների, գավոդների և նույնիսկ համքարային բանվորների գործադուլները շատ քաղաքներում, վորոնք ավելի կամ պակաս չափով բանվորական բնակչություն ունեն, դարձել են սովորական յերևույթներ։ Դրա հետ միասին ուշագրավ է վերջերս բանվորների մեջ այսպես կոչված «ռազմական խմբերի» կազմակերպվելը, այսինքն ավելի հեղափոխական տրամադրված բանվորների խմբերի, վորոնք սպառնալիքի և բռնության միջոցով ավելի թույլ վճռականություն ունեցող բանվորներին ստիպում են միանալ գործադուլին կամ աշխատել ցանկացողներին արգելում են, այլև յենթարկում են ամեն տեսակ բռնության այն բանվորներին, վորոնք ազդում են ընկերներին գործադուլը դադարեցնելու տեսակետից կամ վորոնց վրա կասկածում են, թե վոստիկանությանը կամ գործատերի վարչությանը հայտնում են գործադուլի գլխավոր գրդիչների անունները»։

Մենք այս յերկու քաղվածքը բերինք վոչ իրրև իրերի իսկական դրության ուղիղ նկարագրություններ—յերկու մինիստրներն էլ, և՛ ֆինանսների, և՛ ներքին գործերի, ակնհայտնի հիմարություն եյին գրում—այլ իրրև, և՛ ներքին գործերի, ակնհայտնի հիմարություն եյին գրում—այլ իրրև որինակ այն տպավորության, վոր գործադուլները անում եյին ցարական կառավարության վրա։ Յերկու տարի առաջ պնդում եյին, թե Ռուսաստանում բանվորական և վոչ մի շարժում չի կարող լինել, իսկ յերկու տարի հետո սկսեցին աղաղակել, թե ամբողջ Ռուսաստանը բանվորական դավադրությամբ բռնված է։ Այդպիսի հարված մինիստրական ուղեղներին տվել

եր ամենից ավելի Պիտերի գործադուլը 1896 թվի մայիս-հունիսին, Նիկոլայ II-ի թագադրության ժամանակ (թագադրությունը հենց գործադուլի ձևական առիթն եր. տոնակատարության ժամանակ գործարանները չէին գործում և բանվորները պահանջում եյին այդ վոչ իրենց մեղքով «բաց թողած» որերի համար վարձ, իսկ գործարանատերերը հրաժարվում եյին վճարելուց)։ Կառավարության տեղեկությունների համաձայն գործադուլը ընդգրկել եր 19 գործարան և 15,000 բանվոր. Պիտերբ. գործադուլավորներին հաշվում եյին 35,000։ «Կառավարության հաղորդագրությունը» հավատացնում եր, վոր Պիտերի «Ճնացած բանվորները» «հեռու եյին պահում իրենց» գործադուլ անել հանդգնող ջուլհակներից և մանողներից, իսկ բանվորներն ասում եյին, թե իրենց գործադուլը հենց նրա համար այդքան յերկար դիմացավ (միքանի գործարաններ գործադուլ արին յերկու շաբթից ավելի, իսկ մեծամասնությունը մի շաբթից ավելի գործադուլ արեց), վոր Պետերբուրգի մետաղագործական ձեռնարկների բանվորները, «զավոդականները» իրենց աշխատավարձից ոգնում եյին գործադուլավորներին։ Գործադուլի ընթացքում 25 թռուցիկ բաց թողնվեց «Союз борьбы за освобождение рабочего класса» («Բանվոր դասակարգի ազատության պայքարի միություն»), „Рабочего Союза“ («Բանվորական Միություն») և „Московского Рабочего Союза“ («Մոսկվայի Բանվորական Միության») կողմից։ Բայց իշխանությունը վախեցել եր վոչ այնքան դրանից, վորքան շարժման գիտակցականության մի այլ արտահայտությունից։ Այդ բոլոր գործադուլների աչքի ընկնող հատկանիշներն են.—գրում եր վերևում հիշված շրջաբերականում ներքին գործերի մինիստրը 1896—97 թվերի գործադուլների մասին,—բանվորների մինուչն ճշգրիտ բանաձևած պահանջներ առաջ քելը, իրենց հետամուտների միախորհուրդ պաշտպանությունը և գործադուլ անողների առաջին կարգը յեվ խաղաղությունը պահպանելը ե»։

Վերջինս հատկապես սարսափելի յեր, վորովհետև վոստիկանությանը միանգամայն փակուղում եր դնում, վորը սովորել եր «խաղաղացնելու» բանվորական «անկարգությունները»։ Քանի դեռ գինվորները լսում եյին, «խաղաղացնել» դեռ կարելի յեր, թեև հետաքրքիր ե, վոր արդեն 90-ական թվերի կիսին կարիք կար գինվորներին «խրախուսելու»։ 1895 թվի ապրիլին Յարոսլավում գործադուլ արեց Կորշինկինի մանուֆակտուրան։ «Անկարգությունները» յեղան, այսինքն բանվորները պարզ կերպով խմբերով հավաքվեցին։ Նահանգապետը պահանջեց Ֆանագորիսկի գրենագործների գունդը, վորը Յարոսլավի կայազորն եր, և գինվորները համազարկ բանալով ամբոխի վրա վայր ձգեցին 13 բանվորի։ Հազիվ, մի տարուց եվ պակաս, գահ բարձրացած Նիկոլայը այս մասին յեղած հաղորդագրության վրա գրում եր. «Շատ դոհ եմ զորքի Յարոսլավում գործարանային անկարգությունների ժամանակ ունեցած վարմունքից»։ Ահա թե յերբվանից այդ յեղը սկսել եր հրացանագարկ անել բանվորներին։ Արքայական «շնորհակալությունը» խոսուն հաղորդեցին Մոսկվայի գինվորական շրջանի բոլոր զորքերին, իբր խրատ և խրախույս։ Գործադուլավորներին հրացանագարկ անելը, պետք և ավելացնել, Նիկոլայ II-ի կառավարությունը չեր մտածել. նրա գաշնակիցները՝ ֆրանսիական բուրժուազիան, այդ գործում նրա ուսուցիչներն եյին։ Ֆրանսիայում, գործադուլի ժամանակ, վոստիկանության ամբողջ տակտիկան հենց այն եր, վոր ամբոխին ամեն տեսակ պրովակացիայով գրգռեն։ Ֆրանսիացու հափշտակվող, հարավային բանվորության պատճառով այդ նպատակին շատ հեշտ եյին հասնում, և հենց առաջին քայլը, վոր շպրտվում եր վոստիկանության կամ զորքի վրա, հրացանագարկ անելու ազդանշան եր համարվում։ «Անկարգությունը» ակներև եր, այնուհետև ճնացածը՝ բանտարկություն, աքսոր կանոնավոր կատարվում եր։ Այդ վոչ ճարտար մեքենայությունը մեզանում ել հեշտությամբ յուրացրին։ Բայց լինչ անել բանվորների հետ, յերբ նրանք գիտակցաբար վոչ մի «անկարգություն» չեն ուզում անել։

Պիտերի 1896 թվի գործադուլներն այնպիսի ուժեղ տպավորություն թողին իշխանության վրա, վոր նա վորոշեց ռուսաց պատմության մեջ առաջին դեպքը գործադուլավորների հիմնական պահանջները բավարարել։ Թագադրության որերի համար վարձ պահանջելը միայն գործադուլի առիթն եր. բանվորները հետո ընդհանուր բնույթ ունեցող կետեր առաջարկեցին և սրանց մեջ առաջինն եր բարվորական որը կրճատել. մանածագործական ձեռնարկներում այդ ժամանակ որը սարսափելի յերկար եր—մինչև 14 ժամ։ Պիտերի ջուլհակները պահանջում եյին $10^1/_2$ ժամ,—1897 թվի հունիսի 2-ի որենքը ամբողջ Ռուսաստանի համար վորոշում եր $11^1/_2$ ժամյա բանվորական որ։ Բանվորներին «արտաժամյա» աշխատանք գործադրել թույլ տալը, պրեթե վոչնչության եր հասցնում որենքը, բայց XIX-րդ դարու ռուսական որենսդրության մեջ այնուամենայնիվ հետ մի որենք, վորը գոնե եր կորդել գործադուլը։

Բայց յեթե գործարանատերերին այնուամենայնիվ կարելի յեր հաժդել բանվորական որը կրճատելու (թեև այդ ել վոչ առանց դժվարության), այն հանձնաժողովում, վորը քննում եր նոր որենքի նախագիծը, գործարանատերերը բոլորն ել խոսում եյին այն «ծանրության» մասին, վորը այդ որենքի պատճառով «պիտի ընկնի մեր արդյունաբերության վրա», նաև վոչ եյին կանչում Ֆրանսիան և այլն, սակայն նրանց հաժդել, վոր աշխատավարձն ավելացնեն, միանգամայն աննշարին եր։ Մինչդեռ գործադուլների մեծ մասը հենց առաջ եր գալիս աշխատավարձի մասին յեղած վեճերի հետևանքով, նույնիսկ Պիտերի 1896 թվի նշանավոր գործադուլի մերձակա առիթը տեսանք, վոր այդ եր։ 1765 գործադուլից, վոր գործարանային առիթը տեսնք, 10 տարվա ընթացքում՝ 1895-ից մինչև 1904 տեսչությունը հաշվում եր, 10 տարվա ընթացքում՝ 1895-ից մինչև 1904 թիվը, 1071-ի, այսինքն 61%-ի պատճառը աշխատավարձի չափի կամ այն վճարելու ձևերի շուրջը յեղած ընդհարումներն եյին, և միայն 284-ը կամ 16%-ը բանվորական որվա տևողականության համար։ Բանվորին դիջեցին վոչ այն բանում, վորը նրա համար ամենից կարևորն եր, այլ գործարանատերի համար ամենից եժան կետում։ 1890 թվերի վերջերին գործարանատերերը հենց իրենք առանց բանվորների պահանջների պետք և մտածեցին արտադրությունը կրճատելու մասին։

Ռուսական խոշոր արդյունագործող արդյունաբերությունը անգամին հաջողություններ ունեցավ հենց այդ տասնամյակի ընթացքում։ Աշխարհի վոչ մի մասում խոշոր արտադրությունը այդպես արագ առաջ չեր գնում, Թվերը մենք մասամբ արդեն տեսանք. (տես. II մ.)։ Վերհուշենք և տանք մի քանի համեմատություններ։ Իլիկների թվի տեսակետից Ռուսաստանը արդեն 1890 թ. ինչպես գիտենք Յեվրոպայի մյուս յերկրներից առաջ եր գնում, բացի Անգլիայից։ 1889—1899 թվերի տասնամյակում Յեվրոպայում

իւիկների թվի աճումը միայն 33%-ը, իսկ Ռուսաստանում՝ 76%: Ցուգուն հալելը յերկրագնդի ամենից արագ զարգացող յերկրներում՝ Ամերիկայում և Գերմանիայում, աճեց.—է. Ամերիկայի Միացյալ Նահանգներում 50 տոկոսով, Գերմանիայում 72 տոկոսով. Ռուսաստանում ածումը 190 տոկոս եր: 1889 թվին Ռուսաստանը չուգուն հալելու տեսակետից աշխարհում 7-րդ տեղն եր բռնում, 1899 թվին արդեն չորրորդը: Բայց արդյունաբերության աճումը յերևում է վոչ միայն գործարանների արտադրողականության աճման մեջ, այլև այն մասսայի աճման մեջ, վորով աշխատում են գործարանները՝ արդյունաբերական հում նյութի: Այստեղ էլ մենք տեսնում ենք, վոր բառածուխի արտադրությունը այդ ընթացում Ռուսաստանում աճում է 131 տոկոսով, մինչդեռ Գերմանիայում այն աճում է 52 տոկոսով, Միացյալ Նահանգներում՝ 61 տոկոսով. ցավի արդյունահանությունն աճում է 132 տոկոսով, մինչդեռ Միացյալ Նահանգներում միայն 9 տոկոսով. 1899 թվին նավթ արդյունահանելու տեսակետից Ռուսաստանն ամբողջ աշխարհում առաջին տեղն եր բռնում:

Մենք իր տեղում տեսանք (տես II մ.), վոր արդյունաբերության այդ զարգացումը հենվում եր ներքին շուկայի ընդարձակվելու վրա, իսկ այս վերջինս բացատրում է գյուղացության պրոլետարացումով.—անկախ տնտեսատերի վիճակից վարձու բատրակի վիճակին անցնելով, գյուղացին չունենալով իրենը, տնայինը, միշտ ավելի ու ավելի պետք է շուկայում գներ և այսպիսով պահանջը մեծացնում եր: Բայց այդ պահանջը արդյունաբերության բոլոր ճյուղերի համար միատեսակ չափով չեր ընդարձակվում: Խոշոր գործարաններից ժողովրդական մասսաների անմիջական կարիքներին սպասարկում են մեծ մասամբ մանածագործարանները. կտորները գրեթե բացառապես անհատական գործադրության են գնում: Մետաղագործությունը շատ չնչին չափերով և սպասարկում այդ անհատական պահանջներին. պըրչաժիկներ, կոճակներ, մեխեր կոշիկների համար և այլն: Մետաղագործությունը մեծ մասով սպասարկում է խոշոր և մանր տնտեսություններին. տալիս է՝ խոփեր, փոցխեր մանգաղներ, կացիններ, տանիքի համար յերկաթ, ձիերի համար պայտեր և այլն, և այլն: Ցեթե չեթի գործարանատերի համար «շուկան» պրոլետարացած գյուղացին է, ապա մետաղագործական արդյունաբերության համար ընդհակառակը շուկան գյուղական բուրժուազիան է:

Մենք տեսանք (տես II-րդ մ.) վոր գյուղական պրոլետարիատ կազմվելը և գյուղական բուրժուազիայի առաջ գալը նույն յերևույթի յերկու կողմերն են՝ գյուղի դասակարգային stratification: Բայց այդ յերկու պրոցեսները կողք կողքի չգնացին, մեկը մյուսին բոլորովին զուգահեռ. այն է պրոլետարիատի կազմվելը մեզանում մանր հողային բուրժուազիայի կազմելուց առաջ անցավ: Թե ինչքան վերջինս մեզանում դանդաղ եր աճում, յերևում է 1905 թվից գյուղացիները գնել են մոտ 2 միլիոն դեսյատին հող: Խոշոր գնումները վճռականապես իշխող եյին. սրանք գնված բոլոր հողերի 80 տոկոսն եյին կազմում: Կասկած չկա,—այդ գյուղական բուրժուազիան եր աճում: Բայց վորքան դանդաղ եր աճում: Տասից ավելի տարվա ընթացքում գյուղական բուրժուազիային հաջողվեց գնել 2 միլիոն դեսյատինից պակաս կալվածատիրական հող. («կալվածատիրական» համարելով 500 դեսյատինից ավելի կալվածները). իսկ կալվածատերերի ձեռքին մնաց 62 միլիոն դեսյա-

տին: Տասից ավելի տարվա ընթացքում կալվածատերերն այդ ճանապարհով չկորցրին իրենց կալվածների 4 տոկոսն իսկ: Իսկ այդ հացի գների բացառիկ ցած շրջանն եր, յերբ խոշոր հողատիրությունը իր ծախքերը չեր ծածկում, և կալվածատերերը, միայն խոսքով, յերբեմն չգիտեր ինչպես «ազատվի» հողից: Բայց 90-ական թվականների յերկրորդ կիսից, հացի գները, ինչպես հիշում ենք, սկսեցին «ամրանալ»: Ցեթե մենք 1893—1897 թվերի հնգամյակի հացի գները հաշվենք 100, 1898—1904 թվերի յոթնամյակի համար կըստանանք 128: կալվածատերը ավելի ու ավելի պակաս առիթ եր ուներ հողից «ազատվելու», վորն սկսել եր յեկամուտ տալ: Ցեթե 80-ական թվականների վերջերից Ռուսաստանում հողի գինը շատ դանդաղ եր աճում, հնգամյակում 18 տոկոսից էլ պակաս, ապա 1898—1902 թվերի հնգամյակում 36 տոկոս: Ջերնոզյոմում գների բարձրացումը ավելի աչքի ընկնող եր. Պոլտավայի նահանգում 102—207 ռ. մի դեսյատինը, Խարկովի՝ 85—138, Կուրսկի՝ 122—207 ռուբ. Այլն:

Ցեթե մեզանում գյուղում լիներ մի կողմից միայն բատրակը, մյուս կողմից—խոշոր սեփականատերը, այդ տեսակ հիմքի վրա կըսկսեր զարգանալ բուրժուական խոշոր հողատիրությունը: Սակայն «ազատազրության» ժամանակ հող ստացած (տես մ. II. 163 յեր.) և հողի կարիք ունեցող գյուղացությունը մի կողմից, ռուսական կապիտալի պահանջկոտությունը, վորը արդյունաբերության մեջ վարժվել եր խոշոր ոգուտի*), մյուս կողմից կալվածատիրության մեջ վարժվել եր խոշոր հողատիրության մեջ վարձով հողի դիմաց ծանր գծով, վորը «ամենից քիչ դիմադրության ուղղում եյին ուրիշ գծով, վորը «ամենից քիչ դիմադրության ուղղում եյին ուրիշ գծով, վորը մաղրության գիծն եր». իր հողը չվաճառելով և նրա վրա թանգ նստող կապիտալիստական տնտեսություն չհիմնելով, կալվածատերը իր հողը պարզապես վարձակալությամբ եր տալիս կարիքավոր գյուղացիներին: Սրա պատճառով վարձակալության գները բարձրացան և այն էլ ավելի արագ, քան ճառով վարձակալության գները բարձրացան և այն էլ ավելի արագ, քան հացի գները. 90-ական թվականների կեսերից մինչև 900-ականն: սկզբները հացի գները 90-ական թվականների կեսերից մինչև 900-ականն: սկզբները՝ բարձրացան, ինչպես հիշում ենք, 28 տոկոսի, վարձակալության գները՝ 113 տոկոսի: Այսպես շատապեց բարլին ոգտագործել մուժիկի «ազահություն», ուրիշ խոսքով, գյուղացին վոչ միայն կալվածատերին պիտի տար ամբողջ «ոգուտը», վորը կարող եր նրա մոտ գոյանալ շնորհիվ հացի բարձր գների, այլև իր գրպանից պակասը վճարել: Այդպիսի պայմաններում ինչպես հնարավոր եր «հավաքել» և մինչև «գյուղական բուրժուա» դառնալ: Այս հազիվ հազարից մեկին եր հաջողվում:

Ի՞նչպես եր ազդում իրերի այսպիսի դրությունը գյուղացիական շարժուձևերի վրա, մենք մի քիչ հետո կըտեսնենք: Առայժմ կանգ առնենք նրա, ռուսական արդյունաբերության դրության վրա ունեցած ազդեցության վրա: Բոլորովին պարզ է, վոր ռուս մետաղագործության փոխորկալի զարգացումը, վորը մենք մի քիչ առաջ տեսանք, չեր կարող հենվել «ներքին շուկայի» զարգացման վրա այդ բառի իսկական իմաստով, այսինքն գյուղացիական տնտեսության գնողական կարողության վրա: Ցերկաթի գործածությունը Ռուսաստանի բնակչության մի հոգու համար ավելի ցած եր, քան Ամերիկայում, Գերմանիայում և Անգլիայում: Ռուսաստանում մի հոգու համար 1 ֆունտ, Գերմանիայում 5 ֆունտ, Ամերիկայում 10 ֆունտ: Ռուսաստանում ցածր գինը բացատրվում է ոչ թե նրանով, վոր ռուսական մետաղագործությունը ավելի կատարյալ է, քան արևմտյան երկրներինը, այլ նրանով, վոր ռուսական մետաղագործությունը ավելի ետ է մնացած, քան արևմտյան երկրներինը: Ռուսաստանում ավելի քիչ ցերկաթ է գործածվում, քան արևմտյան երկրներում, վորովհետև ռուսական գյուղացին ավելի քիչ է գնում, քան արևմտյան երկրների գյուղացին: Ռուսական գյուղացին ավելի քիչ է գնում, քան արևմտյան երկրների գյուղացին, վորովհետև ռուսական գյուղացին ավելի աղքատ է, քան արևմտյան երկրների գյուղացին: Ռուսական գյուղացին ավելի աղքատ է, քան արևմտյան երկրների գյուղացին, վորովհետև ռուսական գյուղացին ավելի քիչ է ստանում, քան արևմտյան երկրների գյուղացին: Ռուսական գյուղացին ավելի քիչ է ստանում, քան արևմտյան երկրների գյուղացին, վորովհետև ռուսական գյուղացին ավելի քիչ է աշխատում, քան արևմտյան երկրների գյուղացին: Ռուսական գյուղացին ավելի քիչ է աշխատում, քան արևմտյան երկրների գյուղացին, վորովհետև ռուսական գյուղացին ավելի քիչ է ապրում, քան արևմտյան երկրների գյուղացին: Ռուսական գյուղացին ավելի քիչ է ապրում, քան արևմտյան երկրների գյուղացին, վորովհետև ռուսական գյուղացին ավելի քիչ է վաստակում, քան արևմտյան երկրների գյուղացին: Ռուսական գյուղացին ավելի քիչ է վաստակում, քան արևմտյան երկրների գյուղացին, վորովհետև ռուսական գյուղացին ավելի քիչ է ունենում, քան արևմտյան երկրների գյուղացին: Ռուսական գյուղացին ավելի քիչ է ունենում

քան վորևե այլ յերկրում՝ ընդամենը տարեկան 1,6 փութ, մինչդեռ նույն իսկ Ֆրանսիայում, վորը մեզանից հետ ևր ՇԱցել ընդհանուր մետաղագործական արտադրողականությամբ, մի անձը տարեկան 4,2 փութ յերկաթ ևր գործադրում, Անգլիայում այդ հասնում ևր 8,1 փթի, Միացյալ Նահանգներում նույնիսկ 9,7 փթի, վեց անգամ ավելի, քան Ռուսաստանում։

Ինչի՞ վրա յեր հենվում ուրեմն մեր յերկաթագործական արդյունաբերությունը։ Սրա պատասխանը մենք հեշտ ու շուտով կըստանանք, յեթե ուշք դարձնենք այն բանին, թե ինչ եյին պատրաստում մեր գործարաններում հալված չուգունի ահագին մասսայից։ Այդ ժամանակ կըտեսնենք, վոր նրանց պատրաստած նյութերի մի հատուկտից մինչև մի յերրորդը ռելսեր եյին։ Յեթե սրան ավելացնենք յերկաթուղային այլ պարագաները՝ բանդաժներ, ամրացումներ, բուվեր, անիվներ և այլն, կերևա, վոր մեր մետաղագործությունը մեծ մասամբ սպասարկում ևր յերկաթուղային շինարարության։

Մեր արդյունաբերական կապիտալը մի անգամ ել և շատ պարզ կերպով ցույց ավեց իր կախումը առևտրական կապիտալից։ Ռուսական փոխադրությունների առաջ համաշխարհային դրամական շուկայի բացումից, հանձինս փարիզի բորսայի, և այնտեղից թափվող վոսկու անձրևից (տես II V.), ամենից առաջ ոգտվեց առևտրական կապիտալը, վոր վերջացներ 1860 թվին իր սկսած ռուսական յերկաթուղային ցանցը։ 1892 թվի սկզբին այդ ցանցի յերկարությունը 32 հազար վերստից մի քիչ պակաս ևր, 1902 թվի սկզբին 60 հազար վերստից ավելի յեր։ Ճշմարիտ ե. այդ դեպքում ել մեզանում 1000 ք. վերստ տարածությանն ընկնում ևր 4 անգամ պակաս յերկաթուղագիծ, քան նույնիսկ Միացյալ Նահանգներում, ուր բավական խոպան տեղեր կային. Արևմտյան Յեվրոպայի ավելի խիտ բնակված յերկրների հետ համեմատելը Ռուսաստանի համար ավելի քիչ ոգտավետ կըլիներ. (որինակ Անգլիայում 1000 ք. վերստին 119 վերստ յերկաթուղագիծ ևր ընկնում, իսկ Ռուսաստանում ընդամենը 9 և կես վերստ)։ Բայց կապիտալիստական հարաբերության մեջ յերկաթուղագիծ շինելը չի կապվում բնակչության կարիքների հետ—այդ կարիքների մասին միայն խոսվում և «գեղեցիկ վոճի համար», այլ հաշվի յեն առնվում մասնավոր ձեռնարկատերերի կամ գանձարանի ոգուտները, յեթե գանձարանը ձեռնարկող ե, կամ «ստրատեգիական» (զինվորական) և «պետական» այլ պահանջները։ Վորովհետև բուրժուական պետությունը կապիտալիստների պետություն ե, ուստի և «պետական» կարիքները կապիտալիստների ամբողջ դասակարգի կարիքներն են, տարբերվելով այդպիսով՝ առանձին-առանձին կապիտալիստի շահից։

Արդեն 1880-ական թվերի վերջերից այդ «պետական» հայեցակետը ռուսական յերկաթուղային շինարարության մեջ գերակշռեց ոգուտ առևտրական կապիտալի։ Յեվ արդեն այն ժամանակ «պետական» նկատառումները ռուսական յերկաթուղային ցանցը հանեցին յեվրոպական Ռուսաստանի սահմաններից։ 1887-ին վճռվել ևր Սիբիրի յերկաթուղու կառուցումը։ Այդ նպատակով կազմված խորհրդակցությունը միաձայն ընդունեց, վոր «համապետական և մանավանդ ստրատեգիական տեսակետից Յեվրոպական Ռուսաստանի արագ հարաբերություն ունենալը հեռավոր Արևելքի հետ տարեց տարի դառնում ե ավելի ու ավելի անհետաձգելի», ուստի ճանապարհը պետք ե շինել, թեև

«մոտիկ ապագայում» դա վոչ մի ոգուտ ել չի խոստանում։ Սիբիրի ճանապարհին պիտի վերագրել 90-ական թվականների ռուսական մետաղագործության ամբողջ զարգացման գրեթե կեսը։ Ամբողջ նոր գործարաններ եյին կառուցվում հատկապես այդ գծի համար աշխատելու։ Սրա կառուցման վերջը մոտենալու հետ ռուս մետաղագործության արտադրողականությունը պարզ կերպով ընկնում ե. 1897 թ. ռելսերն այդ գործարանների պատրաստի արդյունքի 28,1 տոկոսն եյին կազմում, 1898-ին—29,1 տոկոսը, իսկ 1809-ին—մեայն 26,5 տոկոս։ Հատկապես խիստ ընկավ ռելսերի գլխավոր մատակարարի՝ հարավային ռուսական մետաղագործության արտադրողականությունը.—մինչ այդ հասցնելով ռելսերը միշտ թվով ամբողջ «պատրաստի արդյունքի» մինչև 60 տոկոսի, յերբեմն բարձրանալով մինչև 70 տոկոսի. (1895 թ.) 1899-ին հանկարծ իջավ մինչև 44,5 տոկոսի։

Յերկաթուղային կառուցումները վերջանալով սկսվեց ռուսական մետաղագործական արդյունաբերության նվազումը։ 1901 թվից վոչ միայն ռելսերի արտադրությունն ե ընկնում, այլև հալվող չուգունի ընդհանուր քանակը, թեև աննշան չափով. (177 և կես փթից մինչև 173 միլիոն փութ)։ Ռուսաստանի հարավում մետաղագործ բանվորների թիվը 45 հազարից 1899 թ. ընկավ մինչև 39 հազար. 1901 թվին։ Աշխատավարձը մինչև այդ ել ընկնում ևր իրրև ռեալ աշխատավարձ, այսինքն վերածելով այն արդյունքների, վոր կարելի յեր նրանով գնել, այժմ սկսում ե ընկնել նաև նոմինալ կերպով ռուբլիների թվի տեսակետից։ 1901 թվին միջին թվով ամբողջ Ռուսաստանի ամեն տեսակ արտադրությունների համար մի մարդուն տարեկան 201 ռ. 37 կ. ևր ընկնում, իսկ 1903-ին միայն 200 ռ. 33 կ., իսկ հացը շարունակ թանգանում*)։

Բանվորական մասսայական շարժումը, վորի հնարավորությունն իսկ ֆինանսների մինիստրը ժխտում ևր 1895 թ. դառնում ե նույնքան անխուսափելի ուղեկից ռուսական կապիտալիզմին, վորքան նա վաղուց դարձել ևր Արևմտյան կապիտալիզմի համար։ Արտակարգ արագությամբ և անցնում այդ շարժումը այն աստիճաններըց, վորոնցով նա դանդաղորեն անցավ Արևմտյան Յեվրոպայի առաջավոր յերկրներում. տասը տարվա ընթացքում բանվորը «խաղաղ» պայքարից յուր առօրյա սովորական շահերի

*) Հատկապես մետաղագործների համար մենք ունենք այս տախտակը.

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ, ՈՐՊԵՍ (ռուբլիներով).

	1901 թ.		1904 թ.	
	Նվազ.	Առավ.	Նվազ.	Առավ.
Վարպետները	1,4	3,3	1,55	3,25
Սև աշխատավորները	0,6	1,	0,65	1,10
Աշակերտները	0,25	0,5	0,25	0,54

Այսպիսով առաջինի, ավելի վորակյալ կատեգորիայի նույնիսկ նոմինալ աշխատավարձն, դրա վարձն առավելագույնում մի քիչ ընկել ևր։ Ինչ վերաբերում ե ռեալ աշխատավարձին, դրա մասին գաղափար տալիս ե հետևյալ տախտակը.

ԱՌԱՋԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԸ (1890 թվինը 100 ե)

	1895	1899 թվակ.	1900	1904 թվակ.
		91,4		104,9
Հաց		100,2		121,4
Կենդան. արդյունքներ		98,4		119,3
Մանուֆակտուրա		108,9		113,1
Նաֆթ		99,2		104,1
Թեյ, սուրճ				

համար («հինգ կոպեկի հաւար» ինչպես յերբեմն արհամարհանքով արտահայտում եր մանր բուրժուական հեղափոխական մտավորականութիւնը, վորը հինգ կոպեկի համար պայքարելու արհրաժեշտութիւնից ազատվել եր բախտի բերմամբ) դարձել եր իսկական բանվորական հեղափոխութիւն։

Արդեն 1896—1903 թվերի միջոցում, վորն այժմ ուսումնասիրում ենք, նրանում կարելի յե յերկու ֆազեր (հաջորդական փոփոխութիւնները) նկատել։ Առաջին ֆազում արհեստակցական («հինգ կոպեկանոց») շահերը դեռ վճռականորեն գերիշխող են, ինչպես նույնը գերիշխում եր անգլիական բանվորական շարժման մեջ ամբողջ 40 տարվա ընթացքում (մոտավորապես 1850-ից մինչև 1890 թ.)։ Գործադուլավորների մասսայի կորիզը կազմում են մանածագործները։—1897 թվին, պաշտոնական տեղեկութիւններով, գործադուլ եյին արել սրանք թվով 47 հազար. (գործադուլավորների ընդհանուր թվից, վոր 60 հազար մարդ եր). մինչդեռ այդ տարին մետաղագործները գործադուլ եյին արել հազիվ 3 հազարից մի քիչ ավելի թվով։ Պաշտոնական թվերը, իհարկե, թե այս, թե այն դեպքում իրական թվերից պակաս են, բայց վորովհետև այդ թվերը պակաս են իրականից ամեն տեղ, ուստի բանվորական զանազան խմբերի փոխհարաբերութիւնը սրանց հիման վրա կարելի յե բավական ուղիղ վորոշել։*)

Գործադուլներն այդ ժամանակ, ինչպես գուտ «արհեստակցական» գործադուլներին վայելում ե, աշխատում են խաղաղ բնույթ ունենալ, վորը, ինչպես տեսնում ենք, իշխանութեանը փակուղում եր դնում։ Ցեթե այս շրջանում ել տեսնում ենք գործադուլներ, վորոնք փոթորկալի բնույթ են ստանում, վորն առաջ եր գնում «գործարանի և այլ կայքի վոչնչացմանն» հետ, ինչպես կառավարական հաղորդագրութիւններն եյին հայտարարում, յերբեմն նույնիսկ գործարանն եյին քանդում, հրդեհում, սպանում հատկապես բանվորների չսիրած գիրեկտորներին, վարպետներին և այլն (այսպիսին եյին Մոսկվայի և Վլադիմիրի նահանգների 1897—99 թվերի մի շարք գործադուլները), ապա այդ շարժման վատ կազմակերպման, անզուսպ լինելու հետևանք եր և վոչ նրա հեղափոխական բնույթի։ Վորքան այդ «արհեստակցական» գործադուլների ժամանակ բանվորները լավ եյին կազմակերված լինում, վորքան ավելի գիտակից եյին լինում, այնքան ավելի իրենց հանգիստ եյին պահում. Պիտերի մանածագործների մեջ հետքն ել չկար այն բանի, ինչով աչքի եյին ընկել Վլադիմիրի նահանգի գեռևս «չապագյուղացիացված» բանվորները։

90-ական թվերի այդ առաջին մեծ գործադուլների «խաղաղ», վոչ հեղափոխական բնույթի հետևանքով առաջ յեկան զանազան իլյուզիաներ (խաբուսիկ կարծիքներ, մոլորութիւնները) շարժումներին ժամանակակից հեղափոխական մտավորականութեան մեջ։ Մենք տեսանք, վոր հեղափոխական մտավորականների խմբակները, վորոնք ցարի կառավարութեան դեմ մղած իրենց պայքարում աշխատում եյին հենվել բանվորական մասսաների վրա և այդ պայքարի գլխավոր միջոցը դարձնել բանվորական շարժումը, սկսեցին առաջ գալ դեռևս 1890-ական թվերի առաջին կիսում (այսպես կոչված «Союзы борьбы за освобождение рабочего класса»—Բանվոր դասակարգի ազատագրութեան պայքարի միութիւնները—. տես. II մ.)։ Սկզբում այդ խմբակները, «Աշխատանքի ազատագրութեան» խմբակի մարքսիզմի հավատարմորեն հետևողները դասակարգային հողի վրա եյին կանգնած։ Գործադուլների բանները քարոզանդ անելու մեջ նրանք տեսնում եյին պրոլետարիատի հեղափոխականութեան անգիտակից արտահայտութիւնը։ Այդ միջավայրում ժողովրդականացավ «Յար-Սովը» բրոշյուրը գրում եր. «Կործանումների (պատերազմների) պատմութիւնը մեզ ցույց է տալիս, թե վերջին ահագին ուժ կա բանվորների միացյալ բողոքի մեջ։ Միայն անհրաժեշտ է հոգ տանել այդ ուժը մասին, վոր այդ ուժը գործադրվեր ավելի գիտակցորեն, վոր այդ ուժը իր ու այն տեսիլ ֆաբրիկան կամ գործարանը քարուքանդ անելու վրա, վոր այդ բողոքի և տեսլութեան ամբողջ ուժը ուղղվեր բոլոր ֆաբրիկանտների ու գործարանատերերի դեմ միասին, նրանց ամբողջ դասակարգի դեմ և գործադրվեր նրանց դեմ մշտական և համառ կռվի համար։ Իշխանութեան հետ ընդհարվելով բանվորները կը հասկանան, վոր կառավարութիւնը և պաշտոնյաները տանտեսատերերի կոչին են պահում, իսկ որենքները այնպես են կազմում, վոր տանտեսատերերը հեշտութեամբ կարողանան ճնշել բանվորներին։ Բանվորները, այդ հասկանալով, պայքար կըմղեն վոչ միայն տանտեսատերերի դեմ, այլ և այն անարդար կարգերի դեմ, վորոնք որենքներով հաստատված են»։ Սակայն հենց ամենից ավելի գիտակից բանվորներին թվացող վոչ հեղափոխականութիւնը շուտով սկսեց մեր հեղափոխական մտավորականութեան մի մասին—այն ել մեծ մասին այդ ճանապարհից շեղել։ Մտավորականութեան մեջ սկսեց հաջորդաբար յերկու հոսանք կազմակերպվել. մեկը, վոր առավելապես ամրապնդվել եր Պետերբուրգում, Պետերբուրգի «Союз борьбы»-ի («Պայքարի Միութեան»),—մի քանի անգամ ջախջախելուց հետո, (վոր միայն 1817 թվի գարնան ընթացքում կորցրեց 67 մարդ շնորհիվ ձերբակալութիւնների) և իր արտահայտութիւնը գտել «Рабочая Мысль» թերթում, սկսեց բանվորական դասակարգի գլխավոր խնդիրը տեսականի պայքարի համարել. ըստ վորում 1870 թվականների նարոդնիկների որինակով, քաղաքականութիւնը բանվոր դասակարգի համար եր «բուրժուական» գործ։ Արհեստակցական ազիտացիայի ակնհայտնի հաջողութիւնները, ավելի ու ավելի

*) Մանածագործարանների մեծ մասը կենդրոնացած եր արդյունաբերական կենդրոնական շրջանում, ուր բանվորը կխով չափ դեռ գյուղացի յեր, ամեն մի բանվոր ուներ իր տանտեսութիւնը գյուղում։ Այդ պատճառով ձեռնարկատերը կարող եր բանվորին, իսկական քաղաքային բանվորի համեմատութեամբ, լրիվ չվճարել։ Յեվ իրոք 1890 թվին մանածագործների աշխատավարձը ամբողջ Ռուսաստանի մեջին աշխատավարձից ցած եր. աշխատավարձը հավասար եր տարեկան 166 ռ., մինչդեռ բոլոր արտադրութիւններում աշխատավարձը, մեջին թվով, 179 ռուբլի յեր։ Ինչ վերաբերում է Պետերբուրգի մանածագործներին, սրանք հարևան գյուղերի գյուղացիներ չեն։ Սրանք քաղաքային սեպիկ պրոլետար եյին։ Բայց քանի վոր գնները Մոսկվայի շրջանով եյին վորոշվում, Պետերբուրգի ձեռնարկատերը հրաժարվում եյին իրենց բանվորներին վճարել այնպիսի գին, վորպիսին վճարում եր սահմանում տարեկան, մանածագործը սահմանում եր միայն 205 ռ. Դրան կից մետաղագործն ուներ 11—10 ժամյա բանվորական որ, մանածագործն ուներ 14 ժամյա բանվորական որ։ Այդ պիտի և դրվի գանազան Պիտերի մանածագործների դժգոհութեան համար և զարմանալի չե, վոր սրանց մեջ բանկից գործադուլը։ Իհարկե, բացի տնտեսական մոմենտից, գործարաններում անընդհատ գոյութիւն ունեցող բանվորական խմբակները պետք է վորոշ հող պատրաստեին։ (Ծանոթություն յերիտասարդ ընթերցողների համար). Լենինգրադը այն ժամանակ կոչվում եր Պետերբուրգ. (Պետրոգրադ սկսեցին անվանել միայն ռուս-գերմանական պատերազմի սկզբին 1914 թ.։ Մենք գործ կածենք այն անունը, վորը կար մեր նկարագրած ժամանակում՝ 20-րդ գարի սկզբին։

աճող, ավելի ևս մեծ տնտեսական գործառույթների թիվը (հենց մանածագործների գործադուլները ավելի խոշոր բնույթ ունեյին— 1895—1904 թվերի տասնամյակում.—միջին թվով մի գործադուլին ընկնում եր 692 բանվոր, մինչդեռ մետաղագործները տալիս եյին 348 մարդ, միյուսները ավելի քիչ) այդ «եկոնոմիստների» գլուխը պտրտացրին, նրանց աչքից բոլորովին ծածկելով, հետ մղելով դեպի յերրորդ պլանը քաղաքական դասակարգային կռիվը։ Շատ բնական է, վոր յերբ նրանց ցանկությունից ու նախատեսնելուց անկախ, քաղաքական պայքարն սկսվեց, դրանց առաջնորդների մեծ մասը (Պրոկոպովիչ, Կուսկովա և ուրիշները) պրոլետարիատի շարքերում չերեվացին, այլ բուրժուազիայի շարքերում։

Բայց նույն սխալ եղրակացությունը, վոր իբր թե բանվորական շարժումը քաղաքական բնույթ չունի, ուրիշ խառնվածք ունեցող մարդկանց մեջ, վորոնք իրենց բնավորությամբ հիշեցնում եյին 1870-ական թվականների նարոդավոլցիներին, առաջ բերեց բոլորովին այլ ձգտումներ։ Բանվորը հեղափոխական չէ, մտածում եյին այդ մարդիկ, հենվելով վոչ միայն ռուսական բանվորական շարժման որինակների վրա, այլև այն բանի, ինչ վոր իրենք գիտեյին անգլիական բանվորական շարժման մասին. (թե ինչու անգլիացի բանվորները XIX-րդ դարի ընթացքում հեղափոխական չեյին, մենք արդեն գիտենք)։ Նրանից՝ բանվորից, հեղափոխական նախաձեռնություն չի կարելի սպասել. ուրեմն պետք է այդ նախաձեռնությունը իր վրա առնի մտավորականությունը։ Ինչո՞ւմ կարող է արտահայտվել մտավորականության այդ հեղափոխական նախաձեռնությունը։ Ի՞նչպես կարող է նա բանվորին որինակով ճանապարհ ցույց տալ դեպի հեղափոխությունը։ Պարզ է, վոր մի ճանապարհով—անհատական ահաբեկության—տերրորի ճանապարհով։ Սպանել վորևե նահանգապետի, վորը հատկապես կատաղի կերպով է խաղաղացնում գործադուլները—ահա և բանվորները կբռնկանան, թե ինչ պետք է անել։

Այս յերկրորդ մտավորական հոսանքից, վորն ավելի ուշ կազմակերպվեց, XX-րդ դարի առաջին տարիներում դուրս յեկավ սոցիալիստ—հեղափոխականների կուսակցությունը։ Յեթե «եկոնոմիստներին» իրենց տակտիկան քաղաքականությունից հեռացնում եր, սոցիալիստ-հեղափոխականներին էլ իրենց տակտիկան բանվոր դասակարգից եր հեռացնում։ Բայց և այդ նրանց դեռ չեր մոտեցնում խոշոր բուրժուազիային, վորը ահաբեկումից պահպան չեր վախենում, քան գործադուլից։ Սոցիալիստ-հեղափոխականների դասակարգային հենարանը, բնականաբար, գարձան բնակչության այն խմբերը, վորոնց մեջ ուժեղ եր տնտեսական ինդուվիդուալիզմը—անհատականությունը, ուր մարդիկ աշխատում եյին վոչ թե շարքերում, ինչպես գործարանի բանվորը, այլ մենակ։ Այդպիսի խումբ եր ամենից առաջ մանր բուրժուական մտավորականությունը, առաջին հերթին ուսանողությունը, վորը ամենից շատ ժարտիկներ եր տալիս վերածնված տերրորիզմին, հետո զեմստվոյի «յերրորդ տարրը»՝ տատտիստիկները, գյուղատնտեսները, ուսուցիչները։ Իսկ յերբ շարժումը լայն մասսաներին գրավեց, սոցիալիստ-հեղափոխականները պետք է հենարան փնտռեյին գյուղացության մեջ։ Յերբ անցնենք քաղաքային և գյուղական մանր բուրժուազիայի մասսայական շարժման, նրանցով ավելի մանրամասն կզբաղվենք։

Ռուսական մարքսիստների մեջ յեղած այդ բոլոր ընդհարումները, շատ

եյին խանգարում Ռուսաստանում քաղաքական բանվորական կուսակցություն կազմակերպվելուն։ Անվանապես Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը առաջ յեկավ 1898 թվի մարտին, Մինսկի հատգումարում, վորտեղ կային Մոսկվայի, Պետերբուրգի, Կիևի, Յեկատերինոսլավի կազմակերպությունների և «Ընդհանուր Հրեական Միությունը» (այժմ ավելի «Բունդ» անունով հայտնի) ներկայացուցիչները։ Համագումարը հրատարակեց մանիֆեստ, և հենց այն, վոր այդ մանիֆեստը գրել եր վոչ թե բանվորական հեղափոխական շարժման ղեկավարներից մեկը, այլ «լեգալ մարքսիստ» *) Ստրուվեն (Վրանգելի ապագա մինիստրը, այժմ ռուսական միապետական ռեակցիայի առաջնորդներից մեկը), վորը միաժամանակ գրական ճանապարհով «սպառարկում եր» նաև գեմսկի լիբերալներին, ցույց է տալիս, թե նոր կուսակցության առաջին քայլերը վրդքան թույլ եյին։ Կուսակցության լավագույն աշխատավորները այդ ժամանակ բանտում եյին, աքսորի մեջ և կամ արտասահմանում։ Միայն 1900 թվի վերջին, արտասահմանում հիմնական ղեկավարող խումբ կազմվելուց հետո, ի դեմս «Искра»(«կայծ») թերթի խմբագրության, սկսվում է պլանաչափ լայն աշխատանք բանվորական հեղափոխություն կազմակերպելու, ըստ վորում պետք է նշել, վոր արդեն «Искра»-ի հրատարակության հայտարարության մեջ խմբագրությունը կարիք զգաց անջատվելու առաջին կուսակցական մանիֆեստի հեղինակից՝ Պոտը Ստրուվեյից։ «Մանիֆեստի հիմնական գաղափարները մենք ընդունում ենք—ասում եր խմբագրությունը—բայց Ստրուվեյի հետ մենք ընդհանուր վոչինչ չունենք»։ Յեվ միայն ս.-դ. կուսակցության յերկրորդ համագումարում (1903 թ. ոգոստոս), վորը և փաստորեն առաջինն եր, կուսակցությունն ստացավ իր իսկական, մարտական կազմակերպությունը։**)

Բայց իհարկե մարքսիզմի պատմության ժեթոդին բոլորովին հակասություն կլիներ այդ փոփոխությունը բացատրել բացառապես արտասահմանում հրատարակվող թերթի ազդեցությամբ։ «Искра» թերթը կարող եր կազմակերպչական կենդրոն լինել, բայց նա պետք է կազմակերպելու նյութ ունենար։ Այս նյութը հենց ավեց բանվորական շարժման նոր ֆազը, հաշվով յերկրորդը, և սրան շուտով հաջորդող յերրորդը, վորոնք ավելի ու ավելի պարզ ցույց եյին տալիս, վոր Ռուսաստանում բանվորական շարժումը կարող է և պետք է քաղաքականապես կազմակերպվի։ Այդ այնքան եր աչքի զարնում, վոր կազմակերպելու ձեռք զարկեցին վոչ միայն հեղափոխականները, այլև ցարական պաշտոնյաները, վորովհետև նրանցից ավելի նրբամիտները չեյին կարող չտեսնել, վոր յեթե ժամանակին չգրավեն բանվորական կազմակերպությունը և այն «օրինական» հունի մեջ չդնեն, շարժումը անպայման հեղափոխական հունով առաջ կգնա։

Յերկրորդ ֆազի արտաքին նշանն եր նախ այն, վոր հենվում եր վոչ մանածագործների վրա (թեև վերջինս էլ բեմից դեռ բոլորովին չեր հեռացել), այլ մետաղագործների վրա։ Մենք տեսանք, վոր 1897 թվին վերջիններս ավին 60 հազար գործադուլավորներից 3 հազարից մի քիչ ավելի գոր-

*) «Լեգալ մարքսիզմի» մասին դեռ ստորև, ընդհանրապես մանր բուրժուական մտավորականության շարժման առթիվ գրածում։

**) Մենք կուսակցության պատմությամբ այնքան ենք զբաղվում, վորքան այդ անհրաժեշտ է դեպքերի ընդհանուր ընթացքը հասկանալու համար։ Մանրամասնությունների ընթերցողները կգտնեն հատուկ գրքույկում, վոր նվիրված է Ռ. կ. կ. պատմության։

ծադուլավորները, իսկ մանածագործները՝ 47 հազար։ 1899 թվին ընդհանուր մասսային, վոր մի քիչ ավելի պակաս եր, մետաղագործները տվին գրեթե 20 հազար, իսկ մանածագործները՝ 15 հազար. 1903 թվին 87 հազար գործադուլավորներից մետաղագործ եյին 31 հազարը, իսկ մանածագործները 20 հազարից քիչ։ Այս բոլորը, կրկնում ենք, պաշտոնական թվեր են, վորոնք իրականությունից շատ պակաս են. (1903 թ. Ռուսաստանի միայն հարավում գործադուլ եր արել մինչև 225 հազար մարդ), սակայն բանվորների առանձին խմբերի փոխհարաբերությունը այդ թվերը ճիշտ են տալիս։

Իսկ ինչ եր նշանակում բեմում մետաղագործների այդ բանակի յերեվալը։ Ամենից առաջ այն, վոր շարժումը ընդգրկել եր Ռուսաստանի բանվոր դասակարգի ամենից ավելի լավ սարքված և ավելի լավ վարձատրվող խավին։

Մինչդեռ մեզանում 1900 թվին մանածագործի միջին վարձատրությունը 170 ռուբլի եր տարեկան, մետաղագործի միջին աշխատավարձը հավասար եր 341 ռ., ուղիղ յերկու անգամ ավելի։ Մինչդեռ մանածագործի համար բանվորական որը մինչև 1897 թվի որենքը տարուբերվում եր 12 և 14 ժամերի մեջ, մետաղագործի համար այդ որը 11 ժամից ել չեր անցնում, հաճախ նաև 10-ի հասնելով։ 1897 թվի հանձնաժողովում նույնիսկ մետաղագործ-գործարանատերերը համաձայնեցին $10^1/_2$ ժամի, մինչդեռ մանածագործարանատերերը վողբում եյին, թե 12 ժամից ավելի պակաս բանվորական որ լինելու դեպքում իրենք կքայքայվեն։ Այժմ գործը վերաբերում եր վոչ թե բանվորների վորևե խմբի արհեստակցական շահերին, թեև այդ խումբը շատ ել խոշոր լիներ, այլ ամբողջ բանվոր դասակարգի տանջանքներին, տանջանքներ, վորոնք զգալի եյին այդ դասակարգի ավելի ապահովված ներկայացուցիչների համար եւ։ Կազմակերպվում եր հող ընդհանուր դասակարգային շարժման համար, վորը վոչ մի դեպքում չեր կարող «անտեսական» ճիալ, վորովհետև դասակարգային պայքարը միշտ ել քաղաքական պայքար է, պայքար իշխանության համար։ Այդ շատ լավ եյին հասկանում անգլիացի գործարանատերերը և վորպեսզի իրենց բանվորներին պահեն շարժման «անտեսական» ասպիճանում, նրանք վոչ միայն բանվորներին «լավ կերակրում եյին», այլև աշխատում եյին բանվորական շարժումը կըտրատել, մասերի բաժանել, հոգատարությամբ պաշտպանելով բանվորական փոքր մասնությունները, վորոնց անդամների թիվը յերբեմն հարյուր մարդից չեր անցնում (Անգլիայում XIX-րդ դարում կար նաև մի մասնություն, վորի անդամների թիվը միայն 6 եր)։ Անգլիական շարժման հեղափոխական ֆազին անցնելը XX-րդ դարում նշված է բանվորական մասնությունների խոշորանալ. սրանով մենք հետ ավելի մանրամասն կզբաղվենք։ Մեզանում այն ժամանակ մասնությունները և գործադուլները պարզ կերպով արգելված եյին, սակայն բանվորական շարժման խոշորանալուն վոչ մի արգելք չեր կարող խանգարել։

Մյուսը, վորին մատնանշել և անում մետաղագործների հրապարակ գալը, այդ արդյունաբերության ճգնաժամի այն ուղղակի ազդեցությունն եր, վորի մասին խոսեցինք։ Մանածագործական արդյունաբերության մեջ ճգնաժամ գրեթե չեր զգացվում. ռուսական գործարանների 1897 թվից մինչև 1900 թիվը վերամշակած բամբակի քանակը նույնիսկ մեծացել եր 14-ից 18 միլիոն փթի եր հասել։ Այսպիսով այստեղ պայքարը վերաբերում եր բանվորի սո-

վորական դրության բարելավելուն և պայքարի յելքը կախված եր այն բանից, թե վոր կողմը ավելի ուժեղ եր՝ գործարանատերը, թե նրանից շահագործվող պրոլետարը։ Բայց վերջինիս հաղթության համար ամենևին ել պետք չեր տապալելու բուժվական ամբողջ կարգը. դրա համար ել յեվրոպական բոլոր յերկրներում այդպիսի պայքարը բոլորովին լեգալ (որենքով թույլ տրված) «անտեսական» բնույթ է կրում։ Մեզանում գործն այլ կերպ եր, վորովհետև գործադուլը հանցանք եր, որենքով պատժելի, բայց ավելի թղթի վրա։ Յերբ 1828 թվին Նեչայև-Մայլցևի մանածագործական և բամբակամանածային գործարանի գործադուլավոր բանվորներին փորձեցին դատի հանձնել, դատարանը գործում «հանցանքի բաղկացուցիչն» չգտավ և բանվորները արդարացան։ Դրա համար ել վոստիկանությունը գործադուլավորների հետ հաշիվ եր տեսնում արտաքսած կարգով. սակայն այդպես հաշիվ եր տեսնում և՛ ֆրանսիական, և՛ գերմանական վոստիկանությունը, գոնե մեծ գործադուլների ժամանակ, որինակ, վորոնք ընդգրկում եյին ամբողջ արտադրությունը, կամ յերբ բռնկում եր գործադուլը վորևե շատ խոշոր ձեռնարկության մեջ։ Արտասահմանի և Ռուսաստանի տարբերությունը մեծ մասամբ ռուսական պատժի ավելի կոպիտ ձևի մեջ եր. մեզանում յերբեմն գործադուլավորներին կարող եյին և ծեծել, մի բան, վոր Ֆրանսիայում չեյին համարձակվի անել (թեև վոստիկանատներում ծեծելը այնտեղ ել սովորական յերևույթ եր)։ Մի խոսքով լեգալ «անտեսական» և անլեգալ «հեղափոխական» բանվորական շարժման տարբերությունը վոչ այնքան նրանում եր, վոր առաջինը թղթի վրա կարելի յեր թույլ տալ, այլ նրանում, վոր առաջինը ընդհարվում է առանձին բուրժվայի շահերի հետ, իսկ յերկրորդը ամբողջ բուրժվական կարգի հետ։ Այսպիսին ել միշտ լինում է բանվորը ամբողջ բուրժվական կարգի հետ։

վորական շարժումը ճգնաժամի ժամանակ։

Ճգնաժամը ստեղծում է վոչ թե առանձին բուրժվայի չար կամքը, այլ ամբողջ բուրժվական կարգը։ Յերբեք բանվորը այնպես չի զգում այդ կարգի ծանրությունը, ինչպես զգում է ճգնաժամի ժամանակ և վոչինչ այնպես հեղափոխական չի դարձնում բանվորական շարժումը, ինչպես ճգնաժամը։

Շարժման բնույթի փոփոխությունը իսկույն յերևաց գործադուլավորների նոր պահանջներում. նախկին նեղ «գործնական» պահանջների տեղ, վորոնք յերբեմն մանրության եյին հասնում, յերբեմն ել ծիծաղելի (որինակ վեճ այն մասին, թե ով պետք է վճարե բանվորների «խցիկների» բացվելը վոչնչացնելու համար՝ տերը, թե բանվորը) հրապարակ է գալիս սկզբունքային, համապրոլետարական վոչ միայն Ռուսաստանին, այլև ամբողջ աշխարհի համար, 8 ժամյա բանվորական որի պահանջը։ Մետաղագործների համար ֆիզիքապես ել հեշտ եր այդ պահանջը առաջ քաշել, վորովհետև նրանցից մի քանիսը նվաճել եյին 10 ժամյա որ արդեն 1901 թվին, իսկ մանածագործները նույնիսկ Պետերբուրգում դեռ 1903 թվին պետք է պայքարեյին 13 ժամյա որի համար։ Մետաղագործներից ամենից առաջ այդ պահանջով հրապարակ յեկան յերկաթուղային արհեստանոցների բանվորները (Թիֆլիսում 1901 թվի հոկտեմբերին. բայց արդեն շատ շուտով սրանց հետևեց 1902 թ. մարտին Վոտկինի գործարանը). և այս ել պատահականություն չե։ Բանն այն է, վոր յերկաթուղային արհեստանոցները ամենից քիչ մրցակցություն եյին կրում, դրանցում բանվորները շարունակ փոխարկան բանվորական կազմ ունեին. դրանցում բանվորները

վում էին. շարժվելով, յերկաթուղային ցանցի պահանջի հետհանքով, մի արհեստանոցից մյուսը։ Դրա համար էլ շարժումը արհեստանոցներում մեկը մյուսի յետևից բոնկում էր, տարածվելով կարծես վառվող թելի պես։ 1901 թվին գործադուլ արին Սարատովի (2 անգամ), Տամբովի և Թիֆլիզի արհեստանոցները. 1902 թվին Կրասնոյարսկի և Վլադիկավկազի յերկաթուղագծերը (Ռոստով Դոնի վրա), տալով Ռուսաստանի այդ շրջանի ամենախոշոր գործադուլի ազդանշանը. 1903 թվին—«վարշավայինը» (Պետերբուրգում) և «Հարավ-Արևելյան» (Բորիսոգլեբսկում) և այլն, և այլն։

8 ժամյա որի պահանջը մի մարտահրավեր էր, ուղղած ամբողջ կապիտալիստական կարգին. իզուր չէր առաջին միջազգային կոնգրեսը Մայիսի 1-ի հերթական լոզունգների շարքում դրել այդ։ Դա պրոլետարիատի միակողմանի պահանջն էր, իր իրավունքի հայտարարությունը, վորը ամենևին հաշվի չէր առնում տնտեսատերերի շահերը, ինչպես վոր անխուսափելիորեն այդ հաշվի չէր առնում ամեն մի «տնտեսական» վոչ հեղափոխական գործադուլ։ Առանձին ձեռնարկատերերի համար 8 ժամյա որը որիյենտիվ տեսակետից (իրերի հետևանքով) անիրագործելի յի. գուցե թե լինին վորևե բացառիկ նպաստավոր հանգամանքներ։ Այսպես 1905—07 թվերին մի քանի ռուսական խոշոր ձեռնարկատեր էր մասնավոր խոսակցության ժամանակ հաշվում էին 8 ժամյա բանվորական որի հետ պայման դնելով, վոր մաքսային հարկերը ավելանան. իրենց գնորդների վրա հարկ դնելով նրանք հույս ունեյին այն ճեղքը փակել, վոր նրանց ոգուտների մեջ կըբանար 8 ժամյա բանվորական որը։ Ընդհանրապես ասած, այդ ձեռնարկատիրական վաստակի այնպիսի նվազեցումն ե, վոր այդ մասին բուրժուան համաձայնում ե խոսել միայն ավելի վատ սպառնալիքի տակ։ 1905 թվի Հոկտեմբերյան գործադուլից և դեկտեմբերյան բարրիկադներից հետո կադետական կուսակցության ծրագիրը թոթովեց 8-ժամյա բանվորական որի մասին «ըստ հնարավորության»։ կարծես հնարավոր ե բուրժուայից խլել բանվորից քամած ռուբլին այլ կերպ, քան բոնությամբ։

Այն պարզ-հեղափոխական բնույթը, վոր այժմ բանվորական շարժում ստացել էր, ստիպեց այդ ժասին մտածելու նաև ցարական կառավարությանն ի դեմս այն պաշտոնյաների, վորոնց վրա ծանրանում էր «կարգը» պահպանելու հոգսը։ Արդեն 1901 թվին Սվյատոպոլկ-Միրսկին (ռուս-յապոնական պատերազմի ժամանակ «վատահության» մինիստր, իսկ այդ ժամանակ ժանդարմների շեֆ, այսինքն ամբողջ քաղաքական վոստիկանության գլխավոր) գրում էր. «Իրենց համար վերջնական նպատակ դնելով բանվորներից կազմակերպած ժասսաներ ստեղծել պայքարելու կառավարության դեմ իրենց գաղափարների իրականացման համար, ագիտատորները 3—4 տարում ռուս բարեհոգի յերիտասարդից պատրաստվել և կիսագրագետ պետ մտավորականի տիպ, վորը իր պարտքն ե համարում ժխտելու կրոնը և ընտանիքը, արհամարհել որենքը, չենթարկվելու իշխանության և ծաղրելու այն։ Այսպիսի յերիտասարդություն, բարեբախտաբար, գործարանում դեռ քիչ կա, բայց այդ չնչին խմբակը ահաբեկելով զեկավարում ե բանվորական վաստակի այնպիսի նվաճողությունն ե, վոր այդ մասին բուրժուան համաձայնում ե խոսել միայն ավելի վատ սպառնալիքի տակ։ 1905 թվի Հոկտեմբերյան գործադուլից և դեկտեմբերյան բարրիկադներից հետո կադետական կուսակցության ծրագիրը թոթովեց 8-ժամյա բանվորական որի մասին «ըստ հնարավորության»։ կարծես հնարավոր ե բուրժուայից խլել բանվորից քամած ռուբլին այլ կերպ, քան բոնությամբ։

Այն պարզ-հեղափոխական բնույթը, վոր այժմ բանվորական շարժում ստացել էր, ստիպեց այդ ժասին մտածելու նաև ցարական կառավարությանն ի դեմս այն պաշտոնյաների, վորոնց վրա ծանրանում էր «կարգը» պահպանելու հոգսը։ Արդեն 1901 թվին Սվյատոպոլկ-Միրսկին (ռուս-յապոնական պատերազմի ժամանակ «վատահության» մինիստր, իսկ այդ ժամանակ ժանդարմների շեֆ, այսինքն ամբողջ քաղաքական վոստիկանության գլխավոր) գրում էր. «Իրենց համար վերջնական նպատակ դնելով բանվորներից կազմակերպած ժասսաներ ստեղծել պայքարելու կառավարության դեմ իրենց գաղափարների իրականացման համար, ագիտատորները 3—4 տարում ռուս բարեհոգի յերիտասարդից պատրաստվել և կիսագրագետ պետ մտավորականի տիպ, վորը իր պարտքն ե համարում ժխտելու կրոնը և ընտանիքը, արհամարհել որենքը, չենթարկվելու իշխանության և ծաղրելու այն։ Այսպիսի յերիտասարդություն, բարեբախտաբար, գործարանում դեռ քիչ կա, բայց այդ չնչին խմբակը ահաբեկելով զեկավարում ե բանվորական վաստակի այնպիսի նվաճողությունն ե, վոր ժանդարմին հեղափոխական բանվորը շատ մոայլ կույներով ե պատկերացնում, բայց կա-

այժմ մասսային ղեկավարում ե։ Ցեվ յերբ ժանդարմների առաջ հարց եր ծագում՝ ի՞նչ անել, ի՞նչպես կռվել դրա դեմ, շատ անսպասելի պատասխաններ ստացվում. անել այն, ինչ վոր ագիտատորներն են անում միայն, այսպես ասած, հակառակ նշանով, վոչ ցարի դեմ, այլ ցարի ոգտին։ Ոգեսության քաղաքապետ Շուվալովը դեռ 1899 թ. իրեն հարց տալով՝ «ի՞նչ անել», պատասխանում եր. «պետք ե կրթության ճանապարհները բանալ, պետք ե ընթերցարանների և գրադարանների բացումը դյուրացնել, կազմակերպել ժողովրդական ընթերցանություններ, բանվորների մեջ հնարավորության չափ տարածել ևժանագին գրքեր, նույնիսկ ձրի, վորոնք կարող են նրանց համար թե տեղական և թե ընդհանուր հետաքրքրություն ներկայացնել...»։ Շուվալովի կարծիքով այդ գրքերը կարող եյին հաջողությամբ մրցել «ընդհատակյա գրականության դեմ, վորը շատ ավելի ժխտողականության և նվիրվածություն»։ Իսկ գլխավորը՝ «պետք ե կրճատել աշխատանքի ժամանակը, անպայման բանվորներից ընտրվածներ ունենալ, վոր հսկեն կանոնավոր կերակուր յեփելուն, լավ ընակարաններ կառուցել և այլն»։

Այսպես արդեն XIX-րդ դարի վերջին տարիներում ուրվագծվում եր ծրագիր այն բանի, վորը ծագեց առաջ Մոսկվայում, ապա և ամբողջ Ռուսաստանում, ներկա դարի առաջին տարիներին, այժմ ամենքին հայտնի զուբատովականություն անունով։ Մոսկվայի պաշտոնական բաժնի պետը, վորը ամբողջ «հիմնարկությանն» իր անունը տվեց, ամենևին մենակ ինքը չեր դրա գոնողը։ Գաղափարը «ողում շրջում եր»։ 1902 թ. փետրվարի 14 Մոսկվայում հաստատվեց „Общество взаимного вспомоществования рабочих в механическом производстве“-ի կանոնադրությունը «Մեքենաշինական արտադրության բանվորների փոխադարձ ոգնության ընկերություն»)։ Ընկերությունը պետք ե ղուտ պրոլետարական կազմակերպություն լիներ. սրա շարքերը մտնել ամենքին թույլ չեյին տալիս «մանր մտավորականության» (ուրիշ խոսքով «ագիտատորներին»)։ Իրեև բացառություն կարող եյին աջակցող անդամ լինել գործարանի տեսչության և վոստիկանության պաշտոնյաները, ֆաբրիկայի և գործարանի վարչության պատկանող անձերը, նաև քահանաներն ու յեկեղեցական ծառայողները։*)

Այդ ճանապարհով ամեն տեսակ «վատ» ազդեցություններից մեկուսանալով, Մոսկվայի մետաղագործները դրա փոխարեն շրջապատեե լեյին Մոսկվայի վոստիկանության, վորի պետը այդ ժամանակ նշանավոր գլխավոր-վոստիկանապետ Տրեպովն եր, ամենամոտ, ամենաքնքուշ, կարելի ե ասել, խնամակալությունով։ Գլխավոր—վոստիկանապետը հսկում եր ընկերության գանձարկղի ապահովության, նախորոք նայում եր և հաստատում ընկերության հրատարակվող հրահանգները, բոլոր նիստերին ուղարկում եր իր ներկայացուցիչներին, այդ նիստերին կարող եր իր ուզած հարցը դնել և յեթե արժանի եր համարում ինքը ներկա լինել, ստանում եր... քսան ձայն։ Սրանից հետո բոլորովին պարզ ե, վոր վոստիկանապետը չեր կարող ընկերությունը թողնել վորևե մեկին, վոր ինքը պետք ե հետևեր նաև վարչության ընտրությանը, և գործի պարզության համար, նա վարչու-

*) Ինչպես տեսնում ենք բուրժուան, շրիկը (վոստիկանական լրտես) և տերտերը միացած են մի ամբողջության մեջ վոչ ամենևին չարագործ բոլշևիկների ձեռքով 1917 թվին, —դրանից 16 տարի առաջ նրանք իրենք իրենց միացել են մի սրտառուչ բարեկամության մեջ, իբրև ընդհանուր գործի ընկերներ։

թյունը պարզապես նշանակում եր ընդհանուր ժողովում ընտրված թեկնածուներից։

Փետրվարի 14-ին այդ կանոնադրությունը հաստատվեց, իսկ նույն 1902 թվի փետրվարի 19-ին 50,000 բանվոր ներկա յեղան Կրեմլում «հանդիսավոր ադոթքին» Ալեքսանդր II-ի արձանի մոտ։ «Այդպիսի բազմություն»—ինչպես հպարտությամբ այդ խուռն ժողովն անվանում եր Զուբատովը,—նույնիսկ մի քիչ վախեցրեց ներքին գործերի մինիստրին, վորը հատուկ շրջաբերական ուղարկեց, ուր ասվում եր, թե այդ շատ լավ ե, իհարկե, բայց այլևս յերբեք չկրկնել։

Ներքին գործերի մինիստրի վախը, ինչպես շատ շուտ յերևաց, ամենևին առանց հիմքերի չեր։ Քաղաքականապես քիչ գիտակից մասսայի համար—իսկ բաղաքականապես քիչ գիտակից եր դեռևս բանվորների մեծամասնությունը—վորը չեր շփոթվում վոստիկանապետի կերպարանքից (ավելացնենք այն, վոր այդ կերպարանքը ծածկված եր Մոսկվայի համալսարանի պրոֆեսորների ավելի «հարգելի» կերպարանքներով, վորոնք դրաված եյին բանվորներին «լուսավորելով» և ընդհանրապես անմիջապես «գործը վարում եյին») զուբատովականությունն ահագին զարկ եր դեպի առաջ դասակարգային գիտակցության զարգացման գործում—հասկանալու դասակարգային հակամարտությունը բանվորի և գործարանատիրոջ։

Անշնորհք կերպով նմանվելով հեղափոխական ագիտատորներին,—մենք հիշատակենք, վոր ամբողջ հնարքը կատարելապես սոցիալ-դեմոկրատական ագիտացիայի կեղծումն եր, դրանում եր գործի եությունը, Զուբատովի ագենտները մինչև իսկ խոսատուներ ավեցին, թե կառավարությունը շուտով կարգադրելու յե գործարանները խլել տնտեսատերերից և հանձնել բանվորներին։ Կառավարությունը պատրաստ ե ամեն բան անել, յեթե բանվորները չլսեն «մանր մտավորականներին»։ Առանձին գործադուլներում վոստիկանությունը ուղղակի պաշտպանում եր գործադուլավորներին, նրանց ոժանդակություն եր տալիս և այլն։ Այս բոլորի պղտիցության տակ զուբատովյան—բանվորները սկսեցին խոսել, թե «այժմ անցել ե այն ժամանակը, յերբ կային սարկաստերը և սարուկները և յերբ սարուկները նմանեցնելով մեղուներին, իրենց տերերին ձրի կերակրում եյին. այժմ սարուկներն ել տերերի պես պետք և ապրեն»։ Անգլիացի ձեռնարկատերերը, ի թիվս այլ միջոցների, իրենց տիրապետությունը պահելու համար, մեծ խնամքով հակում եյին իրենց բանվորներին, վոր նրանցում դասակարգային գիտակցությունը չզարգանա.—ամեն կերպ բանվորների մեջ այն միտքն եյին պաշտպանում, վոր իրենց և ձեռնարկատերերի շահերը հակառակ չեն իրար, վոր բանվորը և տնտեսատերը միշտ ել կարող են համաձայնության գալ։ Ռուս ձեռնարկատերերը վոչ մի դիմման ընդառաջ չգնալով ուղղակի հակառակ կողմն եր մղում բանվորին։

Ռուսաստանի ձեռնարկատերերի այդ դիմում չանելը հենց վերջնականապես «զուբատովականությունը» պայթեցրեց։ Թվում եր, վոր դժվար չեր հասկանալ, թե «վոստիկանական սոցիալիզմը» իսկական սոցիալիզմից ապահովագրություն լինելով, պահանջելու յեր ապահովագին. ապահովագրելու համար վճարել պետք եր։ Այնուամենայնիվ հենց վոր գործարանատերերը զուբատովականության ծանրությունը իրենց դրպանի վրա զգացին, վանասուն բարձրացրին։ Մենք լավ հիշում ենք, վոր մեզանում

ամեն կերպ աշխատում եյին ռուսական արդյունաբերության մեջ գրավել արտասահմանի կապիտալը։ Սրանց տերերը Ռուսաստանի վրա նայում եյին, իհարկե, իբրև մի վայրենի յերկրի, վորի բնակչությունը հենց նրա համար իհարկե, իբրև մի վայրենի յերկրի, վորի բնակչությունը հենց նրա համար ել գոյություն ուներ, վոր իրենց՝ կապիտալիստների գրպանները լցնի։ Յերբ իրենց գործարանում գործադուլ եր լինում և վոստիկանությունը «խաղաղացնում եր», նրանք դեռ այդ համբերում եյին. այդ իրենց ծանոթ տեսարան եր։ Բայց յերբ վոստիկանությունը պաշտպանում եր գործադուլը, այդ նրանք վոչ հասկանալ, վոչ ել համբերել կարող եյին։ Զուբատովյան գործադուլը մի գործարանում, վոր պատկանում եր «Ֆրանսիացի քաղաքացիներին», ահագին սկանդալ առաջ բերեց, վորը Ֆրանսիական դեսպանի միջամտության հասավ և այլն։ Մոսկվայի մանածագործարանատերերը, վոր ինչպես գիտենք, պատկանում եյին ամենից ագահ և բութ շահագործողներին, ոգտվեցին սկանդալից և իրենց վողրը ուժեղացրին։ «Վոսկանական սոցիալիզմի» յերկյուղը նրանց նույնիսկ մի րոպե յեվրոպացի դարձրեց. Թող մեզանում ել նույնը լինի, ինչվոր Ֆրանսիայում ե,—դատում եյին նրանք, ռուսական ձեր թանգ ե նստում։ Սրանց ճնշման հետևանքով ֆինանսների մինիստրությունը հրապարակ յեկավ զուբատովյան ավագներ (фабричные старости) հիմնելու նախագծով, վորոնց պետք ե բանվորներն ընտրեին և նույնիսկ Ռուսաստանում գործադուլը որինականացնելու նախագծով։ Առաջին որենքը հրատարակվեց (1903 թ. հունիսի 10.), յերկրորդի նախագիծը միայն իբր հիշատակ այն սարսափի, վոր բռնել եր ձեռնարկատիրական շրջաններին։ Սակայն սարսափածներին հանգստացրին ավելի պարզ միջոցով. նույն 1903 թվին Զուբատովն արձակվեց պաշտոնից։ Ինչպես միշտ, անհաջողությունը առանձին անհատի վերագրեցին։ Գաղափարից չբաժանվեցին և զուբատովականությունը Պետերբուրգ տեղափոխվեց, ուր նրա համար ավելի «հուսալի ձեռքեր» գտնվեցին ի դեմս Գեորգի Գապոն քահանայի...

Թե ինչ դեր խաղաց վոստիկանական սոցիալիզմի այդ նոր փորձը բանվորական հեղափոխության զարգացման մեջ, մենք ստորև կտեսնենք։ Դասակարգային գիտակցության զարգացումը, ավելի ևս աճող արդյունաբերական ճգնաժամի հողի վրա, զուբատովականությունը կանգնեցնել չեր կարող, ընդհակառակը, իր կամքից դուրս, նա աջակցում եր այդ զարգացման։

Նոր դարի հենց առաջին տարիներից բանվորական շարժումը յերկու նոր քայլ և անում դեպի առաջ։ Նախ նա դուրս ե գալիս գործարանների պատերից և բանվորական թաղերի ու շենների ահմաններից, դուրս ե գալիս մեծ հաղաքների փողոցները։ Յերկրորդ՝ նա ստանում ե բաց կռվի բնույթ արդեն վոչ միայն գործարանատերերի և սրանց ծառաների, այլ և ցարական կառավարության ծառաների դեմ։ Գործադուլները սկսում են բարդանալ գոյացեով։ Ով չի տեսել ռուս ժողովրդական մասսաների այդ առաջին յելույթները ընդդեմ պինված ուժի, ընդդեմ վոստիկանության, կազակների և ժանդարմների, նա դժվարությամբ կըպատկերացնե այն ապավորությունը, վոր անում եյին ցույցերը և իրեն՝ մասսայի վրա և այն բուրժուական և մտավորական ամբոխի վրա, վորը (բացի ուսանողներից) ավելի շուտ ակատես եր, քան շարժման մասնակցող։ Կարծես մի անբարտակ եր փլվել, սառուցներն եյին առաջ շարժվել։ Այո, «կարծես մեզանում գործը ֆրանսի-

աջոց և վոչ գերմանացոց ձեռվ առաջ կերթա», ասում էին մտավորական հասարակության մեջ։ Ամբոխի տեսքը, վորը պարզապես կազակներից չէր վախենում, վորը չցրվեց «կարգի պաշտպանների» առաջին իսկ յերևուլուց, այլ հարվածին հարվածով պատասխանեց, վերջապես զենքի ուժին տեղի տալով, հրապարակ եր դուրս գալիս հետևյալ և ելի հետևյալ որը ավելի ու ավելի մեծ թվով. այդ պատկերն ահա մի անգամից հետու մղեց դեռևս յերեկվա միապետության անպարտելիության մասին ունեցած ընդհանուր հավատը։ Բոլորն էլ այժմ հասկանում էին, վոր վերջինիս անկումը միայն քանակի խնդիր է, նույն շարժումը տասնհինգ, քսան անգամ «ավելի խիտ», խոշոր և լայն, և հեղափոխությունը պատրաստ է։ Նույնիսկ բուրժուազիան, վորի համար Ռուսաստանում հեղափոխության անկարելիությունը դավանանք եր, վորով արդարանում եր և նրա սարկական վախը ցարական իշխանության առաջ և նրա անամոթությունը և բանվորների վերաբերմամբ ունեցած աչակցությունը, նույնիսկ նա սկսեց կասկածել իր կուռքերի ամուր լինելու վերաբերմամբ և սկսեց խոսել... սահմանադրության մասին։

Ցույցերը սկսվեցին Խարկովյան ցույցով՝ 1901 թվի փետր. 19-ին, գյուղացիների ազատության քառասնամյակի առթիվ, բայց հատկապես ազդեցիկ եյին Մոսկվայի ցույցերը նույն թվի փետր. 23—26-ին։ Հենց սրանցում էլ առաջին անգամ զգացվեց հեղափոխության շունչը։ Կազմակերպել եյին այն ուսանողները, բայց հեղափոխական դարձրին այն բանվորները, վորոնք Մոսկվայում մասնակցում եյին ցույցերին տասնյակ հազարներով և կազակների «նագայկաներով» (մարակ) մի շարք հարձակումները յետ մղեցին։ Առաջին անգամ Մոսկվայում յերևացին բարբիկադները, 1905 թվի դեկտեմբերի հեռավոր նախանշանները։ Ցույցերը հետո շարունակվեցին Պետերբուրգում (մարտին և մանավանդ մայիսին, յերբ գործը հասավ ահագին կռվի Որուխովի գործարանի բանվորների և ղրքի մեջ, վորի ժամանակ սպանվեցին 6 հոգի և վիրավորվեցին 8-ը բանվորների կողմից, բայց վոստիկանությանն էլ բաժին հասավ), Թե Թիֆլիզում (ապրիլին), Յեկատերինոսլավում (դեկտեմբերին) և մի շարք այլ քաղաքներում։ Այդ մեկայն փոթորկի առաջին պորթկումներն եյին. 1902 թվի ուշ աշունն ականատես յեղավ մի դեպքի, վորը ռուսական բանվորական շարժման մեջ կարող է նույնպիսի բեկման կետ համարվել, ինչպիսին իր ժամանակին Մորոզովյան գործադուլն եր 1885 թվին։ Այդ 1902 թվի նոյեմբերի նշանավոր Ռոստովյան գործադուլն եր, վորն սկսվեց, ինչպես սովորություն եր դարձել, յերկաթուղային արհեստանոցում և վորը շուտով տարածվեց քաղաքի բոլոր խոշոր ձեռնարկություններում։ Բանվորների տրամադրությունն այնպիսի յեր, վոր իշխանությունն ամբողջ մի շաբաթ չեր համարձակվում նրանց մոտենալ։ «Ծեղի յեր ունենում Ռուսաստանում չլսված և չտեսնված մի բան,— պատմում է ժամանակակից մի հաշվետվություն։ Ամենորյա բազմամարդ միտինգներ բաց յերկնքի տակ, բազմահազար ամբոխ, վորը շունչը բերանն առած լսում և համարձակ ճառերը միապետության, պաշտոնյաների քմահաճույքի և բռնության, դատարանների կողմնապահության, կապիտալիստական շահագործման մասին. ամբոխ, վորը բարձր աղաղակներով պատասխանում է՝ «այո» հետորի այն հարցին, թե՝ «արդյոք հարկավոր է մեզ քաղաքական ազատություն»։ Այստեղ և նաև ամենատեսակ մի հասարա-

կությունն, վոր կազմվել է ամբողջ Ռոստովից հավաքածներից՝ չտեսնված տեսարանին նայելու. այդտեղ են՝ բանվորներ, վոր թողել են արհեստանոցները, պաշտոնյաներ, տիկիններ կառքերում լոռնետները ձեռքներին։ Այդտեղ է և գլուխը կորցրած իշխանությունը, վորը չգիտե, ինչ անե, վոստիկանությունը և կազակները, վորոնք լսում են սոցիալ-դեմոկրատ հռետորի ճառերը»։ Կամաց-կամաց ուշքի գալով, իշխանությունը հասկացավ, վոր այստեղ պետք են արդեն վոչ նագայկաներ և սրեր, այլ գնդակներ. կազակները համազարկ տալով ամբոխի վրա 6-ին սպանեցին և 12-ին ծանր վիրավորեցին։ Սակայն իսկույն ել հետացան, իսկ հրացանազարկությունը նույնիսկ միտինգներին վերջ չդրեց։ Ռուս բանվորը արդեն 1902 թվին վճռականորեն դադարեց հավատարիմ հպատակ լինելուց...»։

Մի տարի հետո, 1903 թվի ամառը, այդ բանվորը վոտքի յելավ արդեն վոչ թե մի քաղաքում, Ռուսաստանի ամբողջ հարավում՝ Ոդեսայից մինչև Բագու։ Ռուսաստանում այդ ընդհանուր գործադուլի առաջին որինակն եր, վոր բոլոր արտադրություններում ընդգրկել եր, ինչպես արդեն ասել ենք, ավելի քան 200 հազար մարդ։ Յեթե 1901 թվի գարնանը Մոսկվայի հասարակության առաջ առաջին անգամ նշմարվեց ապագա դեկտեմբերյան բարրիկադների սովերը, ապա Ոդեսան, Կիևը, Յեկատերինոսլավը և Բագուն իրանց առաջ ունեցին առաջին գծագրությունը այն պատկերի, վորը վերջնապես գծագրվեց 1905 թվի հոկտեմբերին. «Ցուրատեսակ եր մեծ քաղաքների տեսքը գործադուլի ժամանակ,—պատմում է վերևում մեր մեջ բերած ժամանակակից հաշվետվությունը։ Բոլոր խանութները, գրասենյակները, փուռերը, արհեստանոցները փակ են. ձիաքարշները և տրամվայները չեն գործում. կառապաններն գրեթե չկային յերևում, թերթեր չկան, գնացքները կայարաններում կանգնած են, ապրանքների կույտերը թափթփված են պլատֆորմաներում, շոգենավերը և շոգենաները (փոքր նավ) կանգնած են ծովափնյա քաղաքների նավակայաններում առանց շարժվելու։ Արդյունքները թանգանում են։ Չկա վոչ հաց, վոչ միս։ Մի քիչ հացը կռվով գնում են ձեռք բերում։ Չկա վոչ ելեքտրականություն, վոչ գազ. յերեկոները փողոցները մութ է, իսկ բնակարաններում մոմերով վատ լուսավորություն։ Փողոցները չեն ավլում, չկան վոչ շրջիկ վաճառողներ, վոչ բեռնակիրներ և վոչ ել նույնիսկ կոշիկ մաքրողներ։ Քաղաքում առևտրական և արդյունաբերական կյանքի կատարյալ լճացում է, բայց դրա փոխարեն հասարակական տեսակետից քաղաքում մեծ կենդանություն և բռնկում կա։ Բանվորների հազարավոր խմբեր շրջում են փողոցները, կազմում են հավաքույթներ, միտինգներ, վորոնց մեջ սոցիալ-դեմոկրատ հռետորները ճառեր են արտասանում, կազմակերպում են ցույցեր կարմիր դրոշակները ձեռքերին։ լսվում են հեղափոխական յերգեր և աղաղակներ։ Ահագին թվով զինվորական պահպանններ, վոստիկանները քաղաքապահներ» և զինվորականներ կան։

1901 թվին Մոսկվայում դեռ ամբոխ եր, գրեթե բացառապես իր կազմով բանվորական, բայց վորը գնում եր մանր բուրժուական մտավորականների կողքին կամ մասամբ յետևից։ Պետերբուրգում, Որուխովյան գործարանի դուռում արդեն ապստամբած բանվորներ եյին,—բայց դեռ միայն մի քաղաքի և նույնիսկ միայն մի-յերկու ձեռնարկությունների (բացի որուխովցիներից, ցույցին մասնակցում եյին վիբորգյան կողմի մանածագործական գործարանները)։ 1903 թվի ամառը Ռուսաստանի հարավում դասակարգն եր,

դեն «բանվորները» չեյին, այլ պրոլետարիատն եր։ Յեվ կարծես, ընդգծելու համար նրա կատարյալ դասակարգային միությունը, Ոդեսսայում շատ կենդանի մասնակցություն ունեցան գործադուլը պատրաստելու մեջ տեղական զուբատովյան կազմակերպությունները, որոնց գլուխն եր այնտեղ վոճն Շաևիչ։ Յերբ վերջինս դուրս յեկավ բանվորական ժողովի առաջ, փորձելով խելքի բերել քիչ առաջվա «ձագուկներին», նրանց հարցրեց. ինչ եք ցանկանում—գլխով պատին զարկել, թե ծակել այն,—լսվեց միաձայն պատասխան՝ «գլխով պատին զարկել»։ Վոսաիկանական սոցիալիզմը ինքն իր գերեզմանը փորեց...

ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ

ՄԱՆՐ ԲՈՒՐԺՎԱԶԻԱՅԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՔԱՂԱՔՈՒՄ ՅԵՎ ԳՅՈՒՂՈՒՄ

1901 թվի ցույցերը մտավորական հասարակության լայն խավերին հիշեցրին, վոր Ռուսաստանում հեղափոխությունը ամենևին էլ «հերթից հանված չէ», ինչպես թվում եր այդ վհատված «ութսունականներին»։ «Հեղափոխություն» բառը սկսում է ողի մեջ պաըտել և ավելի հաճախ կրկնվել։ Սկսում են—ի հարկե վոչ Ռուսաստանում, ուր ցարական գրաքննությունը դեռ «հերթից չեր հանված», այլ արտասահմանում, լույս տեսնել ամսագրեր տպավորիչ վերնագրերով, ինչպես՝ «Вестник русской революции» (Տեղեկաբեր ռուսական հեղափոխության), վոր հրատարակում եյին սոցիալիստ-հեղափոխականները։ Քաղաքում յեղած հեղափոխությունը ստիպում եր նրանց քննել նաև գյուղի հարցը։ «Ժողովրդի մեջ գնալու» անհրաժեշտությունը ներից սկսած, սովորել եյին կարծելու, վոր այնտեղ ամեն ինչ խաղաղ է և մեռած։ Սակայն մի քանի տեղեկություններ հավաքելով, վերը յեղած „Вестник русской революции“ ամսագրի աշխատակիցներից մեկը այլ յեզրակացության յեկավ, «Գյուղացիները անընդհատ պայքարում են իրենց միջոցներով. արածացնելով վնաս տալով, գործիքները փչացնելով, կարմիր աքաղաղով (հրդեհել) վարձակալության պայմանները բարելավելու, աշխատավարձը բարձրացնելու...»։ «Լինում են դեպքեր, յերբ հողային հարաբերություններն այնքան են սրվում, վոր գյուղացիները համբերությունը կորցնելով, քարուքանդ են անում կալվածատերերի ագարակները. որինակ՝ 1818 թվի մայիսի 7-ին Խերսոնի նահանգի Զոլոտոյ Բալկայի գյուղի գյուղացիները 200 հոգու չափ ամբոխ կազմելով, զինված ցցերով, դուրս յեկան քշած անասուններին յետ խլելու։ Աղաղակելով՝ «յերկար պիտի համբերենք արդյոք։ կըվոչնչացնենք ամեն բան»։ Ամբոխը կատաղությամբ հարուածեց առավ կալվածատիրոջ և ծառայողների տները»։

Հեղինակը վոր գրել է 1901 թվի աշնանը, դրանից առաջ վերջին տարիների համար գտել եր, նույնիսկ միայն թերթերի տեղեկությունների հիման վրա, գյուղացիական հուզումների որինակները Ռուսաստանի ամբողջ հարավում և արևմուտքում և բացի այդ նաև կենդրոնական նահանգներում՝ Մոսկվայի և Կոստրոմայի։ Իսկ թերթում գրվում եյին ի հարկե վոչ բոլոր դեպքերի մասին։ 1901 թվի ոգոստոսին Վորոնեժի նահանգից գրում եյին. «Միզանում ողում կախված է ինչվոր մի չարագուշակ բան. ամեն որ հոբիզոնի վրա հրդեհների ցոլքեր կան, յերկրի վրա փռվում է արնոտ մառախ-

խուղը. շնչելը և ապրիլը շատ դժվար ե։ Մուժիկը մոայլված լռում ե. իսկ յեթե յերբեմն էլ խոսում ե, ապա այնպես, վոր ամբողջ մարմնով սարսուռ ե անցնում»։

Գյուղն արդեն այն չեր, ինչ վոր քսան տարի առաջ եր։ Սրա պատճառները մենք մասամբ արդեն տեսել ենք. (տես վերը. եր 20 և շար. և մ. II)։ Այն մեռած ողակից, վոր ձգել եյին գյուղացու վիզը «ազատագրելով հողով», հնարավորություն ունեցավ ազատվել միայն չնչին փոքրամասնությունը. գյուղացիների գնած բոլոր հողի 6-ից մինչև տասներորդը և վարձակալության 5-ից մինչև 9-ը տասներորդը կենդրոնացած եյին տնտեսությունների (двор) մի հինգերորդ մասի ձեռքում։ Այդ փոքրամասնության ավելի ունևոր մասը ուղղակի հարստանում եր մեծամասնությունն ավերելով։ Խնայողական գանձարկղների 1899 թվի հաշվետվությունների համաձայն գյուղացիների ձեռքին կային 640 հազար խնայողական գրքույկ, վորոնցով մուծված եր 126 միլիոն ռուբլի։ Բայց այդ ժամանակ Ռուսաստանում հաշվվում եր ընդամենը 10 և կես միլիոն գյուղացիական ընտանիք, այնպես վոր այդ բանավորները, վորոնք «ավանդներ» ունեյին, 1/20-ից հազիվ մի քիչ ավելի եյին։ Դրա փոխարեն ռուս «խնայողներից» ամեն մեկը Ֆրանսիայում ամեն մի խնայողական գրքույկ ունեցողին ընկնում եր 160 ռ., իսկ մեզնում ամեն մի «գյուղացիական» գրքույկին՝ 197 ռ.։ Ընդ վորում ամենից ավելի արագ ռուսական խնայողական գանձարկղներում խնայողությունների կուտակումը կատարվում եր հենց սովի տարիներում, 1891 և 1892։

Այսպես արդեն XIX-րդ դարի վերջին ռուսական գյուղում նկատվում եր այն «ուժեղ գյուղացության գյուղական բուրժվազիայի շերտը, վորի վրա պիտի հետագայում ստոլիպինյան ռեակցիան հենվեր։ Բայց առայժմ այդ գյուղական բուրժվազիայի գոյությունը միայն ավելի խիստ եր ընդգծում գյուղացիական մասսայի քայքայումը, առայժմ գյուղացիական հեղափոխությունն ուղղված եր վոչ կուլակների դեմ։ Գյուղական բուրժուան այնուամենայնիվ դեռ ինքն եր իր ընտանիքի հետ դաշտում աշխատում, թեև բատրակ էլ վարձում եր. բատրակը գյուղացու համար դեռ յեղբայր եր հաշվում, և դեռ վորոշ ժամանակ չքավոր գյուղացու հետ նույնիսկ ընդհանուր շահեր ուներ։ Այդ չքավորի նախանձոտ աչքերը հեշտ եր ուղղել տալ հարևան կալվածատիրական հողի վրա, վորը կուլակի հողից քսան անգամ ավելի յեր (մենք տեսանք, վոր գյուղական բուրժվազիային հաջողվեց կալվածատիրական սեփականության միայն չնչին մասը գնել), վորի տերը, գյուղացու պատկերացումով «վոչինչ չեր անում». իրոք էլ մեծ մասամբ վոչինչ ոգտակար բան չեր անում։ Կալվածատերը իսկական արիստոկրատ եր վոչ միայն չքավորի, այլ և կուլակի տեսակետից։ Վերջինս իր ատելությունով դեպի ձրիակեր-կալվածատերը գյուղացիական մասսայի նույնիսկ առաջից եր գնում։ Դեռևս 70-ական թվերի դիտողները նկատել եյին, վոր կուլակները «գյուղի առաջին լիբերալներն» են։ XX-րդ դարի հեղափոխական ապիտատորները պետք և այս բանում մի անգամ ևս համոզվեցին։ Յեվ սոցիալ-դեմոկրատները և սոցիալիստ-հեղափոխականները միատեսակ ամենից հեշտությամբ ունևոր գյուղացիական ընտանիքում եյին ապատան գտնում։ Սոցիալիստ-հեղափոխականի գաղտղությունները այն թեմայի մասին, վոր հողն ընդհանուրինն եր, կուլակին ամենևին չեն շփոթե-

ցնում։ «Հողը ի հարկե աստծունն ե, բայց աստված մեկից կարող ե իր մեղքերի համար խլել, իսկ մյուսին իր առաքինությունների համար ավելացնել։ Քանի վոր յես չորս ձի ունեմ, քինչպես յես չորս անգամ ավելի հող չունենամ, քան նա, վորը միայն մի ձի ունի»։ Յեվ միայն յերբ սոցիալ-դեմոկրատ ագիտատորը սկսում եր պնդել գասակարգային պայքարի վրա, իր կուլակ տանտիրոջ դեմքը սկսում եր մթագնել և նա մոայլված հարցնում եր իր հյուրին. «քինչ, քո ասելով ուրեմն ես բուրժվա յեմ»։

Կուլակների տնտեսությունների հրդեհում, կուլակներին բոյկոտի*) յենթարկելը սակավ չափով պատահում ենք և այդ ժամանակ, բայց դրանք սակավ բացառություններ եյին։ Քանի դեռ կալվածատիրական հողը չեր բաժանված, ուրիշ խոսքով, քանի դեռ գյուղում չեյին աճեցացել Ֆեոդալիզմի մնացորդները, այնտեղ քիչ տեղ կան դասակարգային կռվի և ռոցիալ-դեմոկրատական պրոպագանդայի համար։ Իսկ Ֆեոդալական սեփականությունը 1861 թվին խիստ քչացել եր (չեորնազյոմում կալվածատերերը պահեցին հողի միայն 70 տոկ., վոր գյուղացիական ռեֆորմի մյուս որը իրենց սեփականությունն եր, իսկ վոչ չեորնազյոմի նահանգներում նույնիսկ միայն 58 տոկ.), այնուամենայնիվ գյուղացիական բաժնեհողի կիսից ավելի յեր (մոտ 70 միլիոն դեսյատին, իսկ գյուղացիական բաժնեհողը 137 միլիոն դեսյատին եր)։ Այսպիսով ամեն մի չքավոր գյուղացի կարող եր հաշվել, վոր իր հողաբաժինը 1 ու կես անգամ կարող ե մեծացնել կալվածատերի հաշվին։ Այն եյ կար, վոր գյուղացու համար այն արդեն իր հողն եր, իր քրտինքով վաստակված, վորը ինքը մշակել եր կամ իրը վարձակալ կամ «կաորները» աշխատելով ձեռք բերելու պայմանով։ Այդ հողի գյուղացիների անմիջական կարգադրության տակ անցնելը վոչ միայն իրենց համար հաջողություն կը լիներ, այլև ըստինքյան ժողովրդական տնտեսության համար։ 70 միլիոն դեսյատինը, վոր ճորտատիրական իրավունքի մնացորդն եր, կազմում եր Ռուսաստանի բոլոր հողերի 3 տոկոսը. և յեթե գյուղական բուրժվազիային 1905 թվով մի տնտեսության 47 դեսյատին եր ընկնում, ամեն մի կալվածատերի 2,333 դեսյատին եր հասնում։ Շատ հաղվագյուտ դեպքերում այդ կալվածատերի մշակումը կարող եր այնպես լինել, ինչպես պետք է՝ պիսի տարածության մշակումը կարող եր այնպես լինել, ինչպես պետք է՝ միայն մեծամասնությամբ այդ հողը միայն այսինքն կապիտալիստական։ Ճնշող վաշխառության մի ջոց եր. տերը, վոչինչ չդնելով նրա մեջ, միայն գյուղացիներից նրա միջոցով յեկամուտներ եր կորզում, վորը եապես շարունակում եր հին բաիրայի (оброк) կամ կոռի։ Քանի դեռ ճորտատիրության այդ մնացորդը չեր վերջացել, գյուղական չքավորությունը կամ փոխարինում եր հին բաիրայի (оброк) կամ կոռի։ Քանի դեռ ճորտատիրության այդ մնացորդը չեր վերջացել, գյուղական չքավորներին ուղղել կուլակների դեմ կամ այդ կուլակներին թույլ տալ իրենց հողերը ընդլայնել քայքայվող մանր տնտեսությունների հաշվին միատեսակ արհեստական կըլիներ։ 90-ական թվերի սկզբների սոցիալիստական պրոպագանդան նույնքան ժամանակին չեր, ինչպես և սրան փոխարինող ստոլիպինյան որենսդրությունը իր «ուժեղի վրա հենվելու», այսինքն կուլակի վրա հենվելու ծրագրով։

Սոցիալ դեմոկրատական կուսակցությունը—առնվազն նրա ձախ թևը այդ բոլորը հենց սկզբից շատ լավ եր տեսնում։ «Ժանանակակից ռուսական

*) Հրաժարվել վարձվելու աշխատելու համար, հրաժարվել վաճառելու ինչ եյ լինի և այլն։ Այս ճանապարհով իրլանդացի գյուղացիները 1880-ական թվերին դուրս քշեցին իրենց Բոյկո անունով կալվածատիրոջը. սրանից եյ այդ անունը մնաց։

գյուղում յերկու տեսակ դասակարգային հակադրություն կա—գրում եր «Искра»-ն 1901 գարնանը,—նախ գյուղական բանվորների և գյուղական ձեռնարկատերերի մեջ, յերկրորդ՝ ամբողջ գյուղացության և բոլոր կալվածատերերի մեջ։ Առաջին հակադրությունն աճում է և զարգանում, յերրորդն աստիճանաբար թուլանում է։ Առաջինը դեռ ապագային է, յերկրորդը—բավական չափով արդեն անցյալ է։ Յեվ, չնայելով սրան, ժամանակակից ռուս սոցիալ-դեմոկրատների համար յերկրորդ հակադրությունը ուշի ավելի կարևոր և ավելի գործնական նշանակություն... Մեր գյուղական բանվորները դեռ շատ սերտ են կապված գյուղացության հետ, նրանց վրա դեռ շատ են ծանրացած ընդհանուր գյուղացիական թշվառությունները, այդ պատճառով էլ ռուս գյուղական բանվորների շարժումը ընդհանուր ազգային նշանակություն վոչ մի կերպ չի կարող ստանալ վոչ այժմ և վոչ էլ մոտիկ ապագայում։ Ընդհակառակը ճորտատիրության մնացորդների դուրս շպրտելու, ռուսական պետության բոլոր կարգերից դասային անհավասարության և տասնյակ միլիոնների հասնող «հասարակ ժողովրդի ստորացման ոգու վոչնչացման հարցը արդեն այժմ էլ ընդհանուր ազգային նշանակություն ունի և այն կուսակցությունը, վորը հավակնություն ունի ազատության համար առաջավոր պայքարողի դերն ունենալու, այդ հարցից չի կարող խուսափել»։

Ցարական կառավարությունը զգում եր վտանգը և իր ձևով շտապում եր կանխել այդ։ Կառավարական շրջաններում ասում եյին, վոր ուսանողական խռովությունները (սրանք հենց դրանից առաջ սրվել եյին. սրա մասին հետո կբխոսենք) դասալիք բաներ են. բանվորներին էլ կըզսպեն, բայց ահա յեթե գյուղը վոտքի կանգնեն, գուցե վատ կըլինի։ 1902 թ. մարտի 22-ին հիմնվեց «հատուկ խորհրդակցություն գյուղատնտեսական արդյունաբերության կարիքների մասին», վորի նախագահությամբ, ցարական ծառաներից ամենից խելոքն ու ընդունակը, վոչ միայն այդ ժամանակի, այլև ընդհանրապես 1881 թվից հետո յեկող ամբողջ շրջանի, ի բախտավորություն հեղափոխության և ի դժբախտություն «Ռոմանովների», Նիկոլայը Վիտեյին տանել չեր կարողանում, ինչպես առհասարակ հասկանալ չեն կարող. իսկ Վիտեյի ծրագրները, թեև ըստինքյան բավական պարզ եյին, սակայն շատ բարդ եյին ու դժվար այնպիսի գլխի համար, վորպիսին ռուսական վերջին միապետի գլուխն եր... Հեղափոխական շարժումները, գործադուլները, ցույցերը Նիկոլային ամենից առաջ հիշեցնում եյին 1881 թվի մարտի 1-ը և իր պապ Ալեքսանդր 2-րդի վիճակը։ Նրան սկսել եր պատել ռումբի սարսափելի յերկյուղը։ Իրեն ամենահարկավոր մարդիկ իրեն թվում եյին վոչ անտեսագետները և ֆինանսիստները, այլ լրտեսները և վոստիկանները։ Ժանդարմների կորպուսին նա ուղղակի սիրո մեջ բացատրվում եր։ Իր անվանակոչությանը այդ կորպուսի բարձր պաշտոնյաներին ընդունելով 1901 թ. դեկտ. 6-ին Նիկոլայը նրանց ասում եր։ «Պարոններ, յես շատ ուրախ եմ ձեզ տեսնելու համար։ Հույս ունեմ, վոր այն կապը, վոր այսոր իմ և ժանդարմների կորպուսի մեջ հաստատվեց, տարեցտարի կամրապնդվի»։ Դրանից մի քիչ հետո, յերբ իր ներքին գործերի մինիստր Սիպյագինին, Տոլստոյի ազնվականների քաղաքականության հավատարիմ շարունակողը, սպանեց Բալմաշեով ուսանողը (1902 թ. ապրիլ), Նիկոլայի ամենամոտիկ մարդը դարձավ ներքին գործերի նոր մինիստր Պլևեն՝ նարոդավոլցիների պատժելու շրջանի վոստիկանության դեպարտամենտի վերատեսուչը և Ռուսաստանում հրեական առաջին ջարդեր կազմակերպողը։ Սա հանճար եր իր տեսակի պրովակացիայի և խուզարկության. սրա ժամանակ ծաղկեց զուբատովականությունը. բայց նա մեծ մասամբ ցարի բարեհաճությունը կարողացավ մուրալ եսերական ահաբեկումների դեմ շատ ճարպիկ պայքարով։ Պլևեյի ժամանակ վոստիկանության հաջողվեց իր մարդուն—ինժեներ Ազեֆին—սոցիալիստ-հեղափոխական կուսակցության մարտական կազմակերպության պետ դարձնել. կարծես ամբողջ ահաբեկման գործը այժմ ցարական շպիոնների ձեռքին լիներ։ Ճշմարիտ է այդ շատ թանգ գնով գնվեց. կուսակցության վըստահությունը Ազեֆի նկատմամբ պահելու համար ստիպված յեղան նրան թույլ տալու բոլորի դեմ էլ, բացի ցարից, սպանության փորձեր կազմակերպել. սակայն այդ կս անհուսալի յեր. Ազեֆը կարող եր դավաճանել. վերջի ի վերջո ինքը Պլևեն եսերական ռումբին զոհ գնաց (1904 թ. հուլիս). բայց և այնպես յերբեք «հեղափոխությունը» (ինչպես Նիկոլայն եր հասկանում հեղափոխությունը) այդ աստիճանի ցարական վոստիկանության վերահսկողության տակ չեր յեղել։

Պլևեն Նիկոլայի այնպիսի սիրելին դարձավ, ինչպեսին Արակչեևն եր Ալեքսանդր 1-ջինի համար։ Ինչպես Արակչեևը իր ժամանակ, Պլևեն էլ աշխատում եր Նիկոլայից հեռացնել քիչ թե շատ ընդունակ մարդկանց, վորոնք կարող եյին իր դեմ մրցել և առաջին հերթին ոգտագործեց Նիկոլայի զվանքը դեպի Վիտեն։ Վերջինս վերջնականապես հեռացավ իսկապես արտաքին քաղաքականության կապակցությամբ (այս մասին կբխոսենք հետևյալ գլխում), բայց Պլևեյի նշանակվելուց անմիջապես հետո՝ 1902 թ. Վիտեն սկսեց ընկնել։ Արդեն այդ էլ բավական եր, վոր նրա նախագահությամբ խորհրդակցությունը չտար վորևե կարևոր հետևանք։ Դեռ Պլևեյի ժամանակ վոստիկանության միջոցների վրա, ամենևին հակված չեյին վորևե տնտեսական զիջում անելու ոգուտ գյուղացության։ Կալվածատերերը—մենք հիշում ենք, վոր այդ ժամանակ ավելի քան յերբևե, ոգուտ կալվածատիրական հիմնարկության եր—գյուղատնտեսական արդյունաբերության կարիքների համար գործող տեղական կոմիտեներից հեռացրին, գերակշռություն տալով այդ կոմիտեներում աստիճանավորներին։ Սրանով միայն այն բանին հասան, վոր այնուամենայնիվ կոմիտեների մեջ սպրդած կալվածատերերը ոգտագործեցին դրան Նիկոլայ 2-րդի ռեժիմի դեմ լիբերալ ցույցեր կազմակերպելու համար։ Ընդհանրապես կալվածատերերի ավելի առաջավոր մասն ընդունում եր, վոր պետք է գյուղացիների իրավական դրությունը լավացնել, այսինքն ճորտական իրավունքի, իբր այդպիսին, մնացորդները վոչնչացնել, գյուղացիներին իրավունքների տեսակետից հավասարացնել Ռուսաստանի կայսրության բոլոր «ազատ» բնակիչներին և հարկերը քչացնել։ Իսկ հողից մաս հանելու մասին շատ քչերն եյին խոսում և այն էլ շատ անորոշ։ Լիբերալ ցույցերը, իհարկե, Պլևեն ոգտագործեց Վիտեյի դեմ. Նիկոլայի վստահությունը վերջինիս վերաբերմամբ ավելի ևս պակասեց, լիբերալ կալվածատերերի ցանկությունները իրենց բավական թույլ արտահայտությունը գտան համապատասխան յեռաչխավորությունը վերացնելու մեջ. (1903 թ. մարտի 12)։ Իսկ կալ-

վածատերերի մեծամասնությունը բավականացավ և հանգստացավ գյուղական վոստիկանության ուժեղացումով. 1903 թվի մայիսին 43 նահանգում հաստատվեցին գյուղական usrաժճիկներ։

Բացի հնացած բոլոր բաներից 1903 թվի ամրան դեմ այդ բոլոր միջոցներն արդեն բոլորովին ուշացած էին։ Դեռ 1902 թվին գյուղացիական շարժումն այնպիսի ձևեր ստացավ և այնպիսի չափեր, որ դրանց դեմ ստիպված էին արդեն վոչ թե վոստիկանությանը հանել և նույնիսկ վոչ էլ կոզակներին, այլ ուղղակի զորքեր, հետևակները ամբողջ դիվիզիաներով։ «Ռուսաց հարձակման խորհրդակցությունը» դեռ չէր էլ կարողացել իր նիստերն սկսել, երբ 1902 թվի մարտի վերջին սկսվեց գյուղացիական մասսայական շարժումը, ռուսաց հորագույն պատմության մեջ առաջինը, առաջին անգամն այդպիսի չափերով, 1861—62 թերի «ազատությանը» զուգընթաց խռովությունների հետո։

Սկիզբը դրեց Պոլտավայի նահանգը, ուր մի քանի որում 54 ագարակ քարուքանդ եղավ. այդտեղից շարժումը նետվեց Խարկովի նահանգը, ուր նույն վիճակին ենթարկվեց 25 ագարակ, հետո Վոլինի, Ձերնիգովի, Վորոնեժի և Սարատովի նահանգները, ուր շարժումը շարունակվեց մինչև հուլիս և վերջին նահանգում վերջացավ գյուղացիների կողմից իսկական «զինվորական գործողություններով»։ Գյուղացիները իրենց յերկաթե խողովակից թնդանոթ շինեցին, լցրին վառոդով և գնդակներով և արձակեցին կալվածատիրական մի շենքի պատուհանի վրա։ Հենց Սարատովի գյուղացիների այդ գործում ցույց տված համառությունը, ինչպես իսկույն կըտեսնենք, պատահական չէր։

Շարժումի առաջին քայլերը պարզ ցույց էին տալիս, թե նրա գաղափարախոսական կողմը վորքան հեռու չէ գործարանային պրոլետարիատի գաղափարախոսությունից։ Բանվորները բողոքում էին վոչ միայն տանտերերի դեմ, այլև միապետության դեմ. մենք տեսանք, վոր վերջինիս պահպանները ստիպված էին բառացի «ամեն դժվարություն հանձն առնել, վոր գոնե ժամանակավորապես բանվորներին շշմեցնեն և գործադուլի շարժումը զրկեն իր քաղաքական իմաստից։ Գյուղացիական շարժման մեջ հենց սկզբից այդ իմաստն ամենևին չկար։ Գյուղացիները միանգամայն հավատացած էին, վոր կալվածատերի դույքը «բաժին բաժին անելով» իրենք ցարի կամքին ու ցանկություններին բոլորովին համապատասխան են վարվում։ Ցերը նրանց ձեռքն էին անցնում հեղափոխական Թոուցիկներ, վորոնց մեջ ասված եր լինում հողը գյուղացիներին տալու մասին և այլն, նրանք այդ էլ ցարին էին վերագրում։ Ահագին առասպելներ էին պատրաստվում, թե ցարը կալվածատերերից փախել և արտասահման, իշխանությունը թողնելով գահաժառանգին, իսկ սա չէլ իշխանությունը տվել և մուժիկներին։ Դրա համար էլ գյուղացիները բոլորովին հանգիստ էին գործում, իրենց արդար լինելու կատարյալ գիտակցությունով։

Ցերը զորքեր էին յերևում և հրամանատարները նրանց սպառնում էին, թե հրացան կբձակեն, ամբոխը վատահ պատասխանում եր. «Հիմա ժամանակն ենք ասում. չես համարձակվի արձակել՝ ցարը չի հրամայել»։ Ցեվ յերբ այնուամենայնիվ համազարկեր էին լինում և ամբոխը ցրվում եր, տեղում թողնելով սպանվածներ և վիրավորներ, գյուղացիները մյուս որը հավաքվելով, խոսում էին, թե սպանները խիստ պատասխանատվության կենթարկվեն «թագավոր կայսրի առաջ»։

Գյուղացիների այդ վստահության մեջ, վոր ցարը իրենց կողմն է, ամենից հետաքրքիրն այն է, վոր «բաժին բաժին արված» կալվածներից առաջիններից մեկը պատկանում եր հենց ցարական տոհմին պատկանող անձի՝ հերցոգ Մեկլենբուրգ Ստրելիցկուն։ Այդ մանրամասնությունն էլ ամենևին գյուղացիների աչքերը չբացեց. վոր «Ռոմանովները» ամենից առաջ նույնպես կալվածատեր են, այդ գյուղացիների միտքը չեր գալիս։ Իրենց ղեկավարող դրդիչները այնքան նայիվ-տնտեսական եյին, վոր «ավելի լավը» չեր կարող յերևակայել և վոչ մի «եկոնոմիստ». «մենք մի թիզ էլ հող չունինք, թող մեզ ուտելիք տան, թե չէ մենք ինքներս ամեն բան կըվերցնենք. տվեք մեզ հնգական փութ հաց և այդքան էլ հող» (այսինքն 5 դեսյատին).—ասում էին ապստամբները։ Իսկապես նրանք հող ունեյին, բայց մի ընտանիքին 2 դեսյատին։ Ստիպված էին վարձակալել և այն հողը, վորին 5 տարի առաջ վճարում էին 6—8 ռուբլի, այժմ արժեր 12—19 ռ. Նույնիսկ «կառավարական հաղորդագրությունը Պոլտավայի» անկարգությունների «դեպքի առթիվ պետք է ընդուներ, վոր Պոլտավայի գյուղացիների տնտեսական դրությունը «շատ էլ բավարար չեր»։ Բայց է այնպես «հաղորդագրությունը գլխավոր պատճառը տեսնում եր «հակապետական պրոպագանդայի» մեջ։

Հատկապես Պոլտավայի նահանգի վերաբերմամբ այդ բավական անհեթեթ բան եր. մենք տեսանք, վոր այնտեղ գյուղացիները հեղափոխական կոչերն էլ վերագրում էին Նիկոլայ 2-րդին, այնպես վոր նրանց համար այդ վոչ թե «հակապետական», այլ պետական պրոպագանդա եր*)։ Բայց ավելի խավար տեղերում անշուշտ պրոպագանդան վորոշ դեր խաղացել եր։ Այն անլեգալ գրականությունը, վորի մեջ պարզվում եր գյուղացիների դրությունը և նրանց չքավորության պատճառներն այնպիսի առատությամբ յեթյ

Այս մասում հատկապես աչքի ընկավ Խարկովի նահանգապետ իշխան Որոլինսկին. «Այդ ձեզ, զզվելիներ, յերեսուն հարված նրա համար, վոր թալանել եք և ելի յերեսուն իմ կողմից»: Ջնայելով այդ բոլոր գազանություններին գյուղացիական շարժումները կրկնվում էին, անցնելով մի նահանգից մյուս նահանգը և՛ 1903, և՛ 1904 թվերին: Կամաց-կամաց նրանք վարժվեցին. ուշադրությունը, ինչպես միշտ, բթացավ և գյուղական «խռովությունների» մասին յեղած տեղեկությունները մտավորականների մեջ այլևս այն կենդանությունը չէին առաջ բերում, ինչպիսին կարելի յեր տեսնել 1902 թվի գարնին, Պոլտավայի նահանգից ստացված առաջին տեղեկություններից հետո: Իսկ տեղերում հակառակն եր նկատվում. նախկին վրստահությունը, վոր «կարող են հաշիվ տեսնել», վոր «կըհանգցնեն», սկսել եր թուլանալ: «Գյուղում կյանքը ծայր աստիճանի լարված և դարձել—գրում էին Պենզայի նահանգից: Գյուղական խաղաղությունը գրեթե ամեն գիշեր խանգարվում և հավարի (набат) վրդովիչ զանգահարությունով: Այրվում են կալսելու սարայները, խոտի դեզերը, հաճարի դեզերը և նույնիսկ արտերի հացահատիկները: Կալվածատերերն այնպես էին վախեցած, վոր զուտակում են, թե հեղափոխություն կըլինի»:

Կալվածատերերն իրավացի էին: Քաղաքների և գործարանների պրոլետարական հեղափոխության հետ առաջ եր գալիս գյուղի մանր բուրժուական հեղափոխությունը: Եթե յերկու շարժումները միանային, անհաղթելի կըլինեյին: «Ռուսանովյան» ռեժիմի համար կյանքի և մահվան խնդիրն այն եր, թե կըհաջողվի արդյոք նրանց իրարից բաժանել: 1907 թվին թվում եր թե այդ հաջողվեց, 1917 թիվը այդ ցնորքը ցրեց:

Գյուղի մանր բուրժուական շարժումը պետք և կենդանացներ ընդհանրապես մանր բուրժուական շարժումը: Մանր բուրժուական մտավորականությունն իր աչքով տեսնելով այն, ինչ վոր իրեն պակասում եր 70-ական թվերին—ապստամբած գյուղացիական մասսա—չեր կարող հարություն չառնել իրրև հեղափոխական ուժ, չեր կարող փորձ չանել հարություն տալու պայքարի իդեական այն բովանդակության և կովի այն ձևերին, վորոնք նրան հատուկ էին: 1902 թվին նախկին մարքսիստներից և հին հեղափոխականների կուսակցությունը, վորը հեղափոխության գլխավոր հենարանը տեսնում է գյուղացության մեջ, իսկ հեղափոխության գլխավոր մեթոդը՝ ահաբեկումի մեջ:

Մանր բուրժուական մտավորականությունը վազուց եր ապրում իր քաղաքական վերելքը, զուգընթաց բանվորական շարժմանը: Բայց նա քաղաքական պայքարում իր անկյունը չուներ: Նրա առաջապահ զորամասը, վոր 80-ական թվերի վերջերից վճռել եր փողոց դուրս գալ և իշխանությանը հրապարակով կովի հրավիրել, ինչպես հիշում ենք, ուսանողությունն եր: Բայց մինչև 90-ական թվերի վերջերն ուսանողական շարժումն իր քաղաքական խնդիրներով շատ նեղ եր: Սկզբում այդ միայն պարզ բողոք եր 1884 թվի կանոնադրության և նրա շնորհիվ բարձր. դպրոցի մեջ մտած վոստիկանական կարգերի դեմ, վորպիսին նույնիսկ Նիկոլայ I ի ժամանակ չեր տեսնված: Հետո այդ ժխտական լոզունգներին ավելացան դրականները, բայց դեռ նեղ-ուսանողական շահերից հեռու չգնացող: Շարժումն առաջ եր գնում հայրենակցության, ուսանողական փոխադարձ ոգնության խմբակների

դրոշի տակ, վորոնց մեջ խմբվում էին միևնույն նահանգում ծնվածները: Ուսանողությունն հապես պայքարում եր իր կազմակերպությունն ունենալու իրավունքի համար. (1884 թվի կանոնադրությունն ասում եր. «Ուսանողները համալսարանի առանձին հաճախորդներն են»). և այդ իրավունքը զորանալով ինքն իրեն կազմակերպվում եր հայտարարական կարգով (явочным порядком) գաղտնի: Այսպես Մոսկվայի հայրենակցություններից ծագեց Մոսկվայում 90-ական թվերին մեծ աղմուկ հանած հայրենակցությունների միութենական խորհուրդը: Վոստիկանությունն ամեն կերպ փընտռում եր այդ հիմնարկությունը, բանտարկում և աքսորում եր նրա մի կազմը մյուսի յետևից, սրանով միշտ նորանոր ուսանողական «խռովություններ» առաջ բերելով: Այս հանգամանքը խոստանում եր «հավիտենական շարժման» խնդիրը լուծել, վորը մեքենագետներին այնքան անելանելի հոգսեր եր պատճառել, սակայն վոչ իշխանության, և վոչ էլ «հեղափոխական»-ուսանողներին վոչ մի վորոշ նպատակի չեր հասցնում: Ուսանողական ամենալավ ուժերը անցնում էին «հայրենակցություններին» և «խորհուրդներին» միջով, իրրև մի դպրոցի, ուր նրանք սովորում էին ընդհատակյա հեղափոխական պայքարի տարրական ձևերը, բայց հետո գնում էին այնտեղ, ուր այդ պայքարը իսկական ձևով եր կատարվում և վոչ փորձի համար,—գնում էին բանվորների մոտ:

90-ական թվերի կեսերի ուսանողական խմբակների գաղափարախոսությունը մարքսիզմն եր. «կապիտալը» սիղանի գիրք եր 1887 թվից սկսած Մոսկվայի հայրենակցությունների դեկավարների մեջ: Բայց ռուսական հեղափոխական մարքսիզմը այսինքն «Աշխատանքի Ազատագրություն» խըմբակներին, ինչպես և առհասարակ Ռուսաստանի պրոպագանդան այդ խ

սարակչռության» հարցը լուծելու վրա աշխատել էին 18-րդ դարի ամենալավ մատեմատիկները)։ Արդյունաբերական կապիտալիզմը կարիք ուներ ինժեներների և տեխնիքների ահագին բանակի և առանց սրանց նրա գործը ամենևին առաջ չէր գնա։ Ցեվ մտավորականության մասսան և նրա բարեկական նշանակությունն աճում են արդյունաբերական կապիտալի աճումով։ 19-րդ դարի վերջի արդյունաբերական վերելքը խոշոր գործ տվեց Ռուսաստանի մտավորականության զարգացման, արդյունաբերական ճգնաժամը պետք է ուժեղ անդրադառնար մտավորականության տրամադրության վրա։

Մտավորականության այդ կապը արդյունաբերական կապիտալի հետ հենց այն հիմքն էր, որի վրա զարգանում էր «լեգալ մարքսիզմը»։ Ապագա ինժեներների, տեխնիքների և տնտեսական աշխատավորների՝ ստատիստիկների, ֆինանսիստների մասսայի համար պետք էր մի գաղափարախոսություն, որը նրանց հասարակական աշխատանքին իմաստ պիտի տար, պիտի իրենց գոյությունն իրենց աչքում արդարացներ։ Նարոդնիկական գաղափարախոսությունը, որը ժխտում էր կապիտալիզմի կարևորությունը և նույնիսկ հնարավորությունը Ռուսաստանում, այդ նպատակին չէր հասնում։ Նա այն ժամանակ կազմվեց, յերբ մեր արդյունաբերությունը—դեռ իր ծավալով այնքան փոքր էր, որ հարևանցի հայեացքը, մենք տեսանք, Ռուսաստանում արդյունաբերական կապիտալիզմ կարող էր և չնկատել—ոգևորում էր ամբողջապես ոտարյերկրյա ինժեներներից և տեխնիքներից։ Սրանց մեծ քանակությամբ գտան գործարանային առաջին տեսուչները, վորոնք իրենց հաշվետվություններում շատ ծիծաղելի անեկդոտներ են հիշում, վորը առաջ էր գալիս ռուսական արդյունաբերության առաջին կազմակերպողների ռուս լեզուն չիմանալուց. այդ անեկդոտների համար վճարում էր ի հարկե դարձյալ ռուս բանվորի նույն լայն թիկունքը։ Այժմ այդ արդյունաբերության կապիտալը մեծ մասամբ արտասահմանյան էր, բայց կազմակերպողներն արդեն յուրայիններն էին՝ ռուսներ։

Վոր չափով մարքսիզմը սովորեցնում էր, վոր կապիտալիզմը իր զարգանալով նախապատրաստում է սոցիալիզմ, այդ ուսմունքը բոլորովին հասկանալի էր 90-ական թվերի յերիտասարդ «արդյունաբերական» մտավորականության։ Ինժեները բոլոր հիմքերն ուներ ատելու ձեռնարկատերին և դեռ նրան ավելորդ էլ համարելու, չե՞ վոր իսկապես ձեռնարկությունը հենց ինքը՝ ինժեներն էր ղեկավարում։ «Հեռացնել ձեռնարկատերին այդ շատ հասկանալի չեր։ Ավելի ևս հասկանալի չեր, յերբ մարքսիզմը արդյունաբերական կապիտալիզմը նկարագրում էր իբրև տնտեսական զարգացման բարձր աստիճան մանր արտադրության համեմատությամբ։ Նարոդնիկությունը սոցիալիզմը ըղխեցնում էր ուղիղ և անմիջապես վերջինից, իսկ այդ ամենևին չէր համապատասխանում «արդյունաբերական» մտավորականության պահանջներին։ Իսկ մենք ինչի համար ենք։ Ինժեները չէր կարող չտեսնել վոր արդյունաբերական զարգացման շարժիչը հենց ինքն է և հենց նրա համար վոր ինքը խոշոր ձեռնարկության գլուխ է կանգնած։ Ցերը «լեգալ մարքսիստը» կրկնելով Պլեխանովին, խիստ քննադատում էր նարոդնիկությունը, ցույց էր տալիս նրա հետամնացությունը և տգիտությունը, նրա «վոչ դիտական» լինելը և գովում էր արդյունաբերական կապիտալիզմի առաջադիմական նշանակությունը, 90-ական թվերի մտավորականությունը փո-

թորկալի ծափահարում էր։ Կապիտալի ջատագովությունը նրա վրա հարձակվող նարոդնիկների դեմ «լեգալ մարքսիզմի» մեջ այն աստիճան էր արտահայտվել, վոր մեկն այն ժամանակ կատակեց թե՝ «ամբողջ աշխարհում մարքսիստները բանվոր դասակարգի կուսակցությունն են, միայն Ռուսաստանում նրանք խոշոր կապիտալի կուսակցություն են»։ Անլեգալ մարքսիստները փորձում էին լեգալ մարքսիստներին դիմադրություն ցույց տալ այդ առթիվ դեռ 90-ական թվերի առաջին կիսին, բայց գրաքննությունը իսկույն գործի մեջ խառնվեց և «անլեգալ» գրվածքները հասարակության չէին հասնում։

Սակայն «արդյունաբերական» մտավորականության համերաշխությունը մարքսիզմի հետ շատ շուտով էլ վերջանում էր։ Մարքսիզմը սովորեցնում էր, վոր բանվոր դասակարգի ազատությունը իր՝ բանվոր դասակարգի գործն է, վոր այդ կըլինի բանվորական մասսայական ապստամբությունով, հեղափոխության ձևով։ Այդ արգեն դարձյալ «արդյունաբերական մտավորականին» հարմար չեր։ Նա ընդունում էր միայն մտավորական, մտավորականներից կազմակերպված ու ղեկավարված հեղափոխություն, վորը, և իհարկե, իշխանությունը կըթողներ մտավորականության։ Բայց Մարքսի ուսմունքի մեջ գոյություն ուներ մի հանգամանք, վոր արտոնյալ վիճակը վոր արդյունաբերության մեջ ուներ մտավորականը, գնվում է այդ շահագործման հաշվին, ինժեները ստանում է ավելի քան անգամ ավելի հասարակ բանվորից.—վոր տեղից։ Ավելյալ արտասը, քան անգամ ավելի հասարակ բանվորից.—վորտեղից։ Ավելյալ արժեքից։ Շահագործման մասին եղած մտայնության վրա չէ ամրացած մարքսիզմի ուսմունքը պրոլետարիատի և կապիտալիստների դասակարգային անհաշտ կռվի մասին։ Դասակարգային կռվի նկատմամբ կատարյալ համերաշխության մեջ՝ դասակարգային կռիվ չպետք է լինի։ Հասարակությունը մեկության մեջ՝ դասակարգային կռիվ չպետք է լինի։ Հասարակությունը մեկնական պիտի լինի, վորովհետև, յենթադրվում էր, վոր նրան պետք է միանական մտավորականությունը կառավարե։

«Լեգալ մարքսիզմի» առաջնորդները, յեթե նրանք ուզում էին ճիշտ իրենց հասարակության «պահանջների բարձրության վրա», պետք է այդ ուղղությամբ յիլք փնտռեյին։ Սրանց ազատելու յեկավ ռեվիզիոնիզմը, գերմանական սոցիալ-դեմոկրատիայի այն այլասեռակությունը, վորը սոցիալ-դեմոկրատական մասսայի մեջ թափով մուտք գործած քաղքենի մասսայի ճնշման տակ, հարմարվելով վերջինիս շահերին, ճաշակին ու սովորություններին, աշխատում էր հարթել որթոդոքս (իսկական) մարքսիզմի «սրությունները։ Այդտեղից Սորուվեն և նրա ընկերները քաղեցին իրենց համար այն բաղդավոր միտքը, վոր հավելյալ արժեքի տեսությունը, այսինքն շահագործման իդեան, իբր հիմք կապիտալիստական ամբողջ կարգի «վերաքննության յենթակա չե, գուցե և բոլորովին վերացման. վոր դասակարգային կռիվը ամենևին էլ պարտադիր չե, հնարավոր է և սոցիալական խաղաղությունը. վոր վերջապես սոցիալիստական հեղափոխության անհրաժեշտությունը ամենևին էլ «ապացուցված չե»։

Ամբողջի մեջ գլխավոր կետը այն խոստովանությունն էր, վոր հնարավոր է «դասակարգերից վեր պետության», Սորուվեյի հիմնական միտքը

իր, Ռուսաստանում ճորտական իրավունքը ընկնելու պատճառների մասին արած զեկուցման մեջ, մի զեկուցում, որը Սարուվեյին փոխարկալի ովուցիների արժանացրեց Մոսկվայի ուսանող յերիտասարդության կողմից 1898 թվին։ Վոր այդ միտքը մի կամուրջ ե բուրժվական լիբերալների բանակը ժանելու, կամուրջ, որի վրայով Սարուվեն միանգամից հեռանում ե և բանվորական շարժումից և հեղափոխությունից ընդհանրապես, յերիտասարդությունը այդ չեր նկատում։ Յերիտասարդությունը ուշքի յեկավ միայն այն ժամանակ, յերբ Սարուվեն 1905 թվին ամբողջ հաղափոխական շարժումը հայտարարեց «հասակի հետ կապված կատեգորիա», մի հիվանդություն, վոր հատուկ ե միայն յերիտասարդության։ Բայց այդ ժամանակ Սարուվեն կազմակերպության առաջնորդներից մեկն եր և իր նախկին հասարակության կարիքը չեր զգում։

Գյուղում սկսված մանր բուրժվական հեղափոխությունը այժմ Սարուվեյի նախկին հասարակությանը տվեց հենարանի նոր կետ, միանգամից ազատելով նրան թե ձանձրացնող մարքսիզմից և թե նրա ավելի ձախ տարբերի հեղափոխական յեռանդին ասպարեզ տալով։ 90-ական թվերի վերջին ուսանողական շարժումը ծայր աստիճանի սրության հասավ։ Հրահրվելով և խրախուսվելով բանվորական մասսայական կռվից նա յուրացրեց սրա ձևերը և վոստիկանության կողմից 1899 թվի փետրվարին Պետերբուրգի ուսանողներին ծեծելուց հետո նա դարձավ համառուսական ուսանողական գործադուլ, վորն ընդգրկեց զանազան քաղաքների մինչև 25 հազար ուսանողներ։ Իշխանությունը վաղուց նկատելով ուսանողական կազմակերպությունների դերը իբրև մի տնկարանի, վորտեղից դուրս են գալիս հեղափոխական շարժման կազմակերպողներ, վորպեսզի ձեռք առնել կարուկ միջոցներ. նույն թվի հուլիսին հրատարակվեցին նշանավոր ժամանակավոր կանոնները, վորով սպառնում եյին զինվոր տանել ապագայում «անկարգություններին» մասնակցողներին։ Այդ կանոնները գործադրելու փորձը (կիևում 1900 թ. աշնանը) անմիջապես նոր պայթուն առաջ բերեց, վորը իր յելքն ունեցավ 1901 թվի գարնան ցույցերում, վորոնք քաղաքական ահագին նշանակություն ստացան բանվորական մասային ալեկոծելու շնորհիվ, բայց վորոնց սկսողները մեծ մասամբ ուսարողներն եյին

Ցույցերը վերջնականապես միացրին նեղ, սկզբում «ակադեմիական» հոսանքը հեղափոխական լայն հեղեղի հետ, բայց ուսանողության միայն փոքրամասնությունը դրա հետ միասին յուրացրեց նաև բանվորական շարժման գաղափարախոսությունը։ Մեծամասնությունը ճնում եր «ոնիզիոնիսա», այսինքն չեր հավատում պրոլետարիատի մշտական հեղափոխականության, իսկ սոցիալիստական հեղափոխությունը պատկերացնում եր նարոդնիկների նման և վոչ մարքսիստորեն։ Առանձին, ավելի հեղափոխական տրամադրված, միավորների համար յելքը անաբեկումն եր. սրա առաջին ծիծեռնակն եր ուսանող Կարպովիչի լուսավորության մինիստր Բոգոլեպովին սպանելը, ուսանողներին զինվոր տանելու մասին ժամանակավոր կանոնների հրատարակվելուց հետո։ Կառավարությունը իր պաշտոնական հաղորդագրություններում շատ միամիտ ձևով աշխատում եր ծածկել, վոր սպանողը ուսանող է յեղել, Կարպովիչին իր ծագման համաձայն «քաղքենի» անվանելով։ Սակայն մանր բուրժվական տրամադրություն ունեցող ուսանողության մասսան չեր կարող անաբեկումի մեջ մասնակցություն ունենալ. այդ մասսային հարկավոր եր մասսայական աշխատանք։ Դեռ 1898 թվին ապագա սոցիալիստ-հեղափոխականները գյուղացությանը նայում եյին Պլեխանովյան անհուսալիությամբ։ «Գյուղացության մեջ սիստեմատիկ գործունեություն մենք թողնում ենք ապագային,—գրվում եր այն ժամանակ «Наша задача» (Մեր խնդիրները՝ բրոշյուրում,—չհրաժարվելով միայն ոգտվելու բոլոր հարմար առիթներից գյուղացիներին ծանոթացնելու մեր ծրագրի հետ և մեր կողմը գրավելու նրա ավելի զարգացած մասից գիտակից կողմնակիցներին»։

Իբրև «ապագասակարգային» հեղափոխության կողմնակիցներ սոցիալիստ-հեղափոխականները հետո եղ, ինարկե, չեյին կարող դառնալ գյուղի մանր բուրժվազիայի դասակարգային կուսակցություն։ Հետո եղ նրանք աշխատում եյին իրենց կողմը գրավել ֆաբրիկա-գործարանային պրոլետարիատին (սովորաբար շատ քիչ հաջողությամբ) միաժամանակ իսկական կապիտալիստական բուրժվազիայի հետ կապեր հաստատելով։ Վերջինս սիրով «վոչ մարքսիստներին» տալիս եր և գրամական ոգնություն և հարուստ ընտանիքներից յերիտասարդ ենտուզիաստներ, նույնքան վոչ հաղվադեպ ազնաբեկվողներ եսերական շարքերում, ինչպես իր ժամանակ կալվածատիրական և բարձր աստիճանավորների ընտանիքից դուրս յեկածները նարոդովոլցիների շարքերում եյին։ Բայց սոցիալիստ-հեղափոխականները քաղաքական լուրջ նշանակություն ստացան հենց նրա համար, վոր իրենց «ապագասակարգային» գաղափարախոսությամբ նրանք ավելի ճիշտ կարող եյին մոտենալ գյուղական բուրժվազիային, քան մարքսիստները։ Կուլակը ոխակ չեր անում եսերից լսելու, վոր նա «բուրժվա» յե, և բնական ե, վոր կուլակին ավելի հասճելի եր լսել եսերին, քան սոցիալ-դեմոկրատին։ Մասամբ վորականությունը և մանր բուրժվազիան իրենց ֆրոնտի կապը գտան, վորի վրա նրանք ճնում եյին դեռևս պրոլետարիատի կողքին, բայց նրանից անջատ, ժամանակի սպասելով, յերբ նրանք պրոլետարիատի դեմ կըկանգնեն։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՅԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Բանվորական շարժումը, գյուղացիական շարժումը, քաղաքի մանր բուրժուական ժողովրդականության շարժումը ցածից ուժասպառ եյին անում ճորտատիրական պետությանը, բայց վերի մասը դեռ ամուր եր յերևում և խոստանում եր դիմանալ յերկար տարիներ։ «Ռեթսունականները» հավատացած եյին, վոր Ռուսաստանում, գոնե ապրող սերնդի ժամանակ վոչ մի հեղափոխություն հնարավոր չե։ 90-ական թվերի յերիտասարդությունը ասանց թաթնի չեր նայում մոտիկ ապագային. կըգա՞ արդյոք յերբևե հեղափոխությունը։ 1901 թվից հետո հեղափոխության մոտ լինելը բոլորն եյին զգում։ Բայց ինչպես և ինչից կըսկսվի. ինչպես կըմոտենա այդ գրանիտե ժայռին, վոր միապետություն և կոչվում. Ալիքները վազուց են նրա ստորին մասերին զարնվում, բայց նրա գագաթը աշնքան հեռու չի ամենաբարձր ալիքների գագաթներից։ Ամեն մի գործադուլ, ամեն մի ցույց անփոփոխ վերջանում եր ցրումով, ձերբակալություններով, աքսորներով։ Ցեվ վոչ մեկն ել մինչև այդ համազգային նշանակություն չկարողացավ ստանալ—ալեկոծելու ամբողջ ժողովրդական մասսային։ Իսկ մասնակի յելույթների հետ, թվում եր, վոր կառավարությունը միշտ ել հեշտությամբ կըպայքարի։

Պլևեյի կառավարության տաք ժամանակին, 1903 թվին, հապա—հեղափոխական շրջանակներից դուրս, վորոնք անխոնջ իրենց կազմակերպչական և պրոպագանդայի աշխատանքը շարունակում եյին, մասավորական միության լայն շրջաններում տրամադրությունը յերբեմն ընկնում եր մինչև «ռեթսունականների» աստիճանը։ «Լեգալ մարքսիստների» քարոզը, վորոնք այդ ժամանակ վերջնականապես յուրացրել եյին ռևիզիոնիստական գաղափարախոսությունը և «գիտականորեն» ցույց եյին տալիս, վոր վոչ մի հեղափոխություն չի կարող լինել, վոր այն շրջանը, յերբ հեղափոխությունները հնարավոր եյին, վաղուց և անցել մի կողմից, զուբատովականության անհատականության հաջողությունները բանվորական մասսայի մեջ, մյուս կողմից, մասավորականության վրա շատ քայքայիչ կերպով եյին ազդում։ Ցեվ այդ «թերահավատներից» վոչ մեկի մտքին չեր գալիս այն, վոր «Ռուսաստանի կայսրության» հիմնադիրները նրա սահմաններում ավելի ևս ընդարձակելու փորձն անելիս անհաջողության մատնվեցին. միլիարդների մեծ կուտակողները վրիպեցին, ձեռքները ելի նոր միլիարդի մեկնելով, վորը, թվում եր թե շատ վատ եր դրված և ինքն եր աշխատում «ռոմանովյան» քսակը մտնել։

Նիկոլայ II-ի ոտարյերկրյա քաղաքականությունը անցնելուց առաջ, Նիկոլայի, վորը հենց այդ քաղաքականության շնորհիվ դարձավ և՛ իր սեփական և՛ամբողջ հարստության, գերեզմանափոր, պետք է մի քանի խոսք ասել նրա նախորդների քաղաքականության մասին։ Մենք Ալեքսանդր II-ին թողինք իր Կոստանդնուպոլիսը գրավելու անհաջող փորձի և Բերլինի 1878 թվի կոնգրեսի «սկանդալի» ժամանակ (տես. մ. II.)։ Մենք հիշում ենք, վոր Ալեքսանդրի հույսերը հիմնվում եյին Գերմանիայի հետ ունեցած գաղտնի համաձայնության վրա, վորը լռությամբ եր «ոգնել Ռուսաստանին և վորը խուսափում եր զանազան պատրվակներով իր խոստումը կատարելուց, յերբ գործը կռվի հասավ։ Ռուսաց ցարը չեր կարողանում ներել գերմանական քաղաքականության ղեկավարին՝ կանցլեր Բիսմարկին, այդ «դավաճանությունը», ինչպես և իր ժամանակին նա չներեց Ֆրանսիային 1856 թվի Փարիզի խաղաղությունը։ Կռվելով այժմ Գերմանիայի հետ, ցարը բոլոր հիմքերն ուներ Ֆրանսիային դառնալու. 1879 թվի զորախաղերին ֆրանսիացի զինվորականներին առանձին պատվով ու փաղաքշանքով ընդունեցին։ Բիսմարկն շտապեց նույն տարին Ավստրիայի հետ դաշն կապել, վորը քիչ յերկու պայմանագրերը կապվեցին արդեն Ալեքսանդր III-ի ժամանակ։ Բիսմարկը սրան ել եր գրավում կ. Պոլսով, վորը 1887 թվի պայմանագրում գրում արդեն պարզ կերպով հիշված եր.—վորով խուսափում եյին 1873 թվի «Թյուրմացություններից», յերբ խոսք եր լինում ինչ վոր անորոշ պատերազմի ժամին, ինչ վոր անհայտ պետության դեմ. բայց դրա փոխարեն գերմանական ոգնության մասին ավելի մութ եր հիշատակվում. միայն ասված եր, վոր Գերմանիան խոստանում է Ռուսաստանին այդ դեպքում «չխանգարել»։ Ուրիշ խոսքով՝ Բիսմարկը խոստացել եր այնպես խաբել Ավստրիային Մերձավոր Արևելքում նոր պատերազմ լինելու դեպքում, ինչպես 1877-ին նա խաբել եր Ռուսաստանին (1887 թվի ռուս-գերմանական պայմանագիրը Ավստրիայից գաղտնի եյին պահում)։

Նույն տարին, սակայն, Ալեքսանդրը պետք է համոզվեր, վոր Բիսմարկը Ավստրիային ով չիտե յերբ կըխաբի, իսկ իրեն արդեն խարում է։ կ. Պոլիսը չհասնելով Ռուսաստանը պետք է բավականանար նրանով, վոր ստացավ «Անդրդանուբյան նահանգը» Հյուսիսային Բուլղարիայի կերպարանքով։ (Դանուբից մինչև Բալկան), համաձայն Բերլինի կոնգրեսի կիսանկախ մի իշխանություն, թղթի վրա վասալ (յենթակա) Տաճկաստանին, իսկ իրոք Ռուսաստանից կախում ունեցող։ Իշխան նշանակվեց Ալեքսանդր II-ի ազգականը, նույնպես Ալեքսանդր, Բատտենբերգի պրինցը։ Ռուսական կապիտալիզմը, մեծ ավար չհասանելով, վորոշեց քամել, ինչվոր հնարավոր է, գոնե իրեն հասած փոքրիկ կտորից։ Բուլղարիայի հետ վարվում եյին, ինչպես ռուսական վոտչինայի (կալվածքի) հետ. նրան եյին վաճա-

Այսպիսով վորոշված եր «հեղափոխական ուգարը (ածխահոտը) ցրել» պատերազմի ոգնությամբ։ Նույն թվի ամառվա վերջը Ամուրի գեներալ նահանգապետությունը և ռուս զորքերից գրավված Մանջուրիան (1902 թվին խոստանում եյին մաքրել, բացի հարավային մասից, բայց այժմ այդ խոստումի մասին չեյին էլ ուզում մտածել) միացվել եյին մի ցարական արտասովոր կարգ լիազորի իշխանության, այն է փոխարքայի։ Փոխարքա նշանակվեց Բեզոբրազովի վոհմակից մեկը՝ ծովակալ Ալեքսեևը։ Ինքը Բեզոբրազովը այդ ժամանակ դարձավ ճանաչված առաջնորդ «պատերազմական կուսակցության» և պալատում Պլևեյից հետո ամենազդեցիկ անձնը։ Վիտտեն սկսեց անձնատուր լինել, բայց վորոհետև նա, Բեզոբրազովի տեսակետով, շատ «անհուսալի» յեր և յեթե ուղղակի չեր դիմադրում, բայց իր ախ ու վախով ձանձրացնում եր, նրան այնուամենայնիվ ստիպեցին հրաժարվել (1903 թ. օգոստոս)։ Ցապոնիայից դրանից առաջ ստացված առաջարկներին պատասխանելը հանձնվեց Բեզոբրազովին։

Ցապոնական կառավարությունը վաղուց արդեն լավ հասկանում եր, վոր գործը դեպի պատերազմ է գնում և իր կողմից նախազգուշանալու բոլոր միջոցները ձեռք եր առնում. (սրանցից մեկը Անգլիայի հետ համաձայնությունն կապելն եր, վոր յեղավ 1902 թվին)։ Հետևյալ տարվա ամառը նա բանակցություններ սկսեց վոչ այնքան նրա համար, վոր դրանցից վորևե բան եր սպասում, վորքան Ռուսաստաստանից վավերական տվյալներ ունենալու համար, նրա կորեայի վերաբերմամբ ունեցած ծրագրների մասին։ Ցապոնական առաջարկներում հարցը դրված եր այդ պատճառով պարզ և հասկանալի. Ցապոնիան ճանաչում եր Ռուսաստանի իրավունքները Մանջուրիայի վերաբերմամբ, բայց փոխարենը պահանջում եր Ռուսաստանից ճանաչել Ցապոնիայի իրավունքները Կորեայում։ Բեզոբրազովի կազմած և Նիկոլայի իր իսկ ձեռքով ուղղված պատասխանը այսպես կարելի յե արտահայտել. «Մանջուրիայում մենք տեր ենք առանց վորևե վեճի, իսկ Կորեայում—դեռ կըտեսնենք»։ Այսքան բաց ձևով ռուսական արտաքին գործերակայում—դեռ կըտեսնենք»։ Այսքան բաց ձևով ռուսական արտաքին գործերի մինիստրությունը չեր համարձակվում պատասխան տալ Ցապոնիային։ Բայց հենց այն էլ, ինչվոր հաղորդվից յապոնական կառավարության բավական պարզ եր. Ռուսաստանը մերժում եր Ցապոնիային իրավունք տալ Կորեայում զորք պահելու, մինչդեռ ռուսները շարունակում եյին գրավել Մանջուրիան, պահանջում եր ամբողջ հյուսիսային Կորեայի «չեզոքացում», մինչդեռ Ցալու գետի ափին կային ռուս սպաներ և զինվորներ. մի խոքով պարզ եր, վոր պատրաստվում եյին Կորեան յապոնացիներին չտալ։ Բայց յապոնական բուրժվազիան վաղուց ամուր վոտք եր դրել այդ յերկրում. 1904 թվի սկզբին այնտեղ կային մինչև 25,000 յապոնացի գաղթականներ, Կորեայի նավահանգիստները մտնող նավերի 90 տոկոսը յապոնական դրոշակ ունեյին, թերակղզու չորս կողմը յեղած բոլոր փարոսները յապոնացիների ձեռքին եյին, շինվող յերկաթուղիները յապոնական ընկերությունների ձեռքին եյին, ամբողջ յերկրում գործում եյին յապոնական փոստային

գրասենյակները և հեռագրական կայարանները ևայլն, ևայլն։ Կորեան կորցնելը յապոնական կառավարության համար մեծ սկանդալ եր նշանակում և ինչպես վկայում են այդ գործին ժամանակակից ռուսարազգի դիպլոմատները, գործը կարող եր Յապոնիայում հեղափոխության հասնել։ Այդ նույնը ամբողջովին հաստատում եր Յապոնիայի ռուսաց դեսպան Ռոզենը, որը դեռ 1903 թվի հունվարին պաշտոնապես հայտնել եր, որ ինքը համոզված է «Յապոնիայի հետ զինված ընդհարման անխուսափելի լինելուն, չնեթե մեր կողմից լուրջ փորձ լինի գրավել Կորեան կամ նրա տերրիտորիայի վորևե կետը»։ Իսկ իբրև լրացում այդ բոլորի 1904 թվին Միացյալ Նահանգները բոլորովին ապահովել եյին ֆինանսական ոգնությունը։ Սրանց նախագահ Ռուզվելտը չեր հաշտվում այն մտքի հետ, որ ռուսները կատարյալ տեր ձևան Մանջուրիայում. նա Ջինաստանի հետ պայման կապից (Մանջուրիան ձևականորեն շարունակվում եր չինական ձևալ), վորի համաձայն Մանջուրիայում ամերիկական քաղաքացիների և ապրանքների մուտքը բաց եր։ Իսկ Գլևեն պնդում եր այն, որ վոչ ամերիկացիներին, վոչ անգլիացիներին վոչ մի կերպ թույլ չտան Մանջուրիա մտնել։

Մենք տեսանք, որ Նիկոլայ 2-րդի պալատում Յապոնիայի հետ ընդհարումից ամենևին չեյին վախենում, դրան թեթև աչքով եյին նայում, բայց տարօրինակ կերպով դրա համար չեյին պատրաստվում։ Համոզված եյին, որ Յապոնիան «չի համարձակվի» հարձակվել և համբերությամբ կըսպասե ռուսական հարձակման։ Իսկ սրա համար, ըստ սովորության, դեռ «պատրաստ չեյին», վորի համար ել Նիկոլայը 1904 թվի հունվարին աչք եր ուզում կապել, իբր թե «ինչը պատերազմ չի ուզում» ևայլն*)։ Բայց յապոնացիները ձանձրացել եյին սպասելուց, մինչև վոր Նիկոլայը «կըգիանար»։ Հենց վոր նրանց համար պարզվեց, որ հետագա բանակցությունները վոչ մի նպատակի չեն հասցնի, որ ավելի հետաձգելը միայն ռուսներին ոգնում է իրենց պատրաստությունը վերջացնելու, վորոշեցին գործի անցնել։ 1904 թվի փետրվարի 5-ին նոր տոմարով Յապոնիան կարեց իր դիպլոմատիական հարաբերությունները Ռուսաստանի հետ, իսկ հունվարի 8-ից 9-ի գիշերը յապոնական ականակիրները ռմբակոծեցին Պորտ-Արտուրի ռեյդում կանգնած ռուսական տորմիղը։

Ցարական կառավարությունը դրան կարող եր միայն վողբով պատասխանել, վողբ, վոր «զավազիր թշնամին դավաճանորեն հարձակվեց», կեղծավոր վողբերով, վորովհետև յապոնացիների արարքը, վորը միջազգային իրավունքով թույլատրվում է, վորը ամենևին չի պահանջում պատերազմական գործողությունները սկսելուց առաջ հանդիսավոր հայտարարել պատերազմ, ավելի շուտակ ու անկեղծ եր, քան Բեզորրազովի ծրագիրը ռուս զորքերով գրավել այն հյուսիսային Կորեան, վորի չհզոր ճեալն եր պահանջում Ռուսաստանը Յապոնիայից։ Միայն Բեզորրազովին իր խորամանկությունը չհաջողվեց, նա չկարողացավ այդ անել, իսկ յապոնացիներն արին։ Նիկոլայի հեռագրների փոխանակությունը Հեռավոր Արևելքի փոխարքա Ալեկսեևի հետ վոչ մի կասկածի տեղ չի թողնում, վոր Ռուսաստանը պատրաստ եր սկսելու պատերազմը, չսպասելով Յապոնիայի հրավերին, միայն

*) 1903 թվի հոկտեմբերին Նիկոլայը գերմանական վիլհելմ 2-րդ կայսրին, վորի մոտ այն ժամանակ նա հյուրեր, ուղղակի ասում եր, վոր պատերազմ 1904 թվին դեռ չի լինի, վորովհետև Ռուսաստանը դեռ պատրաստ չե։

ռուսական բանակը և նավատորմը պատրաստ չեյին։ Ռուսական գինվորական և ծովային իշխանությունը, յերևում է, բոլորովին համաձիտ եր Ձմեռային պալատի հետ, վոր յապոնացիները «չեն համարձանվի»։ Յապոնիային ավելի թույլ եյին համարում, քան նա իրոք կար, բայց և այնպես Կուրորպատկինը Յապոնիայի դեմ պատերազմելու համար անհրաժեշտ բանակը հաշվում եր 300 հազար մարդ, իրոք Մանջուրյայում 1904 թվի սկզբին կենդրոնացած եր 100 հազարից մի քիչ ավելի։ Ռուսական նավատորմը Հեռավոր Արևելքում յապոնականից մի քիչ ուժեղ եր, բայց ցրված եր զանազան տեղերում. գլխավոր ուժերը Պորտ-Արտուրում եյին, փոքր մասը Վլադիվոստոկում, առանձին նավեր Կորեայի նավահանգիստներում։ Այս բոլորը լիովին անհոգ կանգնած եյին, կարծես թե մինչև պատերազմը մի գիտի ինչքան ժամանակ կա, մինչդեռ Յապոնիան արդեն հունվարի 5-ին ռազմական տոմարով պատերազմական դրության մեջ եր։ Նույնիսկ տարբերող ազդանշաններ չեյին վորոշած՝ գիշերը իրենց նավերը ճանաչելու համար, վորի պատճառով և յապոնական ականակիրները կարող եյին Պորտ-Արտուրի ժամնել իբրև «իրենց»-ը (ռուսականը) և յերբ այդ «իրենց» համարվածները ականներ բաց թողնել սկսեցին ռուսաց նավերի դեմ, մերոնք համոզվեցին իրենց սխալի մեջ։ Այդ ժամանակում արդեն ռուսաստան 5 նավ շարքից հանել եյին, սրանց թվում յերկուսը ամենաուժեղ զրահակիրներից եյին։ Ռուսաց նավատորմը միանգամից յապոնականից թուլացավ և փակվեց նավահանգստում, վորը յապոնացիք իսկույն շրջափակեցին, ոգտվելով, իհարկե այլ ևս անհոգությունից.—ռուսական հրամանատարությունը ոչ, նաև մեր մի այլ անհոգությունից։ Գլխի չընկավ Պորտ-Արտուրից մի քանի ժամ հեռու գտնվող Ելլիոտ կղզին գրավելու, վորտեղ յապոնացիք իրենց կայանը—բազան դարձրին։ Այնտեղ, ծածկվելով գերաններից հատ կազմված արգելարաններով, յապոնական նավատորմը կարող եր բոլորովին անվնաս կանգնել, յերկյուղ չկրելով ռուսական ականակիրների հարձակումից. այն, ինչ վոր պատահեց ռուսական տորմիղին, դրանից յապոնացիք բոլորովին ապահովված եյին։

Փակելով ռուսական նավատորմը (Կորեայում մեր յերկու «մոռացված» կրեյսերները յապոնացիները վոչնչացրին) Յապոնյան իր առաջին խնդիրը լուծեց, կարող եր իր զորքերը ցամաք իջեցնել առանց արգելքի. նա սկսեց նրանից, վոր Կորեայում ամուր վոտք դրեց, այնտեղ ցամաք իջավ յապոնական բանակներից առաջինը, վորը պետք և Մանջուրիայում գործեր. փետրվարի, մարտի և ապրիլի ընթացքում այդ բանակը դանդաղ առաջ եր գնում դեպի հյուսիս, գրավելով «վիճելի» յերկիրը։ Ամառուի կոնցեսիայում գտնված ռուսական չնչին զորամասերը, իհարկե, չեյին կարող դրան արգելք լինել։ Վլադիվոստոկից ռուսաց կրեյսերների հարձակումները այդ գործողության, յապոնական զորքերը ցամաք հանելուն, շատ քիչ եյին նեղում։ Պորտ-Արտուրի նավատորմը, Պետերբուրգից ուղարկված նոր, յեռանդուն հրամանատարությամբ փորձեց պատռել յապոնական բլոկադան (շրջափակումը), բայց նավահանգստից դուրս գալու նստար ծովակալ Մակարովի հրամանատարությամբ փորձեց պատռել յապոնական բլոկադան (շրջափակումը), բայց նավահանգստից դուրս գալու առաջին փորձերից մեկի ժամանակ փորձանք պատահեց. ծովակալի նավը յապոնացիների գրած ականին հանդիպեց և հրամանատարի հետ ընկղմվեց։ Դրանից հետո (13 ապրիլի 31 մարտի 1904 թ.) ռուսաց նավատորմը յերկար ժամանակ—մինչև հունիսի կեսը—նորից Պորտ-Արտուրում անշարժ կաց փակվեց։

Յերեք շաբաթ հետո. (նոր տոմարով մայիսի 1-ին) յապոնական բանակը հասավ Յալու գետի ափերին։ Կուրապատկինը, վորն այդ ժամանակ Մանջուրիայի հետևակ զորքի հրամանատարությունն եր ստանձնել, չեր վճռում վոչ հակառակորդի դեմ գնալու, վոչ էլ նահանջելու, գրավելով յապոնացիներին դեպի Մանջուրիայի խորքերը, մի բան, վոր նա ավելի նպատակահարմար եր համարում։ Նա ընտրեց կիսամիջոց, Յալու գետի ափը պաշտպանելու համար ուղարկելով մի փոքր զորամաս, յապոնական բանակից յերկու անգամ թույլ։ Վերջինս գրան առանց դժվարության հետ շպրտեց (Տրյունչինի մոտի կռիվը) և մտավ Մանջուրիա։ Գրեթե միաժամանակ, այժմ ծովի կողմից հարձակվելուց ապահովելով, յապոնացիները սկսեցին յերկրորդ բանակը ցամաք իջեցնել, այժմ արդեն հարավային Մանջուրիայում։ Այդ բանակը գրավեց յերկաթուղագիծը, վորը Պորտ-Արտուրը կապում եր Ռուսաստանի հետ և արագ առաջ շարժվելով դեպի հարավ, գրավեց այն պարանոցը, վորի վրա գտնվում են Պորտ-Արտուրը և Դայլնին և վորով միանում են Մանջուրիայի հետ։ Պարանոցը անմերձենալի յեր համարվում այն դեպքում, յեթե ծովից պաշտպանվեր, բայց ծովի վրա այժմ յապոնական նավատորմն եր և պարանոցի վրա դիմադրել չեր կարելի։ Հետո գրավեցին Դայլնին, վորը իր նավահանգստով, վաճառատներով և այլն յապոնացիների համար հրաշալի կայան եր Պորտ-Արտուրը պաշտպանելու համար, վորն այժմ և՛ ծովից, և՛ ցամաքից փակված եր։ Կուրապատկինը առաջուց պատրաստ լինելով այն բանին, վոր Պորտ-Արտուրը կըկորվի—այդ նրա կազմած պատերազմի ծրագրով նախատեսնված եր—Պետերբուրգի ճնշման տակ այստեղ էլ կիրամիջոցի դիմեց.—Պորտ-Արտուրը պաշտպանելու համար մի զորամաս ուղարկվեց, վորը՝ ամբողջը, յապոնական բանակից թույլ եր, իսկ այդ միջոցում յապոնացիները կարողացան յերրորդ բանակն էլ ցամաք իջեցնել։ Ջեռնարկությունը, իհարկե, նույնպիսի անհաջողության հանդիպեց, ինչպես Յալու գետի վրայինը (Վաֆանգոուի մոտիկ կռիվը հունիսի 14—15 ն. տ.) Ռուսաց բանակը բոլորովին լքվեց, վոր ամեն տեղ իրեն հաղթում են. իսկ յապոնականը խորը հավատով լցվեց դեպի իր ուժը և այժմ հաժոզված եր, վոր ռուսների հետ կարող եր հաշիվ տեսնել։

Այդ հաժոզմունքը, հավանաբար, մասամբ ուներ նաև ռուսական գլխավոր հրամանատարը։ Կուրապատկինը այլևս չեր համարձակվում հարձակման դիմելու, մինչև վոր իր բանակը ահագին, անպայման յապոնականից թվով գերակշռող չդառնար, վորովհետև յապոնականը վոռակով վաղուց արդեն ռուսականից շատ լավ եր։ Յապոնիան այդ պատերազմում, վորը իր համար կյանքի և մահվան հարց եր համարում, դուրս հանեց իր ընտիր ուժերը, իսկ ռուսական կառավարությունը, այդ լավ ուժերը՝ կազրային զորքերը, պահում եր ներքին թշնամու դեմ հանելու, հեղափոխությունը ճնշելու, իսկ Մանջուրիա ուղարկում եր բարձր ժամկետների պահեստի զորքերը։ Մարդիկ 40 ժոտ, յերբեմն և 40-ից անց, վաղուց արշավանքի կյանքից կտրված, յերբեմն չեյին կարողանում գործադրել նոր, յերեք գծանի, մագազինով հրացանները, վորովհետև նրանք ծառայել եյին այն ժամանակ, յերբ ռուսաց հետևակն ուներ բերդանկա։ Թնդանոթաձիգները գրեթե բոլորն էլ չեյին կարողանում գործադրել նոր արագաձիգ թնդանոթները, վոր ռուս հրետանին հենց արշավանքից առաջ եր ստացել։ Սրա պատճառով յապոնական հրետանին, վորի թնդանոթները ռուսականից վատ եյին, միշտ էլ իր կրակով լռեցնում եր ռուսական մարտկոցները։

Կուրապատկինը Լյաոյանի մոտ դիրք գրավեց, վորը հարավային Մանջուրիայի ճանապարհների գլխավոր հանգույցն եր, վորով անցնում եր և Պորտ-Արտուրը Ռուսաստանի հետ կապող յերկաթուղագիծը։ Լյաոյանի շուրջը շինվեց ընդարձակ ամրացված բանակատեղի, վորի մեջ ռուս բանակն սպասում եր հակառակորդին։ Վերջինս ստանց արգելքի ցամաք իջեցրեց նաև չորրորդ բանակը, այնպես վոր Կուրապատկինի դեմ անմիջապես գործում եր յերեքը, վորոնք դանդաղ և առանց դիմադրության հանդիպելու դեպի հյուսիս եյին շարժվում։ Այս կատարվեց հունիսին, հուլիսին և ոգոստոսի մեծ մասում. ոգոստոսի կիսին յապոնական բանակները միացան և սկսեցին Լյաոյանի վրա արշավել։ Կուրապատկինը վոչ մի փորձ չարավ նրանց առանձին, առանձին ջարդելու և միանալուն արգելք լինելու, թեև ոգոստոսում Ռուսաստանից անընդհատ ոգնական ուժեր գալու շնորհիվ, նա յապոնացիներից ավելի ուժեղ եր. թղթի վրա մինչև 200,000 ունենալով, նա իրոք ուներ 150,000-ից վոչ ավելի. մինչդեռ յապոնական յերեք բանակներում միասին 130,000-ից ավելի չեր։

Ոգոստոսի 24-ին ն. տ. յապոնացիները սկսեցին Լյաոյանի ամրացած բանակի վրա հարձակվել։ Առաջին յերկու որը հարձակումն անհաջող եր անցնում, յապոնական զորքերը մեծ կորուստներ եյին ունենում։ Յերրորդ որը յապոնական բանակներից մեկը (նույնը, վորը իր ժամանակին Յալու գետն եր անցել) Կուրապատկինի թիկունքն անցավ։ Յերբ իր փորձը՝ նրան հետ շպրտել, չհաջողվեց և յապոնացիները որը որին միշտ առաջ եյին շարժվում, Կուրապատկինը, վախենալով վոր Ռուսաստանից կարող է կտրվել և Պորտ-Արտուրի նման փակվել, վորոշեց թողնել Լյաոյանը և նահանջել դեպի հյուսիս՝ Մուկդեն (Մանջուրիայի մայրաքաղաքը)։ Լյաոյանի բանակատեղը իր հարուստ պաշարով յապոնացիների ձեռքն ընկավ։ Ռուսաց բանակը չեր պարտվել, նա նահանջեց կատարյալ կարգապահությամբ, նրա կորուստները ընդհանրապես յապոնացիների կորուստներից էլ քիչ եյին, բայց այն համոզումը, թե յապոնացիների հետ «չեն կարող հաշիվ տեսնել» Լյաոյանից հետո, Ռուսաստանում սկսեց լայն չափեր ստանալ։ Պատերազմում շրջման կետի դեր չկատարելով, Լյաոյանի կռիվը շրջման դարձավ ռուս հասարակության տրամադրության համար. «Հայրենասիրական վոգևորության» տեղ բոլորին էլ սրտնեղությունը պատեց։ Ինչու՞ ձեռնարկեցինք այդ դժբախտ պատերազմը։ «Լյաոյանյան» այդ տրամադրության հետևանքների հետ մենք կըհանդիպենք հետևյալ գլխում։

Այդ տրամադրությունը ցրելու համար Կուրապատկինին հրաժարվեց, ինչ էլ լինի, առաջին հնարավոր դեպքում, հարձակման դիմել։ Նրան այժմ սկսեցին կազրային զորք էլ ուղարկել։ Հոկտեմբերի սկզբին ն. տ. նա 200,000-ից ավելի մարդ ուներ արդեն վոչ թղթի վրա, այլ իրականության մեջ, մինչդեռ յապոնացիներն ունեյին 160,000-ից վոչ ավելի։ Հոկտեմբերի 10-ին ռուսներն սկսեցին հարձակումը, վորը մի շաբաթից ավելի տևեց և մոտ 45 հազար մարդ նստից, վորոնք շարքից դուրս յեկան (Շահե գետի վրայի կռիվը)։ Յապոնացիներն այս անգամ ավելի քիչ կորուստ ունեցան։ Ռուսաց պաշտոնական հաղորդագրությունները կռվի վերջին մենտը շատ հին ընդգծում, յերբ Կուրապատկինի բանակին հաջողվեց վոչնչացնել յապոնական մի բրիգադա և վերցնել 11 թնդանոթ (այդ պատերազմի միակ հաղթական ավարը)։ Յապոնական բանակն իր դիրքերում մեծ

նաց և նույնիսկ մի քիչ նեղեց ռուսներին։ Ընդհանրապես դրությունն ամենևին չփոխվեց և կուրոպատկինին ուրիշ բան չեր մնում անելու, բայց եթե Մուկդենի տակ ձմեռելու համար տեղավորվել։

Այստեղ հարցի լուծումը միայն 6 ամսից հետո յեղավ, բայց դրա փոխարեն յապոնացիներին հաջողվեց այլ տեղ մեզ վճռական հարված տալ այդ պատերազմի նպատակներից մեկին հասնելով։ Սրդեն ամառը, հունիսին-հուլիսին մոտ, Պորտ-Արտուրի դրությունն այնքան անհուսալի յեր, որ այնտեղ փակված ռուսական նավատորմիղը, յապոնացիների ձեռքը չընկնելու համար որոշից պատռել անցնել Վլադիվոստոկ։ Օգոստոսի 12-ին ն. տ. նա նավահանգստից դուրս յեկավ և իսկույն հանդիպեց յապոնական նավատորմի գլխավոր ույժերին։ Բայց յապոնացիները մինչև այդ յերկու խոշոր զրահակիրներ եյին կորցրել ռուսաց ականների շնորհիվ, այնպես որ այժմ ուժերը հավասար եյին։ Գոհվը եապես վճռական չեր, յապոնացիները ռուսներից ավելի կորցրին, բայց կռվի տաք ժամանակը սպանվեց ռուսական նոր գլխավոր հրամանատարը և ծովակալական նավը շարքից դուրս յեկավ։ Ռուսական կապիտաններն իրենց կորցրին և ռուսաց նավերը փախան զանազան կողմեր։ Մեծ մասը նորից վերադարձավ Արտուր, փոքր մասը թագնվեց զանազան չեզոք նավահանգստներում և այն տեղերում պիտի զինաթափ լիներ։ Միաժամանակ յապոնացիները ջարդեցին Վլադիվոստոկից յեկած կրեյսերների տորմիղը։ Մինչև հետևյալ տարվա մայիսը Խաղաղ ովկիանոսը այլևս ռուսական դրոշակ չտեսավ։

Խաղաղ ովկիանոսի ռուսական նավատորմի հնացորդների բաղդը այժմ կապված եր Պորտ-Արտուրի բաղդի հետ։ Բայց վոչ մի բերդ, վորքան ել նա ամուր լինի և վորքան ել նրա զորքը քաջությամբ պաշտպանվի, անվերջչէ կարող դիմադրել։ Եթե նրան դրսից չփրկեն, նա պետք և անձնատուր լինի։ Պորտ-Արտուրն ազատելու վոչ մի հույս չկար, մանավանդ Կուրոպատկինի Շահեյի մոտ կրած պարտությունից հետո։ Խաղաղ ովկիանոսյան նոր նավատորմը, վորը կազմակերպվել եր Կրոնշտատում, մասամբ այն նավերից, վորոնք պատերազմի սկզբին դեռ պատրաստ չեյին, մասամբ հներից, վորոնց հնացած լինելու պատճառով սկզբում չեյին ուզում գործի դնել, միայն աշնանը ճանապարհ ընկավ, Բարեհուսո հրվանդանի մոտով և կարող եր Կորեայի ափերին լինել գարնանից վոչ առաջ։ Անկարելի յեր սպասել, թե Արտուրն այդքան ժամանակ կդիմանար։ Յապոնացիները վարում եյին պաշարումը այն ամբողջ յեռանդով, վորին ընդունակ եյին։ Սկզբնական անհաջողությունները—օգոստոսին, յերբ նրանք դեռ պաշարողական խոշոր հրետանի չունեյին - նրանց սմենևին չշփոթեց։ Նրանք բերին մեծ կալիբրի թնդանոթներ, վորպիսին մինչև այդ ցամաքային պատերազմներում չեյին գործադրվել։ Սրանց կրակին Պորտ-Արտուրի ամրությունները չեյին կարող դիմանալ. նրա զորքն ահագին կորուստներ ունեցավ և հազիվ եր դիմանում։ Նոյեմբերի 30-ին ն. տ. իրենց հրետանու կրակի պաշտպանության տակ, յապոնացիները գրավեցին այն բարձրությունը, վորն իշխում եր Արտուրի նավահանգստի վրա. այժմ նրանք կարող եյին վոչնչացնել ռուսական նավերն իրենց ծանր թնդանոթներով։ Նավատորմը սիևնույն և կորուստի յեր դատապարտված, ռազմամթերք գրեթե չկար, ուժասը վերջանալու վրա յեր։ Դեկտեմբերի վերջին Պորտ-Արտուրի հրամանատար Ստեսսելը յապոնացիների հետ բանակցության մեջ մտավ և 1905

թվի հունվարի 2-ին ն. տ. անձնատուր յեղավ իր բոլոր զորքով և նավատորմի հնացորդով (ամենամեծ զրահակիրներից մեկը ռուսները կարողացան խորտակել)։ Յապոնացիների ձեռքն ընկան 32,000 գերի, 500 թնդանոթից ավելի, 4 զրահակիր, 2 կրեյսեր և 20-ից ավելի յերկրորդական նավեր։

Պորտ-Արտուրի անկումը պատերազմին մեռած կետից շարժեց, վորի վրա կանգնել եր նա Յապոնիայի ցամաքի և ծովի վրա ունեցած առաջին յերկու շղմեցուցիչ հաջողություններից հետո։ Պատերազմի հաջողությունը կիսով չափ յապոնացիների կողմն եր. յեթե ռուսները հաջողություն ունենային այժմ ջարդելու յապոնական բանակը, նրանք պիտի Արտուրը կռվով յետ խլեյին, մի բան վոր առանց նավատորմի ոգնության անլուծելի խընդիր կլիներ։ Բայց յապոնական ցամաքային զորքի դրությունն ավելի ուժեղացավ. նրան միացան այն զորքերը, վորոնք բերդն եյին պաշարել։ Արտուրի անկումից անմիջապես հետո յապոնացիները սկսում են պատրաստվել նոր արշավանքի ռուսական բանակի դեմ։ Բայց յապոնական հաղթության այդ ստրատեգիական (պատերազմական) հետևանքները վոչինչ եյին դեպքի արձագանքների համեմատությամբ. Ռուսաստանի ներսում «Հյասյանյան» տրամադրությունը փոխարինվում է կառավարության դեմ իսկական ատելությունով վորը Ռուսաստանի վրին եր փաթաթիլ այդ պատերազմը։ Արտուրի գրավումը Ռուսաստանի համար նշանակում եր համաժողովրդական հեղափոխություն։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ը.—ՄՈՒԿԴԵՆ ՅԵՎ ՅՈՒՍԻՄԱ

Ժողովրդական մասսաները սկզբում, հեռու Մանջուրիայի պատերազմին անտարբեր էին վերաբերվում։ Միայն յերբ մի զորաժողովը մյուսից յետևից գյուղացիական ընտանիքներից դուրս հանեց աշխատավորներին, այնպես վոր յերբեմն գյուղում հասակավոր տղամարդկանց մի յերրորդը յերբեմն ևս կեսը չեր մնում—միայն այդ ժամանակ մասսաները սկսեցին խոսել դժգոհել։ Բայց Պլևնայի կառավարությունը խորամանկ եր գործում. զորաժողովի ժամանակ արդյունաբերական կենտրոնները և ընդհանրապես մեծ քաղաքները մեջ էին տրվում։ Այնտեղ, ուր բնակչությունը ավելի գիտակից եր, ուր հեղափոխական պրոպագանդան ավելի լավ եր դրված, պատերազմը ավելի թեթև եր զգացվում և տրտնջալու ավելի քիչ առիթ կար։

Մի քիչ այլ կերպ եր վերաբերվում պատերազմին «հասարակությունը», այսինքն բուրժուազիան և մտավորականությունը։ Սրանց մեջ պատերազմից առաջ վերջին ամիսներում շատ եր տարածված կառավարության մասին նույն թյուրիմացությունը, ինչպիսին կառավարությունն ինքն ուներ յապոնացիների մասին։ Ինչպես Նիկոլայ 2-դի կառավարությունը համոզված եր, վոր յապոնացիները «չեն համարձակվի» պատերազմ սկսել, այնպես էլ հասարակությունը համոզված եր, վոր Նիկոլայի կառավարությունը չի համարձակվի պատերազմ սկսել։ Այդ թյուրիմացության պատճառը հասարակության մեջ տարածված այն չափազանցրած լուրերն եյին, վոր կառավարությունը դրամական դժվարությունների մեջ է, բոլորովին «տեղյակ» մարդիկ հավատացնում եյին, վոր գանձարանում ավելի դրամ չի լինի, քան պատերազմի յերեք ամսվա համար, չորրորդ ամիսը կլինի պետական անհնարինության սկիզբը։ «Հասարակությունը» չեր կռահում, վոր Նիկոլայի և իր կառավարության թիկունքում կանգնած է Փարիզի բորսան և վոր սա, ի հարկե, Նիկոլային չի մերժի ոգնել Հեռավոր Արևելքում հասնելու իր նպատակին, վորոնք մի ժամանակ այդ բորսայի նպատակներն եյին։ Այդպես էլ յեղավ. պատերազմի ընթացքում Նիկոլային հաջողվեց արտասահմանից «կորզել» 1,200 միլիոն ռուբլի և այդ ձևով բոլոր ծախքերի $^3/_{10}$-րդը ծածկել. (ամբողջ պատերազմը նստեց 1,330 միլիոն ռուբլի վոսկով)։ Կառավարությունը պատերազմից վոչ միայն չհնանկացավ, ինչպես «հասարակությունն» եր սպասում, այլև չդադարացրեց թուղթ դրամը վոսկով փոխելուց։ Միայն այժմ պարտքերի համար ստիպված եյին ավել վճարել. առաջ ռուսական փոխառությունները կնքվում եյին նոմինալ 4 տոկոսով, իրական 4 և կեսով, այժմ խոսքով վերցնում եյին 5 տոկոս, իրականության մեջ ստիպված եյին 6-ից էլ ավել վճարել։ Փարիզի բարեկամները այնուամենայնիվ լրենց Պետերբուրգի բարեկամի փորձանքից ոգտվում եյին։

Յերբ հակառակ «հասարակության» սպասածների, Նիկոլայը «համաձակվեց», ռուս կառավարությունը յապոնացիների իրեն ձգած ձեռնոցը վերցրեց, «հասարակությունը» առաջին րոպեին վախեցավ։ Մի քանի զեմստվոներ հրապարակ յեկան «հայրենասիրական» ադրեսներով ցարին ուղղված, Սարուվեն ձախ զեմեցների հետ արտասահմանում հրատարակվող „Освобождение“ (Ազատություն) թերթում խորհուրդ եր տալիս աղաղակել՝ «կեցցե բանակը»։ Յապոնացիների հաղթություններին ցամաքի վրա վոչ վոք չեր սպասում. ընդհանուր կարծիքն այն եր, վոր ի հարկե ծովի վրա «նրանք» «մեզ» կըտրորեն, բայց ցամաքում յերբը կարող են «նրանք» «մեզ» հետ չափվել։ Դրա համար էլ, յերբ յապոնացիներն սկսեցին կուրոպատկինի բանակին ջարդել, «հասարակությունը» նոր հիասթափություն ունեցավ, բայց այժմ հակառակ կողմը։ Սկսեցին հույս ունենալ, վոր պարտությունները Պլևնայի կառավարության կտիպեն զիջումներ անել և սկսեցին պատրաստվել այդ զիջումները ընդունելու, իսկ հարկավոր դեպքում նաև ստիպել այդ բանին տատանվող կառավարությանը։ «Союз Освобождения»-ն (Ազատագրության Միություն), վոր հիմնել եյին ձախ զեմեցները դեռ 1903 թվին, բայց վորը շուտով յերևաց, վոր վոչ այնքան զեմեցների ձեռքին է, վորքան այսպես կոչված «յերրորդ տարրի»,—զեմսկի բժիշկների, ստատիստիկների, ուսուցիչների ևայլն, վորոնք ավելի արմատական եյին, քան ամենալիբերալ կալվածատերը—արագ աճեց և նույնիսկ սկսեց թռուցիկներ հրատարակել պատերազմի առթիվ։ Պլևնն ատամները կրճտելով ասում եր այդ առթիվ, վոր «զեմսկի վարչությունների մեջ կազմվում են սանկյուլոտների կոնորտաներ *), վորոնք կերիչխող ազդեցություն են ձեռք բերում զեմսկի գործերի ընթացքի վրա, հեռացնելով նրանցից այն տարրերին, վորոնք որևէ կողմից ինքնավարության են կանչված»։

Յերկու դեպք վերջնականապես դուրթյունը թևքեցին «պարավոզականության» և հեղափոխության կողմը. դրանք եյին, նախ՝ Պլևնայի սպանությունը 1904 թվի հուլիսին, յերկրորդ՝ մի ամիս հետո, ոգոստոսին Լյաոյանի կոիվը։

Պլևնային սպանեց սոցիալիստ հեղափոխականների մարտական կազմակերպությունը (անմիջապես կատարողը, վոր ռումբը նետեց, Սազոնովն եր, ինքն էլ միաժամանակ խիստ վիրավորվեց), մեզ հայտնի Ազիֆի մոտիկ մասնակցությամբ։ Վերջինս մտավ մարտական կազմակերպության մեջ իբրև վոստիկանության դեպարտամենտի լրտես։ Այդ հիմնարկության զեկավարների աչքում նա շատ հուսալի մարդ եր։ Բայց այդ որերի մթնոլորտն այնպիսի յեր, վոր հեղափոխականների հասարակությունը ազդից նույնիսկ այդ արժատակալած խուզարկողի վրա. նա սկսեց իր դեպարտամենտին դավաճանել և մասնակցել եսերական մարտականների գործերին արդեն վոչ միայն ձևի համար։ Կիշինևի ջարդը նրան վերջնականապես «անվստահելի» դարձրեց։ Ազիֆը հրեյա յեր։ Խոսելով ջարդի մասին մեզ հայտնի մի այլ խուզարկու՝ Զուբատովի հետ, Ազիֆը «զայրույթից դողում եր և ատելությունով եր խոսում Պլևնայի մասին, վորին ջարդի գլխավոր հանցավորն եր համարում»։ Ջարդերի և խուզարկության մեծ կազմակերպողը ընկավ իր

*) «Կոհորտա»—դա հին Հռոմում զորամաս եր, մեր վաշտի բառակիռնի նման. «սանկյուլոտա» (անվարտիկ)—արհամարհական անուն է, վոր ֆրանսիական հեղափոխության ժամանակ սպիտակ գվարդիականները տալիս եյին հեղափոխականներին։

իսկ ցանցի մեջ և ընկավ, իրապես, իր ազնտի ձեռքից։ Բայց հասարակութիւնը այդ կուլիսների յետևի արարքները չգիտեր, այդ չգիտեին նույնիսկ այն մարդիկ, որոնք իրենց «ծառայութեան» հանգամանքով Ազեֆին մոտ էին, որը դրանից հետո էլ դեռ յերկար շարունակեց յերկերեսութիւն անել, մինչև որ հեղափոխականները նրան մերկացրին (1908 թ.)։ Հասարակութեան հաւար ներքին գործերի ամենակարող մինիստրի, փաստական ինքնակալի սպանութիւնը վողոցում, որը ցերեկով, պարզ ապացույց եր հեղափոխութեան հզորութեան։ Բուրժուական և մտավորական շրջաններում տրամադրութիւնը նորից սկսեց բարձրանալ։

Ընդհակառակը կառավարութիւնը իր ուղիից դուրս եր գնվել։ Պլևեն Նիկոլային վարժեցրել եր այն մտքին, թե ինքը Պլևեն գիտե հեղափոխութեան դեմ պայքարելու գաղտնիքը, թե քանի ինքը իշխանութեան ուսին, հեղափոխութեունից չպետք է վախենալ։ Յեվ ահա այդ կախարդն ինքն իրեն չկարողացավ ազատել։ Նիկոլայն իրեն կորցրեց և Պլևեյի հաջորդ գլուխա միայն մի ամիս հետո։ Այդ հաջորդի ընտրութիւնն էլ ցույց է տալիս շփոթված լինելը։ Դարձյալ մի խուզարկու նշանակվեց, ժանդարմների նախկին շեֆը՝ Սվյատոպոլկ-Միրսկին, բայց «լիբերալ» խուզարկու, որը վաղուց խորհուրդ եր տալիս գործել ոչ այնքան կոպիտ ուժով, որքան «փաղաքշանքով», աշխատելով ժողովրդական մասսային մի կողմ թողնել և չգրգռել նրան։ Նշանակվելով մինիստր, նա նախ շտապեց շոյել իր նախորդից կատաղած և սարսափած զեմստվոյին։ Իր առաջին իսկ ճառում նա խոսեց «անկեղծ բարյացակամ և անկեղծ վստահորեն վերաբերմունքի մասին դեպի հասարակական և զեմսկային հիմնարկութիւնները և ընդհանրապես դեպի ժողովուրդը»։

Հինը հիշելով Սվյատոպոլկ-Միրսկին կարծում եր, թե միքանի փաղաքշական խոսք բավական կլինի, որ զեմսկի լիբերալները իրեն ընդառաջ վազեն։ Պլևեն նրանց քշում եր, թույլ չեր տալիս ամենաանմեղ ժողովները կազմել, աքսորում եր զեմսկի ձայնավորներին սահմանադրութիւն հիշատակելու համար միայն, հեռացրեց ծառայութիւնից ամենից ազդեցիկ զեմսկիներից մեկին՝ Մոսկվայի նահանգական վարչութեան նախագահ Շիպովին, որը նույնիսկ սահմանադրական չեր, այլ սլավոնասեր, որը յեղբազում եր ցարի և ժողովրդի միանալու մասին (ժողովուրդ ասելով Շիպովը՝ ի հարկե, ամենից առաջ հասկանում եր կալվածատերերին). իսկ այժմ, խոսում են վստահության մասին։ Եվ ինչ է պետք։ Բայց ժամանակները արդեն փոխվել եյին և «վստահությունը» միանգամից արդեն քիչ համարվեց։

Պլևեյի մահվան և Սվյատոպոլկ-Միրսկու նշանակվելու միջոցում կյանքի կոիվն յեղավ։ Սա յել վերջնականապես վորոշեց այն ընտրութիւնը, որ արել եր Նիկոլայը—այն է «ժեզմութիւնների» կողմը։ Բայց հենց սրանից ել վերջնականապես հատարձակ դարձան լիբերալները։ «Հասարակութեան» համար պարզվեց, որ յապոնացիների հետ «չեն կարող հաշիվ տեսնել»։ Թվում եր, որ կառավարութիւնը փակուղում է։ կարծես նրան ուրիշ բան չեր մնում, բայց յեթե ամոթալի խաղաղութիւն կնքել։ Բայց ամոթալի խաղաղութիւն—այս դեպքում հիշում եյին, ի հարկե, Ղրիմի պատերազմը և 1856 թվի Փարիզի խաղաղութիւնը—ի հարկե նշանակում եր յերկրի ներսում դիջումներ, դիջումներ «հասարակական կարծիքին»։ Յեվ Սվյատոպոլկ-Միրսկուն դիմեցին զեմսկի համագումար հրավիրելու (որ եր

ժամանակին Պլևեն արգելել եր) Նա միամտորեն համաձայնեց, յերևակայելով որ զեմեցները շատ ուրախ կլինին հավաքվելու իրենց գործերի մասին խոսելու համար։ Վերքան եր նրա շփոթությունը, յերբ նա իմացավ, որ զեմեցները հավաքվում են սահմանադրություն խնդրելու, որի միայն հիշատակելը հալածանքի յեր յենթարկվում Պլևեյի կողմից, իբրև պետական հանցանք։ Այդ մեղմ և անվճռական մարդի առաջին քայլն եր հավատումարը հետաձգել գոնե մինչև հունվար։ Բայց սիրտ առած զեմեցները պնդում եյին։ Նրանք հայտնեցին, որ հրավերներն արդեն ուղարկված են և հետաձգելն ուշ է։ Սվյատոպոլկ-Միրսկին ստիպված եր համաձայնել համագումարին նոյեմբերի սկզբին։

Լիբերալների և «հավատարմագիրների» շրջանում այնպիսի ցնծություն եր, կարծես հեղափոխությունն արդեն կատարվել եր։ Զեմսկի համագումարն սկսեց թվալ իրրև մի տեսակ սահմանադիր ժողով։ Իրապես համագումարը, որ ժողովվում եր ներքին գործերի մինստրության թույլտվությամբ և վոստիկանության էլ խիստ հսկում եր, որ ուսանողները և բանվորները ներս չխուժեն, բավական խառը պատկեր եր ներկայացնում։ Արդեն այդ վոստիկանական հոգսերը ցույց եյին տալիս, որ զեմեցները մասսայից շատ յետ են մնացել և ամենևին չեն արտահայտում բնակչության մեծամասնության ցանկությունները։ Հասարակությանն ալեկոծող գլխավոր հարցերին՝ հողային և բանվորական հարցերին, համագումարը ամենևին չմոտեցավ։ Նա զբաղվեց բացառապես սահմանադրության հարցով և այդտեղ էլ նույնիսկ բաժանվեց մասերի, խոշոր փոքրամասնությունը (98-ից 38 հոգի) արտահայտվեց ժողովրդական ներկայացուցչության պետական գործերում խորհրդակցական ձայն ունենալու օգտին, այսինքն այդ փոքրամասնությունը հավատացած եր, որ միապետությունը դեռ տնիրաժեօs է կալվածատերերի յեվ բուրժուազիայի շահերը պաշտպանելու համար, որ ցարի իշխանությունը սահմանափակել այդ դասակարգերի համար ճնշասակար է։ Այդ զեմսկի հին հայեցակետ եր, որ արտահայտվել եր Նիկոլայի գահ բարձրանալու (1895 թ.) առթիվ տրված ուղերձներում։ Սկսվող հեղափոխության ազդեցությունը հենց նրանումն էլ արտահայտվեց, որ զեմսկի համագումարի մեծամասնության համար այդ արդեն քիչ եր. մեծամասնությունը արտահայտվեց ժողովրդական ներկայացուցչության որենսդրության մեջ վճռական ձայն ունենալու օգտին։

Բայց ցարի իշխանությունը սահմանափակելու համար պետք եր ուներնալ ինչ որ իսկական, իրական ուժ։ Այդ ի հարկե, «ամբոխից» յերկյուղով հեռու փախչող զեմեցները չունեյին։ Նրանց ամբողջ հույսը կարող եր միայն բարձր շրջաններում «լոյալյանյան» տրամադրության ճնշումների վրա լինել։ Այդ ճնշումները այնքան եյին, որ Նիկոլայը համաձայնեց իրեն ժողովների հետ «զբաղել» համագումարի վորոշումների մասին (որ հայտնվել եր կառավարությանը ոչ պաշտոնապես, ինչպես և ոչ պաշտոնական, ժամանակավոր գործ եր համարվում հենց ինքը համագումարը)։ Համաձայնության յեկան, որ բարձրագույն մանիֆեստ տան, որի մեջ վերջին մասում կխոսվի նաև ժողովրդական ներկայացուցչության մասին, ի հարկե փոքրամասնության բանաձևով, այսինքն խորհրդակցական ներկայացուցչության մասին։ Բայց վերջին րոպեին Պոբեդոնոսցևը և Վիտտեն, որը շտապել եր պատերազմից առաջ փչացած իր համբավը շտկել, յետ կանգնե-

ցին նաև դրանից, 1904 թ. դեկտեմբերի 12-ին ն. տ. հրատարակած մանիֆեստը խոսում էր միայն վարչական ռեֆորմների մասին և ժողովրդի իրավունքների շատ անորոշ արտահայտված ընդլայնման և մամուլի ազատության մասին. ժողովրդական ներկայացուցչության մասին մի խոսք չկար։

Բայց մանիֆեստի հետ միաժամանակ հրատարակված «կառավարական հաղորդագրությունը» ձևականորեն արդեն հասարակական ժողովներում սահմանադրության մասին հարց բարձրացնել։

Դեկտեմբերի 12 ի մանիֆեստը զեմցեներին շատ հիմար դրության մեջ դրեց։ Միանդամայն պարզվեց, որ միապետությանը խոսքով համոզել չի հաջողվում։ Մինչդեռ բացի խոսքից զեմցեների տրամադրության տակ ուրիշ մի բան չկար։ „Союз Освобождения“-ն զեմսկի համագումարի հետ ամբողջ չորեքրում «բանկետային կամպանիան» սկսեց։ Փնտռում էին զեմսկի նազան դեպքեր, որինակ, Ալեքսանդր 2 րդի դատարանական ռեֆորմների (տես 2.դի մ.) 40 ամյակը, որ հանդիսավոր ճաշեր կազմին, որոնց ներկա էին լինում հազարավոր ժամավորականներ և բուրժուազիայի լիբերալ տրամադրված ներկայացուցիչներից վոմանք։ Աշխատում էին բանվորներին ներս չթողնել։ Սակայն նրանք ուսանողների աջակցությամբ սովորաբար ներս էին մտնում և ճաշողների տրամադրությունը մի քիչ փչացնում էին իրենց արդեն միանգամայն վոչ «լիբերալ» ճառերով։ Բայց և մտավորականությունը խոսում էր, ի հարկե, ավելի սուր, քան զեմցեները իրենց գործնական խորհրդակցություններում։ Ճաշի սեղանին նստած մարդիկ չէին վոր լեզվի կոմից սովորաբար ավելի քիչ զսպված են լինում, քան կապույտ մանուզով ծածկված սեղանի մոտ նստած ժամանակ. բայց և՛ այստեղ և՛ այնտեղ բացի խոսքերից, թե «լիբերալների» և թե «արմատականների» տրամադրության տակ ուրիշ վոչինչ չկար։ Իսկ Նիկոլայը, ինչպես վաղուց կատուն, լսում էր և ուտում։

Բայց ավելի լավ չէր գնում և հեղափոխական կուսակցությունների գործը։ Նրանք այդ ժամանակ ապրում էին սկզբնական կազմակերպության տանջալի շրջանը,—վորը իր տեսակի մեջ պակաս տանջալի չէր, քան սկզբնական կուտակման շրջանը,—և գրեթե անդամալույծ էին դարձել այն անհագին ճիգերի պատճառով, վորոնք այդ աշխատանքի համար պահանջվում էին։ Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը եյապես նոր էր կազմակերպվում. իսկական կուսակցության մասին կարելի չէր խոսել միայն չէրկերպվում. իսկական կուսակցության մասին կարելի չէր խոսել միայն չէրկրորդ համագումարից հետո, 1903 թվի ոգոստոսին։ Համագումարում առաջին անգամ ընկ. Լենինը հարց դրեց կազմակերպելու իսկապես հեղափոխական, մարտական բանվորական կուսակցություն, վորը ունենա չէրկայացուցիչներից վոմանք։ Աշխատում էին բանվորներին ներս չթողնել։ Սակայն նրանք ուսանողների աջակցությամբ սովորաբար ներս էին մտնում և ճաշողների տրամադրությունը մի քիչ փչացնում էին իրենց արդեն միանգամայն վոչ «լիբերալ» ճառերով։ Բայց և մտավորականությունը խոսում էր, ի հարկե, ավելի սուր, քան զեմցեները իրենց գործնական խորհրդակցություններում։ Ճաշի սեղանին նստած մարդիկ չէին վոր լեզվի կոմից սովորաբար ավելի քիչ զսպված են լինում, քան կապույտ մանուզով ծածկված սեղանի մոտ նստած ժամանակ. բայց և՛ այստեղ և՛ այնտեղ բացի խոսքերից, թե «լիբերալների» և թե «արմատականների» տրամադրության տակ ուրիշ վոչինչ չկար։ Իսկ Նիկոլայը, ինչպես վաղուց կատուն, լսում էր և ուտում։

Բայց ավելի լավ չէր գնում և հեղափոխական կուսակցությունների գործը։ Նրանք այդ ժամանակ ապրում էին սկզբնական կազմակերպության տանջալի շրջանը,—վորը իր տեսակի մեջ պակաս տանջալի չէր, քան սկզբնական կուտակման շրջանը,—և գրեթե անդամալույծ էին դարձել այն անհագին ճիգերի պատճառով, վորոնք այդ աշխատանքի համար պահանջվում էին։ Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը եյապես նոր էր կազմակերպվում. իսկական կուսակցության մասին կարելի չէր խոսել միայն չէրկրորդ համագումարից հետո, 1903 թվի ոգոստոսին։ Համագումարում առաջին անգամ ընկ. Լենինը հարց դրեց կազմակերպելու իսկապես հեղափոխական, մարտական բանվորական կուսակցություն, վորը ունենա չէրկայացուցիչներից վոմանք։ Աշխատում էին բանվորներին ներս չթողնել։ Սակայն նրանք ուսանողների աջակցությամբ սովորաբար ներս էին մտնում և ճաշողների տրամադրությունը մի քիչ փչացնում էին իրենց արդեն միանգամայն վոչ «լիբերալ» ճառերով։ Բայց և մտավորականությունը խոսում էր, ի հարկե, ավելի սուր, քան զեմցեները իրենց գործնական խորհրդակցություններում։ Ճաշի սեղանին նստած մարդիկ չէին վոր լեզվի կոմից սովորաբար ավելի քիչ զսպված են լինում, քան կապույտ մանուզով ծածկված սեղանի մոտ նստած ժամանակ. բայց և՛ այստեղ և՛ այնտեղ բացի խոսքերից, թե «լիբերալների» և թե «արմատականների» տրամադրության տակ ուրիշ վոչինչ չկար։ Իսկ Նիկոլայը, ինչպես վաղուց կատուն, լսում էր և ուտում։

հեղափոխություն, առնվազն բուրժուազիայի հետ համաձայնություն կապած, յեթե վոչ նրա զեկավարությամբ։ Լենինին հաջողվեց իր շուրջը հավաքել աննշան մեծամասնությունը։ Բայց գրեթե բոլոր հին «առաջնորդները» վերջերս մահացած Մարտովի գլխավորությամբ, փոքրամասնության մեջ ճնացին. նրանց հեղինակությունը դեռ խոշոր եր, առանց նրանց չէին կարող կառավարել և շուտով, չնայելով համագումարում պարտված լինելուն, նրանք լիակատար տեր յեղան կենտրոնական կոմիտեում և կուսակցության «խորհրդում» (կենտրոնական կոմիտեի և «կենտրոնական որգան» „Искра“-յի խմբագրության խորհրդակցություն)։ Ամենից վատն այն եր, վոր Պլեխանովն էլ անցավ նրանց կողմը։ Լենինը ստիպված եր „Искра“-յի խմբագրությունից, վորի ստեղծողներից մեկն եր, դուրս գալ. բայց Լենինյանները կամ բոլշեվիկները (մեծամասնականները) ինչպես սկսեցին նրանք կոչվել (համագումարում ստացած մեծամասնության պատճառով) ի հարկե իրենց դիրքերը չհանձնեցին և ռուսական բոլոր կազմակերպությունները գարձան «բոլշևիկների» և մենշեվիկների (մարտովականների) կատաղի պայքարի բեմ։ Այդ պայքարի ազդեցությունը բանվորական շարժման վրա կարելի յի գնահատել մի կոնկրետ որինակով։ 1904 թվի նոյեմբերի վերջին բոլշևիկները վորոշեցին Պետերբուրգում մեծ ցույց կազմակերպել։ Բանվորական մասսաներում ագիտացիա սկսվեց, միքանի հազար կոչեր տպվեցին։ Բայց վերջին րոպեին Պետերբուրգի կազմակերպության մեջ մենշևիկները գերակշռություն ստացան, ցույցը հետաձգվեց և պատրաստված թերթիկները այրվեցին։ Կուսակցական ընկերների մի մասը, մեծ մասով մտավորականներից, այնուամենայնիվ փողոց դուրս յեկան նշանակված որը, բայց բանվորները, վորոնց բնական ե, այրված կոչերը չհասան, բացակայում էին։ Վոստիականությունը ազատ ժամանակը կարողացավ ծեծել հավաքված ուսանողներին և ուսանողուհիներին, այդ ձևով հեշտությամբ հաղթություն տանելով հեղափոխության վրա*)։

Բայց մի քիչ ավելի միայն հաջող եր միքանի որ հետո յեղած Մոսկվայի ցույցը։ Դրան յեկան մասնակցելու միայն յերեք հարյուր բանվոր։ Այդ ել ցույց ե տալիս, վոր այրված կոչերի միջազեպը, վորքան ել այդ բնորոշ լինեը ըստինքյան, չեր կարող անհաջողության գլխավոր պատճառը հանդիսանալ։ Գլխավորն այն եր, վոր բոլշևիկների «սկլոկան» մենշևիկների հետ թե մեկին, թե մյուսին զրկել եր բանվորական մասսայի աչքում վարկանությունից։ Վճռի եյությունը և կարևորությունը նույնիսկ կուսակցական շարքերում այն ժամանակ քիչ եյին պարզ հասկանում. ամբողջովին պարզվեց այդ 1905 թվի դեկտեմբերից հետո։ Անկուսակցական բանվորները պարզապես զարմանում եյին, թե մտավորական-ընկերները ինչի մասին են իրար հետ վիճում և հուսահատվելով կուսակցական միասնական զեկավարության բացակայությունից, պատրաստ եյին հետևելու ով ել հանդիպեր։

Իսկ այն մարդը, վոր պատրաստ եր առաջնորդելու կամ խաբելու բանվորներին արդեն կար։ Դա Զուբատովի Պետրոգրադի ժառանգ Գապոնն եր։

Մենք արդեն ասացինք, վոր Զուբատովի Մոսկովյան անհաջողությունը

*) Կրկին հիշեցնում եմ, վոր յես կառավարության պատմությունը շոշափում եմ միայն հարևանցի, հեղափոխական ընդհանուր շարժման կապակցությամբ։

իշխանությունը հակված եր բացատրելու իբրև նրա, անձնապես Զուբատովի, անկարողության և անբարեխղճության, բայց վոչ յերբեք իբրև ապացույց զուբատովականության գաղափարի անպիտանության։ Գաղափարը, ընդհակառակը, շարունակում եր ժողովրդական մեծ, փնտռում եյին միայն ավելի համապատասխան գործադրողի։ 1903 թվին Պետերբուրգի պահնորդական բաժնին թվաց, վոր այդպիսի գործադրող գտել է ի դեմս յերիտասարդ, նոր հոգևոր ճեմարանը վերջացրած Գեորգի Գապոն քահանայի։ Մի աշխույժ մարդ, ամբոխավարական հակումներով, վորոնք և հետագայում նրան կործանեցին։ Գապոնը ինչվոր քաղաքական գործի հետ կապված յերևաց և այդ ճանապարհով ընկավ Զուբատովի և նրա ոգնականների ճանկը։ Նրան «փրկիցին» և հասկացրին, վոր վոստիկանության ծառայելով նա ավելի շատ բավարարություն կգտնի իր բնազդներին և հակումներին, քան հեղափոխությանը ծառայելով։ Գապոնը հետագայում հավատացնում եր, վոր իբր թե ինքը հենց սկզբից վոստիկանությանը խաբում եր, բայց այդ շատ հետո, յերբ պատմությունը նրան հեղափոխականի աստիճանի բարձրացրից, անկախ նրանից, թե նա այդ ցանկանում եր, թե վոչ։ Այդ պատճառով նրա խոսքերին առանձին վստահություն ցույց տալ պետք չեն։ Համենայն դեպս վոստիկանության վստահությունից նա շատ յերկար ժամանակ ոգտվում եր։ Ջնայելով այն ժամանակ գործարանների և ֆաբրիկաների վրա հսկող ֆինանսների մինիստրության հակառակելուն Պլևեն վոչ միայն թույլ տվից Գապոնին Պետերբուրգում հիմնել Մոսկվայի նման «Փոխադարձ ոգնության ընկերություն մեքենայական արտադրության բանվորների» ավելի «լիբերալ» կանոնադրություններով, այլ և թույլ տվից հիմնելու մի ընկերություն ավելի լայն խնդիրներով «Ռուսական ֆաբրիկա գործարանային բանվորների ժողով» անունով։ Այդ ժողովը, վորն ի միջի այլոց իրավունք եր ստացել «հիմնելու զանազան տեսակի լուսավորության հիմնարկներ, օրինակ՝ գրադարաններ և ընթերցարաններ, ժողովրդական ընթերցանություններ, զրույցներ և դասախոսություններ ընդհանուր զարգացողական նյութերի վերաբերյալ, կազմակերպել զանազան բարեգործական և առևտրական ձեռնարկներ։ Այլն, կատարյալ «դեղին» բանվորական միություն եր։ Վորպեսզի կառավարությունը այդպիսի ռիսկով քայլ անելու համաձայներ, հարկավոր եր, վորպեսզի նա շատ հավատար «իր» մարդկանց ընդունակության պայքարելու այդպիսի կազմակերպության մեջ հեղափոխության ոգնությամբ մտնել կարողացող հեղափոխականի պրոպագանդայի դեմ։ Անկասկած այդտեղ միայն Գապոնը չեր, այլ պրովոկատորների մի ամբողջ խումբ, վորոնք հետո իհարկե, նույնպես հետու չեյին իրենց ճարպիկ հեղափոխականներ ձևացնելուց, վոր կարողացել են իշխանությանը հիմարացնել։ Իրապես իշխանությանը հիմարացրից Ռուսաստանի պրոլետարական հեղափոխության տարերային աճումը։

«Ռուս բանվորների ժողովի» կանոնադրությունը հաստատվեց 1904 թվի փետրվարին, իսկ նրա հսկայական թափը յեղավ այդ տարվա աշնանը, յերբ մեկը մյուսի յետևից նրա բաժանմունքներն սկսեցին բացվել Պետերբուրգի զանազան շրջաններում։

Ի՞նչով եր նա իրեն գրավում բանվորներին։

Նախ զուտ արտաքին հրապուրիչ բաներով։ Բանվորի կյանքը նույնիսկ Պետերբուրգում շատ խեղճ ու դժգույն եր։ Բանվորի համար ժամանցի տեղը տրակտիրն եր և գարեջրատունը, իսկ ընտանիքը զուրկ եր վորևե ժամանցից։ Յերբ «ժողովը» սկսեց իր անդամների համար կազմակերպել հանրամատչելի համերգներ, դա մի կատարյալ հայտնություն եր։ Համերգի դահլիճները լցվում եյին այն աստիճան, վոր վոստիկանությունը յերբեմն լուրջ կերպով սկսում եր մտահոգվել, չլինի քանդվի։ «Ահա մեզ մոտ այնպես է, ինչպես ազնվականների»—հպարտ խոսում եյին բանվորների կանայք իրար մեջ։ Համերգից հետո տները ցրվելիս Բուրժուազիայի սեղանից թափված վողորմելի փշրանքները այդ դժբախտ մարդկանց թվում եյին չլսված քաղցր բաներ։

Բայց Գապոնի կազմակերպությունը բանվորների աչքում կամաց-կամաց ստանում եր նաև ավելի լուրջ նշանակություն։ Զգիտակցելով պատերազմի կործանող նշանակությունը, բանվորները չեյին կարող այդ չզգալ։ Անհրաժեշտ ամեն բաների գներն արագ բարձրանում եյին.—միայն 1904 թվին բարձրացան 20 տոկոսով. կային նյութեր, վոր 30 40%-ով բարձրացան։ Իսկ աշխատավարձը, միջին թվով բարձրացավ միայն 3%-ով, իսկ Պետերբուրգի մետաղագործների ամեն տեսակ արտաժամյա աշխատանքները մինչդամիս կրճատվեցին, հենց վոր 1904 թ. հոկտեմբերին յերկրորդ խաղաղ ովկիանոսական եսկադրան ծով մտավ։ «Ընկերությունը» և «ժողովը» տեսնվելու և միասին ժամանցունելու միջոցից արագ սկսեցին կերպարանափոխվել շատ ավելի լուրջ բանի՝ բանվորների շահերի պաշտպանության գործիքի կապիտալի ճնշման դեմ։ Պետերում կրկնվում եր Մոսկվայի պատմությունը։

Բայց այս անգամ գործը հենց սկզբից ավելի լուրջ եր։ Զուբատովականների Մոսկվայի ագիտացիան կատարվում եր հեղափոխական ագիտացիայի ազդեցությանը ամենևին չհնթարկված բանվորների շերտերում։ Դասակարգային գիտակցությունը նրանցում արթնացավ, յերբ նրանք արդեն Զուբատովականներ եյին։ Գապոնի շուրջն սկսեցին խմբվել հեղափոխական կազմակերպությունների ճախկին անդամները։ Դրանք, ի հարկե, ամենագիտակից կուսակցական բանվորները չեյին, այլ մեծ մասով ծայրահեղ քնից, վորոնք յերազում եյին բանվորական լեգալ շարժման մասին, հին «եկոնոմիստների» ձևով, բայց ավելի կուլտուրեն։ Բայց այստեղ կային և նախկին բոլշևիկներ, վորոնք չեյին կարողացել սկզբունքն հասկանալ և միամտաբար կարծում եյին, թե ամբոխավար Գապոնը «սոցիալ-դեմոկրատներից էլ լայն է»։ Ինչ էլ լիներ, դրանք մարդիկ եյին, վորոնց Գապոնն էլ պետք է կաշառեր քաղաքական խոստումներով։ Արդեն 1904 թվի մարտին, նա իր «շտաբին» կարդաց այն պետիցիայի նախագիծը, վոր բանվորները պետք է ցարին ներկայացնեյին։ Հենց սկզբից գործը Մոսկվայի գործից ավելի բարդ եր։ Ավելի բարդ եր և ամբողջ կացությունը։

Այն յերկու տարում, վոր Մոսկվայի դեպքից հետո անցել եր, հեղափոխությունը սարսափելի առաջ եր անցել։ Այն ժամանակ բավական եր վոր ձեռնարկատերերը դիմեցին իշխանությանը և Զուբատովը թռավ տեղից, իսկ նրա անվան հետ կապված շարժումը անմիջապես դադարեց։ Ջնոնարկատերերը այժմ էլ շարժվեցին. նոյեմբերի կեսին Պետերբուրգի ֆաբրիկանտները և գործարանատերերը ժողով արին, ուր խոսեցին այն մասին, թե անհրաժեշտ է «վերջ տալ», «միջոցներ ձեռք առնել» և այլն։ Բայց այս անգամ վոչ մի միջոց ձեռք չառնվեց. կառավարությունը իր մեջ ուժ չեր

զգում միանգամից յերեք ներքին ճակատում պայքարելու՝ և՛ բանվորների և՛ հեղափոխականների, և՛ լիբերալների դեմ։ Ցեվ ճիշտ կերպով ամենից վտանգավոր թշնամիները հեղափոխականներին համարելով նա լիբերալներին ներողամտություն եր ցույց տալիս, բանվորական կազմակերպությունները համբերում եր, միայն թե իր բոլոր թշնամիները չմիանան։ Դրա հետ միասին բանվորների՝ լիբերալների հետ միանալուց չեր վախում դարձյալ ճիշտ կերպով։ Նա միայն չըմբռնից, վոր լիբերալների դատարկախոսությունը հեղափոխականները կարող են ոգտագործել արտաքուստ շատ անշքաս և անմեղ պրոպագանդայի համար բանվորների մեջ։ Ցեվ իսկապես այդպես էլ յեղավ բանվորական ժողովներում, դրանց թվում նաև Գապոյան ժողովներում վոչ այնպիսի մեծ ժողովներ, վորպիսին հավերժների ժողովներն եյին, կարդացվում եյին ասվաբաժդենիական թերթերից հոդվածներ, վորոնց մեջ խիստ քննադատվում եր միապետությունը։ Այդ դեռ ևս հեղափոխական ագիտացիա չեր. բայց անգույն բանվորների համար, վորոնց սոցիալ-դեմոկրատական պրոպագանդան դեռ չեր հասել, հոդվածները գործի բոլորովին նոր կողմն եյին բանում։ Այդ անգույն բանվորները սկսում եյին տեսնել, վոր ճնշողների և բռնագործների աշխարհը տնտեսատերով, նրա գործակատառներով և քաղաքապահներով չի վերջանում, վոր ճնշումի կողմն եր ամբողջ իշխանությունը, գուցե բացի ցարից։

Նիկոլայի ձախ լիբերալ թերթերը նույնիսկ այդ որերին չեյին համարձակվում դիպչել և բանվորների մեջ հենց դրա վերաբերմամբ կարող եյին ցնորքներ ծնել։

Այսպես կազմվեց հարմար հող իրականացնելու այն միտքը, վոր վաղուց Գապոնի գլխում պտտվում եր՝ բանվորներին ուղղակի ցարի մոտ տանել։ Նեղությունն չքաշելով խոսել վոչ միայն քաղաքապահների և պրիստավների, այլև քաղաքապետի ու մինիստրի հետ։ Արդյոք Գապոնը այդ դեպքում մտքում ուներ հեղափոխական ցույց։ Մի շարք փոքր հանգամանք այդպիսի յենթադրությունը բոլորովին ժխտում է. սկզբում Գապոնը մտադիր եր ցույցը կազմակերպել փետրվարի 19-ին, իսկ մենք գիտենք, թե 1902 թվի փետրվարի 19 ին ինչ եր պատահել Մոսկվայում։ Այն որը, յերբ բանվորները պետք է հիշեյին «Ռոմանովներից» մեկի «բարեգործությունը», քիչ եր հարմար հեղափոխության սկզբնավորության համար։ Ցեթե սոցիալ-դեմոկրատները, իսկապես, նկատի ունեյին այդպիսի ցույցին էլ մասնակցելու, ինչպես խոսում ու գրում եյին արտասահմանի թերթերում, նրանք կամ մոռանում եյին Մոսկվայի դեպքը կամ հույս ունեյին գործն իրենց ուղածի պես թեքել, ուշք չդարձնելով Գապոնին։ Բայց վոր վերջինս այդ ժամանակ դեռ հեղափոխական չեր, հարիվ թե կարելի լինի կասկածել։ Ինչը նրան ավելի ևս դեպի ձախ թեքեց, քան ինքը յերբևե յերևակայում եր։ Հիմքն այն եր, անկասկած, վոր բանվորական շարժումը, ինքն ել հրահրվելով սկսվող գործազրկությունից և վաղուց զգացվող կարիքից, ավելի ևս ձախանում եր, իսկ մերձավոր պատճառը հավանորեն նաև այն վախկոտությունն եր, վոր Նիկոլայի կառավարությունը դիմեցների առաջ ցույց եր տվել։ Գլևեն նրանց հետ խոսել իսկ չեր ուզում, նրանց իրար մեջ խոսել ել թույլ չեր տալիս, իսկ այժմ վոչ միայն համբերում եյին անլեգալ զեմսկի համագումարը, այլ և հաշվի եյին առնում նրա վորոշումները, նրանց առթիվ խորհրդակցություն եյին հրավիրում,

դուրժում եյին այնպիսի թերթերի, վորոնք այնպիսի հանդուգն լեզվով եյին խոսում, վորով լիբերալները առաջ մտածել չեյին համարձակվի։ Ձեվժիցների հետ խոսում են, իսկ մեզ հետ ինչքա՜ն չեն խոսի։ Այդպիսի մտքեր պիտի ծագեյին Գապոնի աշխույժ, կենդանի և չմոռանանք, ամբոխավարության շատ հակված գլխում։

Գապոնի տրամադրության մեջ այդ թեքումը ահա յերևաց ցույցի որը փոխելու մեջ։ Մոտավորապես դեկտեմբերից, յերբ նրա «ժողովը» շատ փոթորկալի աճեց (այդ ժամանակ ժողովում կային 7 8000 իդ վոչ պակաս անդամ, այդ ժամանակի համար խոշոր թիվ, յերբ ս.դ. կազմակերպությունների անդամները հարյուրներով եյին հաշվվում), նա ցույցի որը սկսում ե վորոշել վոչ թե փետրվարի 19-ը, այլ Պետ. Արտուրի աւկուսը։ Փոխանակ միապետության հաղթանակի որի, ընտրում է նրա ստորացման որը։ Հավատարիմ հայտնության զգացումներ արտահայտելու տեղ ցույցը դառնում է խիստ հիշեցում հավատարիմ հպատակների կողմից ցարին իր պարտականությունների մասին։

Ինչպես միշտ լինում է իսկական պատմության և վոչ վիպի մեջ, կազմակերպել այնպես, ինչպես այդ Գապոնը կուզեր, չհաջողվեց։ Այն ժամանակ, յերբ Արտուրն ընկավ և Գապոնի բնորած մոմինները ցույցի վրա հանեցին, շարժումը այնպիսի փոթորկոտ ալիքներով եր առաջ գնում, վոր ինքնուրույն միայն հոսանքով լողալ։ Շարժման սկզբնավորության առաջին միանգամայն հենց այնպիսին եր, ինչպիսին վոր խաղաղ ժամանակում զուրատվյան կազմակերպությունների իրենց տերերի և վարչությունների հետ ընդհարվելու ժամանակ։ Գործարանների իշխանությունը, վոր արդեն նոյեմբերից պատրաստվել եր հարձակման դիմելու, դեկտեմբերի վերջին վորոշեց հարվածը հասցնել։ Պուտիլովյան գործարանում վարպետի հետ ընդհարվելու հետևանքով արձակվեցին «ժողովի» անդամ յերեք բանվոր։ Ընդհարվելու պահին ինքնին ել վոչ մի կասկած չեր կարող լինել, վոր ամբողջ գործարանի վարչությունը, վոր վորոշել եր «դաս տալ» «յերես առած բանվորներին», իրենը պնդից։ Բանվորական մասսան սկսեց խուլ կերպով ալեկոծվել։ Գապոնին ուրիշ բան չեր մնում, բայց յեթե կամ իր պարտությունը հաշտվել և իրեն խայտառակել ամբողջ «ժողովի» աչքում կամ հակառակ ընթացք բռնել։

Ցեթե նա չգնար, շարժումը նրան պարզ կերպով մի կողմ կմղեր և իրեն համար ուրիշ առաջնորդներ կրգտներ։ Պուտիլովի գեպքը Պիտերի՝ պրոլետարիատի հավերժության բաժակը լցրից։ Պուտիլովի բանվորները գործադուլ արին, նրանից հետո մեկը մյուսի յետևից սկսեցին կանգ առնել Պիտերբուրգի ուրիշ մետաղագործական խոշոր ձեռնարկությունները։ Շարժումի կենդրոններ դարձան Գապոնի «ժողովի» բաժանմունքները, դարձյալ գրեթե ակամայից բանվորները ուրիշ կենտրոններ չունեյին։ Ահա թե ինչպես և նկարագրում բանվորական ժողովներից մեկը մի ականատես, շատ աչ սոցիալ-դեմոկրատ, այդ որերին հեղափոխականորեն չտրամադրված, ուրեմն և ազատ այն կասկածից, վոր նա դեպքերը շատ վառ գույներով կարող եր նկարել. «ժողովում ամբողջ ժամանակ իշխում եր ինչվոր միստիկ, կրոնական հափշտակություն. սարսափելի նեղվածքի և տաքության մեջ ժամերով կողք կողքի կանգնած եր հազարավոր ժողովուրդը և ագահությամբ վորսում եր վոչ արհեստական, զարմանալի ուժեղ, պարզ և կրքոտ իրենց

հռետոր բանվորների ճառերը: Ճառերի բովանդակությունը միշտ էլ աղքատ էր. ամեն ձևով կրկնվում էին այս խոսքերը. «մենք այլևս չենք կարող համբերել», «մեր համբերության վերջն արդեն հասավ» «մեր տանջանքները ամեն չափից անցան», «մահը այս տեսակ կյանքից լավ է», «մարդուց չի կարելի յերեք կաշի քաշել» և այլն: Բայց այդ բոլորը արտասանվում էր այնպիսի զարմանալի ցնցող անկեղծությունով, որքան դրանք տանջված ժողովային հոգու խորքից էին յելնում. վոր նույն խոսքը հարյուր յերորդ անգամը արտասանվելով, արցունք էր քամում աչքերից, ստիպում էր խոբացես զգալ այդ և մարդու լցնում էր խորը հատատուն վստահությունով, վոր հոգ պետք է մի բան վորոշել, վոր յելք տրվի ափերից դուրս յեկած այդ բանվորական վշտին...»:

Վերջ ի վերջո այդ անդուսպ կերպով դեպի լավ կյանքը մղվող պրոլետարիատի տրամադրության ժեջ Գապոնից, իր նախկին քարոզներով, ճշտ միայն մի բան՝ հավատ վոր բռնատավորություն կարելի յե ստանալ անմիջապես Նիկոլայ II-ից, վոր վերջինս, յեթե նույնիսկ ուզենար, չեր կարող այնպիսի բաներ տալ. ինչպիսին և ութժամյա բանվորական որը և «նորմալ աշխատավարձը», վորոնց մասին գրված եր պետիցիայում, չէին հասկանում վոչ միայն բանվորները, չեր հասկանում նաև նրանց առաջնորդը: Գապոնը անկեղծ հավատացած եր, վոր 8 ժամյա որը ամենափոքր բանն է, վոր կարող են բանվորները սպասել իրենց գործի հաջողության դեպքում: Նրա «նվազագույն ծրագիրը» յերեք կետից եր բաղկացած. «քաղաքականներին» ընդհանուր ներում—ամնիստիա, «ընդհանուր ժողովրդական գումարել». վորը պետք է սահմանադրություն մշակեր և ահա հենց այդ 8 ժամյա որը: Ցավ նա գլխի չեր բռնում, վոր այդ 8 ժամյա որը, վորն ինքն իմիջիայլոց եր հիշել, իրրև մի փոքր և ինքն իրեն հասկանալի բան, չեր կարող նույնիսկ կիսահագթական հեղափոխությունն էլ կորզել, ինչպես գուց տվեց 1905 թվի նոյեմբերը:

Գապոնն իր այդ «նվազագույն ծրագիրը» մանավոր խոսակցություններում բացատրում եր, «պետիցիայում» ավելին եր գրված», այդտեղ կային և «միջոցներ ռուս ժողովրդի տգիտության և իրավազրկության դեմ» և միջոցներ ժողովրդի աղքատության դեմ» և «միջոցներ կապիտալի կողմից աշխատանքը ճնշելու դեմ» և ընդհանուր գաղտնի ու հավասար ձայնավորությունով սահմանադիր ժողով հրավիրելու պահանջ:

Վերտեղից առաջ յեկավ այդ պետիցիան: Մենք շատ կրսխալվինք, յեթե այդ համարինք բանվորական կոլլեկտիվ աշխատանքի արդյունք, ավելի ևս իրեն՝ Գապոնի արտադրություն: Վերջինս, ընդհանուրի կարծիքով, քաղաքականապես այնքան տգետ մարդ եր, վոր չեր կարող կանոնավոր և հաջորդական ձևով շարադրել վորևե քաղաքական ծրագիր: Իսկ բանվորները՝ «շտաբականները» առաջին անգամ Գապոնից լսեցին պետիցիայի հիմնական մտքերի շարադրանքը հենց իրենց իսկ խոսուվանությամբ: Վերտեղից յեկան այդ մտքերը:

Այստեղ պետք է հիշել, վոր, անկասկած, Գապոնը վոչ միայն Պետերբուրգի պահնորդական բաժնի հետ կապեր ուներ, այլև «Освобождение»-յի մտավորականության հետ: «Շտաբական» բանվորներից մեկն իր հիշողություններում պատմում է, վոր 1904 թվի սկզբին Գապոնը և իր «շտաբը» տեսակցություն ունեցան «մտավորականների» հետ, վորոնցից Պրոկոպովիչն

չի, Կուսկովայի և Բոգուչարովու անունները տալիս են: Դա յեր այն ժամանակվա «Союз Освобождения»-ի «կենդրոնը»: Իրր թե «մտավորականները» զարմացել եյին Գապոնի անսովոր քաղաքական իմաստության վրա և ամեն բանում մյացան «նրա» պետիցիայի նախագծին: Այդ, իհարկե, մի ճարպիկ կատակերգություն եր, վորի նպատակն եր բանվորներին ձեռքը խցկել հենց այդ մտավորականների սիրած մտքերը: Ինչպես պետիցիան, տեսնում յենք, վոր այդ պարզապես ապաքաղաքակարգային կամ համադասակարգային բնույթ ուներ, այս բանում բոլորովին ուղիղ արտահայտել վ Ստրուվեյի և «սոցիալ-դեմոկրատների» քարոզը: «Հրամայիր—ասում եր պետիցիան, ղեմոկրատիայի կենտրոնական կոմիտեի նկատմամբ Նիկոլային—անմիջապես, իսկույն ռուսական յերկրի ներկայացուցիչներին հրավիրել, բոլոր դասակարգերից, բոլոր դասերից. Թող այդտեղ լինեն յեվ կապիտալիստը յեվ բժիշկը յեվ ուսուցիչը»: Բանվորները հավատում էին, վոր այդքան հոգս քաշելին, վոր կապիտալիստներն էլ սահմանադիր ժողովում լինեն. (ժողովն էլ զուտ կապիտալիստական տիպի, վորին հրավիրելու հենց ինքը ցարը):

Բանվորներին եր պատկանում պետիցիայի բնագիրը—նրանց համար կարևոր եր և հասկանալի միայն դրա հրամայական մասը—կամայականության և իրավազրկության ջնջումը, վորի ճնշումը բանվորներն ավելի եյին զգում, քան վորևե մի ուրիշը: Ցերը նրանք գործարանի վարչությանը ուղղված պահանջներով հրապարակ եյին գալիս, նրանք, ցավոք, պահանջում եյին գործատուական սահմանադրություն. բայց հեշտից էլ հեշտ եր հասկանալ, վոր գործարանային սահմանադրությունը միապետական պետության մեջ աճիսկացայի յե: *)

Բանվորների սխալն այն եր, վոր նրանք հույս ունեյին խաղաղ ճանապարհով Նիկոլային համոզել: Վոչ մի կասկած չկա, վոր հարյուրից 99-ը

---

*) Տես Բալտիկ գործարանի բանվորների պահանջը 1905 թ. հունվարի 7, հ. ա.:

«Գործադուլավորների պահանջները պարզելու համար՝ խորհրդակցություն բանվորների ընտրած պատգամավորների և Բալտիկ գործարանի վարչության ներկայացուցիչների: Խորհրդակցության մեջ բանվորները պետք է ապահովվեն անձեռնմխելիությունով և հետագայում ամենևին չպետք է արձակվեն աշխատանքից:—4. Ընդհանուր վորոշումը պետք է պարտադիր լինի և գործադրվի գործարանի բոլոր արհեստանոցներում վարչության և ավագ տեսչի սաորագրություններով,—5. Վոչ վոք գործադուլից չպետք է տուժի... —8. Նոր շինած իրերի գնահատության հետո և հետո պետք է անի բանվորների ընտրյալների հետ հոժար կամքով համաձայնելուց հետո և հետո պետք է պարտադիր համարվի: Ինչ վերաբերում է հին իրերին, դրանք պիտի նորից քննվեն նույն հիմքով:—9. Վերացնել խուզարկությունը, վոր մարդկային արժանապատվությունը չանարգում էր:—10. Բալտիկ գործարանին կից պետք է հիմնվի բանվորներից ընտրվածների մշտական հանձնաժողով, վոր քննելու յի վարչության հետ առանձին բանվորների բոլոր պահանջները: Բանվորին հեռացնելը պիտի լինի վոչ այլ կերպ, բայց յեթե այդ հանձնաժողովի վորոշումով:—15. Պետք է արհեստանոցների սանիտարական դրությունը լավացնել:—16. Գործարան մտնելու իրավունք տալ բոլորին, վորոնք յերեք տարի առաջ գործադուլի պատճառով տուժել են:—17. Վարպետները, վարպետացուները, ցույց ավողները և առհասարակ ամբողջ վարչությունը պետք է անպայման բանվորների հետ վարվին ինչպես մարդկանց հետ և վոչ թե իբրև իրի հետ, և խոսակցության մեջ ավելորդ խոսքեր թույլ չտան, ինչպես այդ մեզանում ընդունված է:—18. Աշխատավարձը տալ աշխատանքի ժամանակ:—19. Հեռացնել Միխայիլ Դենիսովին, վորը փողոցից սև աշխատավորներ է ժողովում, արգելք լինելու համար կոպիտ և հանդուգն վարվելու համար:

հաստատ հավատում էին, վոր ցարը չի կարող չողնել. դեռ ավելին, վոր այդ միակ յեվ վերջին հույսն ե: Կասկած չի կարող լինել դրանում, վորովհետև Գապոնն իճին ել դրան հավատում ե՛ր կեսից ավելի չափով. Սկսվող ցույցի հնարավոր հետևանքները քննելով, նա գործն իրեն այսպես ե՛ր պատկերացնում. կամ ցարն ինձ կընդունի և իմ խնդիրը կբավարարի (այսինքն իր «նվազագույն ծրագիրը») այն ժամանակ չես դուրս կգամ հրապարակը սպիտակ թաշկինակով և կկոչվի ժողովրդական ոտնը. իսկ յեթե ցարը մերժի, չես կարծիր թաշկինակը կծածանեմ և խռովութլունը կկոչվի: Բայց յերկրորդը, նրա այս խոսքերը հայտնող իռսակցի ասելով, Գապոնին թվում ե՛ր շատ ավելի պակաս հավատալի, քան առաջինը: Սակայն ուրիշ բան ել էին ասում: Այդ ուրիշ պատմութլուններրի համաձայն Գապոնի ճառերը ավելի վճռական էին: «Բարրիկադներ կշինենք—իրը թե ասել և նա—քարուքանդ կանենք զինավաճառատները, կքանդենք բանտը, կգրավենք հեռախոսն ու հեռագիրը, մի խոսքով հեղափոխութլուն կանենք: Եսերները ռումբներ են խոստացել, դեմոկրատները դրամ և մենք կհաղթենք»:

«Ոսվ-բուժդենիականները» այսպիսով Գապոնին վոչ միայն «ապստամբարգային» գաղափարներով էին պարենավորել,—նրանք խոստացել էին նաև ավելի կարևոր բաներով ել պարենավորել: Բայց այդ բոլոր մանրաշիվները կորան տարերային շարժման հսկայական հեղեղի մեջ: Հեղեղը Գապոնին քշում ե՛ր անարգել: Հունվարի 9-ի շարժումը, ճիշտն ասած, վոչ առաջնորդ ուներ և վոչ առաջնորդներ, վորովհետև հեղափոխական կազմակերպութլուններն ել չէին զեկավարում, այլ բոլորի հետ հոսանքից տարվում էին: Դրա համար ել 1905 թվի հունվարի 9-ը (ն. տոմարով 22-ը) պետք ե հաշվել ռուսական հեղափոխութլան սկիզբը. վորովհետև գործող անձը այստեղ մեկն ե՛ր ինքը ժողովրդական մասսան:

Ցեվ միայն այդ մասսայից սարսափելով, միայն հակահեղափոխական ախից իրեն կորցնելով կարելի յե բացատրել այն անմիտ քայլը, վորով ցարական վարչութլունը պատասխանեց բանվորների ցարին արած դիմումին: Նրա համար ավելի շահավետ կլիներ, վոր բանվորները, վորքան հնար ե, ուշ հասկանային իրենց ցույցի հեղափոխական նշանակութլունը: Նրա համար ավելի շահավետ կլիներ, վոր բանվորները վորքան կարելի յե ավելի յերկար ժամանակ հավատային, վոր ցարը կարող ե ամեն բան տալ, նույնիսկ նաև 8-ժամյա բանվորական որ, իսկ յեթե չի տալիս, այդ ել նրա անսահման իմաստութլան պատճառով, հենց իրենց բանվորների ոգուտ համար: Ընդհակառակը նրա համար վոչինչ ավելի անոգուտ չե՛ր լինի, քան բանվորներին այն համոզմունքը ներշնչելը, թե պահանջել տերերի վրա դատ, կնշանակե ցարի դեմ խռովութլուն անել: Բայց նրա սարսափը այնքան մեծ ե՛ր, նա այնքան ե՛ր գլուխը կորցրել, վոր այդ պարզ և հասարակ բաները նրա գիտակցութլունից միանգամայն դուրս մնացին և նա մի քանի համազարկերով բանվորներին բացատրեց այն, վոր իշխող բավական տարիներ շարունակ հեղափոխական կուսակցութլուններն աշխատում էին նրան բացատրել, վոր բանվոր դասակարգի ազատութլան ճանապարհը միապետութլան դիակի վրայով ե անցնելու: *)

*) Վոր բանվորներին հրացանազարկ անելը «ճակատագրական թյուրիմացութլուն չե՛ր», վոր այդ գիտակցորեն պատրաստված թակարդ ե՛ր մի պրովոկացիա բառի ամենաուղիղ և ամենասուրը իմաստով—այդ կասկածի չի կարող յենթարկվել: Ահա թե ինչ ե՛ր պատմում հենց

Ճակատագրական որի արշալույսից ել առաջ բանվորներն սկսեցին բազմանել քաղաքների մոտ հավաքվել: Հաշվում էին, վոր հավաքվել ե՛ր մինչ 200,000 մարդ. բայց իրենց մասնակցողների համար այդ ել քիչ ե՛ր: «Ժողովուրդը քիչ ե, քիչ» խոսում էին ամբոխի մեջ: Վերջին անգամ լսվում էին ճառեր, վորոնք փորձում էին բառերով արտահայտել բանվորական անարտահայտելի վիշտը: Ահա այդ ճառերից մեկը, վոր գրի յե առել ականատեսը, մաքերի բոլոր նոր ու հին շփոթութլուններով, վոր պահանջ էին զգում դուրգալու և իրենց համար յելք չէին գտնում. «Ընկերներ, դուք գիտեք, թե ինչի համար ենք գնում: Մենք գնում ենք ցարի մոտ արդարութլան համար: Այլևս ապրել չենք կարողանում: Հիշում եք դուք Մինինին, վոր դիմեց ժողովրդին, վոր Ռուսն (Русь) ազատեն: Բայց ո՞ւմից: Լեհերից: *) Այժմ մենք պետք ենք: Մեր արյունն ու քրտինքն են քամում: Արժե՞ վոր ձեզ բացատրեմ մեր բանվորական կյանքը: Մենք 10 ընտանիք ապրում ենք մի սենյակում. նույնպես և ամուրիները: Ճիշտ եմ ասում.»—«Ճիշտ ե, ճիշտ ե»—լսվեց ամեն կողմից: «Ցեվ ահա, ընկերներ, մենք գնում ենք ցարի մոտ: Ցեթե նա մեր ցավերը ե, յեթե նա իր ժողովրդին սիրում ե, նա մեզ պետք ե ականջ դնի»...

Իսկ այդ ժամանակ գնդակահարելու բոլոր պատրաստութլուններն արդեն տեսնված էին: Զորքերն իրենց տեղերում էին. չվստահանալով պիտերի զորքերին, Պսկովից հետևակ զորք բերին, Մոսկովորականների շրջաններում այս մասին պիտույին և սարսափած Սվյատոպոլկ-Միրսկուց (սա դեռ անունով մինիստր ե՛ր, թեև դեկտ. 12-ից հետո նա վոչ մի նշանակութլուն չուներ) վազում էին Վիտեյի մոտ. (նույնպես պաշտոնաթող և դեռ իր նախկին ազդեցութլունը ձեռք չբերած): Վոչ նա, վոչ սա չէին ուզում, չէին ել կարող ոգնել: Այժմ ամեն բան զինվորական իշխանութլունների ձեռքին ե՛ր, իսկ սրանք, իրենց կողմից, ուզում էին ինչ ել վոր լինի «դաս տալ»: Ինտելլիգենտների պատգամավորութլանը,—վորոնց մեջ ե՛ր և իմ ընկերս Մ. Գորկին,—միայն այն բանի հասավ, վոր մյուս որը նրան ձերբակալեցին... իբրև «ժամանակավոր հեղափոխական կառավարութլան»:

Զորքի առաջին շղթան և առաջին հրացանաձգութլունը բանվորների

*) Այդպես էին բացատրում ցարական դասագրքերը. «Խառը ժամանակը»: Թե իրա-պես Մինինը ինչ դեր ե կատարել տես 1-ին մ.

այն ժամանակ մի անգլիացի թղթակից և ռուսական նախկին պրոֆեսոր, միաժամանակ պալատական շրջաններում ընդունված և Ռուսաստանն ել լավ իմացող դոկտոր Դիլլոնը.

«Ցես հարցրի մի պալատականի, ինչու՞ այսոր առանց ձևականութլունները պահելու ըստ պաշտոնում են անզեն բանվորներին և ուսանողներին: Նա պատասխանեց. «Վորովհետև քաղաքացիական որենքները վերցված են և ձեր զարմանքը բնական, և բայց Ռուսաստանում իրենց մեծութլունը վորոշեց քաղաքացիական որենքները վերացնել և հասարակական կարգի հոգը հանձնել մեծ իշխան Վլադիմիրին, վորը ֆրանսիական հեղափոխութլունից շատ և շատ բան սովորեց և վոչ մի անմիտ ներողամտութլուն ցույց չի տա: Նա այն սխալները չի անի, վորոնց մեջ ընկան Լյուդովիկոս XVI-ի մոտիկ մարդիկ. նա թուլութլուն չի ցույց տա: Նա ժողովրդին սանձահարելու համար կարող ե ամենաուղիղ միջոցը ձեռք բերել. նա կհրամայի զինվորներին կրակել»: Ես ասացի. «Ինչպես ուզում եք, բայց ձեր զարմանքը ինձ համար անհասկանալի յե. ինչպես ձեր ընկերները, այնպես ել ես ինձ համարում եմ ռուսական ազատական կուսակցութլան անդամ և ձեր ասածները ինձ համար ահավոր են հնչում»: Այսոր նորին բարձրութլունը, ամենաբարձր իշխանութլունն ունի և կարող ե իր միջոցը փորձել in anima vili, վորքան ցանկանա... Մեծ իշխան Վլադիմիր այժմ անսովոր ա-

հանդիպեցին քաղաքի արգելափակոցի (զաստավնեյի) մոտ։ Իրարանցումից հետո մեկում Գապոնը վայր գլորվեց, իրեն երկրպագուները նրան ժամանակ միջից հանեցին և այլևս նա այդ որը բեմում չերևաց։ *) Բայց ցուցարարների մեծ մասին այնուամենայնիվ հաջողվեց հասնել պալատի հրապարակը (այժմ Ուրիցկու հրապարակը)։ Ձմեռան պալատը, որ դատարկ եր, զորքի խիտ մասսաներով շրջապատված եր, նույնիսկ հրետանիով, կարծես պալատին պաշարում եր սպառնում։ Ամբոխին թույլ տվին հավաքվելու, կարծես դիտմամբ հրապուրում եյին։ Բոլորն էլ սկսեցին հանգստանալ. համարելով, որ արգելափակոցների մոտ հրացանաձգությունը թյուրիմացություն եր, առանձին հրամանատարների հիմարություն։ Հանկարծ զինվորական փողը հրապարակում փչեց և սկսվից «հրացանաձգությունը պահակներով (գնդակների փաթեթներով»։ Հարյուրներով եյին թափվում սպանվածները և վիրավորները,—մարդկային զանգվածին կրնեք անվրեպ կարելի յեր խփել։ Սարսափի առաջին րոպեներից հետո այս ու այն կողմ փախած բանվորները կատաղեցին, վրեժ լուծելով առանձին, իրենց ձեռքն ընկած զինվորականներից և քաղաքապահներից, զինվորա-վոստիկանական վոհմակի այդ չարագործության համար։ Այդ առաջ բերից նոր հրացանաձգություն և ամբոխի կատաղության նոր պոռթկում։ Բանը քիչ թե շատ հեղափոխականորեն կազմակերպված գործողությունների չհասավ, միայն վասիլևսկի ոստրովում քար ու քանդ արին զինավաճառատունը և սկսում եյին բարրիգադները շինել։ Բայց սոցիալ-դեմոկրատները, որոնց նախընթաց որը վոչ վոք ուշադրություն չեր դարձնում, սկսեցին դեր խաղալ. «նրանց այժմ լսում եյին»— գրում է ականատեսը։

Մի քանի որից հետո Պետերբուրգում ամեն ինչ խաղաղ եր.— այնքան խաղաղ, որ նշանակված գեներալ-նահանգապետ Տրեպովը, Ջուբատովի նախկին իշխանավորն ու հովանավորը, նույնիսկ հնարավոր գտավ «գործը շտկել» կազմակերպելով իր սեփական պատգամավորությունը «բանվորներից» թագավորի մոտ «Վոստիկանության թույլտված» այդ պատգամավորությանն ահա Նիկոլայը ընդունեց Ցարսկոյե Սելոյում։ Ցերը «պատգամավորները» վերադարձան, նրանք չեյին կարողանում գործարաններում յերբևել ընկերների սուր նկատողություններն և հայհոյանքների պատճառով։

*) Մի քանի որ թաղվեց Պետերբուրգում, հետո կարողացավ փախչել արտասահման։ Վերադարձավ արդեն հոկտեմբերյան գործադուլից հետո, նորից կառավարության մոտ ծառայության մտավ, իր նախկին ընկերները մերկացրին նրան և՝ իբրև պրովոկատորի, սպանեցին։

ելք ունի պետական անձն լինելու և նապոլեոնյան ընդունակություններ ցույց տալու, և նա հետևանքից ամենևին չի վախենում։ Ինչ ել որ պատահի, նա կզսպի ամբոխի ըմբոստ ոգին, յեթե նույնիսկ ստիպված լինի բնակչության դեմ ուղարկելու բոլոր զորքերը, որ նրա տրամադրության տակ են։»

Ռուս հեղինակը, որից մենք առանք այս բնագիրը, ավելացնում է.

«Որ կառավարությունն առաջուց մտադիր եր յերթը թույլ տալ և բանվորների հետ հաշիվ տեսնել—այս մասին վկայում են մի շարք փաստեր։ Կառավարությունը գիտեր պատրաստվող յերթի մասին պահանոր դական բաժնի զեկուցումներից, հենց իրեն՝ Գապոնի նամակից, այս մասին գիտեր քաղաքագլուխ Ֆուլոնը, ներքին գործերի մինիստրի ոգնականը, ինքը մինիստրը—Սվյատոպոլկ-Միրսկին, Վիտտեն, Մուրավյովը. մի խոսքով կոտորածից մի քանի որ առաջ բոլորը գիտեյին։ Կառավարությունն առաջուց վոչ մի միջոց ձեռք չառավ. նույնիսկ

Բայց յեթե Պետերբուրգում փողոցներում խաղաղ եր (գործադուլը չդադարեց և վոչ մի որ), դրա փոխարեն Ռուսաստանի ընդարձակ տարածության մեջ հունվարի 9-ը այնպիսի շարժում առաջ բերեց, վորպիսին յերբեք առաջ չեր տեսնվել։ Յերկու ամիս գործադուլը յերկրամասից յերկրամաս եր տարածվում, գրավելով 122 քաղաք և ավան, իր մեջ առնելով մինչև մի միլիոն բանվոր։ Ռուսաստանը 1905 թվի հունվարին և Ռուսաստանը նույն թվի մարտին—յերկու տարբեր յերկրներ եյին։ Վորքան առաջին հավատարիմ հպատակ եր, նույնքան յերկրորդը պարզ, թեև վոչ կազմակերպված, հեղափոխական։

Գապոնի բանվորների մեջ այդ հեղափոխականությունն առաջին րոպեյին արտահայտվեց շատ միամիտ ձևով. գնալով սոցիալ-դեմոկրատների մոտ, վորոնց վրա դեռ յերեկ նրանք բարձրից եյին նայում, գապոնյանները սկսեցին նրանց առաջարկել՝ հետևյալ կիրակին գնալ արդեն վոչ խաչվառներով, սրբերի և ցարի պատկերներով, այլ ռումբերով և ատրճանակներով՝ վրեժ լուծելու հունվարի 9-ի համար։ Սոցիալ-դեմոկրատները չպետք է մենշևիկներ լինեյին (իսկ դրանք մենշևիկներն եյին), վորպեսզի այդպիսի առաջարկը մերժեյին, վորը գործնականում վոչինչ չեր խոստանում, բացի նոր կոտորածից։ Գապոնյանները յետ գնացին և շատ հիասթափված հեռացան, բարի բաժին լինելու սոցիալիստ-հեղափոխականներին կամ անարխիստներին, վոր նրանց կարծիքով, «ավելի լավ եյին հասկանում հեղափոխությունը», քան մարքսիստները։ Բայց այն մասսան, վոր առաջ գապոնյանների յետևից եր գնում, այժմ գրեթե բնազդաբար թեքվեց դեպի մարքսիստները։ Իշխանությունը, այնուամենայնիվ շփոթվելով այն բանից, ինչվոր յեղավ, շփոթված նախ նրանից, վոր բանվորները հրացանազարկ լինելուց չվախեցան, ինչպես ինքն եր սպասում, այլ ավելի շատ կատաղեցին, վոր գործադուլները րոպեապես չդադարեցին, այլ Պետերբուրգից հեղեղվեցին ամբողջ Ռուսաստանում, սկսվեց անշնորհք և կոպիտ ձևով ուղղել իր ձեռքով իր վրա բերած փորձանքը։ Բանվորների դժգոհությունների պատճառները հեռացնելու համար կազմվեց հատուկ հանձնաժողով սենատոր Շիդլովսկու նախագահությամբ։ Առաջին անգամ ռուսաց պատմության մեջ հանձնաժողովի մեջ ընդունեցին նաև իրենց՝ բանվորների ներկայացուցիչներին։ Այդ ներկայացուցիչների ընտրության շուրջը Պետերբուրգում շարժում առաջ յեկավ, վորը ամբողջ ռոցիալ-դեմոկրատ բալշևիկների ձեռքում կենդրոնացավ։ Ընտրությունների ժամանակ Պետերբուրգի ամենահետամնաց գործա-

հայտարարություն չփակցրեց բացատրական մաքով, նախազգուշացնելով, վոր յերթերը թույատրելի չեն. վերջապես կառավարությունը չդիմեց իր սիրած նախազգուշացական միջոցին՝ բանտարկությունների, մանավանդ վոր պահանորդական բաժնին շարժման բոլոր կազմակերպողները լավ հայտնի եյին։ Ընդհակառակը անգլն ամբոխին գնդակահարելու համար հունվարի 9-ին Պետերբուրգը մասերի եք բաժանված, յերաքանչյուրն ուներ իր շարքը։ Շտաբի կահավորանքը պատերազմական ձևի յեր։ Դրված եյին արշավանքի մահճակալներ։ Սպաները և աղյուսանտները նստած եյին զինվորական վերարկուները հագներին, խմում եյին և ծըխում, ժամանակ առ ժամանակ գալիս եյին զեկուցումով, պահանջելով վազվ համար «դիսպոզիցիա» և հայտնում, թե վրեժով ինչ մասեր են գործում։ Ինչ վերաբերում է հրացան արձակելու իրավունքին, այդ առանձին սպաների յեր հանձնված իրենց բարեհայեցողությունով վորոշելու. այս մասին նրանց ասել եր իշխ. Վասիլչիկովը, գվարդիական կորպուսի հրամանատարը։ Ամբոխին թույլ չեր տրվում 9-ին 50 քայլից ավելի մոտենալ, իսկ 10-ին՝ 300 քայլ։» В. И. Невский. հունվարի 9-ը. «Красная Летопись» I)։

բանները լսեցին սոցիալ-դեմոկրատական պրոպագանդան և արդյունքն այն յեղավ, վոր վոչ մի բանվոր Շիդլովսկու հետ նիստի չգնաց։ Ընդհանուր հափըշտակությունն այնպես եր, վոր նույնիսկ արմատացած զուբատովյանները չհամարձակվեցին մասսայից անջատվել և ստորագրեցին այն քաղաքական պահանջների տակ, վոր կազմել եյին սոցիալ-դեմոկրատները և վորոնց մեջ սովերն էլ չկար այն միամիտ հավատարիմ հպատակության, վորով ներշնչված եր Գապոնի «պետիցիան»։

Այդ պահանջների մասին, վորոնք իրենց հիմնականով մի կետ եյին հանդուրժում, այն է՝ «պետական իշխանությունը անմիջապես հանձնել ժողովրդի ձեռքը», Շիդլովսկին, իհարկե, չհամարձակվեց նույնիսկ խոսել. (այդ բանի համար նրան մյուս որն ևեթ ծառայությունից դուրս կանեյին) իսկ բանվորները, իբրև մի մարդ, այդ ժամանակ հրաժարվեցին մասնակցելու կառավարության կազմած կատակերգությունում։

Բայց բանվորական շարժումը պրոլետարական հեղափոխության եր փոխվում, այնուամենայնիվ, բավական դանդաղ։ Մինչև հեղափոխական լուծունգների վերջնական հաղթանակը—հոկտեմբերյան գործադուլում—անցավ յերեք քառորդ տարի։ Սկսված հեղափոխության արձագանքը ավելի արագ, բայց դրա փոխարեն մակերեսային եր ինտելլիգենցիայի և մասամբ բուրժուազիայի միջավայրում։

Հունվարի 9-ին կառավարությունը մտածում եր իր «հզորությունը» ցույց տալ։ Վորքան էլ այդ տարիորինակ լինի, թեև «հզորությունը» թըվում եր, պարզ յերևաց հարյուրավոր սպանվածներով և հազարավոր վիրավորներով, բոլորն էլ (մենք տեսանք, վոր բացառություն չեր և կառավարությունը) այն տպավորությունն ունեյին, վոր կառավարությունը խայտառակվեց։ Զինված ուժը դեռ ամբողջովին նրա ձեռքին եր, քաղաքապահները իրենց տեղերում կանգնած եյին, բանտերը լիքն եյին, բայց արդեն վոչ վոք չեր հավատում, վոր այդ բոլոր իսկական ե, վոր այդ բոլորի յետևը կա իսկական ուժ։ Այդ հասկանալու համար հիշատակենք, թե ինչ տպավորություն թողին «հասարակության» վրա իրենց ժամանակին 1901-ի ցույցերը։ (Տես վերը)։ Ամբոխի փողոցներում յերևալը միշտ և ամեն տեղ խրախուսում և «սենյակների» հեղափոխականներին, իսկ 1905 թվի հունվարին փողոցներով այնպիսի ամբոխ եր գնում, վորի մասին 1901-ին յերազել էլ չեր կարելի։ Ցեմ ռուս ինտելլիգենցիան, վոր դեռ 1904 թվի դեկտեմբերին, յերկչոտ կերպով կծկվել եր իշխանության զեմհցների հասցեյին ուղղված բղավոցներից, միանգամից համարձակ դարձավ, տեսնելով բանվորների իսկական, զուտ մասսայական շարժումը։

Դրա համար էլ 1905 թվի առաջին յերեք ամիսը ռուսական հեղափոխության պատմության մեջ նշանակված են իբրև «լուսավորական ընկերությունների խռովություն»։ Արդեն 19-րդ դարի վերջին Ռուսաստանում կազմվեց մի քանի կենդրոն, վորոնց եյին մղվում մլիջին ինտելլիգենտները, այսպես կոչված «ազատ պրոֆեսիայի» ներկայացուցիչները։ Դրանք եյին Ռուսական Տեխնիկական Ընկերությունը ինժիներների համար, Մոսկվայի գյուղատնտեսական ընկերությունը Պետերբուրգում գյուղատնտեսների, եկոնոմիստների, ստատիստիկների և նմանների համար, ժանկավարժական ընկերությունը (մանավանդ Մոսկվայինը) ուսուցիչների համար, Պիրոգովյան համագումարները բժիշկների համար, Մոսկվայի իրավաբանական ընկերությունը իրավաբանների համար։ Վերջինս հեղափոխությունից շատ առաջ փակված եր (Պուշկինի հոբելյանի առթիվ 1899 թ., յերբ ընկերության նախագահ Մուրոմցևը, ոխակ արավ Մոսկվայի համալսարանում հոբելյանական ժողովին նախագահող Սերգեյ Ռոմանովի յերեսին շպրտելու «տիրական քմահաճույք» բառերը։ Ազատ Տնտեսական ընկերության գործունեությունն ևս շատ սահմանափակվել եր, բայց մյուս ընկերություններն էլ և համագումարները գործում եյին 1905 թվի սկզբին ավելի յեռանդուն, քան վորևե այլ ժամանակ։ Սրանց միջուկը կազմող հին «ակադեմիական» ինտելլիգենցիան (պրոֆեսորները, «հայտնիները», վոր մեծ մասամբ ամենևին էլ չքավոր չեյին, ինժիներները, բժիշկները, ժանկավարժները և գրականության աշխատավորները) 1904 թվի աշնանից արդեն յուրն եր մղվել ավելի արմատական «ձախ ոսվորժդենիանականներից»։ Վերջիններս, (սրանց կազմը մենք տեսանք.—տես վերը) վոր սկզբում դեռ յերկչոտ, հեղափոխականությունից հեռու եյին, արագ համարձակ դարձան, քանի մինչև լորտը շիկանում եր։ Ցերկու հոգիներից, վոր ամեն մի ինտելլիգենտի կըրծքում ապրում են—«գրագետ-տասնապետի» հոգին, վորը կապիտալիստին ոգնում է շահագործելու բանվորին, և «ռազնոչինեցի» հոգին, վոր ժողովրդական մասսայից է յելել և ավելի լավ է զգում նրա վիշտը, քան ապահովված վերին շերտերը—յերկրորդը ավելի ու ավելի գերակշռում եր առջինին։ Բանվորների որինակը վարակիչ եր. ինտելլիգենտական քաղաքական գործադուլի գաղափարը ոդում շրջում եր։

«Լուսավորական ընկերությունների խռովությունն» սկսեց Մոսկվայի գյուղատնտեսական ընկերությունը, վորը յերբեմն ծանրաբարո յեր, կալվածատիրական և աստիճանավորականի, իսկ այժմ սովորժդենիականների ձեռքին եր, վորը արդեն հունվարի 14 ին խիստ բողոքի բանաձև եր ընդունել Պետերբուրգի կոտորածի դեմ. բայց մյուսները նրան այնպես արագ հետևեցին, վոր արդեն կարճ ժամանակից հետո անկարելի յեր վորոշել, թե դրանցից վորն է առաջից գնացողը։ Անմոռանալի տեսարաններ եյին ներկայացնում այդ ընկերությունների նիստերը 1905-ի հունվարից—մարտ։ Փոխանակ չոր, ձանձրալի զեկուցումների, գործարար վիճաբանությունների փոքրաթիվ հասարակության առաջ, ամենուրեք տեղի եյին ունենում անընդհատ հազարավոր միտինգներ, ուր խնդրերով լցվում եյին ինտելիգենտական ամբողջ հասարակությունը. անդամակցական տոմս վոչ վոք չեր հարցնում։ Ծանուցագրում նշանակվում եյին «ընթացիկ հարցեր», բայց ընկերության կանոնադրության մեջ նշանակված վոչ մի հարցի մասին վոչ վոք չեր էլ հիշում։ Արտասանում եյին կրքոտ քաղաքական ճառեր, հանում եյին բանաձևեր, մեկը մյուսից «կարմիր», բանաձևեր, վորոնցից, թվում եր, թե պետք է քանդվեյին այն պատկառելի, մեծ մասամբ, պետական շենքերի պատերը, վորոնց մեջ ընկերությունները հին սովորությունով շարունակում եյին հավաքվել և վորոնցից գլուխը կորցրած ժոտակա իշխանությունը, վորը սովոր եր իր մի աչքի շարժումով նախկին «լիբերալնիչեն» վոչնչեցնել, այժմյան «արմատականներին» չեր էլ մտածում դուրս անել։ Այդ իշխանությունը սակայն վոչ մի տեղ էլ չեր կարելի տեսնել և հավաքվածները նրա մասին ավելի չեյին հիշում, քան կանոնադրության մասին։ Ցեթե յերբեմն էլ զեկուցումներ եյին կարդացվում—ընկերության ղեկավարներին բոպեական հաջողվում եր շարժում կազմակերպել—նրանք

նվիրված եյին կամ հավաքվածներին դեմոկրատիկ կազմի հիմնական հարցերը պարզելուն կամ նման բանի։ Ցեվ այդ զեկուցումների շուրջը յեղած վեճերը շատ շուտ ծավալվում եյին անվերջ միտինգի, նույն անատհման ալիքներով։

Այդ ալիքները քննելով կարելի յեր իսկույն նկատել, նրանց գույների խիստ փոփոխությունը համեմատած նախկին աշնան հետ, յերբ «բանկետների կամպանիան» արդեն ձմեռվա յերկրորդ կիսին ինտելիգենտական շարժման թույլ նախազգացումներ եր ազդարարում։ Այն ժամանակ հրապարակով սահմանադրության մասին խոսելը հանդգնության բարձր աստիճան եր համարվում, և ավելի «լուրջ հասարակությունը աշխատում եր խոսակցությունը դարձնել ավելի անորոշ թեմաների վրա, որինակ՝ «որի» նականության», «կարգի» և այլն։ Այժմ, եյապես, խոսում եյին հանրապետության մասին, թեև այդ խոսքն աշնանը միայն հնչվեց։ Զգետք է ժողովել, վոր արմատական, վոչ սոցիալիստական—Ռուսաստանն այդ չեր լսել զեկարբրիստներից սկսած։ Բայց սահմանադիր ժողովի պահանջը, վոր փաստորեն կնշանակեր իշխանությունը ժողովրդական մասսայի ձեռքն անցնելը, («ընդհանուր, ուղղակի, հավասար և գաղտնի ձայնտվության» բանաձևը հենց առաջին որից յերևաց այն վորաշման մեջ, վորը Մոսկվայի գյուղատնտեսական ընկերությունն ընդունել եր հունվարի 14 ին), պարզ նշում եր այն սահմանը, վորից անցել եր ժողովրդականությունը։ Նիկոլայի կողմից իր ժողովրդին վոդորմածաբար տրված սահմանադրության այլևս վոչ վոք չեր սպասում և վոչ վոք ել նրան չեր հավատում, առնվազն իրեն պարտքն եր համարում ցույց տալու, թե չի հավատում։ Այդ մի կողմն է. մյուսն ել ինտելիգենտական միտինգները ավելի ու ավելի շատ պրոլետարական հոսանք լցվելն եր։ Բանկետներին ուսանողներին հաջողվում եր բանվորների առանձին պատգամավորություններ անցկացնել։

Լուսավորական ընկերությունների նիստերին ամբոխ եր գնում և Մոսկվայի մանկավարժական ընկերության վերջին նիստին, մինչդեռ դահլիճում ինտելիգենտական միտինգն արդեն դեմոկրատիկ հանրապետության մասին խոսելն հասավ, դահլիճի առաջ, միջանցքներում ուրիշ միտինգ եր տեղի ունենում, վոչ պակաս կրքոտ և ավելի հետաքրքիր. այդ գործադուլ արած Մոսկվայի հացթուխների խորհրդակցությունն եր։

Ի՞նչ եր պատճառը «իշխանության այդ կաթվածի», վորն այնքան վշտացնում եր ամեն մի համոզված սև հարյուրակային։ Իհարկե վոչ յերկյուղը հեղափոխությունից բառի բուն մտքով. այդ յերկյուղը պատեց Նիկոլային մեր նկարագրած շրջանի ամենից վերջը, յերբ պարզվեց զինվորական ուժի անվստահելի լինելը։ Հունվարից—մարտ այդ դեռ շատ հեռու յեր։ Կառավարության ձեռքերը կապում եյին յերկու պատճառ, վորոնք իրենց հերթին մեկը մյուսի հետ կապված եյին և իրար փոխադարձաբար պայմանավորում եյին. դրանք եյին՝ բուրժուազիայի պարզ կերպով ընդդիմադրող դառնալը իր և յապոնական պատերազմի շարունակաբար ավելի մեծ չափերի հասնող անհաջողությունները։

Մենք տեսանք, վոր Պորտ-Արտուրի անկումը, իրը վորոշ նշան, դեր եր խաղում նույնիսկ բանվորական շարժման պատահական առաջնորդների հաշիվներում. Գապոնը իր յելույթը հենց այդ դեպքի հետ եր կապում։ Իսկ բուրժուազիայի վրա, վորի շահերի համար արյունհեղությունը լինում

եր, այդ ավելի ուժեղ պիտի ազդեր։ Ցեթե վորևե բան այդ դասակարգին «հայրենասեր» իր դարձնում, ապա ամենից առաջ շուկան ընդարձակելու հույսը։ Բայց պատերազմը մղել այնպես, ինչպես մղում եր Նիկոլայի կառավարությունը, այդ նշանակում եր վոչնչացնել և այն շուկան վորը դեռ ուներ։ Պետերբուրգի գործարանատերերի և ֆաբրիկանտների զեկուցագրում «Ս. Պետերբուրգի գործարանատերերի և ֆաբրիկանտների զեկուցագիրը ֆինանսների պ. մինիստրին», վորը հանձնվել եր հունվարի վերջին, մատն ուղղակի վերքի վրա յեր դնում, մատնանշելով շուկայի կրճատումը, վոր կապված եր քայքայման հետ, և, նշանակում է, բնակչության գնողունակության պակասումը։ «Ձեք կարողանում կառավարել»—այսպես կարելի յե համառոտ արտահայտել այդ ամբիվ տրված բոլոր զեկուցագրերի միտքը։ Ցեվ միապետական կառավարման յեղանակի անհաջողությունը, բնականաբար, ռուսական ձեռնարկությունը ձգում եր նոր, սահմանադրական յեղանակի կողմնակիցների բանակը։ Այդ յեղանակին անցնելու անհրաժեշտությունը, իսկապես, Նիկոլայի ծառաներից վոչ մեկն ել չեր ժխտում. վոչ միայն Վիտտեն, վորն այս մտքերը յեղուկտական մի ջոցներով եր անցկացնում (միապետությունը և ամեն տեսակ ինքնավարությունը անհարիր եր, իսկ ինքնավարությունը բոլորովին վերացնել արդեն չի կարելի, ուրեմն պետք է սահմանափակել միապետությունը. այս եր Վիտտեյի զեկուցագրի պետք), այլև Պլևեն, վոյի մասին տված նշանավոր զրույցի գաղտնի միտքը), այլև Պլևեն, վորը պարզ կերպով Շիպովին ասում եր, թե յերբևե սահմանադրություն ստիպված են տալ։ Այդ, թվում է, միայն Նիկոլայը չեր հասկանում։ Բուրժուազիայի դասալիքումը հենց նրա համար ել այդ պիտի պարզեր։ Յերբ Մոսկվայի գործարանատերերը Ս. Տ. Մորոզովի առաջնորդությամբ, իշխանությանը հայտնեցին թե խոսքի, մամուլի, հավաքույթների, ժողովների եյլն ազատությունը անհրաժեշտ պայման է Ռուսաստանի խաղաղ արդյունաբերական գոյության, այդ նույնն եր, թե առաջարկել ընտրելու՝ կամ միապետության կամ կապիտալիզմ. բայց առանց կապիտալիզմի միապետությունը այլևս չեր կարող գոյություն ունենալ։ Գործարանատերերի դրությունը 1905 թվի հունվարի 9 ից հետո հեղափոխականության ամենաանշան արտահայտությունն եր. բայց կասկած չկա, վոր «բարձր շրջանների» վրա այդ ամենից ուժեղ ազդեց։ Դեկտեմբերին Նիկոլայը դեռ տատանվում եր. հրավիրել արդյոք ներկայացուցիչներ, թե չհրավիրել։ Իսկ փետրվարի 18-ին իր հիշատակարանում նա գրեց. «ինձ մոտ մինիստրների խորհրդի նիստ կար։ Ստորագրեցի գրություն Բուլիգինի*) անվան, վոր վերաբերում է տեղական ներկայացուցիչների գումարման յեղանակի մշակմանը մասնակցելու համար այն որենագծերի քննության, վոր մտցվելու յեն պետական խորհուրդ։ Ես ասված, վոր այդ կարևոր միջոցը Ռուսաստանին ոգուտ բերե և բարգավաճում»։

«Կարևոր միջոցի» (արդեն շարադրանքն ցույց է տալիս, թե վորքան դժվարությունով մտավ այն Նիկոլայի գլուխը) պակասությունն այն եր, վոր այդ ուշացավ, առնվազն, յերկու ամիս։ Խորհրդակցական ներկայացուցչությունը—կարճ կերպով այդ հենց այն եր, վորի մասին Նիկոլայը իր հիշատակարանում այնքան յերկար ու բարակ պատմում է—զեկտեմբերին

*) Ներքին գործերի նոր մինիստր, վորը փոխարինել եր հունվարի 9-ից հետո վերջ-
նապես արձակված Սվյատոպոլկ-Միրսկուն։

կարող եր բավարարել բուրժվազիայի փոխհամասութեանը. փետրվարին այդ վոչ վոքի չէլ չբավարարեց։ Ավելացնենք և այն, վոր մի շաբաթ չանցած Նիկոլայի աչքին այդքան «կարևոր» չերևացող մանիֆեստը հրատարակվելուց հետո, արտաքին ճակատում նոր հարվածը, հարված ավելի ծանր, քան մինչև այդ չեղած բոլոր հարվածներն եյին, հիշեցրեց, վոր շուկան դավաճան թշնամուն հաղթելու ճանապարհով ընդարձակելու մասին մտածելն իսկ ավելորդ է։

Մենք տեսանք (տես վերը) վոր նոր հարձակման դիմելու համար Կուրոպատկինը սպասում եր մինչև վոր իր բանակը անպայման թվական գերակշռություն կունենա յապոնացիների վերաբերմամբ։ 1905 թվի հուվարի վերջին—փետրվարի սկզբին, թվում եր, վոր դրան ել հասավ։ Պատերազմի սկզբից մինչև այդ ժամանակ Մանջուրիա չեր ուղարկվել 800 հազար մարդից ավելի։ Հաշվելով բոլոր կորուստները, այլև թիկունքում թողած զորքը, Կուրոպատկինը Մուկդենի տակ ուներ 400,000 ավինից և սրից վոչ պակաս թղթի վրա, ցուցակներով, և իրապես 300,000-ից վոչ պակաս։ Յապոնացիները, թեև նրանց միացավ Պորտ-Արտուրը վերցնող բանակը, շատ ավելի թույլ եյին։ Արդեն հունվարի վերջին ռուս բանակը փորձեց հարձակման դիմել (կոխլ Սանդեպուի մոտ), բայց սովորական անկարգությունը հասցրեց այն բանին, վոր ամեն ինչ անողուտ արյունհեղությունով վերջացավ։ Սակայն այդ միայն մասնակի անհաջողություն եր, վորը չխուսահատեցրեց ռուսական գլխավոր հրամանատարին, վորը շարունակում եր պատրաստվել ամբողջ ճակատի վրա վճռական հարձակման դիմելու։ Յապոնացիները նրան կանխեցին և առաջ իրենք հարձակվեցին։ Սովորության համաձայն, նրանք այնտեղ չհարձակվեցին, վորտեղ ուզում եյին ճեղքել, և ռուսների ուշքը գրավելով իրենց դեմոնստրատիվ (կեղծ) հարձակման վրա, արագությամբ զորքը շարժեցին ռուսական դիրքերի յերկու թևերի յեռևի կողմը։ Մուկդենի շուրջը կռիվներն սկսեցին 12—25 փետրվարին, իսկ փետրվարի 25-ին (մարտի 10) Նիկոլայը իր հիշատակարանում գրում է. «Նորից վատ լուրեր Հեռավոր Արևելքից. Կուրոպատկինը թույլ և ավել իրեն թիկունքն անցնել և արդեն հակառակորդի յերեք կողմից արած ճնշման տակ ստիպված և նահանջել դեպի Տելին։ Ասված իմ, այս ինչ անհաջողություններ են»։

Մուկդենի անհաջողությունը Լյաոյանի անհաջողությունից ավելի ծանր եր։ Այս անգամ չհաջողվեց ժամանակին նահանջել, ռուսական բանակը շրջապատված եր և Մուկդենից հեռանում եր կատարելապես անկարգ վիճակում կորցնելով թնդանոթները, պաշարակիր կառքերը և տասնյակ հազարով գերիներ։ Հարյուր տարուց ավելի եր, Աուստերլիցից*) սկսած, վոր ռուսական բանակն այդպիսի պարտություն չեր կրել։ Կուրոպատկինը, գերիներով միասին ընդամենը կորցրեց 120,000 մարդ, իր բոլոր զինվորների երեք կեսը և կարողացավ յապոնացիների հարձակումը դադարեցնել Մուկդենից հյուսիս 180 վերստ հեռավորության վրա։ Ամբողջ հարավային Մանջուրիայում այժմ վոչ մի ռուս չմնաց։ Ռուսական բանակը վերջնականապես վոչնչացնելուց ազատվեցին միայն նրա՝ յապոնացիների իրենց անհագին

*) Ռուսական բանակի պարտությունը Նապոլեոնից 1805 թվին. նկարագրել է Տոլստոյը «Война и Мир»-ի մեջ I հ.։

կորուստը, նրանցում ել շարքից դուրս յեկան 70,000 մարդից վոչ պակաս—և յերկրորդ՝ յապոնական ձիավոր զորքի թուլությունը, վորը ռուսականից յերկու անգամ թվով քիչ եր։ Այդ պատճառով նույնքան յեռանդով հալածել ռուսներին, վորքան նրանց վրա հարձակվել եյին յապոնացիները չկարողացան։

Յապոնացիների համար այժմ, եապես պատերազմը վերջացել եր, վորովհետև մտնել հյուսիսային Մանջուրիայի խորքերը, ծովից հեռու, յերբեք նրանց ծրագրի մեջ չեր մտնում։ Բայց ռուսական կառավարությունը կատաղած իր պարտություններից, չեր ուզում անձնատուր լինել։ «Պատերազմից պարտված չեն վերադառնում»—պնդում եյին ռուսական գեներալները (մեծ մասով նրանք, վորոնք ծնացել եյին Պետերբուրգում)։ Ոգտվելով նրանից, վոր պատերազմը Ռուսաստանի կարևոր կենդորոններից հեռու յեր, հեռու ծայրագավառում Պետերբուրգում դեռ Մուկդենից հետո յել չարունակում եյին մեծ-մեծ բզրզել, Հեռավոր Արևելք եյին ուղարկում միշտ նոր զորքեր և հուսով հետևում եյին խաղաղ Ովկիանոսին մոտեցող յերկրորդ տորմիղին, վորը կրոնշղտատից դուրս եր յեկել հոկտեմբերին (տես վերը)։ Իսկ Մուկդենի համար, ի հարկե, գտան մեղավորին, վորի «սխալներով» և ամբողջ գործը բացատրվում եր.—մարտի 1—14-ին Նիկոլայը «ամբողջ որը հոգեկան ճնշված տրամադրության տակ եր», իսկ 2/15-ին գրում եր. «Կուրոպատկինը հեռացված է և գլխավոր հրամանատար նշանակված է Լիվնիչը»։ Մայիս ամսին նա բոլովովին մխիթարվեց, և սկսեց սովորական անմեղ զվարճություններով զբաղվել.—մայիսի 8-ին «սպանեց կատու»։

Տրամադրությունների այդպիսի փոփոխությունը բացատրվում եր նաև նրանով, վոր Մուկդենի փոխարեն կարծես մխիթարություն եր գտնում ներքին ճակատներում անցած հաղթությունների պատճառով։ Այդ ժամանակի ընթացքում նախ փակվեցին խոշոր լուսավորական ընկերությունները, ըստ վորում նրանց առաջ անվճռականության մեջ յերկար դեգերող վոստիկանությունը, ինչպես և պետք եր սպասել, վոչ մի դիմադրության չհանդիպեց և յերկրորդ՝ սոցիալիստ-հեղափոխականների մարտական կազմակերպությունը բանտարկվեց (վոր փետրվարի 4-ին Պլեհվի բաղդին արժանացրեց մեծ իշխաններից ամենից հետադեմ և ամենից յեռանդուն Սերգեյ Ալեքսանդրովիչին, վորը կառավարում եր Մոսկվան)։ Այդ բանտարկությունը սև հարյուրակայիններին առանձին ցնծություն պատճառեց. չպետք է մոռանալ, վոր նրանց բոլորի համար, ինչպես և Նիկոլայի հեղափոխությունը հատկապես սարսափելի յեր թվում հենց «ռումբի» պարկերով։

„Московские ведомости“-ին գրում եր եսերների մարտականների բանտարկության մասին ինչպես «ռուսական հեղափոխության Մուգդենի» և չեյին նկատում միաժամանակ, վոր այդպիսի վերնագիր դնելով նրանք ընդունում են ռուսական բանակի կատարյալ ջախջախվելը իսկական Մուկդենի տակ։

Իսկապես եսերական սպանության փորձերը ինտելիգենտական հեղափոխության արտահայտություններից մեկն եյին, իսկ ինտելիգենտական հեղափոխությունը ինքն ել մի արտացոլում եր ժողովրդական մասսաների մեջ տեղի ունեցած ահագին առաջ մղումի։ Այդ մղումը, ինչպես միշտ, դանդաղ եր առաջ գնում, քան անհամբեր ինտելիգենցիան կցանկանար. բայց կառավարության համար չարագուշակ նշան եր և այն, վոր նույնիսկ

ինտելիգենտական շարժումը վոստիկանական ճնշումներից չէր վախենում։ Լուսավորական ընկերությունները փակելը միայն նպաստեց, վոր այդ շարժումը կազմակերպչական հետևյալ աստիճանին անցնի. այդ աստիճանն էր «արհեստակցական-քաղաքացիական միություններ» կազմելը։

Վորքան հեռանանք ռուսական առաջին հեղափոխության շրջանից, այնքան դժվար կլինի բացատրել, թե ինչ էին այդ միությունները։ Թե վոր աստիճան նրանք քիչ նմանություն ունեյին պրոլետարական արհեստակցական կազմակերպությունների հետ. (վորոնք նույնպես այդ ժամանակ էյին սկսել առաջ գալ։ 1905 թվի գարնանը արդեն գոյություն ունեյին տպարանական բանվորների միությունները, Արևմտյան Ծայրագավառների—խոզի մազից իբր շինողներինը և միայն կիսապրոլետարական, իբր կաթուղային միությունը) յերևում է թեկուզ նրանից, վոր նրանց թվում կարելի յեր գտնել և «կանանց իրավահավասարության միությունը»։

Ուրիշ միություններում. ինչպես ինժեներների և ուսուցիչների միությունն է (յերկուսն էլ կազմվեցին ապրիլին) արհեստակցական շահերը պաշտպանելն ավելի տեղ է բռնում, բայց այդ միությունների համար էլ բանն այդ չեր։ Մեռնող «Ազատության Միության» ծնունդ («միությունը» լուծվել եր մարտին, յերբ յերրորդ համագումարում նրա ձախ թևը հեռացել եր) այդ միությունները սկզբնավորություններ էին դեռ պարզ կերպով գոյություն չունեցող և ռուսական ինտելիգենցիայի համար անստվոր քաղաքական կուսակցությունների։ կառավարությունը անանկացավ. Մուկդենից հետո այդ բոլորի համար էլ շատ պարզ եր. ամեն տեսակ «Սեթյուն յերրեք չեր յեղել։ կառավարությունը պետք է հեռանա. այդ էլ բոլորի համար պարզ եր։ Ով կբռնի նրա տեղը։ Իհարկե, «կրթված հասարակության» մարդիկ, արտահայտվելով հին ձևով, այսինքն հենց ինքը՝ ինտելիգենցիան։ Վոր տապալված ազնվական—բյուրոկրատիկ կառավարության տեղը կարող է պրոլետարական կուսակցությունը գրավել, այդ այն ինտելիգենտների գլուխը)։ Ավելի ևս վերջիններս կզարմանային, յեթե նրանց ասեյին, վոր այդ անսովոր յերևույթը՝ իշխանությունը պրոլետարիատի ձեռքն անցնելը, կլինի հեղափոխության հաջողություն, վոր յեթե այդ չհաջողվի, կնշանակե, չհաջողվեց և ընդհանրապես հեղափոխությունը։ Ջերնիշևսկու մարգարեական խոսքը, վոր հեղափոխության դեպքում կամ պետք է կատարյալ հաղթանակի սպասել կամ կատարյալ անհաջողության, վաղուց եր մոռացված։ Բարձրաձայն ժխտելով վերից տրված ամեն մի զիջումից, գաղտնի այնուամենայնիվ հույս ունեյին, վոր պատերազմի պարտությունները և մասսայական շարժումը Նիկոլային կստիպեն զիջումներ անել։ Փետրվարի 18-ը յերաշխիք եր, վոր գործը այնպես էլ կերթա։ Պետք եր համաձայնության գալ, թե այդ դեպքում ինչ պետք է անել։ Ինչ պահանջել. Ջե վոր—այդ հասկանալի յեր համարվում ըստ ինքյան—վարպետները» և «մուժիկները» չեն կարող կանոնավոր ձևով պահանջել, թե իրենց ինչ և հարկավոր։ «Կրթված մարդիկ» պետք է նրանց ոգնեն։ Ով պետք է այդ անի։ Մինթե մաշված զգեստներով ուսանողները և «ընդհատակյա» ուսանողուհիները, վորոնք այնպիսի «պարզ հիմարություններ» են ասում դասակարգային կռվի և նման բաների մասին։ Իսկական, շուրջ ինտելի-

գենտները պետք է «ժողովրդին» ոգնության հասնեն։ Ինտելիգենտների այդ դերը իրրև հոգատար մոր «աշխատավոր մասսայի» համար, հավանորեն, ընթերցողներին արդեն հիշեցրեց «քննադատորեն մտածող անհատների» տեսությունը, վորոնք ժողովրդին իրենց յետևից են տանում։ (տես II մ.)։ Այո, այդ նույն աշխարհայեցողությունն եր։ 1905 թվի հեղափոխությանն եր վիճակված դրան վերջին և վճռական հարվածը տալու, բայց 1905 թվի գարնանը այդ դեռ կատարյալ ծաղկած դրության մեջ եր։

Շատ բնական է, վոր այդ խայտաբղետ մասսայի, ուր պրոֆեսորի, տասնյակ հազար վոսկի ռուբլիներով ռոճիկ ունի ինժեների հասնող «պրակտիկայով» փաստաբանի կամ բժշկի կողքին կանգնած եր գյուղական ուսուցիչը մի պինջակ հագին, վորը պակաս քրքրված չեր, քան ընդհատակյա աշխատողինը, վորը հպարտորեն հայտարարում եր, թե ինքը «իսկական պրոլետար» է, քանի վոր բացի այդ պինջակը ուրիշ վոչինչ չունի, «միություններից» ղեկավար յեղան սոցիալիստ հեղափոխականները, վորոնք առագորեն յերկրորդ տեղը զբեցին «ռազորոժդենիականներին» (վոր չափով սրանք եսերներ չեյին դարձել) և խիստ հետևում եյին, վոր միությունները մարքսիզմի ճնասակար ազդեցության չենթարկվեն։ Բայց նույնքան բնական է, վոր այդ խայտաբղետ ամբոխը, վորը փետրվարից սկսած արդեն սկսել եր միանալ «Միությունների Միության» մեջ, (այդ կազմակերպվեց վերջնականապես մայիսին. Մոսկվայի համագումարում) վճռ ընդհանուր ծրագիր ուներ, վոչ ընդհանուր տակտիքա։ Քաղաքական խնդրում բոլոր «միությունները» մի կետում համաձայնության յեկան—սահմանադիր ժողով հրավիրելու պահանջումն, այդ եր նրանց դեմոկրատիկ բնույթը ընդգծողը. և ասվաբաժդենիականների աջ թևից բաժանողը, վորը պատրաստ եր «կոնստիտուցիոն-դեմոկրատիկ կուսակցություն» դառնալու (սովորական խոսակցության մեջ «կադետներ»), վորը քիչ թե շատ մաքուր ձևով արտահայտում եր բուրժուական լիբերալ հոսանքը։ Տակտիքայի տեսակետից միությունները չեյին կարող իրենց անդամներին թույլ չտալ գործել ծել, ինչպես ուզում եւ Ցեթե եսերները իրենց «դաշնակիցների» $9/_{10}$-ը պարտադիր դարձնեյին, նրանք կկորցնեյին իրենց «ազատ» միաժամանակ պրոլետարական կարգապահության յենթարկվել «ազատ» մտավորականները իրենց համար ստորացուցիչ եյին համարում, իսկ սահմանափակվել բացառապես ապագա կադետների լեգալ տակտիքայով, կնշանակեր հեղափոխությունից հրաժարվել, իսկ «միությունները» այնուամենայնիվ հեղափոխական կազմակերպություններ եյին։

Իբր մշուշապատ գաղափար դեռ այդ ժամանակ սկսեց ծագել ինտելիգենցիայի բաղաքական գործադուլի ծրագիրը. վերջ ի վերջո միակ պետքական զենքը գործադրել սկսեցին միայն այն ժամանակ, յերբ պրոլետարիատը որինակ ցույց տվեց, թե ինչպես պետք է դրանից ոգտվել և այդ որինակին հետևեց մյուս միությունների առաջ, պրոլետարիատին ավելի մոտ յերկաթուղայինների միությունը։

Որինակը շուտ չյուրացրին, միայն աշնանը։ Գարնանը միություններն էլ միայն առաջանում եյին և այդ հանգամանքը, վոր հազիվ նշանակված Ռուսաստանի վոստիկանական դիկտատոր Տրեպովը վոչ մի արտակարգ միջոց ձեռք չեր առնում նրանց «զսպելու», պարզ ցույց եր տալիս, թե բարձրում վորքան քիչ նշանակություն եյին տալիս մտավորականների կազ-

մակերպության նոր ձևին։ Համենայն դեպս Ցարսկոյե Սելոյում տրամադրությունը նույնքան գարնանային եր, վորքան և յեղանակը։ Մուկդենը կամաց-կամաց վոռացվեց և քանի վոր հանցավորին գտել և պատժել եյին, այսինքն Կուրապատկինին, նշանակում և ամեն բան կարգին եր։ Նիկոլայը մայիսի 15-ին գրում և, թե «շատ լավ պիկնիկ եր»։ Այդ նույն որը Նրանից տաս հազար վերստ հեռու յապոնացիներին հանձնատուր եյին լինում նրա նավատորմի մնացորդները։

Ցեթե Լյաոյանը անհաջողություն եր, Մուկդենը պարտություն, ապա Ցուսիման կատաստրոֆա (փլուզումն) եր։ Ցուսիմայի անունն այժմ այնպես հայտնի յե ամեն մի գրագետ ռուսի, վոր հազիվ թե արժե բացատրել, վոր խոսքը վերաբերում և կղզիներից ամենից մեծի նեղուցին, վորը Կորեյան բաժանում և Յապոնիայից։ Յապոնական պատերազմի բաղդը վորոշվեց հենց այն գծի նման, ուր կենտրոնանում եյին յերբեմն «Ռոմանովների» տեսչերը։ Ցեթե Նիկոլայի ծրագիրը—Կորեյան գրավել—իրականանար, այդ նեղուցի ափին պիտի ծածանվեր ռուսական դրոշակը։ Այժմ այդ ափերի առաջ ռուսական նավատորմը վերջնականապես ընկղմվեց. Ռուսաստանը դադարեց խաղաղ ովկիանոսյան մեծ պետություն լինելուց։

Մենք հիշում ենք, վոր այսպես կոչված «յերկրորդ» եսկադրայի Հեռավոր Արևելք ուղարկելը 1904 թ. հոկտեմբերին, վերջին և հուսահատական միջոցն եր պաշարված Պորտ-Արտուրն ազատելու, թիկունքից խփելով այն պաշարող յապոնական նավատորմին։ Արտուրն անձնատուր յեղավ, յերբ տորմիղը դեռ կես ճանապարհին եր, և ըստ յերևույթին առաջ գնալը վոչ մի իմաստ չուներ։ Բայց «պատերազմից պարտված չեն վերադառնում» վոչ միայն ցամաքում, այլ և ծովի վրա։ Եսկադրան ինչ ել վոր լիներ պիտի առաջ գնար, իրոք գնար պարզապես վոչնչանալու։

Այդպիսի վախճանի համար եսկադրան պատրաստված եր, ավելի քան լավ։ Սկզբում նա բաղկացած եր նոր զրահակիրներից, վորոնք պատերազմի սկզբին դեռ պատրաստ չեյին։ Դրանք վերջին ձևի նավեր եյին, բայց ռուսական շինվածք, վոր նշանակում եր, թե դրանց զրահավորելու ժամանակ ավելի գողացված եր, քան ծախսված գործի վրա, այն ել կար, վոր դրանք առաջ ավարտվեցին և այդ, ի հարկե, նրանց ամուր լինելուն չէր նպաստեց։ Նրա ծառայողները՝ սպաները և նավաստինները, վորակով Պորտ-Արտուրի եսկադրայի ծառայողներից ցած եյին. յերկրորդ եսկադրայի համար ամիսված եյին ոգտագործել պահեստիներին, այնպես վոր այդ կողմից նա հիշեցնում եր Կուրապատկինի բանակը։ Հին նավերով նավել սովորած մարդիկ դժվար եյին վարժվում ծովային տեխնիկայի վերջին խոսքին։ Հատկապես վատ եր հրետանու պատրաստությունը. խնայելով ռազմանյութը, ամբողջ գնացքի ընթացքում Ֆինական ծոցից մինչև Յապոնիայի ափերը մի անգամ միայն մարտական թնդանոթաձգություն արին։ Այդ, ի հարկե, քիչ եր, վոր նավաստինները սովորեյին արձակել։ Եսկադրայի հրամանատարը իրեն հարմար եր։ Ախտ ու կոպիտ, իր ստորադրյալների մեջ շատ անժողովրդական ծովակալ Ռոժդեստվենսկին հին ձևի ծովագնաց եր, վորը չեր հասկանում ժամանակակից ծովային պատերազմը։ Այդ պատերազմում, այն պայթուցիկ նյութերը նկատի ունենալով, վոր վերջին ժամանակները ձեռք եյին բերել, նավի հաժար ամենից վտանգավորը հրդեհն եր. դրա համար ել ստրատեգիական կանոն եր պատերազմի գնացող նավի վրա-

յից փայտեղեն բոլոր մասերը վերցնել։ Ռոժդեստվենսկին գնահատելով արտաքին «կարգը» և իր զրահակիրների գեղեցկությունը, խստիվ արգելեց կոտրատել փայտե վիրնաշենքերը և վոչնչացնել կահավորությունը։ Մենք իսկույն կտեսնենք, թե դրանից ինչ դուրս յեկավ։

«Յերկրորդ եսկադրայի» հատկությունները իրենց բոլոր փայլով յերևացին շատ ավելի առաջ, քան նրանք տեսան Արևելյան Ասիայի ափերը։ Հազիվ Բալտիկ ծովից դուրս գալով Հյուսիսայինը, Գերմանիայի և Անգլիայի միջև, եսկադրան գիշերով հանդիպեց անգլիական ձկնորսական նավերի, վորոնք Գուլլից դուրս եյին յեկել ձկնորսության։ Գահակ սպաներից մեկը յերևակայեց, վոր դրանք յապոնական ականակիրներ են և հրամայեց կրակել։ Սկսվեց ամենաամոթալի իրարանցումն ու յերկյուղը։ Ռուսական նավերը կրակում եյին ամեն կողմ, կրակում եյին իրար վրա, հենց իրանց մարդկանց եյին վիրավորում ու սպանում՝ ռուս սպաներին ու նավաստիներին։ Ի հարկե ձկնորսական նավերին ել բաժին հասավ, նրանց մի մասը իրենց մարդկանց հետ խորասուզվեց։ Ռուսական կառավարությունը հետո պետք և միջազգային դատի յենթարկվեր և սպանված անգլիացիների ընտանիքներին խոշոր հատուցումներ վճարեր։

Արտուրի անկումը, վորն իրոք պետք և եսկադրան տուն վերադառնար, ավելորդ հարված յեղավ նրա վոչնչացման։ Վորովհետև նա այլևս չեր կարող Պորտ Արտուրի եսկադրայի ոգնության վրա հույս դնել, ուստի վորոշվեց այդ եսկադրան ուժեղացնել ոգնություն ուղարկելով Ռուսաստանից։ Բայց Ռուսաստանում ճնացել եյին միայն հին կրկնակոշիկներ, վորոնք հազիվ հազ ափերը պաշտպանելու համար պետքական եյին, դաղաղ գնացող, թուլ զրահով և հնացած հրետանիով։ Դրանք ել կազմեցին այսպես կոչված «յերրորդ եսկադրան»։ Դրա հրամանատար ծովակալ Ներոգատովը Ռոժդեստվենսկուց մի քիչ ավելի հասկացող եր, բայց այդ հանգամանքն ել այն հետևանքն ունեցավ, վոր նա թուլ չտվեց իր նավերը խորասուզել, այլ ապահով յապոնացիներին գերի տվեց։

Ծանրաբեռնված զանազան կալիբրների հին կոտրանքներով, վորոնք վոչնչի ոգուտ չեյին և միաժամանակ շատ եյին խանգարում ռուսական նավերի զրահակիրների ռազմախաղերը, վեցամյա լողալուց քրքրված, անփորձ, լավ չվարժված նավի ծառայողներով Ռոժդեստվենսկու եսկադրան Կորեյական նեղուցում հանդիպեց հրաշալի կազմված նոր վերանորոգած յապոնական նավատորմին, վորի ծառայողները պատերազմի սկզբում լավ վարժված, այժմ ել մի տարվա պատերազմական փորձ ունեյին, ինչպես միշտ յապոնացիները թվով քիչ եյին, բայց այս դեպքում վորակը քանակին փոխարինում եր։ Պատահեց հասարակ, անփորձ աչքի համար, իսկական հրաշք. ռուսական զրահավոր նավերը այրվեցին յապոնական ռումբնրից։ Թե ինչու այդ պետք և լիներ, այդ մենք գիտենք։ Կատաստրոֆայի հանցավորը, ինքը վիրավորված, չգանկացավ, համենայն դեպս, իր կազմած խարույկներից մեկում վոչնչանալ, փորձեց ականակիր նավով ազատվել, բայց բռնվելով յապոնացիներից, առանց կռվի հանձնատուր յեղավ։ Մյուս որը Ներոգատովը հետևեց Ռոժդեստվենսկու որինակին, թեև նրան հետո ավելի խիստ եյին դատում, բայց նա ավելի արդարանալու բան ուներ. նախ՝ իր «ինքնասուզվողների» (сомотопы) վրա նա վոչ մի հույս չուներ ազատվելու յապոնական արագընթաց կրեյսերներից, յերկրորդ՝ նրա նավերի

փայտեղեն մասը ծովն էր ձգված, դրա համար էլ վոչ մեկը նրանցից չայրվեց։ Այսպես սիքանի հարյուր ռուս նավաստիների կյանքը ազատվեց։ «Յերկրորդ» եսկադրայի գրեթե ամբողջ ծառայողները վոչնչացան, ռուսներ կորցրին մինչև 8000 մարդ, մինչդեռ յապոնացիները 600 ից քիչ։ Միայն սիքանի կրեյսերները և ոգնական նավեր կարողացան փախչել և չեզոք նավահանգիստներում թագնվել և միայն մի փոքրիկ կրեյսեր հասավ Վլադիվոստոկ։

Ցուսիման «հասարակության» վրա, այսինքն բնակչության նյութական ապահով մասի վրա, ավելի խիստ տպավորություն արավ, քան Մոկդենը։ Իշխանությունն այդ տպավորությունը նախատեսնում էր և կատաստրոֆայի լուրը ծածկում էր. այնքան ժամանակ, վորքան հնարավոր էր։ Թերթերում զանազան անմիտ (բայց ռուսների համար բարեհաջող) լուրեր տպելով արտաքսմանի թերթերից, գինվորական գրաքննությունը յերեք որ ծածկում էր յապոնական գլխավոր հրամանատարի ծովակալ Տոգոյի պաշտոնական հեռագիրը։ Բայց դրանով ավելի սաստկացավ իրականության ազդեցությունը, յերբ այն հայտնի դարձավ։ Հենց այդ որերում Մոսկվայում հավաքված «սոսվորոժդենիականներից զեմսկի գործիչներին» աջ խորհուրդը, վոր նպատակ ուներ ապագա «ժողովրդական ներկայացուցչության» վերաբերմամբ համաձայնության գալ (փետրվարի 18 ի ժանեֆիատի հիման վրա) և սկզբում սմենաչափավոր խնդիրներ էր առաջադրում իրեն («ընտրությունների ժամանակ դասային սկզբունքից հրաժարվել» և այլն) իրեն համար էլ անսպասելի կերպով և բարեմիտ փոքրամասնության հաժար իրր սարսափ թռիչք գործեց դեպի «առանց հետաձգելու ժողովրդական ներկայացուցչության գումարումը», վորը պետք է ընտրվեր «ընդհանուր, հավասար, գաղտնի և ուղղակի քվեարկության միջոցով»։ Փոքրամասնությանը շատ մեծ դժվարությամբ հաջողվեց այս վերջին, կալվածատիրական ժողովի համար միանգամայն անվայել, բանաձևը ծածկել։ Յեվ այդ փոքրամասնության անդամներից մեկը ցավով նշում է. «Զգացվում էր, վոր հռոմանովների գերակշռող մեծամասնությունը առաջնորդվում է վոչ այնքան անհրաժեշտության գիտակցությունով՝ մեղմացնել պետական իշխանության և հասարակության մեջ յեղած անջատումը և անհամաձայնությունը և ի-րենց բոլոր ուժերը լարել նրանց մեջ հնարավոր միությունը առաջ բերելու մեր պետական հզորության վարկն ամրապնդելու համար, վորքան գոնվում է, դուցե և արդար, գայրույքի զգացումի ազդեցության տակ կառավարության գործողությունների առթիվ, վորը Ռուսաստանին մղեց դժբախտ և ժողովրդական գիտակցության համար անհասկանալի պատերազմին և յերկիրը հասցրեց արտաքին և ներքին քայքայմանը»։

Զայրանալով կառավարության անձեռնհասությունից, կալվածատերերը առաջին րոպեին ցանկացան ամբողջ ժողովով գնալ Նիկոլայի մոտ և նրանից պահանջել ժողովրդական ներկայացուցիչներին հրավիրել քառասնամյա բանաձևի հիման վրա։ Փոքրամասնությանը հազիվ հազ հաջողվեց այդ «ցույցը» հետաձգել և ամբողջ ժողովի ճանապարհորդությունը փոխարինել փոքրաթիվ պատգամավորներ ուղարկելով, վորը ցարին պետք է գըրություն ներկայացներ քիչ թե շատ «վայելուչ», այսինքն սովորական ըստ արկական արտահայտություններով գրված։ Հունիսի 6-ին Նիկոլայը գրել է. «Զեկուցումներից հետո ընդունեցի Ֆերմայում (Պետերհոֆում, ուր ցարի

ընտանիքն ապրում էր «համարանոցում») զեմսկի և քաղաքային 14 գործիչները Մոսկվայում մի քիչ առաջ յեղած համագումարից։ Ուրիշ վոչինչ։ Ինչ են ասել նրան «գործիչները», ինչ է պատասխանել ինքը—լռություն։ Ցավ միայն յերկու շաբաթ հետո նրա իսկական տրամադրությունն առիթ գտավ արտահայտվելու։ Հիշատակարանում հունիսի 21-ին (բոլոր թվերը հին տոմարով են) գրված է. «Ընդունեցի Ֆերմայում սենատոր Նարիշկինին, կոմս Բորիսինսկուն, Կիրեևին, Պավել Շերեմետևին, ուրիշներին և մի քանի գյուղացիների ռուս մարդկանց հայտարարությունով հակառակ զեմսկի յեվ քաղաքային գործիչների...»։

«Գործիչները» այնուամենայնիվ չկարողացան առանց ցարի հետ սըտակից խոսակցություն ունենալու կառավարել։ Նրանց «գայրույքը» միայն այնքան եր, վոր նրանք այդ դեպքում պատրաստվում էին ցարին հանդուգն խոսքեր ասել, բայց այդ մտադրությունը նրանք չիրագործեցին։ Ինտելիգենցիան արդեն «խոսել էլ չեր ուզում»։ Նույն որերին, նույն Մոսկվայում հավաքված «միությունների միությունը» կոչ եր անում չխոսել, այլ «գործել», «գործել ով ինչպես կարող է, ով ինչպես ընդունակ է կամ հարկավոր է և համարում իր քաղաքական համոզմունքների համաձայն.—ինչպես կուզեք, միայն գործեցեք։ Բոլոր միջոցներն այժմ օրինական են ընդդեմ այն սարսափելի սպառնալիքի, վոր կա ներկա կառավարության հետագա գոյության մեջ և բոլոր միջոցներն էլ պետք է փորձել։ Մենք դիմում ենք բոլոր հասարակական խմբերին, կուսակցություններին, միություններին, մասնավոր խմբակներին, այն բոլորին, վոր կա կազմակերպություններին, մասնավոր խմբակներին, այն բոլորին, վոր կա ժողովրդի մեջ կենդանի և ընդունակ արձագանք տալու գավին, կոպիտ հարվածին. և մենք ասում ենք.— բոլոր ուժերով, բոլոր միջոցներով ձգտեցեք անմիջապես հեռացնել իշխանությունը գրված ավազակների խումբը և նրա տեղը դրեք սահմանադիր ժողովը...»։

«Ռոմանովներին» ավազակախմբի հետ հաճելի համեմատության լուրը Նիկոլայի ականջին չհասավ, յեթե նույն իսկ հասներ, նա հազիվ թե վախեներ այդ մի բաժակ ջրում բարձրացած փոթորիկից։ Բայց շուտով նրան հասան այնպիսի լուրեր, վորոնցից չվախենալ չեր կարելի։ Յեթե զեմսկի և քաղաքային գործիչները նրա հիշատակարանում արժանացան մի տողի, իսկ ինտելիգենցիան և վոչ մի տողի, ապա ամբողջ յերեսներ են նվիրված «Պոտյոմկին Տավրիչևսկի» զրահակրին։ Այդ անունը հակառակ «գործիչների» անուններին, Նիկոլայը լավ եր պահել հիշողության մեջ։

Վոր պատերազմը չեր կարող ամենից առաջ զորքի տրամադրության վրա չանդրադառնալ—այդ ըստ ինքյան հասկանալի յեր։ «Ռոմանովների» համար չարագուշակ նշանները վաղուց յերևում էին։ Արդեն Մուկդենի կռվում պատահել էին դեպքեր, վոր զինվորները հրացանազարկ էին արել սպաներին, վորոնք փորձել էին ատրճանակներով հետ գարձնել նահանջողներին և նորից քշել կրակի մեջ։ Ցուսիմայի մոտ Ներոգատովի շտաբից կռիվը շարունակելը անմիտ լինելով, այլև նրանով, վոր նավաստինների վճռականորեն հրաժարվում էին զուր տեղը վոչնչանալուց և Ներոգատովի ամենալավ զրահակրի վրա սպաների առաջ զրված եր հետևյալ ընտրությունը. կամ զրոշակն իջեցնել կամ զորքի կողմից ծովը նետել։ Նավատրվում տրամադրությունը, վորին գեռ վաղ եր «հեղափոխական» ան-

վանելը, բայց վորը անզուսպ կերպով դեպի այդ եր գնում, ավելի ուժեղ եր արտահայտվում, քան ցամաքային զորքում։ Այդ բացատրվում եր նավաստինների սոցիալական կազմով։ Ժամանակակից նավն իր բազմաթիվ առանձնահատուկ մեխանիզմներով (որինակ՝ նրա բոլոր մեծ թնդանոթները պտտվում են մեքենաներով) շատ նման է գործարանի։ Գործարանի բանվորը շատ ավելի արագ կարող է նրա մեջ բան հասկանալ և գլուխ հանել քան գյուղացին, վորը մեքենայի մոտ յերբեք չի աշխատել։ Բացի այդ նավատորմը յերբեք կարիք չի լինում գործադրել «ներքին թշնամուն» դեմ, դրա համար էլ «բարեհուսությունը» նավաստու համար ավելի քիչ կարևորություն ուներ, քան ցամաքի զինվորի համար, վորին կարող եր դեպք պատահել հրացանազարկ անելու գործադուլավորին կամ ցուցարարին։ Այդ բոլոր պատճառներն նկատի ունենալով, իշխանությունը բանվորներին սիրով նավատորմ եր ուղարկում, իսկ գյուղացիներին՝ ցամաքային բանակը։ Այդ պատճառով Նիկոլայ II-ի նավատորմը նրա զինված ուժի ավելի պրոլետարական մասն եր։

Միշտ շփում ունենալով ոտարազգի նավերի ծառայողների (վորտեղ կարելի յեր պատահել և ռուս վտարանդիների), նավահանգստի բանվորների հետ, վորոնք պակաս գիտակից եյին, քան ֆաբրիկայի կամ գործարանի բանվորները, բայց ավելի «կատաղի» եյին, տոգորված բոսյակների ժասսայի տարերային անարխիզմով, զորքի այդ մասն էլ ավելի հեղափոխական եր։ Մանավանդ պահեստինները, վորոնք հավիվ յերեկ գործարանից ու ֆաբրիկայից եյին առնվել, նավ եյին բերում, «գործադուլի» տրամադրությունն իր բոլոր թարմությունով։ Իսկ նավատորմում կարգապահությունը ավելի խիստ եր և ավելի ճորտատիրական, քան ցամաքային զորքում։ Զորանոցում սպաները զինվորներից անջատ եյին պատահում եյին միայն ծառայության ժամանակ։ Նավում բոլորը միասին են ապրում, նավաստինները լավ գիտեյին սպաների մասնավոր կյանքի բոլոր անցուդարձը և սովորել եյին նրանց ատել։ միաժամանակ սպայության ճնշումն ավելի ուժեղ եր զգացվում, ծանրացրել եր ամբողջ կենցաղի վրա, նավաստու ամբողջ մասնավոր կյանքի վրա։ Դրան ավելացրեք այն, վոր ցարի ժամանակի ծովային սպայությունն ավելի ազնվական կազմ ուներ, քան ցամաքայինը։ բուրժուական տարրերի տրադիցիայով (հին սովորության համաձայն) ծովային կորպուսի մեջ գրեթե տեղ չեյին գտնում, և ավելի մեծ տոկոս ազնվական սպաներ կարելի յեր գտնել միայն գվարդիայում—և դուք կըհասկանաք, ինչու նավատորմն անհամեմատ ավելի պատրաստ եր հեղափոխական բռնկման, քան Նիկոլայի մարտական ուժի վորևե ուրիշ մաս։

Բռնկումի պատճառը, ինչպես և հունվարի 9-ից առաջ առաջին հայացքից փոքր եր և պատահական։ Նավաստիններին շատ վատ եյին կերակրում, մինչդեռ սպաները նրանց աչքի առաջ հիանալի անվում եյին, և վոր ամենից գլխավորն և, նավաստինները գիտեյին, վոր սպաները անվում են մեծ չափով իրենց՝ նավաստինների բաժինների հաշվին։ Առաջ այդ անտրտունջ տանում եյին, բայց այժմ անկարգ բան եյին համարում այն, վոր «սպաները» լավ են անվում, քան «մարդիկ» (ծառայողները) և երբեմն այդ արտահայտում եյին։ Միանգամ հունիսի կեսին Սև ծովի ամենալավ զրահակիր «Պոտյոմկին»-ի նավաստինները, վորը նոր եր շինվել յապոնական որինակով, հրաժարվեցին բորշչը ուտելուց, վորը շատ եր ռուսական։ Սպան

փորձեց «սպառնալ», նրանք պատասխանեցին «հանդգնություններով»։ խոսքի դեմ, խոսք վեճը տաքացավ և նավաստի Վակուլինչուկի մի արդեն անկեղծ նկատողությանը հետևեց ատրճանակի հարված, վարը և նրան տեղն ու տեղը թողից։ Մի քանի վայրկյանից հետո, ատրճանակ ձգող սպան այլևս չկար, իսկ մի քանի րոպեյից հետո «Պոտյոմկինի» ամբողջ հրամանատարական կազմը նավից դուրս եր թափված։ Զրահակիրը ապստամբած նավաստինների ձեռքին եր և կարմիր դրոշակ բարձրացրած գնաց Ոդեսայի նավահանգիստը։

Նավահանգստում այդ ժամանակ գործադուլ եր, վոր անընդհատ Ռուսաստանի մի խոշոր կենդրոնից մյուսն եր անցնում։ Զինվորական մեծ նավի յերևալը կարմիր դրոշակով աննկարագրելի վոգևորության բռնկում առաջ բերեց գործադուլավոր բանվորների մեջ։ Սպային սպանած նավաստու համար, վորի դիակը ափ տարան, այնպիսի թաղում կատարեցին, վորպիսին Ոդեսան չեր տեսել։ Քաղաքի իշխանությունը կուչ յեկավ և սկվեց, մանավանդ յերբ իշխանության «դիմադրելու» «Պոտյոմկինը» պատասխանեց 12 մատնաչափ թնդանոթի ռումբով։ Կասկած չկա, վոր յեթե նավատինները մի քիչ կազմակերպված լինեյին, քաղաքն իրենց ձեռքին կլիներ յերկու ժամից հետո։ Ցամաքային կայազորինը արդեն սկսել եր անցնել հեղափոխական «վարակումը», բայց վոչ մի կազմակերպություն չկար, նավի վրա կային յերկու գիտակից հեղափոխականներ, ամեն ինչ հենված եր միայն վոգևորության վրա, վորը արագ կերպով սկսեց թուլանալ, հենց վոր բոպեյական բռնկումից հետո կարիք յեղավ անցնելու լուրջ և յերկարատև հեղափոխական գործողությունների։

Այդ խիստ վոգևորությունը բավական եր դեռ մի պայծառ յելույթի համար էլ։ Սև ծովի ամբողջ նավատորմն ուղարկվեց Ոդեսա զսպելու պոտյոմկինյաններին։ «Պոտյոմկինը» համարձակ դուրս յեկավ «զսպողների» դեմ և այստեղ պատահեց մի դեպք, վորը իշխանությունը չեր նախատեսել։ Տեսնելով վոր հեղափոխական զրահակիրը բոլոր ուժով դեպի եսկադրան է գնում, մյուս նավերի նավաստինները թողնելով իրենց տեղերը, տախտակամած բարձրացան «ուռա» աղաղակելով ի պատիվ «Պոտյոմկինի»։ Եսկադրայի հրամանատար ծովակալը շատ ուրախ յեղավ, վոր իրեն հաջողվեց վեց յեռ դառնալ կարմիր դրոշակ ունեցող սարսափելի նավից։ Սև ծովի գրեթե ամբողջ նավատորմը վախավ մենակ մի զրահակրից։ Բայց վոչ բոլորովին ամբողջը։ մյուս մեծ զրահակիր «Գեորգի Պոբեդոնոսեցը» կարմիր դրոշակ բարձրացնելով գնաց «Պոտյոմկինի» յեռևից և նրա հետ մտավ Ոդեսայի նավահանգիստը։

Այդ Սև ծովի նավատորմի ապստամբության ամենաբարձր մոմենտը եր, իշխանության սաստիկ ճնշման և շարժման պատահական ղեկավարների գունեղ հույսերի ծաղկման մոմենտը։ «Սատանան գիտե, թե ինչ և կատարվում Սև ծովի նավատորմում»—թախծով գրում և Նիկոլայն իր հիշատակարանում լուր ստանալով Ոդեսայից պատահածի մասին —գոնե հաջողվեր հպատակության մեջ պահել եսկադրայի մյուս զորամասերին»։

Դրությունը Նիկոլայի համար ավելի լավ եր, քան նրան թվում եր։ «Գեորգի Պոբեդոնոսեցի» միանալը իրոք ուժեղացրեց ապստամբներին։ Ցերկրորդ զրահակրի զորամասի տրամադրությունն ավելի քիչ կայուն եր, քան պոտյոմկինյաններինը։ «Գյորգու» վրա մնացած սպաները և յենթա-

սպանները («կոնդուկտորները») ծածուկ իսկույն հակահեղափոխական ագիտացիա սկսեցին։ Այն նավաստիներին, վորոնց յերկյուղը պատել եր, յերբ նրանք մտածեցին, թե ինչ արին, ներշնչել, վոր բան չկա, ազատվելու դեռ միջոց կա. պետք է գնալ իշխանության մոտ ներողություն խնդրել և «սկզբնական հեղափոխականները ծանծաղուտ հանեցին այն։

«Գնորգի Պոբեդոնոսեցը» անձնատուր յեղավ և միաժամանակ Ոդեսայի գործադուլն էլ քանդվեց։ Նավահանգստի կիսա-բոսյակային բանվորության անհաստատ լինելն այստեղ իր ամբողջ խորությունով յերևաց։ Գործադուլի յերրորդ որը գործադուլավորների մի մասը, հարբեց, նավահանգստում հրդեհ սկսվեց, քաղաքերված իշխանությունը զորքերին առաջ շարժեց, մասնաններըը, արդեն վոչ գործադուլ անող պրոլետարիատի, այլ հարբած խուլիգանների—հրացանազարկի յենթարկվեցին, Ոդեսայում «կարգը» վերականգնվեց։ Պոտյոմկինի» վրա այդ ժամանակ սկսեցին վերջանալ քարածուխը և ուտեստի նյութերը. զրահակիրը գրեթե մի շաբաթ եր, վոր կարմիր դրոշ պարզած լողում եր։ Թե մեկը և թե մյուսը փնտռելու համար «Պոտյոմկինը» առաջ գնաց ռումինական Կոնստանցա նավահանգիստը, ուր պոտյոմկինյաններին քաղաքավարի ընդունեցին, բայց հրաժարվեցին վորևե բան տալ, հետո Թեոդոսիա գնաց, ուր մի քիչ ուտելիք ձեռք բերեց, բայց քարածուխ ձեռք բերելու փորձը չհաջողվեց, ընդ վորում ափից կրակող զորքը սպանեց մի քանի նավաստի։ Նավի մեջ յեղողների տրամադրությունն ավելի ու ավելի յեր ընկնում։ Հունիսի 25-ին, Նիկոլայը վոր որը որին հետևում եր ապստամբության ընթացքին, կարող եր հաղթանակով գրել. «Իշխան Պոտյոմկին»-ը նորից կոնստանցա գնաց, ուր զորամասը հանձնվեց ռումինական իշխանության և ափ իջավ...»

Միապետության դեմ նրա զինված ուժի առաջին ապստամբությունը վերջացավ միապետության հաղթությունով։ Բայց նա յերկար ժամանակ չեր կարող մոռանալ իր խայտառակությունը և վախը։ «Դրա համար պետք է խիստ պատժել իշխանավորներին և դաժան կերպով խռովարարներին»—նշել եր հիշատակարանում Նիկոլայը ապստամբության ամենաբարձր ժամանակ, յերբ նա կասկածում եր թե կհաջողվի արդյոք «հնազանդության մեջ պահել իսկապրայի մյուս զորամասերին»։ «Խռովարարների» վերաբերմամբ այդ կատարվեց, վորքան ֆիզիքապես այդ հնարավոր եր, «Գեորգիից» 67 նավաստի գնդակահարվեց կամ տաժանակիր աշխատանքի ուղարկվեց։ Պոտյոմկինյաններն հետ վոչինչ չեր կարելի անել վորովհետև նրանք արտասահման եյին։ Բայց յերբ ապստամբության զեկավարներից մեկը, նավաստի Մատյուշենկոն, յերկու տարի հետո փորձեց վերադառնալ Ռուսաստան, նրան կախեցին, ուշք չդարձնելով այն բանին, վոր այդ ժամանակ ընդհանուր ներում եր յեղել։ Այդ ապտակը միապետությունը չեր կարող մոռանալ։ Նույնիսկ խռովարար զրահակրի անունը ռուսական նավատորմի ցուցակից հալածվեց. «Պոտյոմկինը» վերանվանվեց «Պանտելեյմոն»։

Զինվորական խռովությունը մի ավելորդ անգամ հիշեցրեց այն մասին, վոր պատերազմը պետք է վերջացնել։ Այդ արդեն բավական պարզ եր հենց Ցուսիմայից հետո յել. ռուսական ամբողջ նավատորմից Բալտիկ ծովում մնաց միայն մի քանի ուսուցման նավ և յերկու դեռ չավարտված զրահակիր, Ճշմարիտ է, Սև ծովի նավատորմը վողջ եր, բայց չհոսելով զորամասերի տրա-

մադրության մասին. նա իրավունք չուներ Սև ծովից դուրս գալու։ *) Դեռ մայիսի 25-ին հ. տ. Նիկոլայը «ընդունեց ամերիկական դեսպան Մեյերին Ռուզվելտի հանձնարարությունով»։ Միացյալ Նահանգների Նախագահը իր միջնորդ լինելու առաջարկով կանխեց Անգլիային և Ֆրանսիային, վորոնց հետ նորդ լինելու առաջարկով կանխեց Անգլիային և Ֆրանսիային, վորոնց հետ ռուս դիպլոմատիան արդեն այդ առթիվ բանակցություններ եր սկսել։ Այն հպարտ արտահայտությունից, թե «պատերազմից պարտված չեն դառնում», վողջ եյին հրաժարվել, բայց գործը դեռ ձգձգվում եր։

«Պատյոմկինի» ապստամբությունն ստիպեց շտապել. հուլիսի 1-ին Նիկոլայն «ընդունեց Վիտեյին, վորը գնում եր Վաշինգտոն իր լիազոր Ճապոնիայի հետ խաղաղության բանակցություններ սկսելու»։

«Պոտյոմկինը» այսպես վորոշեց Նիկոլայի տակտիկան։ Իսկ հեղափոխության տակտիկայում նրա յելույթը վորոշեց առաջ խաղացության մի նոր քայլ,—1905 թվի ամառվանից սկսած հերթի յի դրվում գործնականորեն մի քայլ,—1905 թվի ամառվանից սկսած հերթի յի դրվում գործնականորեն մի խնդիր, վորի մասին 1904 թ. դեկտեմբերին թվում եր, վոր մոռացել են իսկ անմոռություն եր—զինված ապստամբության խնդիրն եր այդ։

*) Դեռ 1841 թվին կապած կոնվենցիայով (համաձայնություն) վոչ մի զինվորական նավ, բացի տաճկականից, չեր կարող Բոսֆորը և Դարդանելն անցնել։

ԳԼՈՒԽ ՎԵՑՅԵՐՈՐԴ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հինված ապստամբության միտքը ծնվեց, իհարկե, ավել 1905 թվի ամառը. նա ավելի առաջ էր ծնվել։ Տարերային ուժով նա պետք է Պետերբուրգի բանվորների մտքերը գրավեր հունվարի 9-ից հետո. (տե՛ս վերը)։ Դեռ ավելի առաջ այդ մշակվում էր հեղափոխական մարքսիստական գրականության մեջ։ «Բանվոր դասակարգի գործն է իր կազմակերպությունը խորացնել և լայնացնել, մասսաների մեջ ագիտացիան տանել, ոգտվելով կառավարության ամեն մի տատանումից, պրոպագանդա անելով ապստամբության գաղափարը, բացատրելով նրա անհրաժեշտությունը այն բոլոր կիսատ և նախորոք անհաջողության մատնված «քայլերի» որինակով, վորոնց մասին այժմ այնքան շատ են բղավում, —գրում էր ընկ. Լենինը, դեռ 1904 թվի նոյեմբերին, զեմստվոների հռչակավոր խորհրդակցության ժամանակ, վորոնք վիճում էին «խորհրդակցական» և «վոչ խորհրդակցական» ներկայացուցչության մասին։ «Պոպովկինից» միայն մի քայլ որ առաջ այդ միտքն իրականացավ բավական խոշոր չափերով։ Կայսրության հեռավոր «արևմուտքում»՝ Լոձում,—այնտեղ պրոլետարիատը ծագումով լեհական էր և հրեական, և վոչ ռուսական,—կոզակների հրացանաձգությանը բանվորական ցույցի ժամանակ, կազակներին և վոստիկանության՝ պատասխանեց հրացանաձգությունով տանիքներից և ծածկերից։ Սակայն չնայելով Լոձի բանվորների հերոսական պաշտպանությանը, նրանց դիմադրությունը հնշտ կերպով ճնշվեց, հենց վոր վարշավայից զորքեր հասցրին։ Արդեն Լոձի բարբիկադները (այդ որերում Լոձի փողոցներում դրանցից շատում էին ժողովրդական մասսայի ամեն տեսակ ապստամբության բազդը, թեև նա վորևե կերպ զինված լիներ, յերբ այդ ապստամբությունը իր դեմ ունեներ չքայքայված, կառավարությանը անպայման հպատակվող զինվորական ուժ։ Միայն զորքի մի մասի ժողովրդի կողմն անցնելը, միայն նրանց մեծ մասի չեզոքությունը՝ կուվին չմասնակցելը ժողովրդական ապստամբությանը տալիս էին հաջողության հույս։

Յարիզմի պատերազմական անհաջողությունները խայխայում էին բանակը։ Ահա թե ինչն էր ռուս յապոնական պատերազմի օբյեկտիվ նշանակությունը, նրա ազդեցությունը վոչ թե «հասարակության» «տրամադրության» վրա, ինչպես վոր այդ յեղավ Լայոյանից, Յուսիմայից հետո ևայլն, այլ հենց հեղափոխության ընթացքի վրա։ Դեռ հունվարի 9-ից առաջ Լենինը գրում էր, ծաղրանքով մենշևիկների պնդումի դեմ, վոր պատերազմն ամենից առաջ «դժբախտություն» է. «Ռուսական ազատության և ռուսական (նաև համաշխարհային) պրոլետարիատի պայքարի գործը սոցիալիզմի համար շատ

մեծ կախումն ունի մի ապետության պարտություններից»։ «Կռվելով ամեն տեսակ պատերազմի դեմ, մենք միշտ պիտի նշենք պատմական պատերազմի հեղափոխական մեծ դերը, վորի ակամա մասնակցողն է դառնում ռուս բանվորը»։ Ռուս ժողովուրդը ոգտվեց միապետության պարտություններից։ Պորտ-Արտուրի անձնատուր լինելը յարիզմի անձնատուր լինելու նախերգանքն է»։

Բայց յեթե յարիզմի պատերազմական պարտությունները նրա կործանման առաջին քայլերն էին, նրա սեփական զինված ուժի ապստամբությունը նրա դեմ յերկրորդն էր և ավելի ահեղը։ «Դեպքերը զարմանալի արագությունով հաստատեցին ապստամբության և ժամանակավոր հեղափոխական կառավարության կազմելու հրավերների յուրաժամանակ լինելը»,—գրում էր Լենինը «Պոպովկինից» հետո հետևյալ որը։ «Այժմ բոլոր սոցիալ-դեմոկրատներն առաջ քաշեցին ռազմական հարցերը, յեթե վոչ առաջին տեղը գոնե առաջիններից մեկը, հնրթը դրին նրանց ուսումնասիրելը և ժողովրդական մասսաներին նրանց հետ ծանոթացնելը։ Հեղափոխականն բանակը գործնականապես պետք է կիրառի ռազմական գիտությունները և ռազմական գործիքները ռուս ժողովրդի ամբողջ հետագայի բաղդը վճռելու համար»։

«Բոլոր սոցիալ-դեմոկրատները» բառերը չափազանցություն չեյին։ Ահա թե ինչ էր գրում մենշևիկական գործած «Искра»-ն այդ նույն որերին, իր թերթիկը վերնագրելով՝ «Հեղափոխության առաջին հաղթանակը». «Ժամանակը հասել է համարձակ գործելու և բոլոր ուժով պաշտպանելու զինվորների ապստամբությունը։ Այժմ համարձակ լինելը կհաղթե»։

«Գումարեցեք այժմ ժողովրդի հրապարակական ժողովները և նրան ուր ավելք յարիզմի զինվորական հենարանի քանդվելու մասին։ Ուր վոր հնարավոր է, գրավեցեք քաղաքային հիմնարկությունները և նրանց դարձրեք ժողովրդի ինքնավարության հեղափոխական հենարան։ Դուրս վռնդեցեք յարական պաշտոնյաներին և համաժողովրդական ընտրություններ նշանակեցեք հեղափոխական ինքնավարության հիմնարկությունների համար, վորոնց պետք է հանձնարարեք հասարակական գործերի վարումը մինչև ցարական կառավարության վրա վերջնական հաղթանակ տանելը և պետական նոր կարգ հաստատվելը։ Գրավեցեք պետական բանկի բաժանմունքները և ռասմամբերքի պահեստները և զինեցեք ամբողջ ժողովրդին։ Քաղաքների մեջ կազ հաստատեցեք նաև քաղաքի և գյուղի մեջ և թող զինված քաղաքացիները շտապեն մեկ մեկու ոգնության ամեն տեղ, ուր ոգնություն է պետք։ Գրավեցեք բանտերը և ազատեցեք մեր գործի համար նրանցում բանտարկված մարտիկներին, սրանցով դուք ձեր շարքերը կուժեղացնեք։ Ամեն տեղ հայտարարեցեք ցարական միապետության տապալումը և նրա ազատ դեմոկրատիկ հանրապետությունով փոխարինվելը։ Ցեղերը, քաղաքացիներ։ Ազատության ժամը հնչել է։ Կեցցե հեղափոխությունը, կեցցե դեմոկրատիկ հանրապետությունը։ կեցցե հեղափոխական ժողովը։ Կորչի միապետությունը»։

Բայց ինչու խոսել սոցիալ-դեմոկրատների մասին, յերբ նույնիսկ բուրժուազիան «Պոպովկինից» հետո խոսեց այլ լեզվով։ Այն ժամանակ արժ. Ծուլոֆան գրում էր։ «Ամեն մի անկեղծ և մըտածող լիբերալ Ռուսաստանում պահանջում է հեղափոխություն»։ Իսկ պե-

մըսկի համագումարում 6 (19) հուլիսի, լսվում էին այսպիսի ճառեր. «Ցերը մինք 6 (19) հուլիսի գնում էինք Պետերհոֆ,—ասում էր Պետրունկևիչը,— դեռ հավատում էինք, վոր ցարը կհասկանա դրության սարսափելի վտանգավոր լինելը և մի բան կանի այդ կանխելու համար։ «Այժմ ամեն հույս այդ ուղղությամբ պետք է թողնել։ Մնացել է միայն մի յելք։ Մինչև այժմ մենք հույս ունեինք ռեֆորմների վերից, այժմյանից մեր միակ հույսը ժողովուրդն է։ (Բարձր ծափահարություններ)։ Մենք պետք է ժողովրդին ճշմարտությունն ասենք պարզ և հասկանալի բառերով կառավարության անընդունակ և անուժ լինելը հեղափոխություն առաջ բերից։ Այս մի փաստ է, վոր բոլորն էլ պետք է ընդունենն։ Մեր պարտքն է՝ գործ դնել ամեն ջանք, վոր խուսափենք արյունահեղությունից։ Մեզանից շատերը յերկար տարիներ նվիրել են հայրենիքի ծառայության։ Այժմ մենք համարձակ պետք է գնանք ժողովրդի մոտ և վոչ ցարի...»։ «Մինչև այժմ մենք սպասում էինք ռեֆորմների վերից, բայց մինչ սպասում էինք, ժամանակն իր գործն արավ։ Հեղափոխությունը կառավարությունից հրահրվելով, մեզնից առաջ գնաց։ «Հեղափոխություն» բառը յերեկ այնպես վախեցրեց մեր անդամներից յերկուսին, վոր նրանք համագումարից հեռացան։ Բայց մենք պետք է համարձակ նայենք ճշմարտության յերեսին։ Մենք չենք կարող ձեռքները ծալած սպասել»։

«Հեղափոխությանը» սպագա կադետները համաձայն էին, միայն առանց «արյունահեղության»։ Համենայն դեպս այն տրամադրությունից, վոր ստեղծել էր ճիշտ մի ամիս առաջ պատգամավորության ցարի մոտ գնալու, (յերբ Պետրունկևիչին ամենից շատ անհանգիստ էր անում այն, վոր սպիտակ ձեռնոցներ չունի), հետքն էլ չէր մնացել։ բուրժվան պատրաստ էր վոչ միայն սպիտակ, այլ և ընդհանրապես ամեն տեսակ ձեռնոց հանելու։

Սակայն շարժումը այնպես արագ չէր առաջ գնում, ինչքան վախում էր բուրժվազիան և ինչքան հույս ուներին հեղափոխական կուսակցությունները։ «Պոպոմկինի» մասսայական յելույթից բաժանում էր դեռ յերեք ամիս։ Այդ յերեք ամսից ցարիզմը, ինչքան կարող էր, ոգտվեց նախ՝ վոր պատերազմը վերջացնե, յերկրորդ՝ վոր իր համար էլ մասսայական հեռանար պատրաստ՝ կազմակերպելով բնակչության այն շերտերը, վորոնց նա «հավատարիմ» էր համարում։

Առաջինը յերկրորդից շատ հեշտ էր։ Հաղթական Ցապոնիան ամենևին հակված չէր իր յերկիրը ընդարձակելու ասիական մայր ցամաքում դեպի հյուսիս, Սիբիրի կողմը։ Ցապոնիան ամբողջ պատերազմը Զինաստանի վրա գերիշխելու համար էր վարում։ Վոտքը ամուր դնելով Պորտ-Արտուրում,— վորին խանգարում էր Ռուսաստանը, 1895 թվին՝ յապոնացիները այնքան մոտեցան Պեկինին՝ Զինաստանի մայրաքաղաքին, վորքան իրենց պետք էր։ Իրրև գաղութ, նրանց առայժմ բոլորովին բավարարում էր Կորեան։ Վոչ Պորտ Արտուրը վերադարձնելու մասին, վոչ էլ Ռուսաստանի Կորեայի վերաբերմամբ պահանջներ ունենալու մասին, Մուկդենից և Ցուսիմայից հետո խոսք չէր կարող լինել։ Ինչ վերաբերում է հողամասին՝ Ռուսաստանին և Ցապոնիայի մեջ վեճը միայն Սախալինն էր վերաբերում, վորից ցարական կառավարությունը վոչինչ չէր կարող անել բայց միայն տաժանակիր աշխատանքի բանտ պատրաստել և ուր յապոնացիները գտան բնական թանգարժեք հարստություններ։ Ստրատեգիական տեսակետից (զինվորական) տիրելով Սախալինին, Ցապոնիան Ցապոնական ներքին ծովը դարձնում էր յապոնական լիճ. յելքն այնտեղից դեպի հարավ անցնում էր Ցուսիմայով, դեպի հյուսիս միրարակ նեղուցով, վորը Սախալինը բաժանում էր մայր ցամաքից։ Ռուսաստանի համար արժեր, վոր Սախալինը պաշտպան էր, յեթե նա Խաղաղ ովկիանոսում նավատորմ ունենար, բայց մայիսի 14—15-ից սկսած նավատորմը հատակումն էր...։

Առանց նավատորմի Ռուսաստանն իր ռազմական առավելությունները միևնույն է չէր կարող ոգտագործել. վիճելն այլևս չարժեր։ Գլխավոր վեճը վերջ ի վերջո դրաժին վերաբերեց. պատերազմի վրա ծախսած ահագին գումարները Ցապոնիան ցանկանում էր ստանալ Ռուսաստանից իբրև ռազմատուգանք (կոնտրիբուցիա)։ Այդ բանին Նիկոլայը վոչ մի կերպ չէր համաձայնում, վոչ այնքան նրա համար, վոր այդ Ռուսաստանին կծանրաբեռներ նոր հարկերով, վորքան ինքնասիրության հետևանքով. ռազմատուգանք վճարող յերկիրը կարծես թե այդպիսով ինքը ստորագրում է իր պարտվածի լինելը։ Այդ ստորագրությունը Նիկոլայը չէր ուզում տալ և այս դեպքում գտավ նոր դաշնակիցներ ի դեմս Ցապոնիայի դաշնակիցների։ Վոչ Անգլիան, վոչ Ամերիկան չէին ուզում Ցապոնիայի հաղթությունն արդեն իսկ շատ հովանավորությունից ազատել։ Ցապոնիայի հաղթությունն արդեն մեծ ու փառավոր բան եր, նրանց կարծիքով ցարական Ռուսաստանին այնպես ջարդեցին, վորպես չէին սպասում նույնիսկ նրա թշնամիները։ Դրանից դուրս յապոնացիներին դեռևս ֆինանսական անկախություն էլ տալ, կնշանակեր Խաղաղ ովկիանոսում ստեղծել նոր մեծ պետություն, վորը ամենևին չէր համապատասխանում վոչ անգլիացոց և վոչ էլ ամերիկացոց ծրագրին։ Ցերը Վիտեյի հետ բանակցելիս (Պորտսմուտում, Միացյալ Նահանգներում) յապոնացիներն սկզբից համառել ռազմատուգանքի հարցում, նրանց վարկ տվողները (Ցապոնիան պատերազմը վարում էր մեծ մասամբ ամերիկական և մասամբ անգլիական դրամով) հասկացրին, վոր պատերազմը շարունակելու դեպքում վոչ մի պաշտպանության վրա հույս դնել չեն կարող։ Իսկ Ցապոնիան արդեն բոլորովին ուժասպառ եր յեղել, և դրամ չուներ։ Ստիպած էին հաշվել, բավականանալով դոնե ռուսական արջի ատամներ։ Ստիպած էին հաշվել, իրր վարձատրություն «գերիների պահպանության» (Ցապոնիայում կային մի քանի տասնյակ հազար գերիներ). իսկ Սախալինը վորոշեց կիսել։ Այսպիսով Ռուսաստանն ազատվեց ավելի եժան, քան կարելի էր կարծել, նկատի ունենալով նրա կրած պարտությունների ծանրությունը։

Ոգոստոսի 16 (29-ին) Վիտեն ստորագրեց խաղաղության դաշնագիրը, այդ սխրագործությունով վերադարձնելով իրեն Նիկոլայի վողորմածությունը։ Վերջինս այնպես ուրախացել եր, վոր իրեն նախկին ֆինանսների անտանելի մինիստրին բարձրացրեց կոմսության, այսինքն նրան ռուսական բարձր ազնվականության դասը դասեց, մինչդեռ մինչև այդ արհամարհանքով եր նայում այդ „выскочка“-ին (ճարպիկությունով դուրս պրծածին), վորը յերկաթուղագծի կայարանապետ լինելուց մինստրության եր բարձրացել։ Իսկ «Ռոմանովները»—յեթե վոչ ամբողջ ընտանիքով, պաշտոնապես, գոնե մասնավոր յեղանակով. առանձին-առանձին կորեական հարստությունները կորցնելուց ըստ յերևույթին այնուամենայնիվ մխիթարական յեն համարում իրենց։ Ուղիղ տասը տարի հետո արտասահմանում հրապարակ եկավ խիստ տարօրինակ մի վավերագիր, մուրհակի նման մի բան՝ վորով

յապոնական կառավարությունը պարտավորվում է այդ ներկայացնողին (անունը չի հիշված) վճարել 120 միլիոն յապոնական յեն (մոտ 100 միլիոն ռուբլի վոսկով) փոխարեն այն բոլոր առանց վորևէ բացառության, ռուսական պատերազմական գաղտիքների, վորը ներկայացնողը պետք է հայտնե։ Այդ տարօրինակ փաստաթուղթն ուներ էլ ավելի տարօրինակ մի պայման ևս. վոր Յապոնիան պարտավոր է լրիվ վճարել միայն այն դեպքում, յերբ փաստաթղթում նշանակված ժամանակամիջոցում նա նորից պատերազմ չմղի Ռուսաստանի դեմ։ Վորովհետև Յապոնիան այդ ժամանակում վոչ միայն Ռուսաստանի դեմ չեր պատերազմիլ, այլ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի հետ պատերազմ մղեց Գերմանիայի դեմ, բնական է, վոր ժուրնալիստ ներկայացնողը վոչ մի կոպեկ չստացավ.—փաստաթուղթր «կեղծված» հայտարարվեց, թեև յապոնական դիվանագետները չեյին ժխտում, վոր Յապոնիան մագատա ժարշալի, այն ժամանակվա (1905 թ.) յապոնական առաջին մինիստրի ստորագրությունն իսկականն է։ Թե ինչպես կեղծված փաստաթղթի վրա կարող եր իսկական ստորագրություն լինել, այդ մենք չենք քննի, նկատենք միայն, վոր այդպիսի պայման ամենից շուտ կարելի կլիներ կապել «Ռոմանովներից» մեկի հետ. գիտենալ ռուսական պատերազմական բոլոր գաղտնիքները. և դեռ ավելին, խոստանալ, վոր Ռուսաստանը չի պատերազմի Յապոնիայի դեմ, ժամանավոր մարդը, թեկուզ նա մինիստր էլ լիներ, չեր կարող. նրան վաղն և եթե կարող եյին վռնդել և նա իր բոլոր ազդեցությունը կկորցներ։ Կաշառքն էլ իր չափերով իսկական «մեծ իշխանական» եր, յեթե վոչ «ցարական»։

Վերջ ի վերջո «ռոմանովյան ավանտուրայի ծախքերը վճարեց ռուս ղինվորը։*) Դրա փոխարեն, «Ռոմանովների» կարծիքով, տներում ճնացած ազգականները, ռուս գյուղացիները, շատ շնորհակալ պետք է լիներին «Ռոմանովներից» և վատահելի հենարան դառնային «ներքին հշնամու» դեմ։ Դրանում եր «ռոմանովյան» սահմանադրության եյությունը, վոր հայտարարվեց խաղաղությունը կնքելուց յերկու շաբաթ առաջ, 6(19) ոգոստոսի։ Ցերկար ու դանդաղ շարժվող ապրանքատար գնացքը, վորը ճանապարհ յեր ընկել փետրվարի 18-ին, յերբ Նիկոլայը այնքան դժվարությունով իր ուղեղից քշեց այն միտքը, թե 1) ամենաարժանավոր, ժողովրդի վստահությունը վայելող, ժողովրդից ընտրված մարդկանց հրավիրել, վոր մասնակցեն որենադրական նախագծերի նախնական ուսումնասիրությանը և քննությանը,—վերջապես հասավ կայարան։ Այդ ժամանակ գնացքի բեռը արդեն կորցրել եր իր ամեն տեսակ արժեքը։

Հեղափոխությունն ապրում եր ամենադանդաղ ժամանակ ամիսներով, յերբեմն շաբաթներով, յերբեմն էլ նույնիսկ որերով։ Իսկ «ռոմանովյան» կառավարությունը շարունակում եր ապրել տարիներով, և հավանորեն նրան թվում եր, վոր նա շատ է շատացում այդպիսի կարևոր որենագիծ պատրաստելով—(կատակ է. ժողովրդական ներկայացուցչություն). կես տարվա ընթացքում։ Իսկապես նախագծի հիմնական գաղափարը, խորհրդակցական ներկայացուցչության գաղափարը, արդեն փետրվարին հնացել եր։ Արդեն փետրվարին այդ նույնիսկ բուրժուազիայի համար քիչ եր։ Ցու-

*) Ռուսական ցամաքային զորքը պատերազմում կորցրեց 41,000 մարդ սպանված և 87,000 անդամալույծ (հշվելով 148 հազար վիրավորներին և առողջացածներին)։ Դրան պիտի ավելացնել 12,000 վոչնչացած նավաստիներ։

սմիայից, մանավանդ «Պատյոմկինից» հետո 1904 թվի նոյեմբերի զեմսկի խորհրդակցության մասին այնպես եյին հիշում, ինչպես Պետրոս մեծից առաջ յեղած շրջանի։ Բոլորովին պարզ եր, վոր Ռուսաստանի վզին վաթաթել «Բուլիգինյան դումա»*) կարելի կլիներ, փորձ անելով նախ հեղափոխությունը ճնշել։ Պետերհոֆի խորհրդակցությունները հունիսի վերջին հ. տ. ցարի նախագահությամբ, այսպիսով առաջուց դատապարտված եյին «ակադեմիական» բնույթ կրելու և հետաքրքիր է միայն իրրև նմուշ մտքերի ու հայացքների այն մարդկանց, վորոնք այն ժամանակ դեռ կառավարում եյին յերկիրը։ Սկզբում այդ մարդիկ պարզ հավատում եյին իրենց «պոլիժենիայով» (որինագծով) պարգևատրել հավատարիմ հպատակներին և պատժել նրանց, ովքեր խռովարար եյին։ «Նռռավարարները»՝ բանվորները և ինտելիգենցիան, այդ նախնական նախագծով Դումայի ընտրությանը ձայն չունեյին.—Դումայի մեծամասնությունը պետք է կազմվեր կալվածատերերից (34%) և գյուղացիներից (43%), ընդ որում 28%-ը տրվում եր գործարանատերերին և ֆաբրիկանտներին։ Հատկապես ուշադրավ եր ընտրությունների հրեաների իսպառ հեռացնելը, վորը նրանց կարծիքով կրկնակի խռովարար և ատելի տարր եր։ Զարմանալի յե թվում այն համեմատական մեծամասնությունը, վորը տվել եր գյուղացիությանն։ Բայց այստեղ պետք է նկատի ունենալ, վոր 1902 թվի «անկարգությունների» չափով անկարգություններ գյուղը 1905 թվին դեռ չեր ունեցել։ Շարժումը տարածվել եր 62 գավառում (բուն ռուսական նահանգների, 14%-ը, առանց ծայրածայրերի). բայց դրանցում էլ պայքարի զորեղ ալիքն ձևն եր իշխում, այդ բատրակների ապստամբությունն եր, և վոչ գյուղացի-տնտեսատերերի։ Վերջիններս, բանվորների համեմատությամբ, արխի-հավատարիմ տարր եյին յերևում, նույնիսկ խոշոր կալվածատերերի խորհրդակցության անդամներն այդքան չեյին կարող գովաբանվել։ «Անհրաժեշտ է Դումայում գյուղացիների ներկայությունն ապահովել, իրրև ամենից պահպանողական և իր կարիքները ամենից լավ արտահայտելու ընդունակ,—ասում եր իշխան Վոլկոնսկին։

«Մենք բոլորս մի ցանկությունով ենք տոգորված.—թեթևացնել, վոր յերկիրը նոր կարգին անցնի առանց ցնցումների։ Այդ հանդստությունն յերաշխիքը մենք կտեսնենք մեր պաշտպանած բորսային ընտրությունների սիստեմում. Պահպանողական գյուղացիության դիմացկուն պատի վրա փոխարինել գյուղացիներին իրենց սեփական ուժերին, Դումայում տեղ ունենալու դժվարին պայքարում, անկարելի եր, նրանց պետք է ոգնել»,—պաշտպանում եր նրան կոմս Բոբրինսկին։

«Գյուղացիական տարրը յես համարում եմ Դումայի խաղաղ և արդյունավետ գործունեության համար ոգտակար։ Գյուղացիներին կարելի յե համեմատել այն արժեքավոր ծանրոցքի (բալլաստի) հետ, վորը նավին՝ Դումային—հավասարակշռություն կտա հասարակության մտքի տարերային հոսանքների և հրապույրների դեմ լինելիք պայքարում»,—նրանց յերկրորդում եր խոշոր չինովնիկ Շվանեբախը։

Իշխաններին, կոմսերին և գաղտնի խորհրդականներին շուտով դառն

*) Հասարակությունը այդպես անվանեց այդ նախագիծը, համաձայն այն հանձնաժողովի նախագահի, վորը մշակում եր այն, ներքին գործերի մինիստր Բուլիգինի։

հիասթափություն եր սպասում, բայց առայժմ կարող եյին մխիթարվել դիմացկուն պատով» և «արժենքավոր ծանրոցքով» քաղցացնելու այն դաւը հաբը, վորը պատմությունը ստիպեց նրանց այնուամենայնիվ կուլ տալ հենց այժմ.—և ինտելլիգենտներին և հրեաներին ստիպված եյին Դումա մտնելը թույլ տալ։

Ընտրական որենքի հակասեմիտական բնույթը շատ անհարմար եր այն րոպեին, յերբ սկսում եյին խաղաղության բանակցությունները Ցապոնիայի հետ ամերիկական նախագահ Ռուզվելտի միջնորդությունով։ Այդ թանկագին միջնորդությունը (մենք հիշում ենք, թե Ամերիկան ինչպիսի ծառայություն արավ Ռուսաստանին խաղաղությունը հաստատելիս), ըստ ինքյան հասկանալի չեղավ. Ռուզվելտի մոտ գնալու համար հարկավոր և ձեռք բերել մի տեսակ հանձնարարական նամակ Վիլհելմ 2-րդ կայսրից։ Իսկ Ռուզվելտը չեր կարող հաշվի չառնել Միացյալ Նահանգների հասարակական կարծիքը. իսկ վոչ մի տեղ հրեական ջարդերն այնպիսի ատելություն չեյին առաջ բերել, ինչպես Ամերիկայում եր։ Հիշատակել իրեն հակասեմիտական լինելու մասին այդ րոպեին ավելի քան անտեղի յեր. և Նիկոլայը հեզությամբ իր ատելությունը դեպի հրեաները ծածկեց մինչ «լավ որերը»։ Շուտով կտեսնենք, վոր նա ավելի քան մխիթարվեց։ Իսկ այն, վոր բուրժուական ինտելլիգենցիային ձայն տրվի, պնդում եյին նրա մինիստրները.—հանձինս կադետական փաստաբանների և պրոֆեսորների նրանք ուղիղ տեսնում եյին Ռուսաստանի ապագա պարլամենտում իրենց կլխավոր հենարանը ծայրահեղ ձախերի դեմ։ Ավելացնենք և այն, վոր ինտելիգենցիայի ամենաընտրովի մասին միայն իրավունք տրվեց. ընտրող լինելու համար Այրարքաղաքում պետք եր բնակարանի վարձ տալ առնվազն 1320 ռ. տարեկան, այսինքն յեկամուտ ունենալ 5—6 հազար ռուբլի վոսկով։ Վոչ միայն քաղաքային ուսուցիչները, այլ և գիմնազիաների ուսուցիչները, նույնիսկ համալսարանների կրտսեր դասատուները այդ կատեգորիայի մեջ չեյին մտնում, իսկ ուսանողները առաջուց եյին հանված, բացի դրանից նաև ցարիզմի ցեցզով, ընտրող լինելու համար պետք եր 25 տարեկանից փոքր չլինել։ Թե վորքան հետու յեր այդ ամենը «ընտրական ընդհանուր իրավունք» լինելուց (իսկ գավառական վիճակագրերի և գյուղատնտեսների և վոչ մի համագումար 1905 թվին ավելի պակաս չեր համաձայնվի.—«չորսպոչանին» այնքան ժողովրդականացել եր, վոր այդ բառը գիտեր և նույնիսկ հասկանում եր Նիկոլայը), ցույց կտան յերկու-յերեք թիվ. Պետերբուրգը իր 1 և կես միլիոն բնակչությունով ուներ 9 և կես հազար ընտրող, Մոսկվան—միլիոնից ավելի բնակիչներով՝ 11 հազար (Մոսկվա գետի մյուս ափի վաճառականությունն եր թիվն ավելացնողը), Ոդեսան 405 հազար բնակչով—7 հազար ընտրող եյին։

Բանվորները ձայնից զրկվեցին վերջնական նախագծում ել—այդ «խռովարարների» համար Ռուզվելտն էլ, փառք Աստծու, չմիջնորդեց, մինիստրներին ել նրանք պետք չեյին, Պրոլետարիատն այդ պատճառով ազատվեց այդ ընտրական որենքին նույնիսկ բոյկոտով պատասխանելուց։ Բայց պրոլետարական կուսակցությունը, ի դեմս բայշևիկների, անմիջապես բոյկոտի կոչ արավ և բնակչության այդ դասերին, վորոնք ընտրության ժամանակ ձայնի իրավունք ունեյին։ Դատելով այն բանով, թե ինչպես իր բուրժուազիան դիմավորում սոցիալ դեմոկրատական հռետորներին

1905 թվի աշնան ընտրություններին, յերբ խոսք եր լինում դուժայի մասին, կարելի յե կարծել, վոր քաղաքում բոյկոտը փառավոր պիտի լիներ։ Բայց «բուլիգինյան դուժան» թղթի վրա ՃԱց. հեղափոխությունը ժամանակ չտվեց նույնիսկ ընտրություններին անցնելու։

Այն ժամանակ, յերբ Նիկոլայը կալվածատերերի և աստիճանավորների հետ մշակում եր սահմանադրությունը, վորին վիճակված եր յերբեք չիրականանալ, ամեն իրավունքից զրկված բանվորը մշակում եր իրենը, վորը մարմնացավ կյանքի մեջ վոչ շուտով, բայց դրա փոխարեն ավելի դիմացկուն յերևաց։ 1905 թվի նույն ամառը Ռուսաստանում յերևաց բանվորների պատգամավորների առաջին խորհուրդը։

Բանվորական այդ սահմանադրությունը, հակառակ բուլիգինյանի, վոչ մի հանձնաժողովում չեր քննվել և նրա մասին կարծիք չեյին հարցրել վոչ մի հեղինակավոր եքսպերտ (փորձագետ) պրոֆեսորից (բուլիգինյան նախագծի քննության ժամանակ հրավիրված եր նշանավոր պատմաբան Կլյուչևսկին)։ Նա հենց կյանքից ածեց—գործադուլային կռվից, վոր բանվորները չհսկին)։ Նա հենց կյանքից ածեց—գործադուլային կռվից, վոր բանվորները մղում եյին ընդդեմ և սեփականության և տնտեսատերերի։

Ցես մի քանի անգամ հիշատակեցի, վոր 1905 թվի հունվարից սկսած գործադուլները, յեթե առնենք այն ժամանակվա Ռուսաստանի ամբողջ տարածությունը, վոչ մի տեղ վոչ մի րոպե չեյին դադարում։ Ավելի պարզ պատկերացնելու համար այդ տարված գործադուլի շարժման չափը, մեջ բերենք մի քանի թվական թվանշաններ։ Ահա նախ բանվորների թվի համեմատությունը—հազարներով հաշված—վորոնք գործադուլ եյին անում 1905 թվին Ռուսաստանում և առավելագույն այն բանվորների—նույնպես հազարներով հաշված—վորոնք տասնհինգ տարվա ընթացքում՝ 1894—1908,

	1894—1908	1905
Ռուսաստան (1905 թ.)	660.	2,833.
Միացյալ Նահանգներ	527.	
Գերմանիա	438.	
Ֆրանսիա		

Մյուս յերկրներից և վոչ մեկում այդ շրջանի վոչ մի տարում գործադուլավորների քանակը չի հասել նույնիսկ մի հատորիկ ռուս բանվորների, վորոնք 1905 թվին գործադուլ են արել։ Իսկ վորովհետև ռուս պրոլետարիատը իր թվով յեթե ՃԱում և՛ ամերիկական, և՛ գերմանական, և՛ նույնիսկ ֆրանսիական պրոլետարիատից, ուստի հենց այդ համեմատությունից էլ կարելի յե յեզրակացնել, վոր ամեն մի ռուսական բանվոր այդ տարում գործադուլ և արել մեկից ավելի անգամ։ Ցեվ իրավ, յեթե մենք ռուսական 1905 թվի բանվորների քանակը ընդունենք 100, գործադուլ անողների քանակը կլինի 164։

Այդ հնարավորությունն և տալիս 1905 թվի շարժումը համեմատելու նախորդ տարիների հետ։ Այդ տարիներից և վոչ մեկում գործադուլավորների քանակը թվով 5 տոկոսից չեր անցնում, միայն 1903 թվին այդ թիվը հազիվ հաղ այդ նորմայից բարձրացավ (5,1)։ 1905 թվին շարժումը, այդպիսով, առաջ եր գնում յերեսուն յեվ յերեք անգամ «խիտ», քան յերբևե առաջ։

Հետո, յերբ շարժման ամփոփումները կատնք, մենք կքննենք ավելի ժոռից, թե ում և ինչպես եր գործադուլ անում։ Այն ժամանակ մենք կտեսնենք, վոր կային բանվորների կատեգորիաներ, վորոնք նույնիսկ 1905 թվին

վոչ մի անգամ գործադուլ չարին։ Բայց ինչ անմիջական արդյունքներ ստացան նրանք, ովքեր պայքար եյին մղում։

Ամենից առաջ, հունվարի 9-ից հետո ըստինքյան թվում և, վոր Ռուսաստանում ամեն մի գործադուլ բաղաքական պայքարի արտացոլում յե, բանվորների բողոք միապետության դեմ։ Ի հարկե իրրև դասակարգային սուր թշնամության արտահայտության ամեն մի գործադուլ քաղաքական փաստ եր.—այդ դեռ Ժելյաբովն եր նկատել։ Բայց այդպիսին եր նա ոբյեկտիվ տեսակետից, անկախ իրենց՝ բանվորների գիտակցությունից և այդ ոբյեկտիվ կողմը Ժելյաբովի որերում բանվորներից վոչ վոք չեր նկատում։ 1905 թվին, հասկանալի յե, վոր այլ կերպ յեր, բայց և այնպես այդ տարվա գործադուլների կիսից ավելին այնուամենայնիվ առաջ եր քաշում տնտեսական լոզունգներ։ Գործադուլ անողների ընդհանուր թվից տնտեսական լոզունգներով գործադուլ եր արել 1,439 հազար բանվոր, քաղաքականով՝ 1,434 հազարը։

Նույնիսկ շարժմանը մասնակցող բանվորական մասսայի մի մասն իր բոլոր հարվածները չեր կենտրոնացրել միապետության դեմ։ Նա պայքարում եր և ցարի և տնտեսատերերի դեմ,—և տնտեսատիրոջ դեմ ավելի շատ, քան ցարի, վորովհետև միայն քաղաքական լոզունգներով գործադուլները շատ քիչ եյին և ամեն մի քաղաքական գործադուլ առաջ եր քաշում տնտեսական պահանջներ, թե ինչ տրամադրություն ունեյին բանվորական մասսայի յետին շարքերը, նրա նույնիսկ այն խմբերը, վորոնք իսկապես հասում ու ինքնագոհ կերպով եյին գործադուլ անում, այդ ավելի լավ և նկատել 1905 թվի ամառվա ամենախոշոր գործադուլներից մեկի ղեկավարի բառերով, Իվանովո-Վոզնեսենսկի մանածագործների նշանավոր գործադուլի, վորը ընդգրկել եր 50 հազարից ավելի մարդ և վորը դիմացավ յերկու ամիս՝ մայիսից—հունիս։ Իր տեսողության տեսակետից այդ ամենազարմանալին եր, վոր յերբևե տեսել եր Ռուսաստանը։

Ցավ ահա, ինչ և պատմում սակայն այդ ընկերը.

«Սկզբներում հեռուներից ճառերում վոչ միայն վճռական ու հանդուգն կոչեր չկային դինված պայքարի հրավիրող, այլ և նկատվում եր ձրգտում հեղափոխության սուր հարցերին զգուշ մոտենալ։ Այդ նրանից եր առաջ գալիս, վոր գործադուլավորների մեծ մասի, ավելի հետամնաց տարրերի տրամադրությունը բացասական եր այդ բոլոր հարցերի նկատմամբ։ Այդ նրանից եր յերևում, վոր յերբ ընկերները փորձ եյին անում այդ հարցերը շոշափելու, ժողովի մասնակցողների մեծամասնության աղմկալի տրամադրություն եր ստեղծվում, ամեն կողմից լսվում եյին աղաղակներ՝ «բավական է»։ Դրա մասին պետք չե։ Մենք խաղաղ կռիվ ենք ուզում և վոչ հեղափոխություն, մերը տնտեսական գործադուլ ե» ասյլն։

Մի անգամ Խ. Ֆ. Կուկշինը («Գոգոլ») կարճ ճառից հետո ամբիոնից դոչեց՝ «կորչի միապետությունը»։ Դրանից հետո ամբոխը այնպես բարձր աղմկեց և բողոքում եր դրա դեմ, վոր ինտելլիգենտ ընկերներից մեկը բավական աշխատանք գործադրեց ամբոխին հանգստացնելու համար։ Այդ դեպքից հետո մեզ համար բավական պարզվեց, վոր գործադուլավորներին դեռ պետք է նախապատրաստել, համապատասխան ձևով կրթել քաղաքական տեսակետից և վոր այդ կրթությանը պետք է մոտենալ հմտությամբ և զգույշ։ Այդ կրթությունը կատարվում եր գործադուլ անողների ամեն որ

տեղի ունեցող ընդհանուր ժողովներում և Տալկան *) դարձավ, բառի բուն մտքով, «գործադուլ անող բանվորների քաղաքական կրթության համալսարան», վորը ինտենսիվ աշխատելով, իր այդ գործը մեծ հաջողությունով եր տանում։

Մինչդեռ Իվանովո-Վոզնեսենսկու գործադուլն անկասկած բաղաքական տիպին եր պատկանում։ Նա պահանջ եր դրել ժամուլի, միությունների և ժողովների ազատության, անձի և բնակարանի անձեռնմխելիության և նույնիսկ սահմանադիր ժողովի հրավիրելու ընդհանուր, հավասար և այլն ընտրական իրավունքի հիմքով։ Ով կզարմանա, թե ինչպես այդ պայմաններում կարող եյին բանվորները հուզվել, լսելով «կորչի միապետությունը», նրան մենք կհիշեցնենք Գապոնի պետիցիան, ուր այդ բոլոր քաղաքական պահանջները նույնպես կային, իսկ բանվորները այնուամենայնիվ այդ պետիցիայով գնում եյին ցարի մոտ։ Այն տրամադրությունը, վորից Պետերբուրգի պրոլետարիատը ազատվել եր դեռ 1905 թվի հունվարին, դրանից Ռուսաստանում ազատվում եյին շատ դանդաղ։ Ցերկու և կես ամսից հետո նաև Իվանովո-Վոզնեսենսկու բանվորները, նույն ընկերի վկայությունով, «բոլորովին անճանաչելի եյին դարձել». բայց նրանցից հետո յել կրթության նույն աշխատանքը ստիպված եյին և ուրիշների վրա գործադրել։

Վոր իվանովո-վոզնեսենցիները «վերջիններից» չեյին, ցույց և տալիս և այն դասակարգային սահմանադրությունները, վորը նրանք իրենք իրենց տվին։ Գործադուլ անող բանվորները, ի հարկե, պատգամավորներ ընտրեցին բանակցելու համար իշխանությունների և տնտեսատերերի հետ.—այդ սովորական բան եր։ Բայց և սովորաբար ամեն մի գործարան ուներ իր պատգամավորները և բանակցություններն առանձին եր վարում։ Նույն բանին եյին մղում այստեղ բանվորներին գործարանի տեսչությունը և տնտեսատերերը։ Վերջիններից ամեն մեկը հայտարարում եր.—Ցես պատրաստ եմ խոսելու «իմ» բանվորների հետ, իսկ ուրիշների հետ գործ չունեմ։ Բայց իվանովո-վոզնեսենցիները լավ եյին ըմբռնել բուրժուազիայի սիրած գործադուլը ճեղքելու այդ ժանյովը։ Նրանք ընտրեցին 421 լիազորներ—մոտ 100 մարդ—գործադուլ անող ամբողջ մասսայից և պահանջեցին, վոր բոլոր բանակցությունները վարվեն բոլորի հետ, դասակարգ-դասակարգի հետ։ Ցավ բանվորները այդ այնպիսի միահամուռ պաշտպանեցին, վոր յերբ գործատերերից մեկը նույնիսկ անձնատուր յեղավ և «իրայիններին» առաջարկեց գործի կենալ շատ շահավետ պայմաններով, այդ միանձնյա անձնատուր լինելը առաջին րոպեին մերժվեց։

Այսպես Ռուսաստանում ծագեց 1905 թ. մայիսի 13-ի և 15-ի մեջ հ. տ. առաջին բանվորների պատգամավորների խորհուրդը։ Առաջին անգամ բանվորները հրապարակ յեյան ինչպես «դասակարգ իրենց համար» արդեն բոլորովին անկախ վորևե «դեմոկրատների» ազդեցությունից, ինչպես այդ կար գապոնյանների վերաբերմամբ։ Ցավ սրան միանգամայն համաձայն, զուտ դասակարգին ուրժամյա բանվորական որի պահանջը բանվորների պատգամավորների առաջին խորհուրդը միաձայն ընդունեց։

Ըստ ինքյան հասկանալի յե, վոր այդ պահանջը լսվում եր վոչ միա-

*) Դեռ, վորի ափին հավաքվում եյին բանվորները։

այն Իվանովո-Վոզնեսենսկում, 1905 թվի գործադուլներում այդ սովորական և դառնում։ Ավելի հետաքրքիրն այն է, որ մի շարք դեպքերում այդ տարվա գործադուլի փոթորկալի հեղեղը ձեռնարկատերերին հասցնում էր մինչև այդ կետի զիջումը.—բանվորներն այդ լոզունգն իրագործելուն հասնում էին։ Գարնանը, ամառը և աշնան սկզբին 8 ժամյա բանվորական որը պայքարով ձեռք բերին Կիևի շրջանի շաքարի գործարանների, Սամարայի տպարանների, զինվորա-բժշկական գործարանի գործիքների արհեստանոցի և Պետերբուրգի փամփուշտի գործարանի, պետական թղթեր պատրաստելու, եքսպեդիցիայի մեքենական բաժանմունքի (այժմ Гознак) մի քանի կահավորության պատրաստող գործարանների և յուղի գործարանների բանվորները, Թիֆլիզի տրամվայի բանվորները, Հեռավոր Արևելքի հանքափորները և Բալթի նավթահորերի տարաալչիկները։ Թող վոր միքանի դեպքերում գործը ձեռնարկատերերի 8 ժամյա որ ժամցնելու խոստումով էլ վերջացավ. այդ «սկզբունքային» զիջումը պրոլետարիատի համար հաջողություն էր։ Այն բանվորների շրջանը, վորոնք ձեռք բերին գրեթե 8 ժամյա, 8 և կես և 9 ժամյա որ, էլ ավելի լայն էր. 8 և կես ժամյա որ ձեռք բերից մանածագործների մի մասը (Մորոզովի գործարանն էր) և Պետերբուրգի նավահանգստի կեռով ծանրություններ քաշողները, 9 ժամյա որ—յերկաթուղագծի արհեստանոցների բանվորները, Վարշավայի, Բիրժյանսկի գործարանների և զավոդների բանվորները, Մինսկի տպարանները։ Վերջապես 10 ժամյա որ ձեռք բերին գործարանային բանվորների մեծ մասը և Մոսկվայի հացթուխները։

Յեթե հիշենք, թե բանվոր դասակարգի համար ինչպիսի հաջողություն էր համարվում 10 ժամյա որ հաստատելը 1840 թվին անգլիական գործարաններում, մենք կտանանք այդ ասպարիզում 1905 թվի ռուսական բանվորների նվաճումների մասշտաբը։ Ինչպես և առաջ այդ ասպարիզում ձեռնարկատերերը ավելի զիջող էին. աշխատավարձի ասպարիզում նրանք ավելի համառ էին։ Բայց և այնպես բավական զգալի զիջումների հասան բանվորները և այդտեղ։ Նոր հիշատակած Մոսկվայի հացթուխները ապրիլին ձեռք բերին—այդ գործադուլը հարևանցի հիշվեց վերը, «լուսավորական ընկերությունների խռովության» առթիվ—գնահատումների հավելում 50 տոկոսով։ Նոր նկարագրված Իվանովո-Վոզնեսենսկու գործադուլը համարվում էր անհաջող, և իրոք, հետևանքները չէին արդարացնում բանվորների նրա վրա գործադրած ահագին յեռանդը, այնուամենայնիվ աշխատավարձը 15—20 տոկոսով ավելացնելուն նրանք հասան. բացի այդ, գործարաններից մեկը համաձայնեց մացնել «գործարանային սահմանադրություն».—բանվորներ ընդունելը և արձակելը տրվեց մի հանձնաժողովի, կազմված վարչության և բանվորների ներկայացուցիչներից պարիտետի հիմքերով։ Շյուսկի գավառում ընդհանրապես աշխատավարձն ավելացավ 10 տոկոսով ջուլհակների և ջուլհակուհիների համար։ Մոսկվայում Պրոխորովյան կտորեղենի գործարաններում միջին ամսական աշխատավարձը 14 ռուբլուց (1904 թիվ. մայիս) բարձրացավ մինչև 16 ռ. 80 կ. (1905 թ. մարտ). 17 ռ. 73 կոպ. (1905 թ. ոգոստոս) և 19 ռ. 54 կ. (նույն թվի նոյեմբերին). բայց ամենից շատ ոգտվեցին, իհարկե, բանվորների վորակյալ խմբերը. Պուտիլովի գործարանում աշխատավարձը բարձրացավ՝ ձուլողների համար 157 կոպեկից (որը) մինչև 184 կ., մեքենայական արհեստանոցի բանվորների համար

197-ից 225-ի, կաթսայագործների համաքարության համար 143-ից մինչև 176, թնդանոթագործների համաքարության համար 220 ից մինչև 252, գործիքների արհեստանոցի համար 246-ից մինչև 299։ Այստեղ աշխատավարձի բարձրացնելու առավելագույն նորման 17.7 տոկոս էր. մեքենայական արհեստանոցում հավելումը միայն 14,2 տոկոս յեղավ և այլն։ Բայց գնահատումը ամեն տեղ բարձրացավ և այդ բանվորական որը մինչև 10 ժամ իջեցնելու հետ։

Բանվոր դասակարգի այս տնտեսական նվաճումները ինտելիգենցիայի քիչ ուշադրության էին արժանանում. նա շատ էր զբաղված զուտ քաղաքական պայքարով և այս հայեցակետով էլ նայում էր ամեն բանի վրա։ Մինչդեռ փաստը ահագին նշանակություն ուներ քաղաքական պայքարի ընթացքի և հետևանքների համար։ Միապետության տապալումը անհասկանալի չէր առանց զինված ապստամբության։ Կառավարությունը—դա ամենից առաջ զինված մարդկանց խմբեր է—ատում էր ենգելսը. կառավարության խմբերին չհակադրելով իր խմբերը, ցարական բանակին—հեղափոխական բանակը, ավելորդ էր խոսել վոչ միայն հաղթության, այլ նույնիսկ քիչ թե շատ լուրջ պայքարի մասին։ Իսկ բանվորները համոզմունք կազմեցին, վոր հետո 1906 թվի գարնանը միաժամ կերպով արտահայտեց մի քիչ գիտակից պրոլետարիատը, հենց այդ քիչ գիտակից լինելու համար առաջին պետական դումայի անդամների մեջը ընկած, թե «գործադուլով ամեն բան չի կարելի յե հասնել»։ Բայց յեթե գործադուլն այդպիսի հրաշագործ ուժ էլ չէ, նրանից ամեն բան կարելի յե հասնել.—լինչի համար է զինված ապստամբությունը, այն էլ հանուն քաղաքական լոզունգների, վորը դեռ բանվորական մասսայի բոլոր շերտերը չեն յեռացրել։ Զինված ապստամբության մասին ասված ճառերը սկսեցին ֆրազներ յերևալ, վորն ասվում էր «այնպես», վոր վախեցնեն։ Մինչդեռ այդ միակ-իրական, կենսական ծրագիրն էր։

Ցավ կարծես դիտմամբ «գործադուլիզմի» տեսությունը շուտով կարող եր փառավոր հաջողությունով հպարտանալ. հենց առաջին գործադուլը միապետությունից կորզեց առաջին սկզբունքային զիջումը։

1905 թվի հեղափոխության և վոչ մի դեպքի համար այն այնքան հարմար չէ «տարերային» անունը, վորքան հոկտեմբերյան հեղափոխության համար։*) Առանց վորևե չափազանցության, ընդամենը մի ամիս առաջ հեղափոխական կազմակերպություններից և վոչ մեկը չէր մտածում, վոր մենք գտնվում ենք բանվորական շարժման ահագին, նոր ալիքի առաջ, վորի գագաթը հունվարի 9-ի ալիքի գագաթից շատ և բարձր։ Կլանվելով, ինչպես արդեն ասացինք, ընթացիկ քաղաքական պայքարով, այդ կազմակերպությունները իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացրել էին, ինչպես

*) Վորովհետև «տարերային գործադուլ» արտահայտությունը իր բոլոր, թվացող, պարզությունով այնուամենայնիվ թյուրիմացություններ է առաջ բերում և միքանի բնկերներ այդ տերմինը հականում են այնպես, վոր իբր թե 1905 թվի գործադուլը պատահականություն եր. հեղինակը պարտք է համարում ընդգծելու, վոր «տարերային պատմության կանոնություն եր. հեղինակը պարտք է համարում ընդգծելու, վոր «տարերային պատմության մեջ նշանակում է «պլանաչափ զեկավարությունից զուրկ» և վոչ ամենևին «պատահական»։ Հոկտեմբերյան հեղափոխությունը յերկրից անհրաժեշտությունով ծագից նախընթաց բանվորական ամբողջ շարժումից, բայց ծրագրով կազմակերպված և կատարված չեր։ Դրանում նրա զանազանությունը վոչ միայն 1917 թվի հոկտեմբերյան հեղափոխությունից, այլ նաև 1905 թվի դեկտեմբերյան ապստամբությունից։

թվում եր, առաջիկա «Բուլիգինյան դումայի» ընտրությունների և այդ ընտրությունները բոյկոտի ենթարկելու վրա։ Իսկ վորովհետև պարզ եր, վոր բոյկոտը կըհաջողվի, ամենալավ դեպքում, Խաղաքաղաքում, վոր պյուռը կընորի թե ի դեմս կալվածատերի և թե պյուռացու, ուստի և պրոլետարիատի մասսայական յելույթը դումայի գումարման ժամանակ չափազանց վատ եր, վորը ենթադրվում եր գումարել 1906 թ. հունվարի 10-ին հ. տ., կարծես դիտմամբ այդ հաջորդ որն եր այն «կարմիր կիրակիայի» տարեդարձի, վորը ռուս բանվորը չեր կարող չհիշել։ Մնացող յերեք-չորս ամիսը, թվում եր, վոր կատարյալ հնարավորություն եյին տալիս և հոգուտ բոյկոտի և հոգուտ բանվորների քաղաքական նոր յելույթի։

Այդ ագիտացիան հենց մի անգամից կարող եր «հեղափոխական այն նոր հնարավորությունից» սկսել իր գործը, վորը ստեղծվել եր շնորհիվ Նիկոլայ 2-րդի մինիստրների ամբոխավարական խաղերի բուրժուական ինտելիգենցիայի հետ, վորոնց մասին վերը խոսք և յեղել արդեն։ Կենդրոնացնելով ամբողջ դիմադրական ուժը բանվորական շարժման պայքարի դեմ, Նիկոլայի կառավարությունը զեմեցների ձախ թևին զիջում անելով «Բուլիգինյան դումայով», վորոշից զիջել նաև ծայրահեղ աջ, քաղաքային իտելիգենցիային, ի դեմս պրոֆեսորական, համալսարանական ավտոնոմիայով։ Պրոֆեսորան այդ ավտոնոմիային վաղուց եր ձգտում։ Գործի եյությանը նայելով, այստեղ վեճը շատ մոտ եր «իշխանություն ունեցող զեմստվոյի» հարցին. տեղական գործերը տեղական պաշտոնյաների վարչությունից առնել լինելու հարցին։ Զեմեցները աշխատում եյին ձեռք բերել այն, վոր իրենց նահանգապետը լինի իրենցը, զեմսկի նահանգապետ և վոչ թե Պետերբուրգից ուղարկված «բյուրոկրատ»։ Պրոֆեսորները ցանկանում եյին, վոր համալսարանը կառավարե իրենց, ընտրովի ռեկտորը և վոչ թե Պետերբուրգից նշանակված պաշտոնյան, ուսումնական շրջանի հոգաբարձուն։ Վոչ նրանք, վոչ մյուսները՝ վոչ զեմեցները և վոչ պրոֆեսորները այդ դեպքում չեյին ել մտածում միապետությունը ժխտել, միայն թե իրենք անմիջապես յենթարկվեյին կենդրոնին և վոչ տեղական «բյուրոկրատիային»։ Ինչպես բոլոր քաղաքական սահմանափակ մարդկանց, նրանց ել թվում եր, վոր համալսարանի բոլոր անկարգությունները առաջ են գալիս նրանից, վոր պրոֆեսորները «իրենց տան տերը չեն»։ Տվեք նրանց իշխանություն և բարձրագույն դպրոցում կըթագավորե «խաղաղություն, հանգստություն ու ստվածային վողորմություն»։ Ցնթե զեմստվոն քննենք իրը զուտ-կալվածատիրական հիմնարկություն, իսկ բարձրագույն դպրոցն իրը զուտ-գյուղական բուրժուական և զեմեցները և պրոֆեսորները վորոշ չափով իրավացի եյին. տեղական հողատերերից ընտրվածն իրենց մեջ կունենար ավելի հեղինակություն, քան Պետերբուրգից ուղարկված աստիճանավորը. բուրժուական պրոֆեսորը կարող եր ավելի աղդել բուրժուական յերիտասարդության վրա, քան յերիտասարդությանը ատելի «վոստիկանությունը»՝ լինելով այդ ի դեմս ինսպեկտորի, թե շրջանի հոգաբարձուի։

Հետագայում, խաղաղ ժամանակ «ավտոնոմիան» հենց այդ ուղղությամբ միապետությանը ծառայություններ արավ։ Բայց 1905 թվին բուրժուական յերիտասարդությանն ել մասսայական շարժումը գրավել ու վոգևորել եր։ Նրա գլխավոր շրջանները այդ որերում պատկանում եյին յենթ վոչ սոցիալ-դեմոկրատներին (մեծ մասով մենշևիկներին), ապա սոցիալիստ-

հեղափոխականներին։ Միապետության համար, վոչ նրանցից, վոչ սրանցից մեծ շահ չեր լինի։ Նա հաշվի եր առել, վոր բարձրագույն դպրոցում իշխանությունը հանձնե ապագա կադետներին և հոկտեմբերյաններին, իսկ համալսարանական ավտոնոմիան եսդեկների և եսերների ձեռքն անցավ։ 1905 թ. արձակուրդից հետո հավաքված ուսանողությունը վճռեց գործադուլը չշարունակել, վորը նա չեր դադարեցրել հունվարի 9-ից սկսած, բայց համալսարանի աուդիտորիաները գործադրել հեղափոխական շարժման համար։ Բոլոր բարձրագույն դպրոցներում սկսվեցին հաղարավոր միտինգներ, վոր վոստիկանությունը չեր կարող խանգարել, վորովհետև «ավտոնոմ» դպրոցը մտնելու նա իրավունք չուներ առանց տեղական իշխանությունների հրավերի։ Բայց սրանք իրենք ել ուրախ կլինեյին հրավիրել «քաղաքապահին», սակայն ուսանողության տրամադրությունը չեր թույլ տալիս այդ մասին մտածել։ Առաջին իսկ միտինգից հետո, վորտեղ յերեք հազար մարդ կար, Մոսկվայի համալսարանի ռեկտոր Տրուբեցկոյն ուղում եր բողոքել և համալսարանը փակել, բայց ալիքները նրա գլխի վրայից անցան։ Շուտով նաև պրոֆեսորական «ակադեմական» միությունը («արհեստակցական-քաղաքական» դրությունների պատճառով մեկը.—տես վերը) պարտավոր եր ընդունել բացձրագույն դպրոցի պահանջը մասին միտինգը բնական յերևույթ։ Հեղափոխությունը իր համար ատելի ժողովրդական ամբոխն եր նվաճում։

Իրենք ձեռք բերողները, կրկնում եմ, չեյին կարծում, թե վեր ատելիք շաբաթ առաջ։ Ոգոստոսի վերջին (հ. տ.) նորից գործադուլ բռնկվեց Բագվում նավթահանքերում. պատճառը դեռ 1904 թվի վերջին նավթարդյունաբերողների իրենց տված խոստումը չկատարելն եր։ Գործադուլի դեմ պայքարելու համար այս անգամ գործի դրին, այդ որերին դեռ նոր հաստատված, մի միջոց, վորը ապագայում լայն ժողովրդականություն ստացավ, բանվորների դեմ հանվեցին վարչության կազմակերպած սև հարյուրակայինները։ «Մանր բանների» համար այդ միջոցը առաջ ել եր գործադրվում. կուբսկում դեռ գարնանը աշակերտների ցույցի դեմ, Նիժնի-Նովգորոդում ամառը ինտելիգենցիայի և բանվորների դեմ, Կովկասյան իրականության մեջ գործը զինված կոտորածի բնույթ ստացավ, Բագուն քաղաքացիական կռվի բեմ դարձավ, վորի ընթացքում այրվեց Բալախանի-Սաբունչի նավթարդյունաբերական ամբողջ տարածությունը։ Առաջին հետևանքը սուր նավթայինն սովն եր, նավթը թանգացավ 200-300 տոկոսով։ Հետևյալը՝ կենդրոնական արդյունաբերական շրջանի այն ձեռնարկություններում սրվող խանգարումը, վորոնք նավթով եյին աշխատում։ Ջախջախ ե մոռանալ, վոր XX-րդ դարի առաջին տարիների ճգնաժամը դեռ չեր անցել. արդյունաբերական նոր վերելքը սկսվեց արդեն միայն 1909 թվին։ Գործարանները և ֆաբրիկանները սկսվեցին փակվել անգործությունը սաստկանալ, բանվորական մասսայի մեջ ել սաստկացավ հուզմունքը։

Այդ շրկացած մթնոլորտն սկսեցին ընկնել կարծես դիտմամբ, մեկը մյուսի յետևից, սեպտեմբերի յերկրորդ կեսին (հ. տ.) բռնկվող մասնավոր գործադուլներ։ Ուշադրության արժանի յե այն, վոր հակառակ քաղքենի

տեսության «ցար-սովի» մասին, իբր սա հեղափոխության առաջնորդն է— գործադուլ եյին անում վոչ ամենասոված և ամենահետամնաց պրոլետարիատի խմբերը, ընդհակառակը յելնում եյին արդեն փառավոր գործադուլային անցյալով շերտերը, վորոնք խոշոր նվաճումներ ունեյին, վորոնց նյութական դրությունը չեր վատացել, այլ համեմատաբար լավացել եր, բայց վորոնք վոչ մի կերպ չեյին կարող բավարարված համարվել։ Այստեղ պետք է հիշել, վոր աշխատավարձի հավելումը նույնիսկ ամենից ավելի շահած բանվորների համար 20 տոկոսից չեր անցնում, իսկ կյանքը թանգացել եր 25-30 տոկոսով *) Գործադուլային պայքարը, իրապես, հաղիվ հազ ոդնեց բանվորին կենսական այն մակերևույթի վրա հնալ, վորը նա ձեռք եր բերել իր համար XX-րդ դարի սկզբին։

Յեթե նա չեր ուզում իջնի, նա պետք է շարունակեր պայքարել՝ գործադուլ անել ու գործադուլ անել։ Նրանք վորոնց առաջվա գործադուլները հաջողվել եյին, բնականաբար ավելի վստահ եյին գնում այդ ճանապարհով և հեշտ եյին սկսում։ Մոսկվայի տպագրիչները արդեն 1902 թվին աշխատավարձի խոշոր հավելում եյին ձեռք բերել և այդ ժամանակից սկսած ունեյին իրենց անլեգալ—կազմակերպություն։ Պատերազմական թանդությունը (չմոռանանք, վոր խաղաղությունը նոր եր կնքվել և պատերազմի ծանրությունը ներքին շուկայում դեռ ամբողջ ուժով զգացվում եր), զրեթե զրոյի հասցրեց նրանց բոլոր նախկին նվաճումները։ Հարկավոր եր գործադուլը շարունակել։ Անլեգալ կազմակերպությունը—վոր այդ ժամանակ մենշևիկները գրավել եյին—աշխատում եր յելույթը միշտ ձգձգել մինչև ելի այն որհասական որը՝ դումայի գումարումը։ Բայց «անգիտակից բանվորները», ինչպես գրում եր բալշևիկյան «Պրոլետար» թերթի Մոսկվայի Բյու

թի վարչությունը հայտարարում եր, բանվորները փողոց եյին դուրս գալիս դաղարեցնելով աշխատանքը՝ բոլոր գործադուլավորների հետ համերաշխ լինելու համար։ Կազակների մի զորամաս հարձակվում է բազմության վրա։ Բանվորները տուն են սպրդում, բարձրանում են տանիքը, գինվորների վրա քարեր են շպրտում։ Սկսվում է տան կատարյալ պաշարումը։ Զորքը հրացան է պարպում բանվորների վրա, կորվում են ամեն տեսակ հաղորդակցությունները։ Գրենադերների յերկու ջոկատ (рота) թիկունքի շարժում են կատարում, յեռևի կողմից տուն են մտնում և գրավում են թշնամու դիրքը։ Բանտարկում են 192 վարպետացու, որոնցից 8-ը վիրավորվում է, յերկու բանվոր սպանվում. վոստիկանության և զորքի կողմից վիրավորներ կան. մահացու վիրավորված է ժանդարմի ջոկատապետը (ротмистр)»։

Այդ շարժումը իրենց աչքով տեսնողները չեն մոռանա մի գիծ՝ ամբոխի հետզհետե ավելացող անվախությունը։ Առաջ հենց միայն՝ «կազակները, դրագուններըը» աղաղակը լսելուն պես ցրվող, այժմ նա հարձակվում է կազակների և դրագունների վրա։ Այժմ ամբոխը չե նրանցից վախենում, այլ նրանք ամբոխից. մարակները և նույնիսկ սրերն ու նիզակները արդեն վոչ մի ազդեցություն չեն անում. ավելի ու ավելի հաճախ են լսվում արձակվող հրացանների ձայները և զգացվում ե, վոր շուտով թնդանոթները կըսկըսեն խոսել։

Հեղափոխություն դեռ չկար վոչ յոզունգներում, վոչ արարքներում, վորքան այդ յոզունգները տարերայնորեն առաջ եյին գալիս, արարքները տարերայնորեն կատարվում եյին մասսայի կողմից։ Բայց տրամադրությունն արդեն հեղափոխական եր։ Մասսան դեռ հեղափոխություն չեր անում և չեր գիտակցում, վոր ինքը նրա շեմքին ե, բայց նա արդեն պատրաստ եր այդ անելու։

Բայց շարժումը դեռ տեղական եր միայն Մոսկվայի։ «Համակրելով» Մոսկվայի գրաշարներին, գործադուլ արին Պետերբուրգինը, բայց այդ պարզ ցույց եր, վորը մի յերկու որից հետո վերջացավ։ Յերբ Լենինը գրում եր իր հոդվածը, տպարանական գործադուլը, իսկապես անցյալում յեր։ Մինչև հոկտեմբերի 5-ը (հ. տ.). Թերթերը նշում եյին միայն մի շարք միտինգներ բարձրագույն դպրոցներում, ցույցեր Մոսկվայի առաջին ընտրովի բեկտոր հանկարծ վախճանված Ս. Ն. Տրուբիցկոյի թաղման առթիվ, աշակերտների ցույցեր ևայլն։ Այդ բոլորը այն ժամանակներում շատ սովորական եր և առանձին նորություն չեր։ Յեվ միայն հոկտեմբերի 6-ի Մոսկվայից տըրված համառոտ հեռագիրը, շատ սովորական տոնով հայտնում եր ինչ վոր «նոր բան». «Յերեկոյան գործադուլ արին Մոսկվա-կազան մեքենավարների, ժամը յերկուսից սկսած գործադուլ արին Մոսկվա-կազան յերկաթուղագծի արհեստանոցները»։

Հավիվ թե վորևե մեկը կարդալով այդ չոր ու ցամաք տեղեկությունը, գդար, վոր սկսվում է համառուսական գործադուլը։ Մինչդեռ այդ այդպես յեր։ Մոսկվայի գործադուլը սոսկաց ամբողջ յերկրին գործադուլ անելու այն վայրկյանից, յերբ գործադուլի մեջ մտան յերկաթուղայինները։

Յերկաթուղայինները դարձյալ այն խմբերից մեկն եյին, վորոնք տարվա սկզբին հաջողությունով տարան գործադուլի գործը։ Փետրվարին, ինչպես հիշում ենք, նրանք ձեռք բերին արհեստանոցներում 9 ժամյա որ և «գործարանային սահմանադրություն»՝ բանվորների ներկայացուցիչների մասնակցությունը բանվորներ ընդունելիս և արձակելիս։ Հետևյալ պայքարը, վորը աշխատավարձի համար եր, շատ սուր կտրվեց յերկաթուղագծի իշխանության կողմից, վորը հայտարարեց ճանապարհները զորաժողովի յենթարկված (այն ժամանակ դեռ պատերազմը շարունակվում եր. այդ հենց Մուկդենի որերին եր)։ Այժմ պատերազմը վերջացել եր, իշխանությունը զգում եր, վոր վորևե զիջում պետք է անել և թույլ տվեց Պետերբուրգում սեպտեմբերի վերջին յերկաթուղագծի ծառայողների և բանվորների պատգամավորական համագումար կեսաթոշակային կանոնադրությունը վերաքննելու հավետ նպատակի համար։ Հազիվ թե ճանապարհների հաղորդակցության մինիստրությունը այնքան միամիտ լիներ, վոր կարծեր թե գործը դրանով ել կսահմանափակվի. համագումարի ծրագիրը պարզ կերպով հնարավոր չափով կրճատել եյին, վոր իշխանության ձեռքը ազատ լինի և հնարավորություն ունենա ուզած րոպեին բղավելու՝ «այդ թույլ չի տրված»։ Իշխանությունը ունենա ուզած րոպեին բղավելու՝ «այդ թույլ չի տրված»։ Իշխանության նախատեսածն արդարացավ. համագումարն իհարկե պահանջեց և 8-ժամյա բանվորական որ և սահմանադիր ժողով և լրիվ ամնիստիա—մի խոսքով այն ամենը, ինչ սովորաբար պահանջում եյին «արհեստակցական-քաղաքական» միությունները, վորոնց թվին եր պատկանում և յերկաթուղագծինը։ Արդարացավ իշխանության և մյուս նախատեսածը, վոր թույլ եր տվել համագումարը իրը «ժողովիչ սպեղանի». պատգամավորները, վորոնց թվում ծառայողները գերակշռող եյին, գործնականում ավելի համեստ յերեվացին, քան տեսականում և գործադուլի դեմ արտահայտվեցին։

Բայց այստեղ պարզվեց, վոր կարևորն այն չե, թե համագումարն ինչ և անում Պետերում, այլ այն, թե ինչ են մտածում Պետերում։ Յերկաթուղայինների համար այդ յուրատեսակ սահմանադիր ժողով եր։ Մասսան հագեցնելու պարապմունքներն իրեն պատկերացնում եր ամենահեղափոխական գույներով, նրան թվում եր, վոր հենց այն է դեմոկրատիկ հանրապետություն է հրատարակելու։ Յեվ յերբ լուր տարածվեց, վոր համագումարը ցրել են, իսկ պատգամավորներին բանտարկել, բոլորն ել դրան հավատացին։ Այդ պայմաններում կազանի ճանապարհի վեց մեքենավարների հեղափոխական կազմակերպությունների անդամների համար հեշտ եր մեքենաների գործադուլ կազմակերպելը։

Մեքենավարներին խնդրեցին միացան, գուցե նրանց կանխեցին, արհեստանոցները և դեպոն։ Դրանցից հետո գործադուլ արին հեռագրատան ծառայողները և վարչությունները (հասկանալի յե նրանց «ապպարատը». կայարանների պետերը և վարչությունները իրր այդպիսիներ, այսինքն բիք չկա բացատրելու, վոր «վարչություններն» իրր այդպիսիներ, այսինքն ճանապարհները կառավարող ավագ ինժեներները գործադուլ չեյին անում, բայց թվում է, թե գործադուլի դեմ չեյին ել պայքարում)։ Վերջինը գուցե և ավելորդ շռայլություն եր։ Քանի վոր մարդ չկար գնացքը բանեցնելու, մարդ չկար այդ գնացքների ճանապարհները հեռագրներով լուսաբանող, մարդ չկար շարժվող կազմը կարկատող, ըստ ինքյան շարժումը մի քանի որվա ընթացքում պիտի կանգ առներ։ Վերջին գնացքներով Մոսկվա վերադարձողները կարող եյին տեսնել գծի վրա աշխատող բանվորների, սլաքապահների պահապանների յերկար շարքեր, վոր դեպի քաղաք եյին գնում. սրանք գծի վրա այլևս անելիք չունեյին։ Սրանք գործադուլավորներ դարձան անկախ իրենց կամքից։ Բայց դրանք ել շուտով դերի մեջ մտան։ Տանը նստելն անտանելի յեր։ նրանք գնում եյին միտինգ և մի քանի որում տա-

քանալով կարմրեցին հեղափոխության այն մթնոլորտից, որով Մոսկվան վաղուց եր շնչում։

Յեվ այստեղ առաջին անգամ բոլորի համար պարզվեց, սկսած միապետական կառավարությունից, որը չեր հասկանում այն մեքենան, որի լծակի մոտ կանգնած եր, թե ժամանակակից կապիտալիստական հասարակության մեջ ինչ կնշանակի յերկաթուղագծի փոխադրության ամբողջական դադարեցումը։ «Յերևացին հացի, ապրանքի, մսի, կանաչու, ձկան ևայլ բոլոր ապրանքների մտահոգված բյուլետեններ։ Ուտեստի նյութերի, մասնավորապես մսի, գները արագ բարձրանում եյին։ Դրամական բորսան թպրտում եր։

«Հեղափոխությունը միշտ էլ նրա մահացու թշնամին է յեղել։ Հենց որ դեմ դեմի կանգնեցին, բորսան ուշաթափ դես ու դեն ընկավ։ Նա վազեց հեռագրի մոտ, բայց հեռագիրը թշնամաբար լռում եր։ Փոստը նույնպես հրաժարվում է ծառայելու։ Բորսան ձեծեց պետական բանկի դուռը, բայց յերևաց, որ նա փոխադրությունների արագությանը պատասխանատու չե։ Յերկաթուղային և արդյունաբերական ակցիաները տեղից ցատկեցին, ինչպես վախեցած թռչունների յերամ և թռան, բայց վոչ դեպի վեր, այլ վար։ Բորսայի սպեկուլյացիայի մութ թագավորության մեջ իշխեց սարսափը և առաձների կրճատոցը։ Դրամական շրջանառությունը դժվարացավ։ Վճարումները գավառներից մայրաքաղաք դադարեցին։ Այն ֆիրմաները, որոնք կանխիկ դրամով եյին հաշիվ տեսնում, վճարումը դադարեցրին։ Բողոքի յենթարկված մուրհակների թիվն սկսեց արագ աճել։ Մուրհակատուները, բանկատուները, յերաշխավորները վճարողները և ստացողները շփոթվեցին, դես ու դեն ընկան և պահանջեցին իրենց համար գոյություն ունեցող որենքների խախտումը, որովհետև նա—գործադուլը, հեղափոխությունը տնտեսական շրջանառության բոլոր որենքները խախտել եր»։*)

Վարկին տրված հարվածը բուրժվազիայի համար ամենազգալին եր, բայց յեթե ժամանակին չհեռացվեր, այդ կլիներ մահացու հարվածը նաև ցարական գանձարանի համար։ Ռուսական արժեքաթղթերը վաղուց արտասահմանի բոլոր բորսաներում կուլտերով առաջարկվում եյին—բայց վոչ վոք չեր վերցնում... Մինչդեռ միապետության համար խիստ անհրաժեշտ եր նոր փոխառություն, պատերազմից հետո «ուղղվելու», խորասուզված նավատորմը վերականգնելու, լրացնելու ծախսված պատերազմական պաշարները։ Ուզուր չեր վոր «գործը շտկելու» համար նորից բորսայից մարդ կանչեցին. ցարը նորից հիշեց Վիտեյին։

Ի հարկե միանգամայն պատահականություն եր, վոր Նիկոլայը Վիտեյին կանչեց առաջին անգամ հենց այն ժամանակ, յերբ սկսվեց յերկաթուղային գործադուլը, հոկտեմբերի 7-ին հ. տ.։ Բայց ինչ ել վոր լիներ, ժողովրդին զիջելու հանդեպ Նիկոլայի դես ու դեն ընկնելը և գործադուլի զարգանալը ձեռք ձեռքի եյին գնում որը որին։ Գործադուլը լայնանում եր և Նիկոլայը ավելի եր տատանվում։ Յեվ հոկտեմբերի 17-ը, յերբ նա ստորագրեց Վիտեյի գրած մանիֆեստը ամբողջ արդյունաբերության և ամբողջ տրանսպորտի ամենալրիվ դադարելու որն եր։ Այդ որը հեռագրներ եյին գալիս ընդհանուր գործադուլի մասին Սանկտ-Պետերբուրգից՝ գերմանական սահմանի վրա, Ախտարադից՝ Անդրկովկասյան յերկրում, Ռևելսայից և Եստ-

*) Լ. Տրոցկի. «1905» յեր 93։

լանդական յուրդից, Թիֆլիզից և Կազանից, Կուրգանից՝ Ուրալից մյուս կողմը և Դոնի շրջանի Նովոչերկասկից։ Գործադուլ եյին արել արդեն վոչ միայն յերկաթուղիները և գործարանները, գործադուլ եյին անում միջնակարգ դպրոցները և բանկերը, փաստաբանները և դատավորները, քաղաքային վարչության ծառայողները և վերահսկիչ պալատի պաշտոնյաները։ Գործադուլի տարածվեց ամեն տեղ, ուր հասնում եր ռելսի կիծը և հեռագրի լարը։ Ահա թերթի յերկու հեռագիր, վոր տիպիկ կարելի յե համարել. «Տամբով 14/X։ Զգացվում է պակաս՝ նավթի, կերոսինի և գաղութային ապրանքների։ Գործադուլ արին յերկու գործարան։ Հոգևոր սեմինարիայի, արական գիմնազիայի և ռեալական դպրոցի աշակերտները պարապմունքները դադարեցրին։ Հիմնարկները փակ են։ Ընդհանուր տրամադրությունը հուզված է»։ «Կուրգան 17/X։ Այսոր, «Կուրգան» կայարանի ծառայողները և բանվորները բոլորովին դադարեցրինք աշխատանքները։ Դադարեցրին աշխատանքները քաղաքային ալյուրաղաց գործարանները»։ Յերկաթուղայինները ամեն տեղ նշան տվին և յերկաթուղային սուլոցի հիման վրա կանգ առավ ամեն ինչ»։

Վիտեն Նիկոլայի առաջ պրովակատորական հարց դրեց. կամ ամեն ինչ ճնշել, զինվորական դիկտատուրա հայտարարելով, կամ գիջել սահմանադրություն տալով։ Նիկոլայը, իհարկե, ամբողջ հոգով առաջինն եր ուզում։ Բայց այն ժարդիկ, վորոնց նա չեր կարող չհավատալ—նշանավոր Տրեպովը, վորը մի քիչ առաջ հրաման եր արձակել «գնդակ չխնայել» և վոչ պակաս, հետագայում նշանավոր Նիկոլա Նիկոլայևիչը, ապագա իմպերալիստական պատերազմի գլխավոր հրամանատարը.—միաձայն վկայում եյին, վոր գնդակ վորքան ուզես կա, բայց սրանց ոգնությունով չի կարելի գործադուլավորներին կանգնեցրած և վոչ մի գնացք շարժել։ Վիտեյի հետ խորհրդակցության ժամանակ «զինվորական մինիստրը և գեներալ Տրեպովը, վորին յենթարկված եր Պետերբուրգի կայազորը, հայտնեցին, վոր Պետերբուրգում բավական զորք կա ճնշելու զինված ապստամբությունը, յեթե այդպիսին Պետերբուրգում և Թագավորի մոտագա բնակավայրում լինի, բայց Պետերբուրգում չկան համապատասխան մասեր, վորոնցով կարելի լինի յերթյեվեկը վերականգնել գոնե Պետերբուրգից Պետերհոֆ» (ուր այն ժամանակ ապրում եր Նիկոլայը)։ Միապետությունը տեխնիկապես անզոր եր յերկաթուղիների գործադուլի հանդեպ և այդ նրան սարսափեցնում եր։ Ցարի մոտ իր մինիստրները չեյին կարող գնալ, պետք է գնային փոքր, աշնան յեղանակին խիստ տարուբերվող շոգենավերով «գրեթե լողալով»։ Յեվ այդ այնպես խիստ եր հարվածում լակեյական ուղեղներին, վոր գեներալատյուտանդները քննում եյին այն հարցը, թե ինչպես անեն, վոր Նիկոլայը և Ալեքսանդրա Ֆեոդորովնան յերեխաների հետ արտասահման փախչեն, յերեխաները բեռ են, «մեծ ատզելֆ»։ Մինչդեռ սեմյոնովցիները և ձիավոր գվարդիականները դեռ Պետերբուրգի փողոցներում կանոնավոր կոտորում և հրացանազարկ եյին անում ժողովրդին, և վոչ մի գունդ, նույնիսկ գավառում, դեռ չեր միացել բանվորներին։ Իսկ այդ բոլոր գնդերի հրամանատար Նիկոլայ Նիկոլաևիչը, յերբ լսեց, վոր իրեն զինվորական դիկտատոր են ուզում կարգել, առավ ատրճանակը և մտավ ցարի գրասենյակը։ Պալատականները պատմում եյին, վոր Նիկոլայը սպասնում եր, թե ինքն իրեն կսպանե հենց այդ ատրճանակով Նիկոլայ «փոքրիկի» առաջ։ Մենք

հաստատ գիտենք, թե ցարի գրասենյակում մեծ իշխանը ինչպիսի շարժուձեւեր եր արել այդ ատրճանակով, բայց այդ կատարվում եր հրովարտակը ստորագրելուց անմիջապես առաջ։

Այժմ պարզվեց (վիտեյի հիշողություններից), վոր բացի զորքին վստահ չլինելուց, Նիկոլայ «մեծի» վարմունքը վորոշեց նաև այն բանի վստահությունն ունենալուց, թե «սահմանադրության» ոգնությունով բանվորական շարժումը կարելի յե խաղաղ ռելսերի վրա դնել։ Հոկտեմբերյան որերից առաջ Նիկոլայ Նիկոլայևիչ «Ռոմանովը» ծանոթացավ ծայրահեղ ձախ գապոնյան Ուշակովի հետ, բորը գրեթե նույնպիսի պրովակատոր եր, ինչպես և ինքը Գապոնը։ Այդ պետական գրքեր պատրաստելու եքսպեդիցիայի բանվորը, վորը առաջ եր իշխանության և նույնիսկ մինիստրների հետ կապ ուներ,—գնաց «վողզուներլու» վիտեյին, յերբ սա Պորտսմուտի դաշնագիրը կնքելուց եր վերադարձել, այժմ մեծ իշխանների քաղաքական խորհրդատուն դարձավ։ Նա Նիկոլայ Նիկոլայևիչին պատմեց, վոր «բարեմիտ» բանվորները բանվորական միջավայրում ամեն կերպ պայքարում են հեղափոխականների հետ, բայց իզուր, վորովհետև բանվորները վոչ մի իրավունք և գործելու վոչ մի այլ միջոց չունենալով, բացի անլեգալ միջոցներից, բնական ե, հեղափոխականների յետևից են գնում, վորոնք և այդ անլեգալ գործողություններն են ղեկավարում։ Բայց բավական ե, վոր բանվորներին հնարավորություն տրվի լեգալ գործելու, նրանք իրբև թե կհետևեն Ուշակովին և իր ընկերներին։ Նիկոլայ «մեծի» վրա Ուշակովի այդ խոսքերը ուժեղ տպավորություն արին. նրա, ինչպես ասում են, աչքերը բացվեցին. ահա թե ինչպես կարելի յե գործադուլների հետ հաշիվ տեսնել։ Ցեվ նրա մեջ վերջնականապես ամրացավ այն միտքը, վոր անհրաժեշտ և խնդրին «ժողովրդին տալ քաղաքական ազատության անխախտ հիմքերը՝ անձի իսկական անձեռնմխելիություն, խղճի, խոսքի, ժողովների յեվ միությունների ազատության հիմունքով», ինչպես ասված եր Նիկոլայ «մանիֆեստի» հաստատած Վիտեյի ժանիֆեստի նախագծում։

Ցեվ Ուշակովը և նրա բարձրաստիճան աշակերտը շուտով պետք և խիստ հիասթափվելին այդ նոր զուբատովականության հաջողության մեջ. բանվորները չեյին եվ մտածում ոգտագործելու «խաղաղ» աշխատանքի համար «անխախտ հիմքերը»։ Դեղին կազմակերպություններ կազմելու փորձերը այդ որերում ամենափոքր հաջողությունն եվ չունեցան։ Ուշակովի խորհուրդը, գուցե միտք ունենար մինչև հունվարի 9-ը, բայց այժմ, յերբ բանվորներն ունեյին կազմակերպություններ, վորոնք առաջ եյին յեկել հայտարարման կարգով (заочный порядок), նրանք ամենևին ինքնակալ միապետության շրջանակներում «խաղաղ» գործունեության չեյին գնում. նրանք արդեն սկսել եյին իրենց ժամանակավոր հեղափոխական կառավարությունը կազմել։

Հեղափոխական կառավարություն, ինչպես և ապստամբության գաղափարը այդ ժամանակ արդեն արտահայտված եր վաղուց բալշևիկյան դրականության մեջ։ Այն րոպեյից սկսած, յերբ «սահմանադիր ժողովի» լոզունգը բուրժուական մտավորականությունն ընդունեց և աղավաղվեց այն,—փոխանակ հեղափոխության բարձրագույն մարմնի ստացվեց մի ժողով, վորին հրավիրել և ցարը սահմանադրություն կազմելու,—Լենինը ավելի խիստ առաջ քաշեց այն հարցը, թե ով և հրավիրում այդ սահմանադիր ժողովը։ Վորևե իշխանություն պետք ե հրավիրեր, բայց վո՞րը։ Ինարկե և վոչ ցարը, այլ զինված ապստամբությունների յելած իշխանությունը, «ժամանակավոր հեղափոխական կառավարության» իշխանությունը։ Մենշևիկներին, իհարկե, այդ գաղափարը շատ հանդուգն եր թվում և բուրժուազիային «խրտնեցնողը», առանց վորի նրանք «բուրժուական» հեղափոխություն չեյին կարողանում մտածել։ Այդ պատճառով նրանք կը՛ճատեցին լոզունգը, առաջ քաշելով «հեղափոխական ինքնավարության» գաղափարը։ Սակայն թողնելով այն հարցը, թե կենտրոնում ով ե կարգադրություն անելու, նրանք ագիտացիա եյին մղում, վոր տեղերում ապստամբածները իշխանությունը իրենց ձեռքը գրավեն, յետ մղելով տեղական իշխանություններին՝ նահանգապետներին, քաղաքապետներին, խպրավնիկներին, գավառական վոստիկանապետներին և այլն։

Այդ բոլոր վեճերը սաստկացել եյին 1905 թվի ամառը, մենշևիկյան «Искра»-ն գիտակցիայի նմուշը մենք տեսանք վերը, վոր հրատարակել եր «Поτемкинի» ապստամբությունից հետո։ Պատմությունը կարծես դիտմամբ ուզում եր առարկայական դաս տալ։

Բանվորների պատգամավորների խորհուրդը պետք ե առաջ գար Պետերբուրգի գործադուլից նույնքան տարերայնորեն, ինչպես առաջ յեկավ այն ամառը Իվանովո-Վոզնեսենսկում։ Մասամբ առաջ եր յեկել այն նաև նախահոկտեմբերյան որերում Մոսկվայում, իբրև տպարանական բանվորների պատգամավորների խորհուրդ, բայց լուծվեց հենց վոր տպարանական գործադուլը դադարեց։ Պետերբուրգում առաջին խորհրդի ժողովը—նույնպես մասնակի—(կային միայն Նևսկու շրջանի գործարանների և ֆաբրիկանների պատգամավորները) տեղի ունեցավ հոկտեմբերի 13-ին։ Նրա անունից կոչ հրատարակվեց, ուր ասվում եր. «Մենք առաջարկում ենք ամեն մի գործարանի, ամեն մի արհեստի հինգհարյուր հոգուց ընտրել մի պատգամավոր։ Գործարանի կամ ֆաբրիկայի պատգամավորների խորհուրդը կազմում ե գործարանային կամ ֆաբրիկայի կոմիտե։ Բոլոր գործարանների և ֆաբրիկանների պատգամավորների ժողովը կկազմե Պետերբուրգի ընդհանուր բանվորական կոմիտե։ Այդ կոմիտեները մի՛ացնելով մեր շարժումը, նրան կտա կազմակերպվածություն, մի՛ություն, ուժ։ Նա Պետերբուրգի բանվորների կարիքների ներկայացուցիչը կլինի միացած հասարակության առաջ, նա կվորոշի, թե գործադուլի ժամանակ ի՞նչ պիտի անենք, և ցույց կտա յերբ պետք ե դադարեցնել այն»։

Այսպիսով նա սկզբում գործադուլային կոմիտե յեր, վոր միացնում եր գործադուլն այնպես, ինչպես և Իվանովո-Վոզնեսենսկում եր, բայց Պետերբուրգում գործը հենց սկզբից բարդ եր, վորովհետև քաղաքական մոմենտը, վորը Իվանովոյում յերկրորդ տեղն եր անցել, 1905 թվի հոկտեմբերի ընդհանուր գործադուլում առաջին տեղն եր բռնում։ Յերկաթուղային գործադուլի առաջին դրդիչն արդեն քաղաքական եր։ պայքար անձեռնմխելիության համար, ինչպես թվում եր յերկաթուղագծի պրոլետարիատին, վոր ընդհանուր գործադուլում առաջին տեղն եր բռնում։ Միանալով յերկաթուղայիններին, պրոլետարիատի մյուս խմբերն եվ նույն ուղղությամբ գնացին։

Իբրև նմուշ, ահա տպագրական գործի բանվորների բանաձևը (վորոնք տպավում եյին, ուշադրություն դարձնենք դրան, մենշևիկների ազդեցության տակ), վորը ընդունվել եր և հանձնվել Պետերբուրգի խորհրդին հոկտեմբերի 14-ին.

«Ընդհանուր քաղաքական գործադուլը, վոր հայտարարել է ՌՍԴԲԿ առաջին աստիճանն է, վորից բանվոր դասակարգը առաջ կերթա ցարական միապետության դեմ վճռական պայքարի ուղիով։

«Ընդունելով միայն կրավորական պայքարի անբավարար լինելը, այսինքն միմիայն աշխատանքը դադարեցնելը, վորոշում ենք գործադուլ անող բանվոր դասակարգի բանակը դարձնել հեղափոխական բանակ, այսինքն անմիջապես կազմել մարտական խմբեր (дружина)։ Թող այդ մարտական խմբերը հոգ տանեն ՇԱցած բանվորական մասսաներին զինելու մասին թե՛ կուզ զինավաճառատները քանդելով և զորքի ու վոստիկանության զենքերը խլելով, ուր այդ հնարավոր է»։

Այսպիսով, նույնիսկ մենշևիկյան տրամադրություն ունեցող բանվորները հասկանում էին, վոր սկսվում է պայքարն իշխանության համար ցարիզմի և բանվոր դասակարգի միջև։ Այդ հասկանում էր Պետերբուրգի ամբողջ բանվորական մասսան։ Ամենից պարզ այդ մասին արտահայտվեց Մակսվելի գործարանի մի մանածագործ։

«Վհչ, այսպես ապրել չի կարելի։ Վերհիշելով մեր ամբողջ պայքարը 1884 թվից սկսած, բոլոր գործադուլները 1885, 1888, 1896 թվերին*), չընդհատվող պայքարը 1905 թվի ընթացքում մեր գործարանի բոլոր բանվորներն իրենց կաշվի վրա զգացել են, վոր մեր դրությունը տարեց տարի վատանում է։ Բայց ուրիշ ելք չկա, չէթե վոչ վերցնել մահակը և փշրել այն ամենը, ինչ վոր մեզ արգելում է ապրելու։ Կյանքի համար պայքարելուն մեզ արգելք էր լինում միապետությունը։ Անհատների ճնշումը ուժանապատկվում է չերկգլխանի արծվով։ Ամեն ինչ կրելով մեր սպատների վրա, առաջին անգամ միայն հասկացանք, վոր միապետությունը պիտի ջնջել»։

Այսպիսով Պետերբուրգի բանվորների տրամադրությունը զուտ բոլշևիկյան էր, պրոլետարական-հեղափոխական, և Պետերբուրգի բոլշևիկյան կազմակերպությունը, իհարկե, սխալ արավ, հեռու կենալով առաջին րոպեին խորհրդից, իբրև մենշևիկների կազմածից։ Այդ սխալը շուտով ուղղվեց. արդեն հոկտ. 15-ից (իսկ առաջին «պլենար» նիստը չեղավ 14-ին), բոլշևիկյան ֆրակցիայի ներկայացուցիչները մտնում են խորհուրդ։ Ինչ էլ վոր լիներ, խորհուրդն սկսեց համենայն դեպս վոչ հեղափոխական քայլերից—ինչպես Պետերբուրգի քաղաքային խորհուրդ գնալը, վորը այն ժամանակ կազմված էր հարուստ վաճառականների և ուներ ժառավորականների, մեծ մասով, մինչև և խոշոր պաշտոնյաների ներկայացուցիչներից։ Այդ պատկանելի ժողովին պրոլետարական կազմակերպության ներկայացուցիչը դիմեց մի ճառով, վորի մեջ վոչ այն և թե պահանջում էր, վոչ այն թե խնդրում, վոր խորհուրդը միջոցներ բաց թողնի բանվոր դասակարգին զինվելու համար։ Նույն հաջողությունով կարելի կլիներ դիմել նույն պահանջով հենց իրեն՝ Նիկոլային։ Իհարկե բուրժուական ժողովը կտրականապես մերժեց պրոլետարականի միջնորդությունը։

Իրապես մասսայի տրամադրությունը այդ ժամանակ՝ և Պետերում, և Մոսկվայում այնպիսի չէր, վոր չէթե չէրբևե պետք է խոսք լիներ զինված ապստամբության մասին, ապա միայն այդ ժամանակ. վոր հոկտեմբերյան գործադուլը չդարձավ զինված ապստամբություն, այդ բանվորական հեղափոխության առաջին անհաջողությունն էր։ Ինչու՞ այդ անհաջողությունը պատահեց։

*) Այդ թվերը վերաբերում են Մակսվելի գործարանին։

Այստեղ, բացի ՇԱցած բոլորից, պետք է հիշել, վոր գործադուլը բռնկվեց տարեվերջին, վոր հեղափոխական կազմակերպություններն նրա համար պատրաստ չէին։ Վոր հեղափոխությունը ուներում է միայն ամենամեծ վերելքի մի մոմենտ, վոր այդ բաց թողնելով, չերկրորդ անգամ էլ չես բռնի, —հեղափոխական պայքարներում դեռ անփորձ շարժման ղեկավարները այդ միանգամից չզգացին։ Բիչ դեր չխաղաց այդտեղ և այն հանգամանքը, վոր կազմակերպություններից ամենահեղափոխականը՝ բոլշևիկյանը—այդ որերին առանց գլխի չեր։ Ռուսաստան վերադառնալ շտապող Լենինին «պատահականությունները» դուցե վոչ այնքան տարերային, ինչպես գործադուլն ե՛ր—ուշացրին գրեթե չերկուշաբթով Ստոկհոլմում և նա կարողացավ Պետերբուրգ վերադառնալ այն ժամանակ միայն, չերբ ամեն բան վերջացել ե՛ր։ Վոչ միայն Պետերբուրգում, ուր ղեկի մոտ մենշևիկներն էին, այլև Մոսկվայում, ուր ղեկը ամուր բռնել էր բոլշևիկյան կոմիտեն, հոկտեմբերի 17-ը համբերեցին բավական հաջողությունն և շտապեցին նահանջի փող փչել. այսինքն արին հենց այն, ինչին միապետությունը ձգտում էր իր մանիֆեստով, վորն «բոլոր ազատությունները նվիրեց» ամենքին վոչ նրա համար, թե նա վերջնականապես անձնատուր էր լինում, այլ վոր նրան պետք էր ծուխ առնել։

Վոր ինքը այստեղ է, իր տեղում և վոչ մի տեղ էլ չի գնացել.—միապետությունը աշխատեց ցույց տալ բառացի բանվոր դասակարգի հաղթության հենց հետևյալ որը։ 17-ին Նիկոլայն ստորագրեց իր մանիֆեստը, իսկ 18-ից ամբողջ Ռուսաստանում տարածվում և ջարդերի ալիքը, վոր ուղղված էր հրեաների և ինտելլիգենցիայի դեմ. ջարդել բանվորներին չէին համարձակվում, սահմանափակվելով բանվորական առանձին պատգամավորների վրա հարձակվելով։ Ջարդի ծրագիրն այն աստիճան վորոշ նժուշով էր կազմված, ամեն տեղ կետ առ կետ միակերպ, վոր միայն այդ էլ բավական էր, վոր վոչ մի խելահաս մարդ չհավատար նրանց «տարերային» լինելուն։ Տեղական «բարեվիժ քաղաքացիների» մի խմբակ՝ խանութպաններից և սպեկուլյանտներից բաղկացած, գլուխ ունենալով քահանային և ուղեկցվելով կամաց-կամաց աճող խուլիգան-բոսյակներով, Նիկոլայի պատկերը ձեռքներին, վոր հանում էին թաղի վոստիկանատնից և չերեք գույնի դրոշակով, գնում էին «հայրենասիրական չերթով» քաղաքի փողոցներով, չերգելով «боже, царя храни»։

Արդեն այդ ամբողջ պատկերը, դեռ նոր հաղթանակած գործադուլի ֆոնում, չերբ «կորչի միապետությունը» ամեն շրթունքից եր դուրս թըռչում, չերբ փողոցները լի էին մարսելեզի ձայներով, իսկ չերեք գույնի դրոշակները կայծակի արագությունով դառնում էին կարմիր (կապույտ և սպիտակ շերտերը պատռում էին)—այդպիսի ֆոնում այդ հայրենասիրական չերթի» պատկերը պարզ և կոպիտ պրովակացիա չեր։ «Չայրենասերներն» ի հարկե, պահանջում էին գլխարկ հանել ցարի պատկերի առաջ. հրաժարվողներին անմիջապես ծեծում էին, այդ չեղանակով ամբոխի մարտական տրամադրությունը տաքացնելով։ Վոստիկանությունն նայում եր անմեղ աչքերով, կարծես կարգի վոչ մի խանգարում տեղի չեր ունենում, կամ թե խորհրդավոր ձևով փողոցից անհայտանում եր ինչ վոր տեղ, կարծես գետնի տակն եր անցնում։ Կամաց-կամաց ձեռքերը չերկարացրին. ծեծում էին վոչ միայն նրանց, ով գլխարկը չեր հանում. այլև նրանց, ով հարկավոր արագությունով և հաճույքով չեր հանում, հիշում էին, թե ով

եր միտինգի ժամանակ ճառ խոսել և հանդիպելիս ծեծում էլին, հետո սկսեցին սրանց տները մտնել, ուր վոչ միայն ծեծում էլին, այլև թալանում։ Ցեթե հանդիպում էլին հեղափոխական ցույցի, ծեծը մասսայական բնույթ եր ստանում, իսկ յերբ «կարմիրները» դիմադրում էլին, գետնի տակն անցած վոստիկանությունը իսկույն նույն մոգական արագությունով դուրս եր գալիս, այն էլ վոչ մենակ, այլ կազակների և հետևակի ուղեկցությամբ։ Ուր դիմադրությունը քիչ թե շատ կազմակերպված եր լինում, գործի էլին դնում գնդացիրները և «հայրհնասերները» հրացանագարկությունից հետո սկսում են կոտրատել ու թալանել ամեն բան առանց վորևե արգելքի։

Ցեթե ավելացնենք, վոր վոչ միայն ցարի պատկերն եր վոստիկանատնից, այլև հաճախ այն կրում էլին վոստիկանները (Ոդեսսայում ամբողջ քաղաքով կառքի մեջ պտըտեցրեց քաղաքապետ Նեյդգարդը), վոր բռնվեցին վոստիկանական հրամաններ՝ «աջակցել» «հայրենասիրական ցույցերին», ապա վոչ մի կասկած չի մնա, վոր շարժումը կազմակերպված եր հենց սկզբից։ Վոստիկանության դեպարտամենտի նախկին տեսուչ Լոպուխինի վերկացուցմները, վորն այդ ժամանակ իր նախկին իշխանության հետ կռվել եր և նրա գաղտնիքները բացել, իրապես, ավելորդ վավերագրական ապացույցներ տվին։ Հաստատվել եր, վոր ջարդի թռուցիկները տպագրվել էլին վոստիկանության դեպարտամենտում, այն նյութերի ոգնությամբ, վոր դանազան ժամանակ, հեղափոխական տպարանները խուզարկելիս, գրավել էլին, վոր այդ թռուցիկները տարածվել են ժանդարմական սպաների միջոցով, վորոնք յերբեմն իրենք էլ հրապարակ էլին գալիս իբր հեղինակներ»։ Այն տեղական իշխանությունները, վորոնք միամտության կամ վոստիկանական չափազանց բարեխղճության պատճառով ջարդի առաջ արգելքներ էլին դնում, արագությամբ «անպետք» էլին հայտարարվում և պաշտոնից հանվում։ Իսկ կենտրոնական իշխանությունները «վոչինչ չգիտեյին» և ներքին գործերի մինիստր Դուրնովոն, հին, յեփված խուզարկուն, «զարմանքով» եր լսում Վիտեյից այն մասին, ինչ վոր անում է իր անմիջական իշխանության տակ գտնվող վոստիկանության դեպարտամենտը։

Ջարդեր յեղան այն ժամանակ «Ռուսաստանի կայսրության» 110 բնակված կետերում։ Այդ ժամանակ սպանվել է յերեք ու կես հազարից միջեվ չորս հազար մարդ, անդամալույծ և դարձել մինչև տաս հազար։ Ամենից դաժան ջարդերը յեղել են ծայրագավառներում. Ոդեսսայում, ուր 700 սպանված է յեղել. Տոմսկում, ուր թատրոնում փակել և այրել են նահանգապետի և հոգևոր առաջնորդի ներկայությամբ հազարից ավելի մարդ։ Մոսկվայում և Պիտերում ջարդեր կազմակերպել չհաջողվեց, բայց առանձին ինտելիգենտների և բանվորական պատգամավորների այդտեղ էլ ծեծում և սպանում էլին։ Այժմ, յերբ մինչև ժողովրդական մասսայի հաղթանակն ապրող ջարդերի հանցավորները արդեն հրացանագարկ են յեղել, շատերին այն ժամանակ հեղափոխական տերրորիստները կոտորեցին), իսկ նրանց «հայրենասիրական» վոհմակը մաքրված, դուրս է շպրտված յերկրից կարծիր բանակի յերկաթե ավելով, կարելի չկա ժամանակ կորցնելու զայրույթի խոսքերի վրա։ Պատմության, ինչպես և ամեն մի գիտության մեջ, պետք չի լաց լինել և կամ ծիծաղել, այլ պետք է հասկանալ։ Ցեվ ահա յեթե մենք ջարդերին նայենք իբրև միասեռության հեղափոխության դեմ պայքարելու «տակտիկական միջոցի» վրա, մեր աչքին կզարնի այն, թե

ցարական Ռուսաստանի մեխանիզմը վոր աստիճան դեռ ամուր եր։ Միքանի որվա ընթացքում կենտրոնի նշանով կազմակերպել 100-ից ավելի «յելույթ», մեկը մյուսից 1000 վերստից ավելի հեռու, այդ արժեր յերկաթուղագծի գործադուլին, այն տարբերությունով, վոր այն նախապատրաստված եր ժողովրդական մասսայի տրամադրությունով, իսկ այստեղ տրամադրությունը նշանակություն չուներ։ Թեև ցարական վարչությունն աշխատում եր ջարդերը ներկայացնել իբրև «ատելության պոռթկում» «ուղղափառ ռուս մարդկանց» ընդդեմ անմաքուր—հեղափոխականների, բայց այդ բոլորովին հերքվում է ջարդերի ոեխարհագրությունով։ Ցեթե իրոք այդ լիներ սև հարյուրակային մասսայի տարերային պատասխան հեղափոխական յելույթներին, վորքան տվյալ տեղում հեղափոխական շարժումն ուժեղ է յեղել։ Բայց մենք տեսանք, վոր հենց հեղափոխական կենտրոններում Մոսկվայում, Պիտերում ջարդեր կազմակերպել բոլորովին չհաջողվեց։ Իսկ մինչ այդ մեծ քանակությունով խիստ ջարդեր յեղան «ննստակեցության գծի» շատ ավանդներում, ուր հեղափոխական վոչ մի յելույթ չեր յեղել, բայց կար թալանչիների սիրած և անպաշտպան զոհը—հրեան։ Մեխանիկայի որենքին հակառակ, վոր ներգործությունը և հականերգործությունը միշտ հավասար են, այս դեպքում «հականերգործությունը» այնքան ավելի ուժեղ եր, վորքան «ներգործությունը» թույլ եր։

Ցեթե զայրույթը մեզ չարգելեր դատելու 1905 թ. հոկտեմբեր-նոյեմբերին, մենք հենց այն ժամանակ կհասկանայինք, դիտելով ջարդերը, թե համառուսական գործադուլը վորքան քիչ կազմալուծեց միապետությանը։ Վերջինս վախեցել եր, նրա զինվածները հետևանք էլին սաստիկ յերկյուղի և վոչ նյութական ուժերը կորցնելուն։ Այս սաստիկ յերկյուղը կարելի յեր և պետք եր ոգտագործել վորքան հնար եր լայն չափով, բայց այդ պետք եր անել գրեթե կայծակի արագությունով. կորցրած ամեն մի որը հակառակորդի ուժը կրկնապատկում եր և յերկու անգամ պակասացնում մեր սեփական ուժը։ Այդ տեսակ կայծակի արագությունով հարձակման համար հարկավոր էլին մասսաներ, վորոնք սովոր են յելույթների, վորոնք իրենց անբողջ յեռանդը կենտրոնացնում են մի լոզունգի վրա, ինչպես վերջվերին մարտին եր և ապա 1917 թ. հոկտեմբերին։ Հարկավոր էլին կազմակերպություններ հասունացած, հաստատ իմացող, թե ուր են իրենց թշնամիները և ուր են խփում և այս կար 1917-ին, յերբ կար միայն հեղափոխական մի կուսակցություն. բոլշևիկներին միացած աննշան հավելվածները, ինչպես «ինտերնացիոնալիստները» կամ «ձախ եսերները» վոչ մի ինքնուրույն նշանակություն չունեյին։ 1905 թ. յերեք կազմակերպություն կար, վոր իրար հետ վիճում էլին հեղափոխական զորության գլուխն անցնելու համար, այն է՝ բոլշևիկները, մենշևիկները և եսերները։ Մենշևիկների հակահեղափոխականությունը մասսաներին այն ժամանակ դեռ չէլին հասկանում (չէլին հասկանում այդ նույնիսկ մենշևիկների շատ առաջնորդները), իսկ եսերները իրոք էլ այն ժամանակ դեռ հակահեղափոխական կուսակցություն չէլին, չնայած արդեն այդ տեսակետից շատ բան էլին խոստանում,—մենք այդ կտեսնենք, յերբ վերլուծենք գյուղացիական շարժումը։ Այն ժամանակ կարծես բոլորն էլ իրավունք ունեյին «առաջնորդել» և մասսայի աչքերը շփոթվում էլին, այն էլ կար, վոր մասսան ինքն էլ չգիտեր, իսկապես դեպի ուր գնալ։ Մենք իսկույն կտեսնենք, վոր գործադուլները բա-

ռացի խաչաձևվում էին և մեկը մյուսին խանգարում էր և վոր բոպեյա-պես ալիքի յերես դուրս յեկած ժամանակավոր խնդիրների հետևանքով, վորոնց հրապարակ էր հանել որվա չարիքը, հիմնական խնդիրը վինված ապստամբության նախապատրաստությունը, անհետանում էր յետին պլանում։

Մինչդեռ միապետության սաստիկ յերկյուղը այնքան էլ շուտ չանցավ։ Այդ յերկյուղը մնում էր—գործադուլը «խաղաղվելուց հետո—մի կողմից գյուղից հասնող լուրերի հետևանքով, մյուս կողմից այն զեկուցումներից, վորոնք հայտնում էին, թե զորքի մեջ ինչ և կատարվում։

Գյուղացիական շարժումը սերտ կապված և ցանքսի շրջանի հետ։ Գյուղատնտեսական տարվա սկիզբն ու վերջը՝ գարունն ու աշունը, միշտ գյուղացիական շարժման սրվելու հետ զուգընթաց են յեղել։ Յեթե ամառը նա մեղմանում էր և «բուլիգինյան» սահմանադրությունը կազմողներին վորոշ ցնորքներ էր ներշնչում, ապա աշնանը պետք էր սպասել նոր բռնկումի և այն էլ այլ կերպ, քան գարնանն էր, վորովհետև խնդիրը վերաբերում էր վոչ թե աշխատանքի համար մարդ վարձելուն, այլ հունձը լիկվիդացիայի յենթարկելուն։ Գյուղացիական շարժման կազմը, գործողությունների ձևերը և նպատակները մենք մանրամասն վեր կուծենք հետևյալ գլխում. այստեղ մեզ համար բավական են նրա ամփոփումները և այն տպավորությունները, վորպիսին այդ ամփոփումները արին վերում, Նիկոլայի անմիջական շրջապատի վրա։

Շարժումն սկսվեց հոկտեմբերի կիսին. վոր սա հոգեբանական «վարակում» էր, ամբողջ Ռուսաստանը վողողող յերկաթուղային գործադուլից յեյած ի-հարկե կասկածից դուրս է և տեղ-տեղ տևեց մինչև նոյեմբերի վերջը։ Մեծ մասով շարժումն ընդգրկեց կենդրոնական, չերնոզյոմի նահանգները՝ Տամբովի, Կուրսկի, Վորոնեժի, Ուկրաինան—Կիևի, Չերնիգովի, Պոդոլսկի նահանգները՝ Պովոլժիեն—Սարատովի, Սամարայի և Սիմբիրսկի (այժմ Ուլյանովսկի) նահանգները։ Չակատակ գարնան շարժման, վոր մեծ մասամբ գործադուլային էր, այժմ վճռականորեն գերակշռում էին ջարդերը։ «Կարճ ժամանակում այրվեց «Ջոկջկվեց» և առհասարակ վոչնչացվեց 2000 դաստակերտ, ըստ վորում կալվածատերերի վնասները միայն ամենից շատ վնասված 10 նահանգներում հաշվում են պաշտոնական տվյալներով 29 միլիոն ռուբլի (վոսկով *)։

Քարոզքանդ էին անում Տամբովի և Պարատովի նահանգներում, իսկ այդ ավելի քան սուր ղգում էին Յարսկոյե Սելոյում։

«Մի անգամ—պատմում է Վիտտեն իր հիշատակարանում—յես գնացի Սելո զեկուցումով նորին մեծության մոտ, ընդունարանում ինձ հանդիպում է Տրեպովը, խոսք է անում գյուղացիության անընդհատ ապստամբությունների մասին և ինձ ասում է, վոր այդ դժբախտությանը վերջ դնելու համար միակ միջոցն է—անմիջապես և լայն չափով կալվածատիրական հողերն ոտարացնել գյուղացիների ոգին։ Յես կասկած հայտնեցի, վոր այժմ, հոկտեմբերի 17-ից հետո պետական դուման հրավիրելու նախորյակին, հատկապես թե կարելի յե այդպես շտապով և քիչ մտածված միջոց ձեռք առնել։

*) П. Маслов, «Аграрный вопрос в Росии» II. եր. 254.

Նա ինձ պատասխանեց, վոր բոլոր կալվածատերերը շատ ուրախ կլինեն այդ մրջոցի համար։

«Յես ինքս—ասում է գեներալը—կալվածատեր եմ և շատ ուրախ կլինեմ իմ հողի կեսը ձրի տալու, հավատացած լինելով, վոր միայն այս պայմանով յես կարող կլինեմ յերկրորդ կեսը ինձ պահել։

«Թագավորն ինձ զեկուցման ժամանակ այդ մասին ըստ յության բան չասաց, միայն հանձնեց գրությունն նախագծերով, ասելով՝ «Այդ յենթադրությունները մինիստրների խորհրդում քննեցեք»։ Պրոֆեսոր Միգուլինը նինն էին այդ գրությունը և նախագիծը»։

«Այդ հողերը հարկադրական յեղանակով գյուղացիների ոգին ոտարացնելու անհրաժեշտության վերաբերող գրություն եր, իրրև միջոց, վորը պետք է անմիջապես ձեռք առնել միապետ թագավորի անմիջական կամքով և հրամանով»։

Վիտտեն համաձայնում եր, վոչ այն պատճառով, վոր ինքը ազգարային սաստիկ յերկյուղից աղատ եր—ընդհակառակը նրա մինիստրությունից մեզ հասել է մի ամբողջ ստվար «գործ» ազգարային ռեֆորմի նախագծին վերաբերող (ուր է մրջի այլոց կա և այժմ հիշված պրոֆ. Միգուլինի նախագիծը. պրոֆեսսորը ստորագրել է դժվար ընթեռնելի. և Նիկոլայը ինքը իր ձեռքով «ռոմանովյան» գեղագրական ձեռագրով կողքին փակագծերի մեջ և դրել պրոֆեսորի ազգանունը ինչպես այժմ անում են մեքենագրուհիները պաշտոնական թղթերում. Նիկոլայը շատ եր վախում, վոր Վիտտեն այդպիսի թանկագին ազգանունը, կարելի յե ասել «հայրենիքի փրկչին» չի կարող կարդալ)։ Վիտտեն համաձայնում եր նրա համար, վոր նա չեր ուզում փետրվարին «իր» հողային տրը. 19-ի կրկնությունը, Նիկոլայի «բարեգործությունը» գյուղացիներին, ահա ինչու նա պնդում եր, վոր հողերի կարելը հայտարարվեր վոչ թե «բարձրագույն» ժանեֆեստով այլ իրեն՝ Վիտտեյի հրավիրած ու ստեղծած պետական դումայի վորոշումով։ Բայց ամեն կողմերից ձայներ էին լսվում, թե պետք է շտապել, ժամանակը չի համբերում։ «Այն ժամանակ (դեկտեմբերին)—պատմում է շարունակության մեջ Վիտտեն—Պետերբուրգ յեկավ գեներալ-ադյուտանտ Դուբասովը, կարիճ, ազվատոհմ և աղնիվ մարդ։ Նա յեկավ Չերնիգովի և Կուրսկի նահանգներից, ուր նշանակված եր հատուկ լիազորություններով, նկատի ունենալով այնտեղ սաստիկ զարգացող գյուղացիական անկարգությունները։ Նա յեկավ ինձ մոտ և ժանրաժասն պատմեց գործերի դրության մասին և այն մտքով արտահայտվեց, վոր ամենից լավը կլիներ հենց այժմ գյուղացիների համար ոտարացնել այն կալվածատիրական հողերը, վոր իրենք վերցրել են և իմ նկատողության, վոր հարկադրական ոտարացման չեմ համաձայնի առանց գործը քննելու պետական դումայում և պետական խորհրդում այդ հիմնարկությունները բացվելուց հետո, նա կարծիք հայտնեց, վոր այժմ այդ մրջոցով կարելի յե գյուղացիներին հանգստացնել, իսկ հետո «նայեցեք, գյուղացիները կգրավեն ամբողջ հողը և նրանց հետ դուք վոչինչ չեք կարող անել»։

Միայն բանվորական հեղափոխության ջախջախումը դեկտեմբերին բերեց Յարսկոյե Սելոյին և յերբ Վիտտեն փետրվարին «իր» հողային ռեֆորմի ծրագիրը ներկայացրեց, Նիկոլայը դրան վերաբերվեց ավելի քան սառը, նույնիսկ սոսկալով Վիտտեյին այդ նախագիծը մշակող մինիստրին (Կուտլերը) արձակել պաշտոնից, բայց այդ ժամանակում պետք է թուլանար

և մի ուրիշ սաստիկ յերկյուղ, վորը առաջ եր յեկել Ցարսկոյե Սելոյում գինվորական շարժումի հետևանքով։

Նախ խոշոր չափերով կրկնվեցին հունխույան դեպքերը։ Զինվորական ուժի ավելի պրոլետարական մասը չեր կարող անտարբեր լինել, տեսնելով պրոլետարիատի հաղթանակը։ Մանիֆեստից ուղիղ մի շաբաթ հետո սկսվեց կրոնշտատում ճավասիների ապստամբությունը։ Այդ նույնքան տարերային եր, վորքան և հոկտեմբերյան գործադուլն եր։ Սկսվեց միտինգներից և «կոլեկտիվ հայտարարություններ «տալուց»։ Յերբ տվողներին բանտարկեցին, սրանց ընկերները սկսեցին նրանց ազատել ուժով. սկսվեցին ընդհարումներ զինվորական մասերի հետ, «վորոնք պարտքին հավատարիմ եյին մնացել», բայց «հավատարմությունը» շատ անկայուն յերևաց, և շուտով ճեղքվածք տվեց։ Հուզումը մի մասից անցնում եր մյուսին, աճում եր կարծես ընդհանուր նավաստիական գործադուլ դառնալու համար։ Շարժումը չուներ վոչ կենդրոն, վոչ ղեկավարներ, իսկ իշխանությունը շուտով ինքն իրեն հավաքեց. նա լավ հարբեցրեց ապստամբների ավելի պակաս գիտակից և կայուն մասին և այդ ձևով սրանց շարքից հանելով, առանց մեծ դժվարության կարողացավ հաշիվ տեսնել գիտակից վորքրամասնության հետ, վորը նույնպես անկազմակերպ եր և չուներ գործունեության վորոշ ծրագիր։ Կրոնշտատում ամեն բան յերեք որում վերջացավ։ Բայց հազիվ Ցարսկոյե Սելոյում հանգստացել եյին կրոնշտատի խռովությունից, յերբ նորից ապստամբեց Սևաստոպոլը։

Այստեղ ավելի փորձ կար, ավելի պատրաստված եյին, շարժումը կրոնշտատից ավելի լուրջ յերևաց և մեծ հույսեր եր տալիս։ Հեղափոխական կազմակերպությունները վաղուց աշխատանք եյին կատարում նավաստինների մեջ, հենվելով Սևաստոպոլի նավահանգստի ուժեղ պրոպագանդայի յենթարկված բանվորների մասսայի վրա։ Ս.-դ.-ական ագիտացիան մեծ մասամբ կատարվում եր այդ բանվորների ոգնությունով. կազմակերպությունն ինքը խիստ մենշևիկյան թևբուն ուներ։ Նա իրեն նպատակ եր դրել նավաստինների պատգամավորների խորհուրդ կազմելը և զինված ապստամբության մասին չեր մտածում։ Բայց տրամադրությունն այնպես եր, վոր տեղի ժանդարմների հաղորդագրության համաձայն, «արդեն նոյեմբերի առաջին որերում լուրերը եյին պտտում, վոր նոյեմբերի կիսին նավաստինների խռովություն կլինի»։ Նավաստինների շարժման գաղափարախոսությունը շատ խառն եր.—նավաստինները հրացան եյին պարպում հրամանատարական կազմի վրա, բանտարկում եյին գեներալներին և միաժամանակ փողոցները շրջում եյին՝ «боже, царя храни» յերաժշտությունով, թեև կարմիր դրոշակներով։ Կար մի մոմենտ, յերբ տարերային շարժումն այնքան ուժեղացավ, վոր իշխանությունը շտապեց քաղաքից հանելու ապստամբության դեռ չմիացած զորքերին և պատրաստվում եր դրանց հետ նահանջել Բալակլավա։ Պետք եր ալեկոծված մասսային մի վորոշ նպատակ առաջադրել. այդ վոչ վոք չկարողացավ։ Շարժման ավելի մեծ՝ կրոնշտատի հաջողությամբ, գիտակցականությունը արտահայտվեց միայն նրանում, վոր այն հնարավոր չեղավ այնպիսի հասարակ միջոցներով քայքայել, ինչպես կրոնշտատում յեղավ։ Բայց վերջ ի վերջո այստեղ ել նախաձեռնությունն իշխանությանն անցավ։ Ապստամբների գլուխ անցած յերևաց մի պատահական մարդ, պաշտոնաթող ծովային սպա Շմիդտը, միամիտ յերազող, վորն

իրեն անվանում եր սոցիալ-դեմոկրատ, իսկ իր ուսուցիչ համարում Միխայլովսկուն, վորը խոսում եր սոցիալիստական բոլոր կուսակցությունները միացնելու մասին և վորը Նիկոլային հեռագրեց՝ «Սև ծովի փառավոր նավատորմը, պահելով իր ուխտը և ցարին անձնվեր լինելը, ձեզանից պահանջում ե, թագավոր, անմիջապես սահմանադիր ժողով հրավիրել և այլևս ձեր մինիստրներին չի հպատակվում»։

Հավատարիմ հպատակության հեռագիրը ամենևին արգելք չեղավ, վոր Նիկոլայը դժբախտ Շմիդտին «դավաճան» համարի և անհամբեր հարցնի. «շուտով ալդյոք նրան կվերջացնեն»։ Յեվ իր համար և իր գեներալների համար կարևորը իշխանության նավաստինների կողմից ցույց տված մասսայական անհնազանդության փաստն եր, իսկ թե դրա հետ նավաստինները լինչ զգացմունքներ եյին կապում, այդ նրանց շատ ել չեր հուզում։ Մինչդեռ Շմիդտը հեռագրներ եր ուղարկում, իսկ նավաստինները միտինգներ եյին կազմակերպում, քիչ-քիչ սիրտ առած իշխանությունը գաղտնի պատրաստում եր հարձակում. նոյեմբերի 15-ին նա հրապարակ իջավ։ Դրանից առաջ կար մի մոմենտ, յերբ ապստամբները կարող եյին գրավել ամբողջ նավատորմը, բայց մոմենտը փախցրին։ Այժմ գրեթե ամբողջ նավատորմն իշխանության ձեռքին եր, վորը չամաչեց խորտակել այն նավերը, վորոնք համարձակվել եյին կարմիր դրոշակ բարձրացնել։ Միաժամանակ ցամաքում ամբակոծվեցին և գրավվեցին ծովային զորանոցները։ Շմիդտը գերի ընկավ և հետո յերեք նավաստինների՝ շարժման առաջնորդների հետ, հրացանազարկ յեղավ։

Միապետությունն այստեղ ել նյութապես և կազմակերպչական տեսակետից ավելի ուժեղ յերևաց։ Բայց նա ստիպված եր զգալու, վոր այդ շրջանում ինքն ուժեղ եր մեծ մասով իր հակառակորդների սխալների հետևանքով։ Մի մաղ եր մնացել, վոր Սևաստոպոլը դառնար Ռուսաստանի հանրապետության առաջին «կարմիր բերդը»։ Յեթե ապստամբության գլուխ կանգներ վոչ Զեխովի տիպի մի ժամավորական, վորը յերազում և հեղափոխություն անել առանց արյունահեղության, այլ իսկական զինվորական անձն, Նիկոլայը կմնար առանց Սև ծովի նավատորմի։ Սակայն իշխանությունը վոչ մի յերաշխիք չուներ, վոր այդպիսի բաղդավոր պատահականությունները միշտ ել կկրկնվեն։ Իսկ զինվորական «անկարգություններին» մասին լուրերը ամեն տեղից եյին գալիս. Գրոդնոյից և Սամարայից, Ռոստով-Ցարսլավլից և Կուրսկից, Ռեմբերտովից—Վարշավայի տակ և Ռիգայից, Վիբորգից և Ոստրոլենկից (Լեհաստանում), Վլադիվոստոկից, Իրկուտսկից և Խարբինից։

Ամենահետաքրքիր Հեռավոր Արևելքից ստացված տեղեկություններն եյին։ Այնտեղ գտնվում եր Նիկոլայի դեռևս զորացրման չենթարկված, չնայելով խաղաղությունը կնքելու, դեռ յերեկ գործող բանակը», միակ, կազմակերպված զինվորական մեծ ուժը, վորը Նիկոլայն ուներ Պետերբուրգից դուրս. Ցնացած զորքերը ահագին տարածության վրա ցրված եյին փոքրիկ կույտերով բարձր տարիների պահեստները, վորոնցից եր կազմված Մանջուրիայի բանակի մեծամասնությունը, չհասկանալով, թե ինչու իրենց հայրենիքից հազարավոր վերստեր հեռու յեն պահում, քանի վոր խաղաղությունը կնքված ե, սիրտ խուլ կերպով ալեկոծվում եր և վերջապես սկսեցին իրենք զորացրման յենթարկել իրենց, տարերային կերպով իրենց կայանատեղերից հե-

ռանալով և գրավելով Ռուսաստան գնացող գնացքները։ Իշխանության այդ յերևույթի հանդեպ դես ու դեն են ընկնում, բայց վորովհետև ամբողջ բանակի տրամադրությունը միակերպ եր, այդ պատճառով հենվել «յերդմանը հավատարիմ» մասերի վրա կարելի չեր։ Փորձեցին հենվել խունխուզների վրա (չինական բանդիտները), վորոնց կազմակերպել եր մի ռուսական գեներալ, բայց բացի շատ մեծ արյունահեղությունից, դրանից վոչինչ դուրս չիկավ։ Տրամադրությունն անցնում եր նույնիսկ սպաներին, վորոնց մեջ էլ քիչ չեյին պահեստինները («պահեստի պրապորշչիկներ»)։ Նոյեմբերի վերջին Իրկուտսկից, դեպի Ռուսաստան տարերայնորեն մղվող մասսայի ճանապարհի առաջին մեծ կենտրոնից հեռագրում եյին. «Յերեկ յերեկույան քաղաքային թատրոնում մամուլի ներկայացուցիչների ներկայությամբ, Իրկուտսկի կայազորի ամբողջ զորքերի միտինգ յեղավ։ Հավաքվեց մինչ չորս հազար զինվոր։ Նախագահում եր մի յենթասպա։ Զինվորները և սպաները փառավոր ճառեր արտասանեցին։ Վորոշված և ներկայացնել պահանջներ՝ զինվորի տնտեսական, ծառայության և իրավական դրությունը լավացնելուն վերաբերյալ և չբավարարելու դեպքում խաղաղ գործադուլ կազմակերպել։ Նույպես միաձայն ամբողջ կայազորը ցանկություն հայտնեց միանալ ամբողջ ռուս ժողովրդի պահանջներին վերջացնելու մահվան պատիժը, զինվորական դրությունը, սահմանադիր ժողովի հրավիրում քառանդամ ձայնատվությունով։ Քաղաքում արտակարգ վոգևորություն ե. զինվորներին և կազակներին ամեն տեղ բնակիչները վոգևորված վողջունում են։ Սև հարյուրակայիններ չկան»։

Այսպես կոչված «աղատության որերը»—այսպես մկրտեցին 1905 թվի հոկտեմբերի և դեկտեմբերի պրոլետարիատի յերկու յերևույթների միջին ժամանակաշրջանը—այդպիսով միապետության համար վախից դողդողալու որեր եյին։ Բայց մարդիկ ամեն բանի վարժվում են։ Միապետության վրա հատկապես հանգստացնող ազդեցություն պիտի ունենար այն, վոր նա զգում եր իր կենտրոնում Պետերբուրգում միշտ աճող ապահովությունը։ Հեղափոխությունը ամբողջ յերկրում փոթորկվում եր, բայց կար տեղ, վորտեղ կարելի յեր նրանցից թագնվել, վորովհետև այնտեղ՝ Պետերբուրգում հեղափոխությունը անհաջողություն անհաջողության յետևից եր կրում։

Այս անհաջողություններից առաջինն այն եր, վոր հեղափոխությունը չհաջողվեց հեղափոխական իշխանության սպրմին, վորպիսին խորհուրդն եր, իր նախագահը տալ։ Յանգարում եյին յերկու հանգամանք։ Առաջինը յերեմ հեղափոխական կազմակերպություն՝ ս.-դ. մեծամասնության, ս.-դ. փոքրամասնության և եսերների այն սկզբնական եր, վորի մասին արդեն խոսվել ե։ Յերկրորդ այն—վոր յերեք կազմակերպություններն էլ միայն հոկտեմբերին ընդհատակյա աշխատանքից դուրս յեկան։ Միայն հոկտեմբերի վերջին Պետերբուրգում աշկարա յերևացին սոց.-դեմոկրատական թերթեր՝ բոլշևիկյան „Новая Жизнь“ և մենշևիկյան „Начало“ «պրոլետարների բոլոր յերկրների միացեք» լոզունգով։ Այդ ռուս պրոլետարիատի համար մեծ հաղթանակ եր՝ տեսնել միջազգային պրոլետարական պայքարի լոզունգը աշկարա կերպով թերթի ճակատը զարդարող, վոր մեծ քանակությունով փոզոցների խաչաձև կարվածքներում վաճառվում եր։ Բայց միայն այսպիսի պարզ պրոպագանդայի յերկար ժամերը կարող եյին մասսաների լայն խավերին ծանոթացնել այն կուսակցություններին դեպքերի հետ, վորոնք

այդ թերթերն եյին հրատարակում։ Մինչ այդ կուսակցություններին ճանաչում եյին միայն անունով և այն մարդկանց անունով, վորոնք ժողովներին բեմ եյին յելնում, իսկ ընդհատակյա աշխատանքի պայմանների ժամանակ առաջնորդները ի հարկե քիչ եյին բեմ բարձրանում և այն էլ միայն նեղ շրջանակում։ Մի խոսքով կուսակցական այն ընկերներին, վորոնց կարելի յեր նախագահության համար առաջ քաշել, այս ու այն պատճառով չեյին կարող առաջ քաշվել և նախագահ դարձավ գրեթե նույնքան պատահական մի մարդ, վորպիսին եր Սևաստապոլի Շմիդտը, ինչ վոր Նոսար, փաստաբան, վորը Շիլովսկու հանձնաժողովի ագիտացիայի առթիվ արդեն հրապարակ եր յեկել և բանվորական շրջաններում շատ ժողովրդական եր։ Մի բանվորից՝ Խրուստալյով—նա ազգանունը փոխ առավ, վորպիսի անունով էլ հրապարակ եր գալիս, այդ պատճառով էլ պատմության մեջ մտավ նով էլ հրապարակ եր գալիս, այդ պատճառով էլ պատմության մեջ մտավ նա յերկու ազգանունով՝ Խրուստալյով-Նոսար։ Սև-հարյուրակային մամուլը տեսնելով, վոր նրա անունը միշտ կապված է խորհրդի բոլոր յեղելությունների հետ, յերևակայեց, վոր նա Պետերբուրգի և գրեթե համառուսական պրոլետարիատի առաջնորդն ե. և Խրուստալյով-Նոսարի համար ահագին ռեկլամ արավ։ Իրոք նա շատ տաք և անմիտ հռետոր եր, քաղաքականապես հազիվ հազ Շմիդտից ավելի գրագետ և թեև վերջերում նա ձևականորեն մենշևիկյան ֆրակցիայում գրվեց, գործնականապես նա նույնիսկ մենշևիկ չեր։

Շատ բնական ե, վոր այդպիսի նախագահի աչքին խորհրդի պակասությունները նրա մեծ առավելություններն եյին յերևում։ «Ծրագրի դրաման պահանջները միանգամից չերևացին խորհուրդային դրոշակի վրա»,—գրում է նա հետագայում խորհրդի մասին։

«Խորհուրդը քաղաքական կուսակցություն չեր, դավադիրների մի շրջանակ չեր, կարբոնարիների և գետերիստների նման։

«Նրա անդամները քաղաքականապես միակերպ մտածողներից չեյին հավաքվում, վորոնք խորհրդի մեջ մտնելիս կուսակցության կամ «ընկերության» հիմնական պահանջները ընդունում եյին։

«Խորհուրդը ընտրվի պրոլետարական կազմակերպություն եր, Խորհրդի ծրագիրը, նրա ամբողջ գործունեությունը, տակտիկան վորոշվում եյին պատգամավորների կազմով, բանվորական ամբողջ մասսայի ազդեցությունով և տրամադրություններով»։ *)

Խրուստալյովը չեր մտածում, վոր ժամանակավոր հեղափոխական կառավարության տակտիկան—իսկ խորհուրդը դրա սաղմն եր—պետք է վարվի բոշվի բանվորական մասսայի վոչ թե տրամադրություններով, այլ ըստ էության այն հեղափոխական շահերով, վորն այդ մասսան անում եր։ Ցեվ վոր այդպիսի ժողովում կուսակցական դիսցիպլինա լինելու դեպքում, ամենևին նա չեր դառնա «կարբոնարիների և գետերիստների» ժողով։**) Պրոլետարիատի համար կուսակցական մարդկանց ընտրելու, յերե նա ներկայացուցիչ չեր դժվարանա կուսակցական կազմակերպությունների ճանաչեր։ Ամբողջ խնդիրն այն եր, վոր կուսակցական կազմակերպությունները նոր նոր եյին դուրս յեկել լույս աշխարհ և պրոլետարիատը նրանց առաջնորդներին չեր կարող գիտենալ։ Աչքի ընկնող կուսակցականները ընտրեց խորհրդին ամենից մոտ կանգնած եր ընկ. Տրոցկին (այն ժամանակ

*) Хрусталев-Насарь, «История Совета рабочих депутатов».

**) Բուրժուական դավաղրական կազմակերպություններ XIX-րդ դարի սկզբին։

„Начало“-ի խմբագրներից մեկը). բայց նա եւ կարող ևր միայն իբրև նախագահի թեկնածու հրապարակ գալ խորհրդի գոյության ամենավերջին, յերբ վերջինիս վոչինչ չեր մնում, բայց յեթե պատվով մեռնել։

Կազմակերպչորեն ձևավորված «չշաղկապված» քաղաքական վորոշ գծով, խորհուրդը, բնական է, չեր կարող միանգամից քաղաքական վորոշ դիծ ունենալ։ Նրանում գործադուլային յեռանդը սահմանից դուրս եր, և շուտով յերևաց այդ, թե վորքան հապճեպով դադարեցրվեց գործադուլը 17-ից հետո, —ընդամենը մի շաբաթ հետո յերևաց, վոր հնարավոր է և նույնիսկ անհրաժեշտ վերսկսել պատերազմական գործողությունները։ Հարվածի նպատակը պրոլետարիատը, բոլորովին բնապդաբար, բավական ուղիղ վորոշեց։ Դեռ մինչև հոկտեմբերը բանվորները բավական մոտեցան 8 ժամյա բանվորական որին. լոզունգը ամենալայն չափերով ժողովրդականացել եր դեռ հուլիսյան 9-ին։ Այստեղ շարժումը նույնքան տարերայնորեն առաջ գնաց, ինչպես հոկտեմբերյան գործադուլն եր. արդեն հոկտեմբերի 27—28-ին (հ. տ.) մեծ տաղագործները հեղափոխական ճանապարհով իրենց մեջ մացրին 8 ժամյա բանվորական որ. (9 ժամյան արդեն մեծամասնությունը պայքարով եր բերել)։ Խորհրդի Գործադիր կոմիտեին մնում եր միայն վավերացնել մետաղագործների նախաձեռնությունը և նա «առանց վիճաբանության, առանց քննության» 29-ին վորոշեց՝ 31-ից սկսել Պետերբուրգի բոլոր ձեռնարկություններում պայքար 8 ժամյա որի համար։ Տնտեսատերերը, դեռևս շշմած, մի քիչ առաջ յեղած գործադուլից, դեռ պրոլետարիատի Նիկոլայի վրա տարած փառավոր հաղթանակի հիպնոզի տակից չելած (մի հաղթություն, վորին բուրժվազիան գաղտնի համակրում եր—այդ մենք իսկույն կտեսնենք), առաջին որերին իրենց կրավորական եյին պահում։ Բայց ընդամենը յերեք որ հետո պայքարը ընդհատվեց հենց խորհրդի նախաձեռնությունով, վորը քաղաքական նոր գործադուլ հայտարարեց։

Հենց 8 ժամյա որի պայքարի նախորյակին կրոնշտատի նավաստինների ապստամբությունը ճնշվեց։ Լուր տարածվեց, վոր նրանց դաշտային դատարանով են դատելու. խոսում եյին 600 մարդ գնդակահարելու մասին։ Պրոլետարիատն այդպիսի սարսափելի բան չեր կարող թույլ տալ. բանվորների solidարությունը, անկասկած, պահանջում եր պաշտպանել նավաստիներին և վոր ամենից լավն եր, խորհուրդը այդ կարող եր շատ լավ պատճառաբանել քաղաքականապես։ «Յեթե մենք,—ասում եր պատգամավորներից մեկը,—ընկեր նավաստիներին խլենք միապետությունից և մահից ազատենք, այդպիսով հենց մենք միապետության համար մահ կըպատրաստենք։ Մեր պաշտպանությունով մենք զորքի մեջ մեզ համար բարեկամներ ձեռք կբերենք»։

Այդ շատ ուղիղ եր։ Բայց ինչպես ոգնել։ Եվ ինչ կարիք կա ժամանելու «Գործադուլով ամեն բանի կարելի յե հասնել»։ Այստեղ ի դեպ. Լեհաստանում պատերազմական դրություն հայտարարելը վրա հասավ։ Յոթ նոյեմբերի 8-ին խորհուրդը հայտարարում է, վոր Պետերբուրգի պրոլետարիատը գործադուլ է անելու ու այնքան ժամանակ, մինչև վոր կառավարությունն ազատեն բանտարկված կրոնշտատցիներին և Լեհաստանի պատերազմական դրությունը վերացնեն։

Այդ հիանալի «ժեստ» եր։ Բանվորները անսովոր համերաշխությամբ եյին գործադուլ անում։ «Նոյեմբերյան գործադուլին խորհուրդը ստիպված

չեղավ ժամանակ նվիրել գործադուլ չանող բանվորներին գործադուլային շարժման մեջ գրավելու համար։ Բոլոր բանվորները գործադուլ եյին անում», —պատմում է Խրուստալյովն իր Պետերբուրգի 1905 թվի խորհրդի պատմության մեջ։

Բայց վոչ մի բան, վոր հիմնված է «տարամադրության» վրա, յերկարատև չի կարող լինել։ Արդեն ամսի 4-ին (իսկ գործադուլն սկսվեց նոյեմբերի 2-ին հ. տ.)։ Գործադիր կոմիտեյում ստիպված եյին գործադուլը վերջացնելու հարցը դնել, վորովհետև «տրամադրությունը ընկնում եր»։ Խորհուրդը Գործկոմի առաջարկությունը մերժեց, բայց հենց մյուս որը՝ 5-ին, պետք է վորոշեր գործադուլը դադարեցնել, չնայելով, վոր Լեհաստանը մնում եր պատերազմական դրության մեջ, իսկ կրոնշտատի նավաստինները բանտարկված. (այդ ժամանակամիջոցում պարզվեց, վոր նրանց դատելու յեն վոչ դաշտային, այլ սովորական դատարանով)։ Այլապես Պիտերն իր առաջ կունենար ինքնահաճ կերպով գործադուլը դադարեցնելու կազմակերպը։

Մինչդեռ այդ դեղեցիկ, բայց անհաջող յելույթի համար, իհարկե, ստիպված եյին ընդհատել 8 ժամյա որի համար մղվող պայքարը։ Կռվի տաք ժամանակ ավելի վտանգավոր բան չկա, քան հանկարծ հարձակման ուղղությունը փոխելը։ Մի այն հրաշքը կարող է այդպիսի դեպքերում պարտությունը փոխելը։ Մի այն հրաշք չեղավ։ Վերադառնալով 8 ժամյա որի պայքարին, բանվորները ձեռնարկատերերի կողմից հանդիպեցին վոչ կրավորականության, այլ շատ լրջի և ակտիվ դիմադրության։ Գործարանների մի մասը առանց քաշվելու փակել եյին, «մինչև վոր բանվորները գործի չեն անցնի նախկին պայմաններով»։ Մյուս գործարանատերերի վրա հայտարարություն եր կախված, վորով սպառնում եյին բանվորի հաշիվը տալու, յեթե հետագայում էլ հեղափոխական ճանապարհով կդործադրվեն 8 ժամյա որը։

Խրուստալյով-Նոսարը իր պատմության մեջ ձեռնարկատերերի ճակատ այդ փոփոխությունը բացատրում է նրանով, վոր ձեռնարկատերերը գործում եյին Վիտեյի կառավարության ճնշման տակ, վորը, իբր թե, վախեցրել եր Պետերբուրգի պրոլետարիատի կրենշտատի նավաստինների վիճակին խառնվելուց։ Հաղիվ թե Վիտեն վախեցած լիներ այդ անհաջող միջամտությունից—այս առաջին. յերկրորդը՝ դեռ վոչ շատ առաջ ձեռնարկատերերը համերաշ եյին բանվորների հետ կառավարության դեմ։ «Հոկտեմբերյան գործադուլին կապիտալիստները վոչ միայն չեյին խանգարում բանվորների միությունները գործարաններում և ֆաբրիկաներում, այլև նրանք բանվորների մեծ մասին ավելին աշխատավարձի կես գործադուլի որերի համար, իսկ մի քանի ձեռնարկներում դատումը լրիվ ավելին։ Գործադուլի համար վոչ վոք չարձակվեց։ Պուտիլովի և ուրիշ գործարաններում գործատիրական վարչությունը խորհրդի աշխատավարձը լրիվ վճարում եր այն որերի համար, յերբ նրանք խորհրդի նիստերում զբաղված եյին։ Որպեսզի գործարանի վարչությունը խորհրդի պատգամավորներին եր տրամադրում քաղաքավարի կերպով շոգենավը քաղաք գնալու համար»։

«Առաջին գործադուլը—գրում եր „Право“-ն, կմնա պատմական չարժման իրրև լուսավոր էջ, բանվոր դասակարգի խոշոր ծառայության

հուշարձան ժողովրդի քաղաքական և սոցիալիստական ազատագրության գործում»*):

Ավելի ճշմարտանման և մյուս բացատրությունը: Պրոլետարիատի յետ նահանջելը կործանեց նրա անհաղթելիության փառքը: Նահանջեցին կառավարության առաջ, ձեռք չբերելով իրենց ուզածը.—գտնում էին կապիտալիստները—իսկ ինչու՞ մեր առաջ չպետք է նահանջեն: Իսկ 8 ժամյա բանվորական որը, ի հարկե, զգալիորեն դիպչում էր իրենց քսակին, քան սահմանադիր ժողովի պահանջը:

Անհաջողությունն ունեցավ և իր վրկարար հետևանքները. գործադուլի ամենազոր լինելու հավատը խորհրդներում ընկավ: «Նույնիսկ քաղաքական ընդհանուր գործադուլի կրքոտ յերկրպագուները, իրրև իշխանությունը ձեռք բերելու ընդհանրական մի միջոցի, իրենց բանաձևին ավելացրին «զինված ապստամբությունը»: Ուժի դեմ միայն մի ուժոց կար.—ուժը»:

«Իսկույն պիտի մեր գործարանների մարտական կազմակերպությունը նրանց զինելուն անցներ: Ամեն մի գործարանում կազմեցինք տասնյակներ, ընտրովի տասնապետներով. հարյուրակները—հարյուրակներով, իսկ այդ հարյուրակների վրա նշանակեցինք հրամանատար: Այդ կազմակերպություններում կարգապահությունը այնքան բարձր աստիճանի հասցրեք, որ ամեն մի ավյալ րոպեին նրանք առաջին իսկ կոչով կարողանան դուրս գալ: Հիշեցինք, որ վճռական յելույթի դեպքում մենք կարող ենք միայն մեզ վրա հույս դնել. լիբերալ բուրժուազիան արդեն սկսել է մեզ անվստահությունով և նույնիսկ թշնամությունով վերաբերվել: Դեմոկրատիկ ինտելիգենցիան արդեն տատանվում է: Միությունների միությունը, որը առաջին գործադուլին այնքան սիրով մեզ միացավ, յերկրորդին ավելի քիչ համակրանքով և վերաբերվում»: Բայց այս ասողն ինքը Խրուստալյով-Նոսարը մոռանում էր, որ զինված ապստամբության համար հարկավոր է ավելի մեծ վոգյեվորություն, քան գործադուլի համար: Իսկ այժմ նույնիսկ գործադուլ անելու համար վառոդը պակասում էր: Այս արդեն առաջուց մեծ հաջողություն չէր խոստանում զինված ապստամբությանը Պետերբուրգում: Իսկ «լիբերալ բուրժուաժիայի» համակրությունը կամ չհամակրելը, «դեմոկրատիկ ինտելիգենցիայի վստահելի կամ անվստահելի լինելը այս դեպքում մեծ դեր չէին խաղում: Առաջինը վախենում էր պրոլետարիատից, յերկրորդը փարում էր պրոլետարիատին, քանի դեռ նա ուժեղ էր: Նրա թույլ յերևալը պետք է առաջինին խրախուսեր, յերկրորդին վաներ:**)

Նոյեմբերի յերկրորդ կեսից հ. տ. Պետերբուրգի թերթերում, նաև բուրժուական ամսագրերում տպված էր «բանվորների պատգամավորների խորհրդի Գործադիր Կոմիտեն 22 ի նիստում անհրաժեշտ համարեց, նկատի ունենալով վրա հասնող տնտեսությունը, որ բանվոր դասակարգը և ընակչության բոլոր չքավոր խավերը խնայողական դանձարաններից իրենց ավանդները

*) Ծիսատը վերցրված է վերը հիշված հեղինակությունից 127 և 160 եջ. „Право"-ն բուրժուական ամսագիր էր, այդ որերում ապագա կադետների գլխավոր որգանը:

**) Վերջինիս կարծես հակասում է «դեմոկրատիկ ինտելիգենցիայի» վարմունքը 1917 թ. հոկտեմբերին. յերբ նա պրոլետարիատի հաղթանակին պատասխանեց «խիզախ սաբոտաժով»: Բայց չպետք է մոռանալ, որ հոկտեմբերին ինտելիգենցիան հենց չէր համաում պրոլետարիատի ուժին. ակնհայտ էր նշանավոր «յերկու շաբաթ»-ը...

վերցնեն և պահանջեն, որ ամեն տեսակ վճարում, դրանց թվում նաև աշխատավարձը, հնչյուն դրամով լինի»: «Կառավարական հաղորդագրությունը» չդանդաղեց ընդունելուց, որ խորհրդի վորոշումը «խնայողական գանձարկղում ավանդներ դնողների վրա առանց ազդեցության չմնաց, վորն արտահայտվեց ավանդները մեծ չափերով հետ պահելու մեջ»: Դեկտեմբերի ընթացքում Պետերբուրգի խնայողական գանձարկղներում վճարում, մուծումին գերազանցեց ավելի քան 4 միլիոն ռուբլի վոսկով: Ամբողջ Ռուսաստանին դեռևս ավանդները մեծ չափերով հետ պահելու մեջ»: Դեկտեմբերի և արտահայտվեց ավանդները մեծ չափերով հետ պահելու մեջ»: Դեկտեմբերի ընթացքում Պետերբուրգի խնայողական գանձարկղներում վճարում, մուծումին գերազանցեց ավելի քան 4 միլիոն ռուբլի վոսկով: Ամբողջ Ռուսաստանին դեռևս ավանդները ավելի վերցնելու, քան մուծելու գերակշռությունը հասավ Մոսկվայի զինված ապստամբության ժամանակ—Վիտտեյի կառավարությունը պետք է Պետերբուրգում վոտքը ամուր դներ: Ցեվ թվում էր, վոր այդտեղ ավելի հեշտ էր, քան վորևե տեղ: Նոյեմբերի 26-ին բանտարկվեց Խրուստալյով-Նոսարը: կազմակերպչական տեսակետից այդ այնքան էլ հոկտեմբերի 17-ից հետո: Ի հարկե վերցնում էին վոչ բացառապես խորհրդի վորոշման ազդեցության տակ, նույնիսկ Պետրում. խնայողական գանձարկղում ավանդներ դնողների վրա առանց ազդեցության չմնաց, վորն կեղտոտ գլխավոր ավանդատուները, իհարկե, պրոլետարիատը չէր և վոչ էլ բնակչության նրան ազգակից խավերը. դրանք քաղքենիներն էին, վորոնք մասամբ սև հարյուրակային տրամադրություն ունեին: Վերցնում էին պարզ կերպով նրա համար, վոր քաղքենիության համար այդ «խռովալից» որերին, ուզում էին դրամն իրենց մոտ պահել: Բայց ապիտացիայի տեսակետից, իհարկե շատ հաջող քայլ եր այդ շարժումը խորհրդի հեղինակավորության վրա, իսկ ստիպել հենց իրեն՝ կառավարությանն ընդունելու, վոր խորհրդի ապիտացիան բանվորական շրջաններից էլ շատ հեռու աղ-

դեցություն ուներ:

Քաղաքական մակընթացության ֆոնում այդ կարող եր խորհրդի հեղինակությունը և կառավարության աստիճ յերկյուղը շատ մեծացնել: Բայց այժմ տեղեկություն եր, միապետությունը աստիճ վախեցած վիճակից դուրս եր գալիս. համարձակ և ուղիղ, բայց վոչ մահացու հարվածը միայն կարող եր նրան հիշեցնել, վոր խորհրդի հետ «ժամանակ և հաշիվ տեսնելու»: Դեռևս ամբողջ Ռուսաստանում փոթորկել շարունակվող բանվորական հեղափոխությունը ճնշելու համար—հենց դեկտեմբերին նա ամենաբարձր կետին հասավ Մոսկվայի զինված ապստամբության ժամանակ—Վիտտեյի կառավարությունը պետք է Պետերբուրգում վոտքը ամուր դներ: Ցեվ թվում եր, վոր այդտեղ ավելի հեշտ եր, քան վորևե տեղ: Նոյեմբերի 26-ին բանտարկվեց Խրուստալյով-Նոսարը: կազմակերպչական տեսակետից այդ այնքան էլ Տրոցկու այն ժամանակվա կեղծ անունը): Խորհուրդը վերջապես իր գլուխ ունեցավ իսկական քաղաքական առաջնորդի, բայց այդ առաջնորդը պետք է առաջնորդեր մի ջարդված բանակ: Իրենց նախագահի բանտարկությանը Պետերբուրգի բանվորները քիչ ևս պատասխանային ցավակցություն արտահայտելով»: Բալտիկ գործարանը վորոշեց. «Բանտարկված նախագահի՝ ընկեր Խրուստալյովի համար Բալտիկ գործարանի բանվորները հայտնեցին, վոր իրենք պատրաստ են նույնիսկ գործադուլի (!), յեթե այդ վորոշի բանվորների պատգամավորների համաքաղաքային խորհուրդը...»:

Բավական և համեմատել նոյեմբերի սկիզբը, յերբ Պետերբուրգը իբրև մի մարդ վոտքի կանգնեց կրոնշտատի նավաստիների պաշտպանության համար. այդ կիսատ խոստումի հետ՝ «նույնիսկ» գործադուլ անելու (այն և խորհրդի պատասխանատվությունով) իրենց նախագահի պաշտպանության համար, վոր գնահատենք, թե հեղափոխության ալիքները վրդովան հեռացել են և վորքան միապետությունը Պետերում հաղթանակելուն մոտ եր:

Խորհուրդը ինքն էլ պատրաստվում էր վերջանալու։ Դեկտեմբերի 2-ին նա հրատարակեց նշանավոր «մանեֆիստը», որը կարծեք նրա կտակն էր։ Սկսելով «կառավարությունը սնանկության ափին է» խոսքերով ե մանեֆիստը վերջացնում էր նոյեմբերի 22-ի վորոշումով, որ խնայողական գանձարկղներից ավանդները վերցրին, լրացնելով այդ մի «վորոշումով» պրոլետարիատի անունից. «Թույլ չտալ վճարելու այն բոլոր փոխառությունների պարտքերը, որը ցարական կառավարությունը կնքում ե, էլրբ պարզ ու բաց կռիվ էր մղում ամբողջ ժողովրդի հետ»։

Բնորոշ ե վոր մանիֆեստը զինված ապստամբության կոչ չէր անում, վորի մասին խորհուրդը խոսել էր դեռ իր այն հայտարարության մեջ, որ վերաբերում էր Խրուստալյով-Նոսարի բանտարկության։ Այն հեղափոխական կազմակերպությունները, վորոնք իրենց ստորագրությունը լրիվ դրին մանիֆեստի տակ, այդ արին միքանի որից հետո առանձին-առանձին։ Անկուսակցական ժողովում, վորպիսին ենում էր խորհուրդը, հարկավոր «որամադրությունը» արդեն չկար։

Մյուս որը, դեկտեմբերի 3 ին, խորհուրդը բանտարկվեց. «Ցես նրան բանտարկեցի, հաղթանակով ասում էր Վիտտեն հետո, առանց վորևե միջադեպի, վոչ մի կաթիլ արյուն չթափելով»։

Այս բոլոր պատմածից հետո ընթերցողը չի զարմանա, իմանալով վոր վոչ թե մի նախագահի այլ ամբողջ խորհրդի ներկայացուցչության*) կալանավորմանը Պետերբուրգի պրոլետարիատը պատասխանեց խիստ համերաշխ գործադուլով։ Պետերբուրգի բանվորների յերրորդ մասից ավելին նույնիսկ այս դեպքից հետո յել հարկավոր չհամարեց իր զբաղմունքները դադարեցնել, չնայելով Մոսկվայում փոթորկվող ապստամբության, և Նիկոլայևսկի յերկաթուղու ճանապարհը շարունակում են աշխատել, կարծես բան չեր պատահել, վորը կառավարությանը շատ ոգնեց Մոսկվայի ապստամբությունը ճնշելու։ Կազմակերպել խորհրդի նոր կազմ բանտարկվածի տեղ չհաջողվեց. «Յերկրորդ խորհրդի պլենումը այդպես, կարծեմ, յերբեք էլ չգումարվեց», ասում է իր հիշողություններում նրա անդամներից մեկը։ Հեղափոխությունը (Պետերբուրգում) պարզ կերպով դեպի նվաղումն էր գնում»։

Այդ փաստը վաղուց ե ճանաչված և վաղուց ե նրան տրվում արդեն իր տեսակում կլասսիկ դարձած բացատրություն։ Պետերբուրգի պրոլետարիատը հոկտեմբերյան և նոյեմբերյան գործադուլների ընթացքում «քաղցածացել էր» և այլևս ընդունակ չէր հեղափոխական լուրջ ուժերի լարման։

Վորովհետև մենք չենք ուզում «վոչ լաց լինել և վոչ ծիծաղել, այլ հասկանալ», անհրաժեշտ է այս հարցի վրա մի քիչ կանգ առնել։

Ի՞նչ կնշանակե պրոլետարիատի «հյուծվելը» գործադուլի պայքարում։ Արևմտյան Յեվրոպայի պայմաններում այդ կնշանակե. ամեն մի բանվորական կազմակերպություն ունի իր «մարտական» գործադուլային գանձարկղը, վորով գործադուլի ժամանակ գործադուրկների գոյությունը պահպանվում է։ Այդ գանձարկղի դատարկվելը գործադուլ անողներին և իրենց ընտանիքներին սովի յե մատնում—այդ էլ է «բանվորների հյուծվելը յերկարատև գործադուլներից», վորը և ստիպում է նրանց անձնատուր լինել։

*) Խորհուրդը բաղկացած էր 562 պատգամավորից, վորոնք ներկայացնում էին 147 գործարան և ֆաբրիկա, 34 արհեստանոց և 16 արհեստակցական միություն։ Կալանավորվեց իրապես 9ործկոմը։

Ունեյին արդյոք ռուս բանվորները 1905 թվին այդպիսի «մարտական գանձարկղներ»։ Այն ընկերները, վորոնք հիշում են այդ ժամանակը, յերեվի, այս հարցը կարդալով կժպտան։ Մեզանում վոչ մի «մարտական գանձարկղի» հոտն էլ չկար։ Դրա սաղմը կարելի յե համարել հենց Պետերբուրգի խորհրդում կազմված «գործադուրկների հանձնաժողովը»։ Վոչ մի ցուցում չկա այն մասին, վոր Պետերի պրոլետարիատի շարժման անկումը 1905 թվի վերջին վորևե կապ ունենար այդ հանձնաժողովի միջոցների սպառման հետ.—միջոցներ, վորոնք այնքան չնչին եյին, վոր լուրջ նշանակություն ունենալ էլ չեյին կարող։

Նշանակում ե բացատրություն պետք ե վորոնել առանձին բանվորների անհատական միջոցների դրության մեջ։ Հիրավի արդյոք այդ տեղ այնպիսի խոշոր հյուծում կա՞ր, վոր կարելի կլինի նրանով բացատրել հուսահատությունը և պայքարը դադարեցնելը։

Ահա տվյալները Պետերբուրգի մետաղագործի աշխատավարձի մասին՝ Պուտիլովի գործարանի արխիվից հանված.

Հոկտեմբեր ամսին (հասկանալի յե հ. ս.) 1905 թ. յուրաքանչյուր Պուտիլովցի միջին թվով ստանում էր 44 ռ. 81 կ. ընդդեմ 45 ռ. 44 կ. (վոսկով) 1904 թվի համապատասխան ամսում։ Նոյեմբեր ամսում՝ 44 ռ. 56 կ. ընդդեմ 47 ռ. 65 կ-ի. 1904 թվին։ Յեվ միայն դեկտեմբեր ամսի համար խոշոր տարբերություն ենք դտնում.—28 ռ. 84 կ. ընդդեմ 1904 թ. դեկտեմբերի 42 ռ. 04 կոպեկի։

Պետերբուրգի մետաղագործի համար ավելի հյուծողը դեկտեմբերյան այն գործադուլն էր, վորին Պետերբուրգի պրոլետարիատն այնքան անհամեմատելի մասնակցություն ունեցավ «հյուծված լինելու» պատճառով։ Նախորդ ամիսների «հյուծումը», հենց այն վորը իրր թե արգելից Պետերբուրգի պրոլետարիատին դեկտեմբերին հրապարակ դուրս գալ, այնքան չընչին էր, վոր այդ պրոլետարիատի համար վիրավորական կլիներ նրան վորևե նշանակություն տալը։ Ռուս բանվորը ստանալու համար ամիսը 3-4 ռ. դեռ իր ազատությունը չեր վաճառում։

1918-1919 թվերը մեզ ցույց տվին, թե ինչպիսի զրկանքներ կարող ե տանել պրոլետարիատը, յերբ նա պայքարում ե հուսով իր միս ու արյուն յեղող գործի համար։ 1905 թվի դեկտեմբերին Պետերբուրգում հենց այդ հաջողության հույսը չկար։ Հյուծումը նյութական չեր, այլ հաղթական։ Պրոլետարիատը հոգնեց պայքարելուց այնպես, ինչպես արագ ու. հեշտ հոգնում ե այն մարդը, վորի գործը կարգի չի ընկնում։ Պետերբուրգի բանվորների յելույթներից հոկտեմբերի 17-ից հետո վոչինչ չեր դուրս գալիս և այս հանգամանքը, բնականաբար, ավելի քիչ հաստատուն խավերում առաջ եր բերում հիասթափություն։ Արժե՞ արդյոք հրապարակ դուրս գալ, յերբ այդ բացի ուռուցքներից վոչինչ չի խոստանում։ Ավելի լավ միջոց չկա քայքայելու բանակը, քան նրան մանր, անհաջող կռիվների մեջ խառնելը։

Իհարկե շատ մեծ սխալ կլիներ, միանգամայն հակամարքսիստական գործ, այստեղ փնտռել վորևե մեկի անհատական սխալները։ Մարդիկ աշխատում են վորոշ օբյեկտիվ միջավայրում։ Պետերբուրգի շարժումի դեկավարների առաջ կար վորոշ չափով կազմակերպված և քաղաքականապես հասունացած պրոլետարիատ։ Յեվ այս և՝ այն Պետերում շատ ավելի բարձր եր, քան Մոսկվայում, բայց թե այստեղ էլ կազմակերպված լի-

նելը վճռքան թույլ եր, յերևում է նրանից, վոր խորհուրդը միայն 4 արհեստակցական միություն գտավ, ինքը թողեց 16-ը. արհեստակցական միությունները այդպես չորս անգամ խորհրդի ընթացքում մեծանալը, գուցե և նրա աշխատանքի գլխավոր գումարն եւ Նա Պետերբուրգի պրոլետարիատին թողեց ավելի համախմբված քան ինքն ստացավ և այդ էլ արդեն պլյուս եր։ Ցնթե սրան ավելացնենք և այն, վոր խորհուրդը քաղաքական գիտակցության շատ մեծ դպրոց եր, վոր նրանից հետո անհասկանալի եյին վոչ միայն հունվարի 9-ը, այլև այնպիսի կիսատնտեսական կիսաքաղաքական տարերային գործադուլը, վոր սկսվեց հոկտեմբերին,—կհասկանանք, վոր խորհուրդն իզուր չապրեց։

Մնացած Ռուսաստանի համար Պետերում պրոլետարական մարտական կենդրոն կազմվելը խոշոր օրինակ եր.—այս դեպքում Պետերի խորհուրդը ավելի լավ վիճակ ունեցավ, քան Իվանովո-Վոզնեսենսկունը, վորը ցնց չեզոքացված (կտրված, վոչ վոքի հետ չկապված) յերևույթ։ Պետերի օրինակով կազմվում են բանվորական պատգամավորների խորհուրդներ՝ Ռոստով-Դոնում (նոյեմբերի սկզբին), Կիևում (նոյեմբերի 6) Կոստրոմայում (ամսի կիսին), Ռզեսայում, Նիկոլաևում, Սամարայում, Ռևելում, Բագվում, Սորմովում, Վոտկինի գործարանում, Նովորոսիյսկում, Սարատովում, Տագանրոգում, Յուզովկայում, Տվերում և այլն. այդ բոլոր քաղաքներում նոյեմբերի վերջին կամ դեկտեմբերին, Պետերբուրգից շատ ուշ։ Նույնպես ուշ (նոյեմբ. 22) խորհուրդ կազմվեց նաև Մոսկվայում։

Պետերի անկումից հետո Մոսկվան ցնց հեղափոխության գլխավոր միջնաբերդը։ Մոսկվայի շրջանում գերակշռում եր մանածագործությունը—Պետերում հրամանատար եյին մետաղագործները։ 1905 թվին մետաղագործները ավին 811 հազ. գործադուլավոր ամբողջ արտադրության մեջ աշխատող 252 հազ. բանվորների հանդեպ. մանածագործները—1,296 հազ. գործադուլավոր 708 հազ. բանվորների հանդեպ։ Ամեն մի մետաղագործ այդ տարին գործադուլ արավ 3 ու կես անգամ. մանածագործը 2 անգամ էլ գործադուլ չարավ։ Ցնթե մենք համարենք շրջանցները, կտեսնենք, վոր Պետերբուրգի շրջանը 298 հազ. բանվորի հանդեպ տվեց 1,033 հազար գործադուլավոր. Մոսկվայինը՝ 540 հազ. գործադուլավոր 567 հազ. ամբողջ բանվորության հանդեպ։ Ամեն մի Պետերբուրգցի գործադուլ արավ դարձյալ 3 ու կես անգամ, բայց ամեն մի Մոսկվացի մի անգամ էլ գործադուլ չարավ։ Մնացած գավառը, իհարկե, ավելի յեր յեա ցնում. (403 հազար գործադուլավոր 543 հազար բանվորի դիմաց)։

Բայց Մոսկվայի ավելի հետացնց պրոլետարիատը դրա փոխարեն ավելի թարմ եր. հոկտեմբերյան հաղթանակից հետո նա մինչև դեկտեմբեր անհաջողություն չունեցավ։ Միաժամանակ հաղող եր անդրադառնում և Մոսկվայի ինտելիգենցիայի համեմատական թուլությունը։ Մինչդեռ ինտելիգենցիայով հղփացած Պետերբուրգում բանվորական կուսակցությունը լստիպված եր ամեն տեսակի «դեմոկրատների» ուժեղ մրցակցության դիմադրել և դրա պատճառով ամեն տեսակի «անկուսակցական» կոմբինացիաներ կազմելուն համաձայնել. Մոսկվայում սոցիալ-դեմոկրատները և հենց բոլշևիկները հիմնական տեն ավողն եյին և այստեղ խորհուրդ կազմելն արդեն կուսակցության հաղթություններ անկուսակցականության դեմ, վոր չափով խորհուրդը այստեղ փոխարինեց «գործադուլային կոմիտեյին», վորը խոշոր

խառնուրդ ուներ «Միության Միության» ինտելիգենտներից։ Այն ժամանակ Մոսկվայում բոլշևիկների մրցակից դուրս եյին գալիս միայն սոցիալիստ-հեղափոխականները, վորոնք այն ժամանակ էլ սոցիալիստներ չեյին, բայց հեղափոխականների անվան դեռ արժանի եյին։ Մոսկվայում «պատահական մարդկանց» թիվը չնչին եր և վոչ մի Երուսաղեմ-Նոսարի նման դեմք Մոսկվայի խորհուրդը չեր զարդարում։ Հեղափոխական շարժման փաստորեն դիկտատորը Մոսկվայի սոցիալ-դեմոկրատական կոմիտեն եր, հանդուցյալ ընկ. Շանցերի («Մարատի») գլխավորությամբ։ Նա կազմակերպեց Մոսկվայի ցույցերից ամենախոշորը՝ ընկ. Բաումանի թաղումը, վորին սպանել եյին սև հարյուրակայինները հոկտ. 18-ին. հուղարկավորությանը մասնակցում եր 200,000 մարդ և վորին նայելու համար հավաքվել եր բառացի ամբողջ Մոսկվան։ Այդ յերթը այնպիսի տպավորություն թողեց սև հարյուրակայինների վրա, վոր նրանք վորոշեցին յերթի ցնացորդների վրա հարձակվել միայն յերեկոյան, մթության մեջ, այն էլ կազակների աջակցությամբ։

Մոսկվայի շարժման այդ մեծ կենդրոնացումն ուներ իր վտանգավոր կողմը. ռեակցիայի ուղիղ հարվածը կարող եր ամբողջ մեքենան կանգնեցնել հեղափոխությունը գլխատել. իսկ յեթե հաջողվեր կենդրոնը շրջաններից կտրել, ամբողջ շարժումը կկորցներ իր կազմակերպված լինելը։ Մենք կտեսնենք, վոր ի դժբախտություն Մոսկվայի նրանում այդ յերկու դժբախտությունն էլ պատահեց։ Իր հակառակ կողմն ուներ և Մոսկվայի պրոլետարիատի հեղափոխական թարմությունը։ Այն անհաջողություններն ու հիասթափությունները, վորոնք պետերբուրգցիների համար առարկայական դասեր եյին, Մոսկվային անծանոթ եյին։ Նոյեմբերի և դեկտեմբերի մեջ այստեղ էլ համառուսական մի անհաջող գործադուլ յեղավ փոստ-հեռագրական, վորի վրա գրեթե այնպիսի հույսեր եյին դրվում, ինչպիսին յերկաթուղագծայինի վրա յեր դրված, բայց այդ հույսերը չարդարացան։ Իշխանությունն արդեն նախապատրաստված եր. թեև ապագա «почтель»-ը (փոստ-հեռագր.) գործադուլ արեց համերաշխ և լավ դիմացավ, բայց գիջում չստացավ։ Այս ավելորդ անգամ ցույց եր տալիս, իհիշի այլոց, թե միապետության վախը, ստատիկ յերկյուղը վորքան դեր եյին խաղում հոկտեմբերի 17-ի հաղթանակում։ Բայց պրոլետարիատին բառի բուն մտքով այդ անհաջողությունը չվնասեց. ընդհակառակը նրա գնդերն ավելացան այն չափով, վոր չափով հեղափոխական մասսայի մեջ քաշվեց նոր և շատ խոշոր պրոլետարիատին մոտիկ մի խավը։ Փոստայինները միակը չեյին և վոչ էլ ամենաանսպասելին. բոլշևիկներին հաջողվեց ագիտացիայի յենթարկել և այնպիսի խմբերի, ինչպիսին Ոխոտնի շարքի մագործներն են—պատժականորեն, դեռ 1870 թվից սկսած ռեակցիայի հենարանը։ 1878 թվից հետո յերբ այդ մագործները ծածել եյին ուսանողական ցուցարարներին „охотнорядец“ անունը Մոսկվայի ինտելիգենցիայի բերանում հավասարազոր եր «ջարդարարի»։ Այժմ այդ «ոխոտնորյադցիներն» էլ գործադուլ անող մասսայի մեջ եյին։

Ավելի կարևորն այն եր, վոր սոցիալ-դեմոկրատական պրոպագանդան սկսեց տարածվել նաև Մոսկվայի կայազորում։ Սա Պետերինից թվով շատ քիչ եր և իր կազմով ավելի դեմոկրատիկ։ Այստեղ չկային գվարդիական գնդեր, հարուստ կալվածատերերից յեկած սպաներով և ունևոր գյուղա-

գումբյունից յելած շարքայիններով։ *) Թեև «զրենադերների» անունով զարդարված, բայց Մոսկվայում սովորական „армейски“ (բանակային) հեռուահար զորք կար, բուրժուական սպաներով և «միջակներից» յելած զինվորներով։ Միայն մի ձիավոր գունդ, Սումսկի դրագունյանը (առաջ և հետո գուսարական) Մոսկվայում ուներ «գվարդիական» կազմ և սովորություններ։ Դրա փոխարեն Մոսկվայում կային պրոլետարական մասեր՝ սապյորների վաշտ, յերկաթուղագծային վաշտ. հայլն. վերջինս ամբողջովին նախկին յերկաթուղայիններից կազմված։ Պետերբուրգում, ցարի աթոռանիստում, այդպիսի «վստանգավոր մասեր» չեյին պահում. մենք հիշում յենք վոր Պետերի կայազորը յերկաթուղային վոչ մի մաս չուներ։

Մոսկվայի զորքերում ագիտացիան սկսել եր տարածվել արդեն հոկտեմբերին։ Բաումանի թաղմանը իր վրա յեր հրավիրում ուշադրությունը զինվորականի հագուստով մարդկանց մի խումբ, վորը իբրև պատվո պահակ ձիերով գնում եր Մոսկվայի կոմիտեյի դրոշակի կողքից։ Դրանց մեջ յերևում եյին և «պահեստի պրոպորշչիկների» վոսկե ուսադիրներ։ Ամենից ավելի պրոպագանդայի յենթարկվել եյին սապյորները և հրետանիականները. առաջինների վրա նայում եյին իբրև «յուրայիններին»։ Սակայն ագիտացիան հասավ և այնպիսի գնդերի, ինչպես «յերկրորդ հերթի» կազակները են, վորտեղ նույնպես կային մեծ թվով պահեստիներ, զորաժողովի յենթարկված կազակ տնտեսատերեր, ինչպես Մանջուրական բանակում եր։ Կտրված լինելով տանից, նրանք այդ բանից շատ եյին նեղվում, վոստիկանական ծառայությունը նրանց զզվեցրել եր և նրանք ամբողջ հոգով համակրում եյին հեղափոխականներին, յերբ սրանք խոսում եյին գյուղացիական կարիքի մասին և մարտկում կառավարությանը։

Նոյեմբերի վերջին—դեկտեմբերի սկզբին (հ. տ.) Մոսկվայի կայազորի մեջ սկսվեց խլրտումը այն ձևերով ու չափերով, վորպիսին նա Պետերբուրգում չուներ։ Սկսվեց սապյորների և Տրոյիցկու-Սերգիևսկի պահեստի գնդի «կոլլեկտիվ հայտարարություններից», բայց դրանով չվերջացավ։ Դեկտ. 2-ին Ռոստովյան գրենադերական գնդում բռնկեց իսկական ապստամբություն։ Սպաները մասամբ վռնդվեցին, մասամբ բանտարկվեցին և գունդը փակվեց զորանոցներում, վորտեղ ամեն բան կառավարում եր ընտրված զինվորների կոմիտեն 20 հոգուց բաղկացած։ Միաժամանակ մյուս գրենադերական գնդերը սկսվեցին մեկը մյուսի մոտ հյուր գնալ մարսելեզով։

Զինվորների պահանջները զուտ-արհեստակցական եյին—ընդհանուր առումով դրանք վերաբերում եյին զինվորների իրավունքների այն ձևակերպումին, վորը իր արտահայտությունը գտավ 1917 թվին նշանավոր «№ 1» հրամանում։ Բայց միևնույն ն, թե ինչ հողի վրա յեր. դա մի զինված մասսա յեր, վորը դադարել եր կառավարությանը հպատակվելուց. մի մասսա, վոր լուրջ զինված եր. Ռոստովի գունդն ուներ 8 գնդացիր, Պետք ե նկատի ունենալ այն, վոր կառավարությունը ինքը հրետանի չուներ հրետանու անվստահելի լինելու պատճառով թնդանոթները հավաքեցին Խոդինկի դաշտը, ուր գտնվում եյին հետևակ պահակի հսկողության տակ (վորը,

*) Գվարդիայում ընդունում եյին ամենից բարձրահասակ և գեղեցիկ նորակոչներին, իսկ բարձրահասակ և ուժեղ յերիտասարդներ հաճախ «ուժեղ» կազակների ընտանիքներում եյին հանդիպում, քան գյուղի չքավորների մեջ։

ինչպես հետո պարզվեց, այնքան ել վստահելի չեր)։ Բանվորների վճռական յելույթն այդ մոմենտին շարժմանը մեծ մղում կտար. ինտելլիգենտ-ագիտատորներին սովորական զինվորների մասսան անվստահ եր վերաբերվում։ Բայց այդ որերին բանվորական յելույթ չեղավ. այդ սկսվեց միայն դեկտեմբերի 7-ին, յերբ ռոստովցիների ապստամբությունը կառավարությունը վաղուց եր լիկվիդացիայի յենթարկել և նախազգուշացում ստանալով, զինաթափ եր արել և զորանոցներում փակել բոլոր անվստահելի դնդերը։

Արդեն այստեղ իրեն զգացնել տվեց մասսայի թույլ նախապատրաստությունը գործադուլին հաջորդող պայքարի համար։ Ռոստովյան գնդի ապստամբությունն ազդանշան չդարձավ ապստամբության, վորովհետև այդ ազդանշանը սպասում եյին կոմիտեյից, իսկ կոմիտեն տեղին յերկյուղ կրելով շարժումը քայքայելուց և չեզոքացրած մի «պուտզի»*) պատճառ դառնալուց, իր հերթին կենդրոնից եր հրահանգ սպասում։ Այդ ժամանակ դեռ վոչինչ հայտնի չեր Պետերբուրգի խորհրդի վիճակի մասին, վորն ինքն ել, տեսանք, իր մանիֆեստում դեռ զինված ապստամբության կոչ չեր անում։ Դեկտեմբերի 4-ին Մոսկվայում իմացան, վոր խորհուրդը—ավելի ճիշտը Գործադիր կոմիտեն բանտարկված և Մոսկվայի խորհուրդը ձայների մեծամասնությամբ վորոշից հայտարարել գործադուլ։ Սակայն կոմիտեն վորոշից՝ այդ վորոշումը ճշտել հարցնելով բոլոր խոշոր գործարաններին և ֆաբրիկաներին։ Այդ ևս յերկու որ տևեց։ Այդ ժամանակվա ընթացքում ընդհանուր քաղաքային կուսակցական համագումարը յեկավ յելույթի անհրաժեշտության գիտակցության. «մնձ, յեթե վոչ վճռական, նշանակություն ունեցավ այն պատգամավորների հայտարարությունը, վորն յեկել եր միաժամանակ գումարված համառուսական յերկաթուղայինների համագումարներից, թե իրենք վճռել են միանալ ընդհանուր քաղաքական գործադուլին», — ասում է մասնակիցներից մեկը։

Յերկաթուղային գործադուլը վճռական նշանակություն ունեցավ նրա համար, վոր յեթե նա իրականանար, Մոսկվա դրսից զորք բերելը անհնար կլիներ, իսկ Մոսկվայի կայազորի տրամադրությունը թվում եր (մասամբ իրոք ել այդպես եր) յելույթի համար ոգտակար։

Վորովհետև գործարաններում յեղած միտինգները վկայում եյին «բանվորական մասսաների ընդհանուր խիստ վոգևորության մասին և նրանց պատրաստ լինելու զինված պայքարի համար», այդ պատճառով խորհրդի յերկրորդ անգամ վորոշումը, ըստ ուժի, պարզ ձևականություն եր։ Բայց դրա շնորհիվ միայն դեկտեմբերի 7-ի առավոտյան յերևաց խորհրդի կոչն ուղղված «բոլոր բանվորներին, զինվորներին և քաղաքացիներին», վորը վերջանում եր այս հրավերով. «Համարձակ դեպի կռիվ, ընկեր բանվորներ, զինվորներ և քաղաքացիներ. կորչի ցարական հանցավոր կառավարությունը։ Կեցցե ընդհանուր գործադուլը և զինված ապստամբությունը»։ Կոչը, Պետերբուրգի մանիֆեստի նման, ստորագրել եյին խորհրդից հետո Մոսկվայի բոլոր հեղափոխական կազմակերպությունները։ Միաժամանակ համառուսական յերկաթուղային միությունը իր կոչը հայտարարեց, վոր Դեկտ. 7-ից սկսած հայտարարվում է յերկաթուղայինների ընդհանուր քաղաքական գործադուլ։

*) Պատահական, չմտածված բռնկում, վորը միշտ վերջանում է փլուզումով։

Այդ բոլորի համար գործադրվեց յերեք որ՝—հեղափոխության համար ահագին ժամանակ.—բավական է հիշել, վոր ֆրանսիական յերկու հեղափոխությունները՝ 1830-ի և 1848 թվի (փետրվարյան) յերեք որում սկսվում և վերջանում էին։ Այնուամենայնիվ յեթե յերկաթուղայիններն իրենց մի-ության կոչին նույնպես միահամուռ արձագանք տային, ինչպես հոկտեմբերին եր, Մոսկվայի ապստամբությունը հաջողության դեռ հույս կունենար։ Մոսկվայի գեներալ նահանգապետը, դեռ նոր նշանակված Դուբասովը, բացի սումսկի դրագունններից և 4 հարյուրակ կազակից, իսկապես, ուրիշ զորք չուներ։ Իր խնդրին Պետերբուրգից զորք ուղարկել, Նիկոլայ «մեծը» վորը այնտեղի հրամանատարն եր, պատասխանեց. «Պետերբուրգում Մոսկվա ուղարկելու համար ազատ զորքեր չկան»։ Դաբասովը պետք է ինքը իր. գլխի ճարը տեսներ, ինչպես կարող եր։

Բայց այդ մարդը, վորը մի ժամանակ պատերազմական հաջողություն եր ունեցել—նա պայթեցրեց տաճկական զրահակիրը 1877 թվին, վորից և սկսվեց Նրա կարիերան—քաղաքացիական կռվում էլ հաջողություն ունեցավ։ Նույն որը, յերբ նա Նիկոլային, մեծ իշխանին, իր հուսահատական հեռագիրն ուղարկեց, վորն այնպիսի անհույս պատասխանի արժանացավ, նա կարող եր ներքին գործերի մինիստրին հայտնել. «Այժմ բանտարկվեցին յերկաթուղային 6 գլխավոր պատգամավոր»։

Դուբասովն ինքն էլ չգիտեր, թե ում եր իրեն ձեռքում։ Իրապես 7-ից 8-ը գիշերը բանտարկվեցին վոչ թե յերկաթուղային պատգամավորները, այլ այն մարմինը, վորը ղեկավարվում եր ամբողջ շարժումը և կազմված եր ամենահեղինակավոր ներկայացուցիչների՝ ս. դ., ս-բ և յերկաթուղ. միության։ Մյուսների թվում բանտարկվեց նաև «Մոսկվայի դիկտատոր» վ. լ. Շանցերը։

Պատահեց այն ամենավատը, վոր կարելի յեր սպասել՝—շարժումը գլխատվեց։ Միաժամանակ Մոսկվայի ս. դ. կոմիտեյի (բալշևիկների) գործադրությունները, շրջաններից կտրվեց։ Իր տրամադրության տակ վոչ մի զինվորական մաս չունենալով, կոմիտեն չեր կարող կենտրոնական հարված տալու վորոշում կայացնել։ Նա ուներ միայն «մարտական խմբեր», շատ թույլ (ամբողջ Մոսկվայի համար 300—400 մարդ), վորոնք մի կերպ զինված էին և վորոնց անմիջական պարագը միտինգները պահպանելն եր։ Նրանց նշանակությունը ավելի հոգեբանական եր*). սև հարյուրակային-ները, վորոնք հավատացնում էին, թե «կոմիտեն ունի 17,000 դրուժիննիկ, վոտից գլուխ զինված», նրանցից վախենում էին։ Իսկ իրը իրական մարտական ուժ նրանք կարող էին միայն ցույցերի համար պետք գալ։ Պարտիզանական կռիվը, վորը վճռեց «Դործադիր Հանձնաժողովը» մղել՝ հարձակվել վոստիկանության, ժանդարմների, զինվորական մանր խմբերի վրա, շատ փոքրաթիվ Դուբասովյաններին հանգստանալ թույլ չտալով—այդ միակ տակտիկան եր, վոր կարելի յեր ընդունել։ Բայց դրուժիննիկների պարտիզանական խմբերը պետք է ունենային վորևե ապաստան, ուր նրանք կարող կլինեին հանգստանալ, իրենց պահեստների պակասները լրացնել և այլն։ Դրանցից ծագեց հետագա անելիքը—առավելապես բանվորական

*) «Զրամադրության» վրա ազդող։

շրջանները, վորոնք պարտիզանական գործողությունների բազան (հենարանն) էին, բարրիկադներով շրջապատելու անհրաժեշտությունը։

Բարրիկադների ցանցը կայծակի արագությունով կազմվեց։ Դեկտեմբերի 9-ին «ընկերների հետ դուրս գալով գործադիր Հանձնաժողովի նիստերից, ուր քննվում եր այն հարցը, թե արդյոք կոչ անենք բարրիկադներ պատրաստելու, մենք ամբողջ Սադովայա—Տրիումֆալնայա փողոցը տեսանք բարրիկադների յերկար շարքով ծածկված», պատմում է նույն մասնակցողը, վորից վերը հատված բերինք։ Կազմում էին վոչ միայն բանվորները, կազմում եր ամբողջ մանր բուրժուազիան, մասամբ վարակվելով բանվոր. վորական վոգևորությունից, մասամբ «պաշտպանողական» պատճառներից դրդված, այն է իրենց տուն չթողնել զորքին, և ժանավանդ կազակներին, վորոնց համարում էին սևհարյուրակային ջարդի անխուսափելի չքախումբ։

Շարժումը ստանում եր պաշտպանողական բնույթ, իսկ զինված ապստամբությունը ապրում է ու ապրում է և կարող է ապրել միայն հարձակվելով։ Քաղաքը բաժանվեց մի շարք՝ բարրիկադներով բաժանված թաղերի, փոքրիկ Պորտ-Արտուրների, վորոնց մեջ ամենից ահեղը Պրեսնյան եր։ Նրանք գրեթե միմյանցից կտրված էին. որինակ՝ Սուջևսկի շրջանում Պրեսնյայի գործերի մասին ամենաֆանտաստիկ պատմություններն էին անում և բոլորը միասին կտրված էին «Դործադիր Հանձնաժողովից»։ Վոչ մի կենտրոնական դեկավարություն հնարավոր չեր։

Պաշարումը, ճշմարիտ է, յերկու կողմից եր. այդ բոլոր Պորտ-Արտուրները բլոկադայի էին յենթարկել կենտրոնը, ուր նստած եր Դուբասովը իրեն «հավատարիմ» զորքերով, ընդամենը մեկ ու կես հազար սվինից ու սրից վոչ ավելի. ապստամբները անշուշտ թվական գերակշռություն կունեին, յեթե նրանց հետ լինելին 800 ռոստովցիները իրենց գնդացիրներով և նույնքան սապյորները։ Բայց պաշարված կենտրոնն առավելություն ուներ. նախ, վորովհետև դա կենդրոն եր և այդ գրավողները ներին հարվածելու հերթով. իսկ յերկրորդ՝ ինչպես ամեն մի պաշարման ժամանակ, հարցը վճռվում եր նրանով, թե ում ամենից շուտ փրկող կգա։

Այդ փրկության թախծով էին սպասում յերկու կողմն էլ։ Բարրիկադի յենթարկված շրջաններում նորությունները էին հաղորդում Պետերբուրգի բանվորների «ապստամբության» վերաբերյալ, նրանց կողմից զինամթերանոցը վերացնելու մասին։ Մենք տեսանք, թե այդ վորքան հեռու յեր իրականությունից։ Հակառակ կողմն ավելի բախտավոր եր։ Արդեն ամսի 9-ին Դուբասովը, վորը, ինչպես գիտենք, զրկված եր Մոսկվայի հրետանին ոգտագործելուց, հաջողեց՝ շնորհիվ նրա, վոր Նիկոլաևսկի ճանապարհը գործադուլ չեր արել, Տվերից ձիավոր բատարեա հասցնել, վորը պրոպագանդայի չեր յենթարկված և վորն իսկույն սկսեց գործել։ Իսկ այդ ժամանակ Նիկոլայ «մեծը» համոզվելով, վոր Պետերբուրում ամեն ինչ խաղաղվում է, զայրույթը վոդորմածության փոխեց և Մոսկվա ուղարկեց սիմոնովցիներին և ձիավոր գրենադերներին (դաշտային ծանր) բատարեյանների թնդանոթներով։ Բերին նաև մի գունդ լեհահատներից, վորը նոր եր «խռովություն հանել» և խաղաղացրվել և ծարավի յեր իր «հանցանքը քավելուն»։ Սկսվեց բարրիկադի յենթարկված շրջաններին վրա վճռական հարձակումը, իրապես մեկի վրա, վորը դեռ դիմանում եր՝

կարմիր միջնաբերդի, Պրեսնայի։ Մյուս շրջաններում դրուժիննիկները, իրենց վափուշտներն արձակելով վերջացնելով և իրենք ավելի տանջվելով, քան տանջեցին Դուբասովցիներին (թեև սրանց մեջ էլ Սումսկի գունդը հազիվ եր շարժվում), կոմիտեյի համաձայնությամբ դադարեցրին պայքարը, հենց վոր համոզվեցին, վոր չի կարելի հույս դնել վոչ կայազորի ապստամբության կողմն անցնելու և վոչ էլ Պիտերից ոգնություն ստանալու վրա։

Պրեսնայի հերոսական պաշտպանությունն ավելացրեց ռուսական հեղափոխության ամենափառավոր էջերից մեկն էլ, բայց գործի դրությունը նա չեր կարող փոխել։ Դեկտեմբերի 19-ին ապստամբությունը կարելի չեր ճնշված համարել։ Նա արդարացրեց այն հույսերը, վոր դրված եյին պարտիզանական տակտիկայի վրա. միայն դրա շնորհիվ կարելի չեր 10 որ դիմանալ. միայն նրա շնորհիվ իսկական հեղափոխության կորուստները բռնակցիայի կորուստներից քիչ եյին։ Մինչդեռ զորքերը կորուստ տվին 35 սպանված, դրուժիննիկներից սպանվեց 13-ը։ Բայց բնակչության կորուստները այդ թվերով չեյին սպառվում։ Մոսկվայի հիվանդանոցները հաշվառման չենթարկեցին հազարից ավելի սպանված և վերքից մեռած։ Դրանց մեջ կային բանվորներ, վորոնց ցույցի ժամանակ հրացանաձգության զոհ եյին դարձել. հատկապես թխտա եր հրացանաձգությունը Տվերսկոյում դեկտ. 19-ին, յերբ շրջապատելով սպանվածները գետին եյին թափվում տասնյակներով։ Բայց մեծամասնությունը պարզ զինվորներ եյին, վորոնց հրացանազարկ եյին արել իրենց տներում կամ բարրիկադի չենթարկված շրջանների փողոցներում «պաշարման ժամանակ»։ Դառը զասով բնակչությունը սովորեց, վոր քաղաքացիական կռվի ժամանակ «չեզոք» մնալ չի կարելի։

«Հաղթողների հաղթանակն» իհարկե տոնվեց գնդակահարությունների։ Բայց պետք է ասել, վոր զարձյալ շնորհիվ նույն պարտիզանական տակտիկայի դուբասովցիները գնդակահարության համար էլ ավելի նեղ սահման ունեցան, քան ունեյին նրա նախորդները։ 1871 թվին Փարիզում վերապրյալների համար գնդակահարելը հեշտ եր, յերբ ամեն մի բարրիկադ համառորեն պաշտպանում եր թաղի բանվոր բնակչությունը բարրիկադի յետևից, տներից, տանիքներից և այլն։ Բայց իրենց անել մի բնակչության հետ, վոր զինված կռվին անմիջականորեն բաց կերպով չեր մասնակցել։ Ինչ անել, յերբ ամբողջ հրացանաձգությունը, յեղել է գրեթե ինչվոր առասպելական «դրուժիննիկների» կողմից, վորոնք իբրև գոլորշի ոդի մեջ հալվեցին, «կարգի ուժը» յերևան գալուց շատ առաջ։ Միայն սեմյոնովյան գնդի սպաները պատվով դուրս յեկան այդ զժվարություններից, նրանք պատռ Պրեսնայում ինչ վոր հարբած կենվորի (նրանք ասում եյին «բանվորի»), վորը նրանց ցույց տվեց «բոլոր ագիտատորներին»։ Այդ սևհարյուրակային հարբեցողի մատնությունների հիման վրա գնդակահարվեց 17 մարդ, սրանց թվում յերկու կին («ուսանողուհիներ» սեմյոնովյան սպայի վորոշումով), իսկ նույնպիսի ձանապարհներով ընդհանրապես Պրեսնայում գնդակահարվեց 120 մարդ և կազանի յերկաթուղագծի յերկարության վրա, վորից վրեժ եյին լուծում յերկաթուղային բոլոր գործադուլների համար, ելի 129 մարդ։ Դուբասովյան «չարաճճի» գնդակներից և շրապնելներից վոչնչացավ ավելի ժողովուրդ, քան դուբասովյան դահիճներից. զարձյալ նոր ապացույց՝ վոր քաղաքացիական կռվին «չեզոք» լինելը վնասակար է։ Գնդակահարվածների մեջ էլ իսկապես հեղափոխական կազմակերպություն-

ներին պատահողները չնչին տոկոս եյին կազմում։ Մնացածները «սեմյոնովյան» յեղանակով բռնված նույն խաղաղ կենվորներն (обыватели) եյին։

Ինչպես ընթերցողը տեսնում է, այն ինչ վոր 1905 թվի դեկտեմբերին Մոսկվայում պատահեց, ամբողջովին չի համապատասխանում «զինված ապստամբության» մասին այն պատկերացումին, վորպիսին կազմվել եր առաջվա որինակների, թեկուզ թուրքիկ հիշված Փարիզի ապստամբությունների հիման վրա, այն է 1850 թվի հունիսյան և 1871 թվի կոմմունայի։ Այնտեղ իսկապես ժողովրդական զինված մասսաների պայքար կար զորքերի դեմ։ Մոսկվայում կար յուրատեսակ մի պատերազմ ցարական վարչության և հեղափոխական կուսակցությունների միջև, ըստ վորում յերկու կողմն էլ հենվում եյին իրենց տրամադրության տակ յեղած կազմակերպված ուժերի վրա։ Եվ վորովհետև հեղափոխականների այդ ուժերը շատ չնչին եյին, այդ պատճառով էլ բացի պարտիզանական կռվից, ուրիշ վոչինչ ձեռնարկել չեյին կարող։

Այն ժամանակ մեզ բոլորիս թվում եր, վոր այդ հեղափոխական զինված պայքարի նոր ձև է, միակ հնարավորը XX-րդ դարի տեխնիքական պայմաններում։ Մենք նույնիսկ կարծում եյինք, վոր զինվորական տեխնիկայի ամբողջ զարգացումը տանում է դեպի այն, վոր մասսաների պայքարը փոխարինե պատերազմական խմբերի ընդհարումներով։

Իմպերալիստական պատերազմը այդ վերջին ցնորքը ցրեց, իսկ 1917 թվի հոկտեմբերյան որերը Մոսկվայում զարկ տվին, վոր մասսական զինված ապստամբությունն էլ մեր որերում լիովին իրագործելի է։ Հոկտեմբերյան որերին Մոսկվայում կռվում եյին վոչ թե դրուժիննիկների փոքրիկ խմբերը, այլ բանվորների հրապարակ հանած կարմիր գվարդիան, սրան միացած զորքերի հետ և ժողովրդական շարժման հզոր հեղեղը հեղափոխության կողմն եր անցկացնում ավելի ու ավելի քանակություն այդ զորքերից պայքարի համար։

Այդ յերևույթը 1905 թվին չկար։ Այն ժամանակ Մոսկվայում վոչ մի «կարմիր գվարդիա» չկազմվեց (այդ ժամանակ այն կազմվեց միայն Ֆինլանդիայում)։ Բանվորական մասսան հրաշալի գործադուլ եր անում առաջին որերը, հավշտակությամբ ցույցեր եր անում, դրուժիննիկներին ամեն կերպ աջակցում եր, մատակարարելով նրանց կերակուր, բնակարաններ, թագցնելով նրանց և այլն։ Բայց փողոցի կռվի համար մարտիկներ տալիս եր յուրաքանչյուր բարրիկադի չենթարկված շրջանի համար ամենաշատը տասնյակներ։ Հարյուրավոր զինված բանվորներ հաշվում եյին միայն Պրեսնայում, ճնացած դրուժիններն տասնյակներից դենը չեյին անցնում։

Այդ յերևույթն այն ժամանակ արդեն նկատվեց։ Սրան շարլոն պատասխան եր տրվում՝ չկար զենք, չկար տեխնիքական պատրաստություն։ Բայց հազիվ թե կարելի կլինի պնդել, վոր 1917 թվի հոկտեմբերից առաջ Մոսկվայում քիչ թե շատ լուրջ պատրաստություն կար։ Հրացան ձգել սովորում եյին առանձին խմբերը նաև 1905 թվի աշնանը։ Ինչ վերաբերում է զենքին, այդ ձեռք բերելն անդիմադրելի արգելքների չեր հանդիպի։ Սևհարյուրակային ջարդերից սկսած հոկտեմբերի վերջերից բուրժուական Մոսկվան լցվել եր զենքով։ Ամեն մի կենվոր աշխատում եր ունենալ վորևե հրազեն՝ իր բնակարանը և բակը թալանչիներից պաշտպանելու համար, վո-

րոնց հարձակմանն սպասում եր ամեն ժամ։ Դեկտեմբերից հետո յերբ դուբասովյան վոստիկանությունը սկսեց խուզարկություններ, այդ զենքերը խմբերով հանձնում եյին կուսակցական կազմակերպություններին, այս անգամ դուբասովյաններից վախեցած կենվորները։ Մոսկվայի կոմիտեն մի քանի որում ստացավ մինչև մեկ ու կես հազար լավ հրացաններ, մաուզերներ, բրաունինգներ և այլն։ Ցեթե բանվորական մասսան քիչ ուժեղ ճնշում զործ դներ, կարող եր այդ զենքը բուրժուազիայից յերկու շաբաթ առաջ ել առնել։ Շատ արտակարգ ջանքեր ել հարկավոր չեյին և նրա համար, վոր կարողանային ազատվել և փողոց դուրս բերել Դուբասովի բանտարկած, պրոպագանդի յենթարկված զինվորներին։ Վերջապես վոչինչ գերբնական բան չեր լինի և այն, վոր գրավելին մի քանի բնդհանոթ։ Իշխանությունն այս բանից շատ եր վախում. «փորձանք կլինի, յեթե հեղափոխականները գրավեն գոնե յերկու թնդանոթ,—գրում եր մեկին Մոսկվայի զինվորական շրջանի զորքերի հրամանատար գեներալը—թեկուզ այն չգործածեյին ել, բայց ամենայն դեպս այդ կլինի նրանց համար պատերազմի հաղթական ավար, վորը ուժեղ տպավորություն կթողնի։ Մեր անփութությունը սարսափելի կլինի»։

Բայց այս բոլորի համար հարկավոր եր, վոր մասսան խորապես այն համոզումն ունենար, վոր միայն զենքը կարող ե վճռել գործը։ Այդ համոզումը մասսան դեռ չուներ։ Հոկտեմբերյան գործադուլի աջողությունը ստիպում եր գերագնահատել պայքարի այդ յեղանակը, վոր գործադուլը, յերբ չի փոխվում զինված ապստամբության, վերջին հաշվով անհաջողության ե դատապարտված—ինչ վոր բալշևիկները միշտ կրկնել են ամեն ժամանակ—մինչև դեկտեմբեր վոչ բոլորի համար պարզ եր. այդ պարզվեց միայն դեկտեմբերյան անհաջողության հետևանքով։

Այսպիսով դեկտեմբերյան ապստամբությունն ամենից առաջ ունեցավ խոշոր առարկայական դասի նշանակություն։ Բայց գուցե ավելի խոշոր եր այն տպավորությունը, վոր ժողովրդական մասսայի ամենալայն խավերն ստանում եյին այն մարդկանց դիտելուց, վորոնք վոչ «խաղաղ» յեղանակով «խաչած ձեռքերով» եյին բողոքում ցարիզմի դեմ, այլ վորոնք ցարի դեմ եյին գնում զենքը ձեռքներին։ Այդ տպավորությունը մոռանալ չեր կարելի—դեկտեմբերն անջնջելի գծերով փորագրվեց ժողովրդի հիշողության մեջ։ Մասսաների անպատրաստ լինելը—հատկապես շեշտում եյին եսէսնիֆական անպատրաստ լինելը, կարծես հեղափոխությունը կարելի յե տեխնիքապես պատրաստել, ինչպես միջազգային կռիվն ե լինում—մենշևիկներին, զրկել ունենալով Պլեխանովին, ստիպ եր տալիս մեղադրելու բալշևիկներին. —«պետք չեր հրապարակ դուրս գալ»։ Մի խորհուրդ, վոր նույնքան սրամիտ ե, վորքան յեթե մի մարդու, վորը լողալ չգիտե, խորհուրդ տվի, վոր յերբեք ջուր չմտնի։ Հապա ինչ ձևով պետք ե լողալ սովորի։

Ցեթե Մոսկվան, վորը պրոլետարիատի գիտակցական և կազմակերպված լինելու տեսակետից Պիտերից հետո յերկրորդ տեղն եր բռնում, յերեսից վոր վոչ բոլորովին պատրաստ ե մասսայական զինված ապստամբության համար—գավառի պրոլետարիատից, վորը Մոսկվայից ել հետ եր, այդպիսի պատրաստվածության սպասելն ավելի դժվար եր։ Ահա շարժման բնութագիրը, մի շատ խոշոր կենտրոնում, ուր կար սոց.-դեմ. ուժեղ կազմակերպությունը, կազանում, վոր ավել ե մասնակցողներից մեկը. «Մոսկվայի ապստամբության կազանի պրոլետարիատը արձագանք չտվեց ակտիվ յելույթով.—վոչ ապստամբությամբ (ինչպես Սորմովոում), վոչ ել քաղաքական գործադուլով (ինչպես Սամարայում)։ Մարտական դրուժինանե-

րում կային միայն մի քանի տասնյակ մարդ։ Մեծ նշանակություն ունեցավ տեղական հեղափոխական կազմակերպությունների ջախջախումը։ Սակայն առեղծված լուծումն այդտեղ չեր։ Կազանի բանվորներն իրը մի մասսա քիչ եյին միացած, անկազմակերպ եյին, հեղափոխական ալիքը մասսայի թույլ եր կպել։ 1905 թվին հեշտ եր նրանց տնտեսական պայքարի շարժել, բայց ակտիվ հեղափոխական պայքարի նրանք անընդունակ եյին։ Այստեղ և լուծումը «Կազանի հեղափոխության ինտելլիգենտական բնույթի հոկտեմբերի 19—21-ին և մասսայի կրավորականության դեկտեմբերին։ Կազանի բանվորների մեջ պետք եր աշխատել, աշխատել և աշխատել...»։

«Մոսկվային» տիպի շարժումներ տեղի ունեցան բացի այս ցնտատում հիշված Սորմովոյից, նաև մի շարք տեղերում, բայց միանալ գոնե մի ընդհանուր (область) ապստամբության դառնալու նրանց չհաջողվեց։ Ամենից ավելի Գորկի համառ դիմադրություն ցույց ավին բանվորական դրուժինաները Գորկի համառ դիմադրություն ցույց ավին բանվորական դրուժինաները Գորկում (Դոն.-Բասսում) և Տեմերնիկում՝ Ռոստով-Դոնի վրա քաղաքի լովկայում (Դոն.-Բասսում) և Տեմերնիկում՝ Ռոստով-Դոնի վրա քաղաքի տակ։ Այստեղ Պրեսնյայի հետ նրանց ունեցած նմանություն լրացավ նրանով, վոր դրուժինային հաջողվեց անվնաս հեռանալ յերեք որվա ռմբակոծության դիմանալով։ Ավելի հաջողություն խոստանում եր ապստամբության Հյուսիսային Կովկասում, վորը զուգադիպեց ժամենախոշոր ապստամբության, վորպիսին այդ որերում վորևե տեղ տեսնվել եր, բացի Հեռավոր Արևելքից, զորքերի շարժանը.—վոտքի յելան Կուբանի պլաստունները (հետևակ կազակները)։ Բայց այստեղ ել մենք ունենք յերկու շարժումների՝ բանվորականի և զինվորականի միմյանց հետ կապ ունենալու բանվորական բավական բնորոշ նմուշ։ Պլաստուններն վոչ միայն չմիացան Նովորոսիյսկի բանվորներին, այլ և քաղաքից հեռացան իրենց սառնիցաները, վորտեղ ել ճնշեցին—գնդերից մեկը—մինչև վերջը։ Այդ ժամանակ բանվորական շարժումը ճնշելին այն զորքերը, վոր ոգնության բերին ուրիշ տեղերից։

Ընդհակառակը միայն բանվորական և զինվորական մասսաների հաստաշխ գործելով և բացատրվում Սիբիրի, ավելի ճիշտ Սիբիրի յերկաթուղու յերկարությամբ շարժումի վառ բռնկումը։ Արդեն հոկտեմբերից ճանապարհը գտնվում եր ընտրված յերկաթուղային կոմիտեների ձեռքին, վորոնց գլխավոր նպատակն եր Մանջուրիայի բանակի զորացրման յենթարկված պահեստներին հայրենիք ուղարկելը կազմակերպել։ Այդ պահեստների տրամադրությունը մեզ հայտնի յե. իրենց կոչերում նրանք հաշվի չեյին առնում վոչ իշխանությանը, վոչ ցարին՝ սպառնալով նրանցից միայն «մոխիր ու քարերի կույտ» թողնել. բայց նրանց նպատակը մի բան եր՝ վորքան կարելի յե շուտով վերադառնալ հայրենիք, այսինքն հեռանալ Սիբիրից։ Սրանց վրա հենվել տեղական շարժման համար դժվար եր, բայց և այդ «տեղական» շարժումը ինքն ել կազմվել եր յեկվոր յերկաթուղայիններն տարրերից, վորոնց Սիբիրի քաղքենին և գյուղացին թշնամաբար եյին վերաբերվում։ Վոչ մի տեղ, բացի «նստակեցության գնդից» այնպիսի կատաղի չարդեր չեղան, ինչպիսին Սիբիրում։ Այդ պայմաններում հասկանալի յե դառնում, թե ինչպես յերկու «պատժիչ գնացքներ»—Ռեննենկամպֆի և Մեյլեր-Զակոմելսկու—զինվորական տեսակետից չնչին մի ուժ, վոր թվում եր, թե դժվար չեր առաջին իսկ լավ հոպաթմբից ցած գլորել—չլսված ահաբեկման միջոցով յերկու շաբաթվա ընթացքում «կարգը վերա-

հաստատեցին» ամբողջ գծի վրա։ Վիտտեն գործուղելով այդ գնացքնե-
րը կարող եր գոհ լինել... Բայց նա չել անդուշա զարմացավ, վոր «Զիտտեն
անձնատուր յեղավ առանց կռվի», ինչպես գեկուցում եր ինքը Նիկոլային։
Մոսկվայում մասսան չեր կարողանում զենք առնել, բայց նա ուժեղ եր իր
միացած լինելովը. նույն Վիտտեն խելացի կերպով վորոշեց այդ մասսային
չզրգռել։ Բայց Սիբիրում նա «վոչնչացրեց հեղափոխությունը» անխնա։
Այնտեղ 1905 թ. դեռ հեղափոխական մասսա չկար։

Հեղափոխական ըղջաններում միանգամից չզգացին, թե դեկտեմբերը
վոր աստիճանի բեկման կետ եր։ Հեղափոխական ըղջաններում այն ժամա-
նակ դեռ չեյին գնահատում, ինչպես պետքն ե, միապետության սաստիկ
յերկյուղի դերը այն բոլորը հաջողություններում, վոր ձեռք եյին բերել հոկ-
տեմբերին։ Դեկտեմբերից սկսած այդ յերկյուղը բոլորովին վերջանում ե։
Նիկոլայ «փոքրիկը» հաստատ վորոշեց, վոր ինչ գիջումներ ել վոր նրան
ստիպեց անել Նիկոլայ «մեծի» ատրճանակն իր թուլության րոպեին, այդ
գիջումները թղթի վրա կմնան։ Դեկտեմբերի 23-ին, ուրբաթ, նա ընդունեց
Ռուս ժողովրդի Միության մեծ պատգամավորության, Դուբրովինի գլխա-
վորությամբ, վորոնք յեկել եյին իմանալու, թե մինթե այժմ ել հոկտեմբե-
րի 17-ի մանիֆեստն իր ուժի մեջ պիտի մնա։ «Հանգստացե՛ք,—ասաց նը-
րանց Նիկոլայը,—արդարության արևը զծագի և մենք կհաղթանակենք։
Հիմնական որենքները կհաստատվեն»։ Սև հարյուրակաիններն առաջին
րոպեին շփոթվեցին. նրանք իրենց ժիամտությամբ չեյին հասկանում, վոր
«հիմնական որենքները»—այդ հենց այն միջոցն ե բացատրելու հոկտեմ-
բերի 17-ի մանիֆեստն այնպես, վոր սահմանադրության հետ այլևս չլինի։
Նամակի հեղինակը, վորից այդ մենք իմանում ենք (ինքն ել «միության»
անդամ ե), տեսել եր Նիկոլային դրանից յերկու որ առաջ և «այն տպա-
վորությունը ստացել», վոր «թագավորն առույգ ե, աշխույժ, կարծես նա մի
լավ բան ե վորոշել և այժմ հանգստացել և ամբողջ հաջողությունով»։ Այդ՝
Պրեանյան վերջնականապես հրացանադարկ անելուց յերկու որ հետո չեր։

Նիկոլայը մի քիչ շուտ սկսեց ուրախանալ. նրա միապետությանը 1906
թվի ամառը դեռ ևս որեր եյին սպասում։ Բայց մի բանում նա իրավացի
յեր. նրա գլխավոր թշնամի պրոլետարիատը կամաց-կամաց պատերազմի
դաշտից հեռանում եր։ 1906 թվին մեռազործները, նրանցից ամեն մեկը
նախընթաց տարում գործադուլ եր արել 3 և կես անգամ, մի անգամ ել գոր-
ծադուլ չի անում։ 252 հազար բանվորների հանդեպ՝ մենք ունենք 213,000
գործադուլավոր.—84,9 տոկոս։

Անցյալ տարում յեթե մնացող մանածագործներն ավելի լավ եյին գի-
մանում, վերջապահն ինքն իրեն հավաքում եր, բայց և նրանք ել մի բան-
վորի հանդեպ մի գործադուլավորից պակաս տվին (708,000 բանվորների
դիմաց 640,000 գործադուլավոր —90 տոկոս)։ Յեվ քանի թուլանում եր պրո-
լետարական ճնշումը, այնքան բուրժուազիան գլուխը բարձրացնում եր, ձեռ-
նարկատերն ավելի համառ ու լկտի յեր գառնում։ Շատ արտահայտիչ և այս-
տեղ կողք-կողքի դնել գործադուլները, նրանց հաջողությունները և անհա-
ջողությունները 1906 թվի առաջին յեվ վերջին քառորդում։ Առաջին քառոր-
դին մենք ունենք ընդամենը 73 հազար գործադուլավոր. սրանցից հաղթե-
ցին 34 հազարը, միայն 11 հազարը պարտվեցին և 28-ը՝ համաձայնության
հասան փոխադարձ գիջումներ անելով։ Նույն թվի վերջին քառորդում, մենք
ունենք 37 հազար ընդհանուր գումարից միայն 8 հազար համաձայնության
հասած, միայն 6 հազար հաղթած բանվոր և 23 հազար պարտված։ Տարվա
առաջին քառորդին ձեռնարկատերերը հաղթեցին ընդամենը 15 տոկ. բան-
վորների հետ ունեցած բոլոր ընդհարումներում, իսկ վերջինում—62 տոկոս։

Բուրժուազիան հարձակվում եր, բանվորը նահանջում...

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռուսական հեղափոխությունն սկսեց բանվոր դասակարգը։ Նա առա-
ջինը վճռեց ցարիզմի դեմ պատերազմել և առաջին ճակատամարտը տար-
վեց։ Գործի եյությանը նայելով այդ մի դասակարգի տարված լինելը չեր,
այլ ամբողջ հեղափոխության, վորովհետև Ռուսաստանում 1905 թվին ու-
րիշ հեղափոխական կազմակերպված ուժեր չկային։ Իսկ անկազմակերպ հե-
ղափոխությանը կառավարությունը, վորքան իր սեփական կազմակերպու-
թյունն ամբողջ եր ճնշել։ Այդ մեզ համար հատ-
կապես այժմ և պարզ, որինակ՝ գերմանական հեղափոխության լույսի տակ։
Սրա որինակով մենք տեսնում ենք, թե ինչպես յերկրում ուժեղ, կուռ հե-
ղափոխական կուսակցության բացակայությունը, ինչպիսին մեզանում 1917
թվին բայլշեվիկների կուսակցությունն եր, հեղափոխությունը տապալում է
և նրա հակառակորդների հաղթանակն ապահովում։ Բայց մեզանում 1905
թվին շատերը հեղափոխության մեջ տարերայնություններ գերագնահատում
եյին։ Սրա հետ կապված եյին և այն հույսերը, վոր շատերը դնում եյին
գյուղացության վրա։

Այն, ինչվոր գյուղում պատահում եր 1905 թվի աշնանից, թվում եր,
թե այդ հույսերն արդարացնում ե։ Մենք տեսանք, վոր հենց գյուղական
շարժումն եր գլխավոր պատճառը, վոր կառավարությանը սաստիկ յերկյու-
ղի մեջ եր պահում նրանից հետո, յերբ Պետերբուրգում բանվորական շար-
ժումը դեպի նվազումն եր գնում։ Այժմ, դեկտեմբերից հետո, հեղափոխա-
կանները նրա վրա յեյին դնում գլխավոր հույսերը։ Բանվորների առաջին
յելույթը յետ ե մղված,—մտածում եյին նրանք,—բայց յերբ գյուղը հրա-
պարակ գա, նրա ապստամբության ֆոնում բանվորական հեղափոխու-
թյունն անհաղթելի կլինի։

Ավելի մոտից նայելով և հիշելով անցյալը, մենք կարող եյինք ավելի
զգաստ վերաբերվել գյուղական ապստամբությանը։ Ամենից առաջ մենք կը
տեսնեյինք, վոր պրոլետարիատի շարժումը վոչ միայն բանվորական ե, այլև
տիպիկ—հաղամային, վոր այդ ընդհանրապես, ի հարկե, պրոլետարիատի
շարժում ե, բայց մեծ մասով, խոշոր-կապիտալիստական ձեռնարկությունների
բանվորների շարժում։ Մինչդեռ գործադուլների տոկոսը ձեռնարկություննե-
րի ընդհանուր թվի համեմատությամբ մանր գործարանների համար—մինչև
20 բանվոր ունեցող—47-ն եր, ուրիշ խոսքով,—վոչ բոլոր մանր գործարան-
ներ գործադուլ արին նույնիսկ 1905 թվին,—գործադուլների տոկոսը 501—
1000 բանվոր ունեցող ձեռնարկությունների թվի համեմատությամբ արդեն
163,8 եր կազմում.—ամեն մի խոշոր գործարան գործադուլ արավ միան-

գամից ավելի, իսկ հակա—ձեռնարկությունների վերաբերմամբ, 1000-ից ավելի բանվոր ունեցողների այդ տոկոսը հավասար էր 231,9-ի—ամենախոշոր գործարանններից ամեն մեկը գործադրել սրավ 2 անգամից ավելի։ Փաղաքում չեվ գյուղում չեղած գործադուլների թվի համեմատությունը թույլ է տալիս ավելացնելու նաև մի մանրամասնություն։ Թեև ֆաբրիկներից դուրս են գտնվում ռուսական արդյունաբերական ձեռնարկությունների կեսից ավելին (մոտ 60 տոկ.), գյուղական գործադուլների թիվը միշտ քաղաքի գործադուլների թվից փոքր է եղել։ Բայց հեղափոխության նախընթաց տասնամյակում, երբ շարժումը մեծ մասով տեղական էր, քաղաքից դուրս չեղած գործադուլներն այնուամենայնիվ ընդհանուր թվի գրեթե մի քառորդն էին կազմում, 1895—1904 թվերի տասնամյակում բոլոր գործադուլների 24,8 տոկոսը տեղի չեին ունեցել այն ձեռնարկություններում, որոնք գյուղում էին գտնվում. իսկ 1905 թվի ֆաբրիկական շարժման ժամանակ «գյուղական» գործադուլներն իջան մինչև 15,7 տոկ.։ Այսպիսով նախ՝ որքան արտադրությունը մանր էր, նույնքան պակաս հեղափոխական էր. երկրորդ՝ գյուղը, նույնիսկ ի դեմս իր պրոլետարիատ—ավելի «եկոնոմիստ» էր տրամադրված, քան քաղաքը, մինչդեռ քաղաքն էլ, ինչպես տեսանք, դեռևս, ի դեմս իր լայն խավերի, բավականաչափ «եկոնոմիստ» էր։

Այս բոլորը միասին առած, խոստում չեր տալիս, թե գյուղը մեծ աջակցություն ցույց կտա հեղափոխությունն իր վախճանին հասցնելու։ Արդեն 1905 թվին կարելի չեր գուշակել այն, ինչ որ 1917 թվին ճշտվեց։ Յարիզմը տապալել կարող էր միայն պրոլետարիատը, գյուղը կարող էր մասնակցություն ունենալ միայն հեղափոխության նվաճումների պաշտպանության մեջ, այն պաշտպանության մեջ, որը ընկ. Լենինը նվաճումից էլ ավելի դժվար էր համարում։ Բուն նվաճման ժամանակ քաղաքին ուժեղացընել, մանավանդ փոխարինել քաղաքին գյուղը վոչ մի դեպքում չեր կարող։ 1917 թվի փետրվարին նրա դերը միանգամայն յերկրորդական էր։

Գյուղի իսկական հեղափոխականության մասին մեր ունեցած պատկերացումը նարոդնիկական աշխարհայացքի ծնացորդներից մեկն էր մեզանում, Բակունինի մաքի ծնացորդը, որը իբր ամեն գյուղացի բնածին սոցիալիստ է և ծնված հեղափոխական։ Մարքսիզմին հաջողվեց հաղթել միայն այդ սխալ պնդումի առաջին մասը. 1905 թվին, բացի հսերներից, այսինքն վոչ մարքսիստներից, վոչ վոք գյուղացուն «բնածին սոցիալիստ» չեր համարում։ Բայց գյուղի «բնածին» հեղափոխականության շատերն էլին հակված հավատալու։ Ահա թե ինչու հատկապես կարևոր է հետազոտել, թե ով եր առաջնորդում գյուղական հեղափոխությունը. ով եր նրա գլխավոր մասսան կազմում և ում ոգով հեղափոխությունը գյուղ մտավ։

Վերադառնանք գյուղացիական շարժման հենց սկզբին, 1902 թվին։ Կովալենսկի դատախազը, որը կազմել է այդ թվի գարնանը Պալտավայի նահանգի «անկարգությունների» մասին ընդարձակ զեկուցում, այսպես է որոշում ապստամբած գյուղացիների նյութական դրությունը. «բոլոր հողերը, առանց ճնացորդների ամենալայն չափով հաշվելով՝ մի անձի 1 ու կես դեսյատինից պակաս հող է ընկնում։ Տարեկան իրենց հացից պակասում է մինչև 10 ու կես միլիոն փութ։ Այն հողի տարածությունը, որը կարելի է վարձով լրացնել գյուղի բնակչության հողի պակասը, մոտ 3 ու կես միլիոն դեսյատին է։ Այս բոլորից հետևում է, որ այդ մարդիկ ստիպված

են գնելով ձեռք բերել մոտ 7 միլիոն փութ հաց. հաշվելով 1 փութ հաճարը 50 կ. ստանում ենք մոտ 3 ու կես միլիոն ռուբլի։ Բայց վորովհետև բնակչությունը դրամ չունի, այդ պատճառով նա ստիպված է ստանալ այդ խոշոր տոկոսի հավելումով փոխառությամբ կամ ծանր աշխատանքով։ Իսկ տրամադրության տակ չեղած նյութից նաև յերևում է, վոր որականով աշխատանքը նահանգում շատ քիչ է վարձատրվում, արդյունաբերությունը թույլ է զարգացած, տնայնագործություն ևս չկա։ Դրսի աշխատանքների մեքենաների զարգանալու հետևանքով, նույնպես փոքրանում է»։

Այդ այդպես է—յեթե նկատի ունենանք ամբողջ բնակչությունը, բայց «Պոլտավայի նահանգում արդեն 1900 թվին կար 16,9 տոկ. հողազուրկ բնակչություն»։ Իբրև որինակ՝ բերված գյուղը պատկանում է նրանց թվին, վորի բնակիչներն ամենից ավելի «կենդանի մասնակցություն ունեցին անկարգություններում». խռովություն բարձրացնող գավառներից մեկում վարձակալավճարները «1886-ից մինչև 1900 թիվը, այսինքն 14 տարում բարձրացել են 92 տոկոսով, աշնանացանի՝ 123 տոկոսով, գարնանացանի հողի համար 1897 թվին»։

«Հատկապես գների խիստ բարձրացում յեղավ 1897 թվին»։

«Տվյալ տեղի գյուղացիական բնակչության դրության ծանրությունն ավելի պարզ կերպատկերանա, յեթե ուշադրության առնենք այն հանգամանքը, վոր հողատերերը և կապալով տվողները, նկատի ունենալով իրենց տնտեսական օգուտները, հողը գյուղացուն են տալիս վարձով, մեծ մասամբ իրենց հունձն անելու պայմանով։ Կոնստանտինոգրադի գավառում մի դեսյատինի համար հնձում են մինչև 3-ը։ Անասունի համար արոտատեղի տալիս են, բայց վոչ միշտ, այն էլ դաշտային ծանր աշխատանքներ պահանջելով. կան տեղեր, ուր գյուղացիները տեղ չունեն արածացնելու, ստիպված արոտատեղի հողը ցանքսի տալու համար պահանջվում եր 2 դես. մշակած հացի հունձը, հաճախ և կրելը։ Պոլտավայի գավառում գյուղացիներին 1

տովայի գործի առթիվ պալատում գյուղացի Կիյանը տալիս է. Նա ասաց մոտավորապես հետևյալը. «Թուլլ տվեք ձեզ պատմելու մեր գյուղացիական դժբախտ կյանքի մասին։ Ցես ունեմ հայր և 6 փոքրահասակ յերեխա՝ առանց մոր, և պիտի ապրեմ $^3/_4$ դեսյատին ագարակով և մեկ քառորդ դաշտային հողով։ Կովն արածացնելու համար վճարում ենք վարձակալ Կուզմինովին 12 ռ., իսկ 1 դեսյատին ցանքի հողի համար պետք է 3 դես. հնձենք։ Ցեվ այդ բոլորը պիտի աշխատենք գյուղացիական այս 2 ձեռքով։ Այժմ նույնիսկ այդպիսի բարձր գնով հողն էլ դժվար է ճարվում։ Այսպես մենք չենք կարող ապրել,—շարունակում էր Կիյանը,—մենք ողակի մեջ ենք։ Ի՞նչ անենք։ Մենք, մուժիկներս, ամեհ տեղ դիմեցինք։ Ցեվ զեմսկի նաչալնիկի մոտ յեղանք, գնացինք և զեմսկի վարչություն, վոչ մի տեղից մեզ ոգնություն չկա...»։

Ցեթե մենք սրա վրա կանք առնինք, կստանանք գյուղացիության տովարական դասային ապստամբությունն ազնվականության դեմ, նախկին ճորտերի՝ իրենց նախկին կալվածատերերի դեմ։ Ցեվ կովալևսկին, թեև ինքն էլ այդ հայեցակետն ուներ, իրրև բարեխիղճ չինովնիկ, իշխանությանը հայտնեց այն բոլորը, վոր ինքը կարողացավ իմանալ և ահա թե նա ինչ է պատմում 1902 թվի Պոլտավայի ապստամբության աշխարհագրության մասին.

«Դատաստանական քննության տվյալներից հետևում է, վոր շարժումը նախապատրաստված էր Լիսիչանսկի հասարակության մեջ յեղած նախորդ պրոպագանդով, վորի անդամներն ամենագործունյա ագիտատորներն էին յեղել։ Ընդհանուր վկայություններից հաստատվում է, վոր հասարակության գյուղացիներն առաջ աչքի յեկին ընկնում իրենց բարի վարքով և աշխատանքներում ցույց տված կանոնավորությունով (ցուցմունքներ կոլոմիեցի և նախկին խպարավնիկ Անդրեևսկու)։ Նրանք նույնիսկ գյուղացիական բանկի ոգնությամբ գնած հող ունեյին, բայց, նույն վկաների ցուցումով, 3 տարի առաջ հանկարծ զարթեցրին տոկոսների վճարումը, հավատացնելով, վոր բանկն իրենց հողերը յետ խլել չի կարող ...»։

Իսկ նույն զեկուցումի մի ուրիշ տեղից իմանում ենք, վոր «գյուղատնտեսական բանկի միջոցով հող գնելը պահանջում է գնողից ունենալ առնվազն ձեռն ղրամ շուկայի գնով, և վոչ հողային բանկի գնահատումով, վորը գյուղատնտեսություն ունեցող գնից անհամեմատ ցած է, բայց յեթե հաշվենք, թե գնողը պիտի մոցնի միայն հողային բանկի գնահատումի հանդեպ պակասող ղրամի 10 տոկոսը, այն ժամանակ էլ կերևա, վոր այդպիսին միայն ունևոր մարդը կարող է լինել»։

Այսպիսով լիսիչանցինները (վորոնց մեջ պրոպագանդ մտում եյին տնտեսական-զեմոկրատ «նոկրովցինները») պարզապես չքավորներ չեն. դրանք աղքատանալ և ընկնել սկսող գյուղացի ճնճեսատերեր են, նախ և յերկրորդ՝ անցյալում այդ տիպիկ միջնակները, հալածից գնացած պրոպագանդային շատ եյին յենթարկվել։ Ուրիշ աղբյուրներից մենք գիտենք, վոր Լիսիչանսկի «Искра»-յի տարածվելու կենտրոններից մեկն եր։ Բնութագիրը լրացնելու համար պետք է ավելացնել, վոր լիսիչանցինները հարձակվեցին վոչ թե կալվածատերի, այլ հարևան կալվածի խոշոր վարձակալ-կապիտալիստի վրա, հայտնելով նրան. «Հեռացիր այստեղից. մենք ու մեր հայրերն այստեղ աշխատել ենք, այս բոլորը մերն է»։ Գիշերը նրանք «այրեցին» այդ կապիտալովին, վորը քննության ժամանակ մանրամասն պատմեց, թե ինչպես ամիճանաբար «վերջին տարիներում» իր և Լիսիչանի գյուղի գյուղացիների մեջ հարաբերությունը սրվում եր։

Այսպիսով 1902 թվի գյուղացիական շարժման բանակը չքավորությունն եր կազմում։ Նրա շտաբը, գյուղական տկլորները չեյին, այլ մանր գյուղատնտեսական արտադրողները, նրանք, վորոնց այն ժամանակ «տընտեսարար գյուղացիներ» եյին ասում, վորոնց տնտեսական դրությունը խախտվել եր կապիտալիստական հողագործության դեմ վարած անհավասար մրցակցության մեջ։ «Պուգաչյովշչինան» սկսում է կամաց-կամաց 20-րդ դարին ավելի համապատասխանող ձևեր ստանալ։

1905 թվի առաջին ջարդերին մենք, կարծես, տեսնում ենք «պուգաչյովյան», զասային գյուղացիական շարժում։ Ահա թե ինչպես է նկարագրվում Կուրսկի նահանգի գյուղացիների յելույթները 1905 թվի փետրվարին. «Նշանակված որը կալվածքից վոչ հեռու այրվում եր մի բարդ ծղնոտ, խարույկ կամ ծղնոտի մի մեծ կապ յերկար ձողի վրա և այդ ազդանշանով գյուղացիներին հավաքում եյին սայլերով. յերբեմն մինչև 500-700 սայլ եր հավաքվում։ Մի դեպքում (Ռոմանովկում) ազդանշանը հավարի զանգահարությունով տրվեց։ Հավաքվելով, գյուղացիները գիմեցին դեպի տնտեսություն, մասնավորապես հրացանից մի քանի անգամ արձակեցին, պահեստանեյին տանում. դրա համար էլ ուրիշ շենքերին, բացի հացի շտեմարաններից, սովորաբար ձեռք չեյին տալիս։ «Թալանին մասնակցում եյին ամբողջ գյուղեր՝ տղամարդիկ, կանայք, դեռահասներ, թալանի համար բանտարկվածների թվում եր և Սևակի բանտը դրված, ի միջի այլոց, մի կույր աղքատ հա. գյուղացիները նրան տվել եյին ձի և սայլ, ոգնել եյին հացը բարձելուն և այդ ձևով նա մի ամբողջ սայլ տարել եր իր տուն։ Մի քանի դեպքերում թալանի առաջին արշավանքին տվյալ գյուղից գնում եյին գյուղացիների միայն մի մասը, բայց հետո գայթակղվելով առաջիններից մյուսներն էլ գնում եյին հետևյալ կավլածը թալանելու։ Տնտեսությունների վորևե բաշխում-բաժանում գյուղերի մեջ չկար. ամեն անգամ, ով ուզում եր, վոր գյուղից ուզում եր լինի, գալիս եր. յերբեմն էլ շատ հեռուներից եյին գալիս»։

Քննության ժամանակ տված հարցին՝ «Ինչ եյիք ուզում», գյուղացիք միաձայն պատասխանում եյին. «Մենք ուտել եյինք ուզում և ուզում ենք։ *)

Ուրիշ շատ հետաքրքիր դեպքերում, անմիջական պատճառը ճորտական իրավունքի մնացորդների դեմ պայքարելն եր։ Մի քանի անգամ, իրրև ալեկոծության աղբյուր, մենք տեսնում ենք նշանավոր հողի կտրվածքներ (отрезки)։ Այդպես եր Դոլբենկովո գյուղում, վորը պատկանում եր

*) П. Маслов. «Аграрный вопрос в России» II. եր. 150—153.

Սերգեյ «Ռոմանովկին», սպանված 1905 թվի փետր. 4-ին հսերական ռումբից։

«Դոլբենկովո գյուղի գյուղացիները շրջապատված եյին Դոլբենկովոյի տնտեսության սիրապետություններով, վորոնք 17 հազար դեսյատին եյին։ Բայց մի քանի սաժեն յերկարություն ունեցող հողի սեպեր կալվածքին մեծ շահ եյին տալիս։ «Իր հինգամյա հասարակության ծառայության ընթացքում Դոլբենկովի նախկին տանուտեր Իվան Կուզինովը մի քանի անգամ գնացել եր գրասենյակին խնդրելու՝ վաճառելու ինչ գնով ել ուզում են («հասարակությունը դրամի առաջ կանգ չի առնի») 300 սաժեն հող, վորի համար գյուղացիները շատ տուգանք եյին վճարել տնտեսությանը. բայց այդ հողն այդպես ել ճիաց տնտեսությանը, վորովհետև շատ յեկամտաբեր յերևաց»։

«Այդպիսի մի կտոր հող կար և Դոլբենկովոյի իր մեջ գյուղի փողոցի վրա մի անկյունավոր տեղ—վորը սեպի նման մտել եր գյուղական խըրճիթների շարքի մեջ իրրև ճանապարհ, իսկ հրդեհի դեպքում նաև անասունների անցնելու համար պետքական։ Դրա համար Դոլբենկովոյի գյուղացիությունը բավական սակարկել եր մի քանի տարի առաջ իր տանուտերի միջոցով, տալիս եր կես դես. հողի համար 500 ռ.։

«Բայց այդ կտորը 1000 ռուբլով վաճառվեց մի կուլակի, վորը նրա վրա գինետուն շինեց և սկսեց գյուղացիներից տուգանքներ հավաքել արդեն իր օգտին։

«Այդ դրության մեջ եյին Դոլբենկովի գյուղացիները, վորոնք փետրվարին քարոզանդ արին Դոլբենկովի տնտեսությունը։ Այդ տնտեսությունը մեծ իշխանին (Սերգեյին) տալիս եր զուտ յեկամուտ 130,000 ռ.»։ Հողի կարվածքներով սովորաբար աշխատավճարները (отработки) քամվում եյին գյուղացիներից և այս ել մենք տեսնում ենք խռովությունների պատճառ։ Տերեշչենկոյի կալվածքը և շաքարի գործարանը քարոզանդ յեղան նրա համար, վոր «Տերեշչենկոն դրամով աշխատանք չի տալիս, այլ աշխատավճարով և տալիս... Յեթե մենք չենք կարողանում հնձելը վերջացնել, մեզ վրա ծախսածը կրկնակի յեն հաշվում և այդ ել նորից աշխատավճար են հաշվում... Այժմ տուգանքի դրամներ քիչ են, իսկապես 15 տարվա ընթացքում միայն 85 ռ.։ Իսկ ինչո՞ւ... վորովհետև, տուգանքն ել աշխատավճարի մեջ են մտնում, դրա համար ել տուգանադրամ չի յերևում...

«Արոտատեղու դեսյատինը մեզ վրա նստում է 12 ռ. փոխարեն, ինչպես վորոշված է, 30 ռ., վորովհետև դրամով չեն ուզում ստանալ, այլ ամեն ինչ աշխատավճարով... «Յեթե զուտ դրամով լինի,—ասում են,—20 ռուբլի յել չենք ստանա, ավելի լավ է անասունը կարածացնենք»... Մի անդամ 30 դեսյատին արոտատեղին իզուր ել կորավ»...

Բայց հողատիրական իրավունքի ծնացորդներն ամենևին շարժման միակ պատճառը չեյին։ Կալվածատերերի վրա հարձակվում եյին վոչ միայն նախկին ճորտերը, այլև նախկի պետական գյուղացիները։ Որինակ՝ Պսկովի նահանգում մենք ունենք այսպիսի դեպք «գյուղացիները—նախկին պետական—5 դես. հողաբաժին են ունեցել, բայց այժմ հողի պակաս կա, ասանց վարձակալության ապրել անկարելի յե։ Վարձակալությունը թանգ եր, բերքի պակասության պատճառով դրամը լրիվ չեյին վճարում և այժմ արոտատեղու և խոտահարքի մեծ պակաս ունեն, նեղ դրության մեջ են։

վարձավճարն ամեն տեղ մեծացել է. այն հողամասը, վորի համար ճորտական կախումն ունենալը վերջանալուց հետո վճարում եյին 30 ռ. այժմ վճարում են մոտ 400 ռ և վերցնողին ստիպում են իր հարցով աշխատել»։ Յեթե մենք առնենք այդ նահանգի հուզուճների բոլոր դեպքերը, կտեսնենք, վոր 121 դեպքից սակավահողությունը հիմնական պատճառ է յեղել 62 ի համար, այսինքն ավելի քան 50 տոկոս։ Բայց սրա հետ միայն հատկապես հողի կտրվածքները դեր խաղացել են միայն 4 դեպքում, իսկ «դժգոհությունն աղնվականության դասային արտոնությունների դեմ» ընդամենը 2 դեպքում։ Այն լոզունգը, վորին Ֆրանսիական Մեծ Հեղափոխության ժամանակ ամբողջ գյուղացիական շարժումը հետևում եր՝ «կորչին արտոնությունները», մեզանում շատ յերկրորդական տեղ է բռնում։

*Շարժումն ամենից լավ կազմակերպված եր Սարատովի նահանգում, ուր հսերական շատ ինտենսիվ պրոպագանդա կար գյուղում։ «Կազմված եր մոտ 200 գյուղացիական յեղբայրություն։ Առաջարկվում եր գործել բոլոր տեսակի միջոցներով՝ համախոսականներով, գործադուլներով, բոյկոտով, մարտական դրուժինաներով։ Մի քանի տեղեր անարեկման գործողություններ յեղան։ Յերբ հոկտեմբերին բռնկեց ընդհանուր գործադուլը, Սարատովի գյուղացիները մի կողմում չմնացին։ Նրանք վորոշեցին ապստամբել... Եսերական շատ ինտենսիվ պրոպագանդա կար գյուղում։ «Կազմված եր մոտ 200 գյուղացիական յեղբայրություն։ Առաջարկվում եր գործել բոլոր տեսակի միջոցներով՝ համախոսականներով, գործադուլներով, բոյկոտով, մարտական դրուժինաներով։ Մի քանի տեղեր անարեկման գործողություններ յեղան։ Յերբ հոկտեմբերին բռնկեց ընդհանուր գործադուլը, Սարատովի գյուղացիները մի կողմում չմնացին։ Նրանք վորոշեցին ապստամբել... Եսերական կուսակցության գյուղացիական միությունը վորոշեց պաշտպանել շարժումը և աշխատել այն իսկական հունի մեջ դնել։ Կազմակերպությունները տեղերում պետք է զենք ձեռք բերեյին։ Զենք ձեռք բերին, զինաթափ անելով պետական անտառապահներին։ Կազմվեցին մարտական դրուժինաներ, վորոնք գնում եյին գյուղերը, վոր իշխանությանը հետացնեն և հին կարգը վոչնչացնեն։ Ամբողջ իշխանությունը զուրս եյին անում, ընտրում եյին գյուղական նոր իշխանություն»։ *)*

Բայց ահա թե ինչ եյին գրում մինխատների կոմիտեյին Սարատովի ամենից շատ հուզված գավառներից մեկի՝ Բալաշովսկի գավառի գյուղացիները։

«Մեր ընտանիքները պահելու համար պետք է հողը վարձով վերցնենք վաճառականներից և կալվածատերերից, իսկ վարձավճարն ամեն անգամ անում է ավելի ու ավելի։ Այս տարի գիներ հասավ 20 ռուբլու մի դեսյատինի համար։ Այսպիսի բարձր գին հողը չի կարող արդարացնել։ Ի՞նչպես այստեղ ապրենք, ինչո՞վ վճարենք հարկերը, յեվ իմիներս ել կերակրվենք—մենք չգիտենք»։

«Պատերազմը մեզանից խլում է աշխատավորներին և կերակրողներին։ Պատերազմը վերջանալուց հետո յել պիտի սպասենք նոր հարկերի և պրանքների թանկության, իսկ ուժասպառ հողը տարեցտարի միշտ քիչ արդյունք է տալիս, իսկ մեր խավար լինելու պատճառով մենք մեզ վոչ մի բանով ոգնել չենք կարող։

«Մոտիկ տեղերում կողմնակի դատումներ ել չկան։

«Մենք կարծում ենք, վոր արդարայի կլիներ, հողի տոհմատրը վերջացնել, վորը պիտի տրվի նրանց տիրապետությանը, ովքեր նրա վրա աշխատում են և նրանից ել կերակրվում։

«Մեր յերկրորդ դժբախտությունը—մեր խավար և տխեա լինելն է։

**) Գյուղացիական շարժման, 1905-6 թվերի վերաբերող բոլոր մեջբերումները տպված են Маслов-ի արդեն հիշված գրվածքից։*

«Բացի այդ մենք ուզում ենք, վոր մեզ համար գրքերի և թերթերի արգելք չլինի։

«Բացի այդ մենք ուզում ենք, վոր թերթերում թույլ տրվի ամեն բան գրել ազատ, ինչպես այդ վաղուց լինում է ուրիշ պետություններում։

«Մեր չերրորդ կարիքը—մեր իրավազուրկ լինելն է և շատ իշխանավորներ ունենալը, վորոնցից մենք ավելի նեղություն ենք տանում և վիրավորանք, քան արդարություն և պաշտպանություն գտնում»։

Այսպիսով զուտ քաղաքական շրջանում մամուլի ազատությունից այն կողմը չի անցնում գործը։

Յեթե Իվանով-Վոզնեսենսկի բանվորների միտինգի ժամանակ «Կորչի միապետությունը» ազաղակը աղմուկի պատճառ դարձավ, ապա Մոսկվայի նահանգի գյուղացիական մի միտինգում այդպիսի խոսքի հանդեպ լսվեց.

«Յեղբայրներ, ինչո՞ւ չեք ղրան լսում։ Թփիր նրա գլխին մի ծանր բանով» *)

Միաժամանակ Բալաշովսկու պետիցիայից շարժման տնտեսական առատան ավելի քան պարզ չերևում է։ Իսկ այդ առատով էլ վորոշվում էր Սարատովի նահանգի բոլոր գյուղացիական չելույթների տակտիկան։ «Գյուղացիների գործողության գլխավոր ժամենտները հետևյալներն են. 1) կալվածատիրոջն իր ընտանիքի հետ կալվածքից հեռացնելը. 2) Հացը և արդյունքները, չերբեմն և տնային շարժական կահավորությունը գրավելը և բաժանելը. 3) անասունները քշելը. 4) բատրակներին և տնային ծառայողներին իրենց հաշիվը տալը և 5) հաճախ տնտեսական շենքերն այրելը։ Կալվածատիրերը գյուղացիների նախազգուշությունով հեռանում են և նրանց վրա վոչ մի բռնություն թույլ չի տրվում։ Տնտեսությունը քանդելով, գյուղացիները միաժամանակ սկզբունքներով վորոշում են կալվածատիրական հողը գարնանից տալ հասարակությանը (мир) հավասար կերպով ոգտագործելու, վորի համար շատ տեղերում կազմվում են հասարակական վճիռներ։ Ուրյադնիկները, տարաժնիկները թագնվում են, իսկ տեղ-տեղ էլ գյուղացիները նրանց բանտարկում են։ Կալվածատիրական կալվածքների վրա հարձակվող գյուղացիների զլուխ կանգնած է լինում սովորաբար զինված դրուժինան. հացի, արդյունքների և գրամի բաժանումը ղեկավարում են կոմիտեները կամ տեղական գյուղացիների չեղբայրությունները։ Տնտեսական գրասենյակում, պետական ողեվաճառատներում կամ խմիչքեղենի չեկամուտների գանձողներից գրավված գումարները հասարակական սեփականություն են դարձնում։ Տեղերի շեմքերի հրդեհելը գյուղացիները պատճառաբանում են չերկու նկատառումով.—ա) չեթե շեմքերը հրդեհվեն, կալվածատերերն ի վիճակի չեն լինի շուտով գյուղ վերադառնալ չեվ հետեվապես հողատիրության նոր կարգը հետ կամրապնդվի. բ)—չեթե շենքերը ճան ամբողջ, նրանք հարմար բնակարան կլինեն կազակների համար, վորոնց գյուղացիները ընդհանրապես ատում են։ Հետևանքն այն է չեղել, վոր հարյուրավոր շենքեր վոչնչացվել են, միքանի միլիոն ռուբլու արժեք ունեցող։ Մինչև վոշնացումն այրված են բոլոր

*) Հարկավոր է, վոր այնտեղ, ուր ՏՆՏԵՍԱԿԱՆ ատատը հասցնում էր անմիջապես ցարի իշխանության հետ բնդհարվելուն, միապետական դաստիարակությունը գյուղացիները հնազանդության մի կողմ էին թողնում։ Այսպես՝ Արխանգելսկի նահանգի Շենկուրսկի գավառում, ուր կալվածատերերը «ուղենից» չեյին, այսինքն ցարական, կարելի չեր լսել, վոր ցար, գուցե, ամենեին էլ պետք չե, իսկ չերկիրը պետք է «բնտրվածը» կառավարե։

շենքերը այնպիսի մեծ կալվածքներում, վորպիսիներն էին՝ Հերցոգ Լեյխտենբերգսկու, իշխան Վյազեմսկու, այնպիսի պալատ-տները, ինչպիսին էին իշխան Պրոզորովսկու և Դեմիդովի։ Հաճախ այրվում են կալվածքներն առանց նկատի ունենալու այն, թե ինչ հարաբերություն ունեին գյուղացիք տերերի հետ, առանց նկատի ունենալու կալվածատերերի հայացքները։ Այրված են նշանավոր տեղական լիբերալ զեմեցների շենքերը՝ Լվովի, Յերմոլովի, Վլեսելովսկու և ուրիշների, մինչև հիմքն ավերել են տասնյակ հին աղնվական կալվածներ թանկարժեք գրադարաններով, նկարներով և այլն։ Բալաշովսկի, Ատկարսկի, Պետրովսկի և Սերդոբսկի գավառներում ազատ ճացած կալվածատիրական շենքերը միավորներով են հաշվվում»։ *)

Այստեղ գյուղական մանր արտադրողի ապստամբությունը խոշոր հողատիրության դեմ, վորը նրա ճանապարհի վրա չեր կանգնել, արդեն լրիվ մեր առաջ է։ Ինչպես տեսնում ենք, նա ունի իր տրամաբանությունը. գյուղացիներն ավելի գործնական են եսերներից, վորոնք աշխատում էին նրանց շարժումը ղեկավարել։ Նրանք հասկանում էին, վոր մենակ մի մանիֆեստ, մի հրաման այլեն քիչ է. պետք է վոչնչացնել կալվածատիրական տնտեսությունը, վոր հին ուժիմը վերադառնալու տեղ չունենա։

Ո՞վ եր առաջնորդում այդ շարժումը։ Մոտից նայելով տեսնում ենք, վոր չերկու ուժ են, վորոնք մեկը մյուսից աշխատում են ղեկավարությունը խլել։ Դրանցից մեկի վրա ժամանակակիցները քիչ ուշադրություն էին դարձնում, իսկ նա մեզ համար ավելի հետաքրքիր է։ Փորձենք պարզել այդ, ոգտվելով ամենից «տնաչատ» աղբյուրից՝ գյուղացիական ապստամբությունների մասին ցարական վոստիկանության, առավելապես նահանգապետների և ժանդարմների զեկուցագրերից հատվածներ մեջ բերելով։ Աչքի անցկացնելով վոստիկանական հաղորդագրությունները մեկը մյուսի յետևից, տեսնում ենք, վոր գյուղացիների «տարրերային» չելույթները չերբեմն վատ չեն կազմակերպված չեղել. հավարն լսելուն պես ամբոխն արագորեն հավաքվում եր, ժամանակ չկորցնելով, գրեթե մեքենայական ճշտությամբ, թալանում, ջընջում ու տանում եր կայքը, չերբ չերևում էին կազակները և տարաժնիկները. արդեն ամեն բան վերջացած եր լինում։ Ո՞վ եր այդ ամենը կազմակերպում։ Այդ չեր կարող տեսնել նույնիսկ վոստիկանությունը։ «Շարժումը, անկասկած, զրսից է զեկավարվում, շատ դաղտնի և հմուտ,—գրում եր Կուրսկի նահանգապետ Բորզնիկովն,—գյուղացիները ամեն կերպ ծածկում են իրենց առաջնորդներին»։ 1905 թվի գյուղացիական հեղափոխության «տարրերային» լինելու մասին տրված բացատրություններն ավելի լավ չեն, քան պուգաչովյան «անմիտ» խռովության տարրերային լինելու մասին չեղած խոսակցությունները։ Այնտեղ մենք գիտենք կազմակերպողներն էին, մեծ մասով, կալվածատերերի պարպասի մարդիկ (дворовые люди), ճորտատիրական գյուղի այդ առավելապես արդյունաբերական, արհեստակցական բջիջը։ Ո՞վ վոխարինից այդ նախնական ագիտատորներին հարյուր չերեսուն տարի հետո։

Սկզբում մենք լսում ենք այդ նոր ուժի միայն արձագանքը։ Ռյազանի նահանգում, նրա այն ժամանակվա իշխանության խոսքերով, խռովությունների աղբյուրն էին, ի միջի այլոց, «այն լուրերը, վոր համագյուղացիները բերում էին քաղաքներից, մանավանդ գործարանային շրջաննե-

*) «Русс. Вед.». 1905 թ. նոյեմբերի 7։

րից»։ Կուրսկի նահանգի Լգովսկի գավառում «սկսվեց խլրտում նկատվել, վոր առաջ չեկավ Ս. Պետերբուրգում կատարված հուզումային դեպքերի և կայսրության շատ քաղաքներում չեղած բանվորական գործադուլների հետևանքով»։ Այդ դեռ 1905 թվի գարնանն եր։ Միևնույն ժամանակ նաև Վորոնեժի նահանգում «խոսակցություններ և նյարդային դրություն գյուղացոց մեջ» առաջ բերին «Պետերբուրգում և ուրիշ տեղերում չեղած բանվորական շարժման մասին ստացված տեղեկությունները...» (Համեմատել Յեկատերինոսլավի նահանգապետի հաղորդագրությունը. «անկասկած, բանվորների գործադուլները գործարաններում և չերկաթուղագծերում անդրադառնում են գործարանների վրա»)։ Հունվարի 9-ը տարուբերեց վոչ միայն քաղաքն ու արդյունաբերական շրջանները.—նրա հարվածն զգացին նաև չերնոզյոմի խուլ տեղերում։

Այստեղ դեռ միայն պրոլետարական հեղափոխությունից անդրադարձած լույսն եր կարմրատակել։ Ուրիշ նահանգներում կապն ավելի ուղղակի չեր։ Կալուգայի նահանգում ապստամբության ազդանշանն եր «գյուղացիների մասսայական վերադարձը դրսի աշխատանքներից, հարավում գործադրկություն լինելու պատճառով և շատ գործարանների և ֆաբրիկաների դադարելու հետևանքով, այլ և Մոսկվայում ամեն տեսակ գործադուլ լինելու պատճառով»։ Քաղաքում պրոպագանդայի չենթարկված բանվորը, գործադուլի գառնալով, պրոպագանդան տանում եր իր հայրենիքը՝ գյուղը։ Նույնն եր և Սիմբիրսկի նահանգում, ուր «Թուրգիկները տարածողներն» եյին «առավելապես հենց տեղացի գյուղացիները, վորոնք վերադառնում եյին աշխատանքից՝ Սամարայից և Մերձվոլգյան սառչին մասի քաղաքներից»։

Չերնիգովի նահանգում, 1905 թվին Տերեշչենկոյի քարուքանդ չեղած ագարակի շրջակայքում «Սայլնոյե գյուղի գյուղացիների անհանգիստ տրամադրությունը, վորը պաշտպանում եյին գյուղացիների վրա ազդեցություն ունեցող տեղացի գյուղացի Յեվդոկիմ Կուզմիչևը և սրա վորդիները, ավելի ևս սրվեց 1905 թվի փետրվարի սկզբին, յերբ այդ ժամանակ վերադարձավ Սայլնոյե գյուղը հարավում աշխատանքի գնացած տեղական գյուղացի Լաուխինը և ուրիշները և ապա խլրտման փոխվեց. գյուղացիները և սկսեցին փողոցներում հավաքվել խմբերով և իրար հետ զրույց անել»։

Այսպիսով, քաղաքից, աշխատանքից վերադարձող գյուղացին, ահա առաջին, ամենաբնդհանուր բնութագիրը այն շարժող փոկի (ремень), վորը քաղաքի հեղափոխությունը կապում եր գյուղի հեղափոխության հետ։ Այդ դեռ վոչ անպայման պրոլետարն և. բաղաֆի կուլտուրական աշխարհի հետ կապն այստեղ դեռ առաջին տեղն և։ Տամբովի նահանգի, Մորշանսկի գավառում «Շաչի գյուղում կան 70 տուն, գյուղի կեսը մոլոկաններն են, կեսը՝ ուղղափառներ։ Մոլոկանները շատ զարգացած են, հարուստ։ Նրանք ստանում են զանազան ուղղության թերթեր, ծանոթ են Կոմս Տոլստոյի գըրվածքների հետ։ Աշխատանքի փնտրելով, յեղել են Ռուսաստանի զանազան բաղաքներում։ Հատկապես սերտ հարաբերության մեջ են Տամբով քաղաքի հետ։ Նրանց մեջ հաճախ են բռնվել Թուրգիկներ»։

Այստեղ գրագետ գարպասի մարդը, վորը մի ժամանակ կազմակերպել եր պուգաչյովականությունը, անժառանգ չեր մեռել։ Նա այժմ արդեն ագդայի գարպասի մարդ չեր. բայց ուներ մի կենսագրություն, վոր հիշեցնում եր նրա պուգաչյովյան նախահորը, իսկ ամենագլխավորն այն եր, վոր գը-

բագետ եր։ Արտագրել այդ տիպի բոլոր այն նմուշները, վորոնք մեր վավերագրերում կան, շատ յերկար կլինեին. նրանք շատ են։ Ահա մի տիպիկ ուրինակ, վորը վերաբերում է Սիմբիրսկի նահանգի Բուինսկի գավառին, ուր քարուքանդ արին Տերենին կալվածատերերի կալվածքը։ Քննության ուղարկված «անփոփոխ անդամը» ի միջի այլոց հաղորդում եր. «Գլխավոր գործիչներ պիտի ճանաչել. 1) Գյուղական գրագիր Պյոտր Պաշկովին, վորը թույլ եր տվել իրեն ապորինի վորոշում շարադրել. վորը, իբրև ավելի գրագետ, համագյուղացիներին պետք է բացատրեր գյուղական ժողովին իր գործողության անճշտությունը. 2) Ալեքսեյ Միխայլով Կուզնեցովին, կազանի բանտի նախկին վերակացուն, լավ գրագետ, վորը Պետերբուրգ յեղել է և ծառայել է Սուխում կալեյի յերկաթուղագծի վրա և վերջացրել է գյուղական դպրոցը. 3) Իվան Սերգեյև Ցիգանովին և 4) Նիկոլայ Կորոլյովին, վորը վերջացրել է գյուղական դպրոցը։ Այս չորս անձը յեղել են Տերենինի անտեսության մեջ յեղած անկարգությունների նախաձեռնողները»։

Քիչ քիչ «աշխատանքից վերադարձող» գյուղացու պատկերը կոնկրետ է դառնում։ Որլովսկի նահանգի Կարաչևսկի գավառում «հանքատեղերից» վերադարձող բանվորները դրդում են անելու այն, ինչվոր գործարաններում է լինում. «քշեցեք կառավարիչներին,—ասում են նրանք,—և ինքներդ անցեք նրանց տեղը, հեռացրեք բանվորներին»։ Նույն նահանգի Դմիտրևսկի գավառում «վերադարձող պահեստիները և հանքահորից յեկող բանվորները, ոգտվելով բնակչության ցած մակարդակից, նրան հուզում են, վորի հետևանքով գյուղացիների տրամադրությունը յերբեմն սպառնալի բնույթ է ստանում»։ Չերնիգովի նահանգում «տեղեկություններ են ստացվել պարզելից, Սուրաժսկի գավառի հողատերերից, վոր գյուղացիների մեջ խլրտումը վերսկսվեց, վորոնց գրգռում են աշխատանքներից վերադարձած գինված հանքափորերը, վորոնք շրջում են խմբերով և վայրագություններ են անում»։ Յեվ հանքափորերի այդ մասնակցությունը հետաքրքիր արձագանքներ է տալիս գյուղացիական ապստամբության տեխնիկայում։ 1905 թվի հուլիսի 7-ին Բախմուտից հեռագրում են. «Բախմուտի գավառի Չերվանովկա գյուղում գյուղացիները հողատեր Վասիլևի անտեսության մեջ այրեցին գոմը, սրա մեջ գտնված անասունների հետ, սարայը և ջրաղացը պայթեցրին դինամիտով»։

Ինչպես պուգաչյովականության օրերին ճորտ լեռնային բանվորը, այնպես էլ այժմ կիսագործ գյուղացի-հանքափորը գյուղի պրոլետարական հեղափոխության ամենամոտ նժույգն է։ Ի զուր չեյին այնպես ատում հանքափորին դեռ 1918 թվին էլ սպիտակ գեներալները՝ Կրասնովը և Դենիկինը։ Պատճառ կար։ «Բնակչության ցած մակարդակը» ամեն տեղ հեշտացնում եր աշխատավոր մասսայի բոլոր խավերի ի մի ձուլվելը. գեներալների համար լավ եր այդ մասսային ամեն տեղ միատեսակ «ցած մակարդակում» պահելը։ Բայց հանքափորով, Ուրալյան պուգաչյովականի նախաթոռով, այստեղ էլ գործը չի սահմանափակվում։ Քիչ-քիչ միշտ նույն նահանգապետերի հաղորդագրություններում մեր առաջ կանգնում են, մեկը մյուսի յետևից, դեմքեր արդեն վորակյալ պրոլետարիատից։

Ռյազանի նահանգի Պրոնսկի գավառում, ինչպես տեղեկացնում եր ժանդարմական վարչության պետը, 1905 թվի նոյեմբերին «քննությունով հաստատվել է, վոր գյուղացիները գործել են Մոսկվայից յեկած գործարա-

նային վարպետ, տեղացի գյուղացիներից, Տիմոֆեյ Կոմարովի ազդեցության տակ, վորը նրանց պատմել և, թե այժմ ամեն բան կարելի յե անել և հողը պատկանում է գյուղացիներին»։ Որլովի նահանգի Վոլխովսկի գավառում գեկտ. 4-ին, Սուպոնև գյուղում, յեկեղեցական-ծխական դպրոցում ժողով յեղավ Սուպոնև և Տիմոնովկի գյուղերի յերիտասարդ բնակիչներից, վորոնցից շատերն աշխատում են Բրյանսկի գործարանում և զինագործարանում։ Այդ ժողովում Բրյանսկի զինագործարանի բանվորներ՝ Իվան Բոգատիրյովը յեվ Անդրեյ Գալիչյեվը խոսում եյին այն մասին, վոր պետք և հողը վերցնել հոգուտ գյուղացիների հողատերերից, վանքերից և յեկեղեցիներից, նաև պետական անտառները, հարկերը չպետք և վճարել»։

Այսպիսով հասարակական առաջին խմբակը, վոր ղեկավարում և գյուղական շարժումը, կազմված եր քաղաքից յեկածներից, մեծ մասով բանվորներից, վորը հենվում եր գյուղի պրոլետարական և կիսապրոլետարական տարրերի վրա։ Դժբախտաբար դա միակ տարրը չեր. վոռտեղից եյին յեկնում մյուսները, ցույց կըտա եսերների ջանքով կազմված Գյուղացիական միության հենտրոնական գյուղացիական կազմակերպության գործունեությունը։

Այդ միության սաղմերը հասնում են 1905 թ. գարնանը, իսկ նրա առաջին կազմակերպված յեղույթն իր այսպես կոչված «համախոսական վճիռների կամպանիան»—գյուղացիների «համախոսական վճիռներ», պահիցաներ կազմելը և Պիտեր ուղարկելն իրենց կարիքների մասին, վորոնցից մեկը (Բալաշովսկի գավառի Գետրովկա գյուղի) մեկ հատված մեջ բերինք։ Արդեն այդ ձևը—ցարին գեռնամած խնդիրը (челобитье)—այդ օրերին, յերբ «միության միության» ինտելլիգենցիան կառավարությանը վերաբերվում եր իբրև «ավագակների խմբի» և նույնիսկ կալվածատերերի համագումարը պատրաստվում եր Նիկոլային հայհոյել (տես վերը).—արդեն հենց միայն այդ ձևն ել ցույց եր տալիս, վորքան գյուղացիությունը, նույնիսկ պրոպագանդայի յենթարկվածը, գնում եր վոչ միայն պրոլետարիատի, այլև բուրժուազիայի վերջից։ «Բարձրագույն անվան» խնդիրներ ուղարկվեցին 60 նահանգից ավելի, բայց Նիկոլայն ու Տրեպովը իրենց ծոծրակները քորեցին այն ժամանակ միայն, յերբ գյուղացիները «համախոսականներից» ու խնդիրներից անցան գործողության ավելի վճռական ձևերի։

Շարժման ականատեսները վորոշակի ցույց են տալիս, վոր Գյուղացիական միությունը (վորը կազմվեց վերջնականապես Մոսկվայի համագումարում 31 հուլիսի—3 ոգոստոսի 1905 թ.) այդ ժամանակ գյուղական մասսայից շատ ավելի աջ եր։ «Համագումարն,—ասում և մասնակցողներից մեկը,—վորի գլուխն եյին անցել կադետները և եսերները, արտահայտվեց հոգուտ վորոշ վճիռների մերժման, վորոնք վերաբերվում են կալվածատիրական հողերն անվճար բռնագրավելուն և Ռուսաստանում հանրապետություն հաստատելու համար զինված ապստամբությանը։ Ինտելլիգենտների ժողովներում սոցիալ-դեմոկրատներին պահանջների չափավորության մեջ մեղադրողներն, եսերները այստեղ համագումարին ցույց տվին իրենց իրբև իսկական լիբերալներ։ Նրանք չեյին ճնշվում համագումարում ներկա գտնվող, թեև փոքր թվով, իսկական հողագործ—գյուղացիներից, վորոնք իրենց կշիռն վրա գրում եյին կալվածատերի ամբողջ ճնշումը, կամայականությունը և ցարական իշխանության ճնշումը։ Եսերներն այն հարցին, թե կալվածա-

տերին հողի յետ գնման համար գրամ վճարի թե վոչ, Ֆունդամինսկու բերանով խնդրում եյին. «չդատապարտել կալվածատերերին կարիքի և տուվի, չզրկել նրանց, տալ վորոշ քանակություն հողից (մինչև 50 դեսյատին) և բացի այդ՝ նրանց տալ մինչև մահը կենսաթոշակ»։ Եսերներն իմ ճնշման տակ ընդհանրապես չեյին հակաճառում «սկզբունքով», ինչպես իրենք եյին ասում, խոշոր կալվածատերերից հողերը գրավելու դեմ, բայց յերբ հարցը վերաբերում եր այսպես ասած՝ կալվածատիրական կուլտուրական հողերին, նրանք պրչերը քաշում եյին։ Եսերները համագումարում անցկացրին բանաձևի 3-րդ կետը, ուր ասված է՝ «մասնավոր տեղերից հողը պետք և վերցնել, մասամբ վարձատրությունով, մասամբ առանց վարձատրության, իսկ ժանրամասն պայմանները, վորոնց հիման վրա մասնավոր սեփականատիրական հողերը կըվերցնվեն, պետք և վորոշ Սահմանադիր ժողովը, վորը և այդ մասին որենք կըհրատարակե»։ «Գյուղացիական միությունը պետք և այդ հարցը հնարավոր չափով մանրամասն մշակե»։ Համագումարի ղեկավարներն եսերների հետ ընդհանրապես թույլ չեյին տալիս գյուղացիների համար այդ հիմնական հարցի շուրջը յեղած վիճաբանությունների ընդարձակումը)։

*Մեջ բերված հատվածի հեղինակը գյուղացիական բանաձևերի այդ ազդ լինելը բացատրում և, մեծ մասով, եսերների կործանիչ ազդեցությունով։ Բայց այս վերջինները պետք և վոր ունենային վորևե հենարան. նրանք այնքան ել ուժեղ չեյին, վոր ռուս գյուղացիության վրին վրթթենն այն, ինչ վոր նա լսել իսկ չեր ուզում։ Անկասկած և, վոր բանվորական համագումարը Ֆունդամինսկուն իր վայնասունով խեղդ կալվածատերերի մասին, պարզապես բեմից կըվանդեր։ Յեվ մեր հեղինակը պետք և ընդունի, գյուղացիական միության նահանգական համագումարների «ճապաղ վորոշումները» «ի հարկե, իրենց մեջ անդրադարձնում եյին առաջին հերթին գյուղացիական մասսայի հետամնացությունը, և մեծ մասով նրա բուրժուական վերին մասերինը։ Հենց այստեղ եր, ինչպես ասում են պերժանացիները «շունը թաղված»։ Եսերներն արտահայտում եյին վոչ թե գյուղական չքավորության շահերը, այլ գյուղի ավելի բարեկեցիկ խավերինը»։**)*

*Եսերները կանգնում եյին «տնտեսություն ունեցող գյուղացու» գծի ուղղությունով, վորը 1905 թվին, ինչպես և 1902-ին հաճախ շարունակում եր ղեկավարել շարժումը։ Այդ նկատվել և զանազան տեղեր։ Այսպես՝ Պոդոլսկի նահանգում, ուր շարժումը (1905 թ. գարնան) մեծ մասով գործադուլային բնույթ ուներ, «ղեկավարներն եյին ավելի բարեկեցիկ գյուղացիները (հարուստները չկան), ավելի վախկոտ եյին անհողները, վորովհետև առանց որական աշխատավարձի նրանք չեն կարող գոյություն ունենալ և ստիպված եյին գործադուլը շուտով դադարեցնել սովից խուսափելու համար։ Փորձեր յեղան ոգնելու չքավորներին բարեկեցիկ ընտանիքներից ուտեստ հավաքելով, բայց դրան արգելք յեղան յեկած զորքերը»։***)*

Բայց այդ գիծն ավելի վորոշակի յերևում և գյուղացիական ապստամբության գլխավոր թատերաբեմում՝ Սարատովի նահանգում։ Սարա-

---

*) А. Шестаков. «Бунт земли» յեր. 53—54

**) К. Шестаков. «Бунт земли» յեր. 52

***) Маслов, հիշված աշխատությունը. 102 յեր.

տովի նահանգի, Բալաշովի գավառի մի կալվածատեր 1908 թվի սկզբին «Ազատ տնտեսական ընկերությանը» գրում եր. «Գյուղացիության բարեկեցիկ խավն ապրարային շարժումին իր ձեռքն առավ։ «Ադտոտը», որը մի քիչ առաջ «սոցիալիստներին» բանում եր և իշխանության հանձնում, այժմ գրեթե ամբողջովին հեղափոխականների շարքում է գրվել»։ Բալաշովի կալվածատերը, ինչպես տեսնում ենք, ընդունում եր ընդհանուր նարոդնիկական նախապաշարումը «կուլակի» ռեակցիոն լինելու վերաբերմամբ.—նրան իր դիտածը թվում եր թարմ նորություն, թեև գյուղական պրոպագանդիստները, և՛ սոցիալ-դեմոկրատները և սոցիալիստ-հեղափոխականները, դեռ հինգ տարի առաջ միաձայն նույն չերևույթը նշել եյին։ Բայց շարունակենք մեջբերումը. ահա թե ինչ եր ասում «ադտոտը».—«Հողը վաճառականի և պարոնի համար պետք չէ, իրենք հողը չեն վարում և տնտեսության վրա չեն հսկում։ Իսկ չավոր գյուղացու համար հողը բոլորովին ավելորդ է. նա իր հողաբաժինն էլ չի կարողանում մշակել։ Անբերրիությունը լավ չվարելուց է, պետք է լավ անասուն, սրանց համար սարք, սերմ, խոփ, լավ վերանորոգություն և գրպանում դրամ անբերրության դեպքում։ Իսկ չքավոր գյուղացին միայն ցարական բաժնեմասով—պայտով և շունչ քաշում։ Աննոպցներին յեվ ինչ հող ունեցողներին հող տալը—այդ բոլորը պարոնների հնարած բաներ են. հողաբաժինը փչացրին, բանկի հողն էլ կըփչացընեն։ Բանկը պետք է հողը տնտեսություն ունեցող գյուղացիներին տա, այն էլ վոչ թե 13 դեսյատին մի տնտեսությանը, այլ 50, 100 դեսյատին»։ «Այսպես են ճառերը, որոնք գրեթե ամեն որ յես լսում եմ տնտեսություն ունեցող գյուղացիներից, որոնք իրենց սովորաբար համարում են ձախ կուսակցություններին պատկանող»,—յեզրափակում է Ազատ Տնտեսության ընկերության թղթակիցը։

Այսպիսով պատահական չեր «չավավոր» հասերների Գյուղացիական միության քաղաքական դեկավար լինելը, և պատահական չեր գյուղացիական համագումարների «ճապաղ» բանաձևեր ընդունելը։ Այնտեղ, ուր պատկասում է պրոլետարիատի ազդեցությունը, չքավորությունն ապստամբների մեջ միայն բանակի ետաբը գյուղի բարեկեցիկ տարրերն եյին, այն ինքնուրույն մարդը արտադրողը, որն, ի դեմս կալվածատերերի, տեսնում եր վոչ այնքան նախկին պարոնին, որքան նոր բացված հարի շուկայում իրեն մրցակցին։

«Տնտեսություն ունեցող գյուղացիների» այդ դեկավարող դերը մի անգամ էլ իր արտահայտությունը գտավ առաջին Պետական դումայի գյուղացիական պատգամավորների սոցիալական կազմի մեջ։ Հեղափոխության այդ մոմենտի մասին ավելի մանրամասն մենք կըխոսենք ստորև, բայց գյուղացիական ապստամբության բնութագրումը վերջացնելու համար այդ գիծն անհրաժեշտ է։ Աշխատավորական խմբի (трудовая группа), ամենաձախ եյին գյուղացիական պատգամավորներից միայն 14-ը, այսինքն 30 տոկոս ունեյին հողաբաժին յերկու դեսյատինից վոչ ավելի, այսինքն պատկանում եյին «գյուղական չքավորության», մինչդեռ 15-ը, ունեյին 4 դեսյատինից ավելի, պատկանելով, անկասած, Բալաշովի կալվածատերի խոսակիցների կարգին։ Մեծ կասած են զարթեցնում և Ճնացած 13-ը, որոնք իրենց հողաբաժնի չափը չեն ցույց տվել։ Ցեվ սա ամենաձախ, ամենից ավելի հեղափոխական խումբն է։ Անկուսակցականների մեջ, 10 դեսյատինից ավելի ունեցողները 11 տարոկ են, այսինքն 25%-ից ավելի։ Բացի դրանից, գյուղացիները դումա ուղարկեցին 24 կաղեցի, վորոնց «հողերի չափը» ասում և մեր հեղինակը, վորից մեջ ենք բերում,—«ավելի մեծ է»*)։

Այնուամենայնիվ աշխատավորական խմբի հողային նախագծի տակ ստորագրեցին բոլոր գյուղացի պատգամավորները. տնտեսական հարցում նրանք բոլորն էլ համերաշխ եյին։

«Գյուղացիական պահպանողականության պատի կայունության» մասին յեղած կարծիքը, որը բուլգինյան ընտրական որենքի հեղինակներին վոգևորում եր (տես վերը) այդպիսով հիմնապես հերքվեց։ Այն բնազավառում, վորն ամենից շատ եր հետաքրքրում կալվածատերին, գյուղացին յերևաց ամենևին վոչ պահպանողական։ Բայց այնուամենայնիվ կալվածատերերը մի բանում արդարացի եյին։ Նրա արդարացի եյին, յերբ պընդում եյին վոր «գյուղացիներին միապետական իշխանությունը ստիմանափակելու միտքը ոտար է»։ Այդ ուղիղ չեր գյուղացիական ամբողջ մասսայի վերաբերմամբ. ամենամիամիտ ձևով, այն լողունգով թե՝ «պետք է ցարին փոխել» գյուղացիների կողմից վոչ բոլորովին ըմբռնված այդ հակամիապետական տրամադրությունը լայն չափերով տարածված եր ամբողջ չերնոզյոմի շերտում։ Բայց այդ ուղիղ եր բարեկեցիկ խավերի նկատմամբ, վորոնք գյուղացիության քաղաքականապես դեկավարում եյին։ Պետական դումայի աշխատավորական խմբակը դուռ քաղաքական հարցերում հետևում եր կադետներին, վորոնք ձգտում եյին «թագը ցնծից բարձրացնել»։ Գյուղացիները համաձայնում եյին և այն բանին, վոր «միայն ցարի ժողովրդի հետ միանալը դառնում է ազգյուր որինապրական իշխանության» և այն բանին, վոր «ներման համար չարժե գործը խզման հասցնել։ (մենք կտեսնենք, վոր դրա համար կադետները իրենք պետք է խղեյին) և այն բանին վոր «Ռուսաստանում այլևս կռիվ չպետի լինի, Ռուսաստանում պետք է խաղաղություն լինի»։ Մի պատգամավոր դումայի ցարին տված խնդրագրի ընդորոշումը տվեց.—մի ազրես, վորին միացավ և աշխատավորական խմբակը։ «Յես պատկերացնում եմ խնդրագրի հեղինակին,—ասաց պատգամավոր Մերկուլովը,—ձեռքերը խաչած և գլուխը կախ ձգած, վորն աղերսում է ներումն, խնդրում է վողորմություն... Նա իր խնդիրները պարզ չի արտահայտում, այլ կիսատ խոսքեր է ասում։ Ազրեսի հեղինակի ընդհանուր գաղափարը—հեղության զազափարն է։ Նա շտապում է մի տաք խոսք փոխանակել իշխանության հետ։ Յերբ նա խոսում է մահվան պատիժը վերացնելու մասին, չի հիշատակում կանգնացնելու այն վճիռները, վորոնք արդեն յեղել են։ Յերբ նա խոսում է ապրարային ռեֆորմի մասին, այնպես է թվում, վոր այդ խոսքերն անկեղծ ցանկություն չե, այլ ինչ վոր հարկադրված հայտարարություն»։

Բայց նույնիսկ ապրարային ռեֆորմի հարցում գյուղացիների վրա հույս դրած սև հարյուրակայինները, վորոնք չափով արդարացի յերևացին։ Գյուղացիական հեղափոխականն այստեղ էլ մինչև վերջը չգնաց, չհեղավ բոլորովին անհաշտ։ Այս ամբողջ պարզությամբ յերևաց այնքան միահամուռ կերպով աշխատավորական խմբի կողմից առաջ քաշված ապրարային

*) П. Маслов. Հիշված աշխատությունը, յեր. 277։

նախագծում։ Ցեվ նա չկանգնեց հեղափոխական—դեռ Պետիչից սկսած բոլոր հեղափոխականներից առաջ քաշված—հայեցակետի վրա՝ խոշոր հողատիրական սեփականության կոնֆիսկացիայի։ Ցեվ նա թույլ եր տալիս—իսկ նրա յետևից թույլ եր տալիս նույնը և սոցիալիստ-հեղափոխականների ագրարային նախագիծը—«վարձատրություն ստիպողական ոտարացման համար» «ի հաշիվ պետության»։ Ուրիշ խոսքով նա էլ թույլ եր տալիս կալվածատերերի հետ համաձայնության։

Հետևողական հեղափոխական հայեցակետի վրա կանգնած եր միայն պրոլետարիատը։ Ցեվ յեթե նա 1905 թվին չկարողացավ հեղափոխությունը մինչև վերջը հասցնել, ապա ավելի ևս պակաս ընդունակ եր դրան գյուղացիությունը։

ԳԼՈՒԽ ՈՒԹՅԵՐՈՐԴ

ԲՈՒՐԺՎԱԶԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՅԵՐԿՈՒՆՔՆԵՐԸ

Մենք քննեցինք այն մասսայական շարժումը, վորն և իր ամբողջությամբ կազմում եր 1905—1906 թվերի ռուսական առաջին հեղափոխությունը։ Նրա յերկու ալիքները՝ բանվորական և գյուղացիական չզուգադիպեցին. բանվորականը իր բարձր կետին հասավ 1905 թվի դեկտեմբերին, գյուղացիականը դրան հասավ միայն 1906 թվի ամառը։ Ագրարային շարժումը տեղի յեր ունենում 1905 թվի գարնանը և ամառը 96 գավառում, 1905 թվի աշնանը՝ 171 գավառում և միայն 1906 թվերի գարնանը և ամառը այն ընդգրկեց 305 գավառ, այսինքն Յեվրոպական Ռուսաստանի կեսից ավելին։ Այդ տարվա աշնանը «խռովություն անող» գավառների թիվը ընկնում է մինչև 72, 1907 թվի գարնանը և ամառը մի քիչ բարձրանում է (83 գավառ), վորպեսզի այդ վերջին տարվա աշնանը գրեթե զերոյի հասնի (յերեք գավառ)*)։

Ցերկու շարժումների այդ տարբեր զարկոցը պետք է նրանց անհաջողությանը նպաստեր։ Բայց դրանով բացատրել բոլորը ուղիղ չեր լինի։ 1917 թվին ցարիզմը տապալվեց և բավական հեշտությունով, միայն քաղաքի շնորհիվ,—գյուղը այստեղ չհասավ մասնակցելու։ Նշանակում է, անհաջողությունը բացատրելու համար պետք է հաշվի առնել ևս մի պայման և վորը մենք նույնպես տեսանք։ Կարճ ասած՝ այդ պայմանը մասսաներից վերջնականապես եկոնոմիզմի դուրս յեկած չլինելն եր։ Մինչդեռ բանվոր դասակարգի վերի մասը արդեն 20-րդ դարի սկզբին ազատվել եր եկոնոմիստական աշխարհայացքից, արդեն „Искра“-ի ժամանակից սկսած հասկացել եր, վոր սկսվում է կռիվը իշխանության համար և վոչ թե իշխանության հետ զիջումներ սակարկելը, լայն շրջանների համար այդ ժամանակվին պարզ չեր։ Ցեվ չի կարելի այդ բանի համար նրանց մեղադրել, քանի վոր Ռ. Ս. Դ. Կ. Ստոկհոլմի («միացնող») համագումարում 1906 թվի ապրիլին վոչ ուրիշ վոք, բայց յեթե Պլեխանովը, զինված ապստամբության բանաձևում առաջարկում եր փոխել՝ «իշխանությունը խլել» խոսքը «իրավունքներն ուժով խլել» խոսքով, դրանով ընկ. Լենինից դուրս կորզելով հետևյալ զայրույթով լի խոսքը. «փոփոխությունն իսկապես ցնցող եր։ Ապստամբության մասին

*) Վորպեսզի ընթերցողը գաղափար կազմի գյուղացիական շարժման խոտրյան մասին, անհրաժեշտ է նկատել, վոր ամեն մի գավառի վրա ընկնող ապստամբությունների դեպքերի թիվը միջին հաշվով 3—4-ից չի անցել։ Շատ տեղերում հատատարած շարժում է յեղել։ Առանձին գյուղացիական յելույթների դեպքերով 1905 թվի աշունը և 1906 թվի ամառը իրարից քիչ են տարբերվում. և 1905 թվի նոյեմբերը 796 յելույթով նույնիսկ գերակշռում է 1906 թվի հունիսին (748 յելույթ)։

յեղած բանաձևում խոսվում է ոչ թե իշխանության համար պայքարի մասին, այլ իրավունքների պայքարի մասին. մտածեցնեք միայն, թե ինչպիսի անհավատալի չփոթություն կըմտներ մասսաների գիտակցության մեջ այդ ոպորտյունիստական ձևակերպությունով և ոլորքան անմխիթար կլիներ աչքի զարնող անհամապատասխանությունը միջոցի մեծության (ապստամբություն) և նպատակի համեստության միջև (լսել իրավունքները, այսինքն հին իշխանություններից լսել իրավունքներ, ձեռք բերել զիջումներ հին իշխանություններից և ոչ թե նրան տապալել)»*):

Բայց յեթե նույնիսկ բանվոր դասակարգը 1905 թվին վերջնականապես չեր ազատվել եկոնոմիզմից, գյուղացիությունը դեռ չեր էլ սկսել ազատվել նույնիսկ 1906 թվին: Այստեղ այն գիտակցությունը, որ պայքարը իշխանության համար և ոչ իրավունքների, նույնիսկ վերնախավն էլ չուներ. «աշխատավորական խմբի» լիդերներից մեկը Ալադինը, առաջին պետական դումայի ամբիոնից հնարավոր համարեց կարդալու գյուղացիների նամակները, որոնց մեջ խոսվում եր «ցար-հայրիկի» (царь-батюшка) վրա դրած ժողովրդի հույսերի մասին, որ «մեր ցարը ժողովրդի ցար է և ոչ թե ատիճանավորների և պալատականների» և նման հիմար բաներ: Գեկավարող գյուղացիների խավերը այն ժամանակ դեռ հատատուն հույս ունեյին հին իշխանություններից ձեռք բերել այն միակ իրավունքը, որի խիստ կարիքն եյին զգում—հողի իրավունքը:

1905 թվի հեղափոխությունը մինչ վերջ հասցրվեց նրա համար, որովհետև ապստամբած մասսան մինչև վերջ հեղափոխական չեր: Բայց չպետք է պատկերացնել պատմական պրոցեսը իբր ինչվոր ավտոմատիկ բան, որը գործում է մարդկանց կամքից դուրս և անկախ, որոնք այդ պրոցեսին մասնակցում են, որոնց գործողություններից կազմվում է այն: Դասակարգի պայքարում, ինչպես և առանձին մարդկանց պայքարում, պայքարողները ոգտվում են մեկը մյուսի պակասություններից և թուլություններից: Ապստամբած մասսայի անբավարար հեղափոխությունից ոգտվեց, մենք տեսանք, կառավարությունը, այսինքն կալվածատերերը, յերբեմն փորձ անելով կաշառել (բուլիգինյան դուման, հոկտեմբերի 17), յերբեմն վախեցնելով (1905 թվի հունվարի 9 ը, դեկտեմբերը): Այդ անբավարար հեղափոխությունը ավելի ևս ոգտագործեց բուրժվազիան, փորձելով աներոյականացնել շարժումը: Մասսան պայքարում եր իրավունքների համար պակաս գիտակցություն ունենալու պատճառով, չհասկանալով, որ հին իշխանություններից իրավունքները սպասելը ավելորդ է, որ պետք է ինքն իշխանություն դառնա և այն ժամանակ իրավունքները իրենք կգան: Բուրժվազիան աշխատում եր մասսային ներշնչել, որ իրավունքների համար մղած պայքարն արդեն իսկական «ուղիղ» հեղափոխություն է, իսկ մասսային բուրժվազիան միաժամանակ նաև ոգտվում եր դրանից, ոգտվում եր իշխանությունից վախեցնելու համար, այսինքն կալվածատերերին, որոնք իրանց «իրավունքները» ոչ ոքի հետ չեյին ուզում կիսել, նույնիսկ բուրժվազիայի հետ:

Այն, ինչ որ առաջին հեղափոխության գլխավոր պակասն եր, նրա

*) Доклад об об'единительном с'езде—(Զեկուցում միացնող համագումարի մասին):

վերջացած չլինելը, բուրժվազիայի ձեռքին գլխավոր կողքն եր: Դրա վրա հենվելով բուրժվազիան հույս ուներ սկսված մեծ հեղափոխությունը դարձնել փոքր, 1789 թիվը փոխել 1748-ի: Ցավ մի ժամանակ կարող եր թվալ, որ Ռուսաստանը կանգ կառնի 1841 թվի վրա: Միայն 1917 թվի հոկտեմբերը վերջնականապես խորտակեց ռուսական բուրժվազիայի հույսերը:

Ռուսական առաջին հեղափոխության վերջաբանում մեզ ճնշում է քննել նաև բուրժվազիայի ունեցած դերը նրանում: Մենք կտեսնենք, որ այդ դերը շատ բանում մարգարեական է. ռուսական 1905 թվի բուրժվազիան հնարավորություն տվեց նախատեսելու 1917 թվի բուրժվազիային:

Այն ինչ վոր 1905—1906 թվերին մեր աչքին է դարնում, այդ այն է, վոր բուրժվազիան մի ամբողջությունը եր միայն պրոլետարիատի վերաբերմամբ: Այստեղ, ինչպես մենք կտեսնենք, տարբերություն չկար. բուրժվազիայի, բոլոր խմբերը առանց բացառության, ծափահարում եյին պրոլետարիատին, յերբ նա սկսում եր հեղափոխական լինել, բոլորն էլ միակերպ նրան դատապարտում եյին, յերբ նա աշխատում եր հեղափոխությունը իր վերջին հասցնել: Բայց բուրժվազիան ըստ ինքյան զանազան խմբերի ժողովածու յեր և նրանց չափերի տարբերությունը ամենից ցայտուն յերևում եր նրանց իշխանության վերաբերմամբ ունեցած հարաբերություններում: Այդ տարբերություններով էլ բացատրվում է այն, վոր բուրժվազիան մեզանում քաղաքական մի կուսակցություն չկազմեց, թեկուզ «ֆրակցիաների» բաժանված. ինչպես պրոլետարիատն եր, այլ բաժանվեց մի քանի կուսակցությունների, վորոնց փոխադարձ թշնամությունը ավելի սուր եր, ավելի խորն եր, քան բոլշևիկների և մենշևիկների միջև, այլ ավելի քան սոցիալ-դեմոկրատների և սոցիալ-հեղափոխականների միջև:

Ձախից դեպի աջ, բուրժվական յերեք հիմնական խմբեր դասավորված եյին այս կարգով: Ամենաձախ թևում կանգնած եր բուրժվական ինտելիգենցիան, վորը մասամբ դեկավարում եր արդյունաբերության ապարատը, մասամբ ներկայացուցիչն եր իրեն ավելի վորակյալ և բուրժվական հասարակության մեջ ավելի դնահատվող արհեստների՝ ինժեներներ, ժուռնալիստներ, վաստականներ, բժիշկներ: Այդ խումբը ներկայացնում եր բուրժվական գաղափարախոսության կոնկրետ մարմնացումը բուրժվական հասարակության դրա տեսական մշակումը անում և բուրժվական հասարակագիտության և բուրժվական իրավունքի պատճառով բուրժվական հասարակության «գործնական աշխատավորները»՝ պրոֆեսորները և փաստաբանները, այդ խմբի բնական առաջնորդներն եյին: Մանր մտավորականությունը՝ զեմսկի բժիշկները, ուսուցիչները, գյուղատնտեսները, ստատիստիկները, տեխնիկները, այդ ձախ խմբի կամ ձախ թևն եյին կամ մի ջին ողակը նրա և հեղափոխական կուսակցությունների:

Բուրժվական ինտելիգենցիայից անմիջապես աջ մենք պատրաստ ենք տեսնելու արդյունաբերական կապիտալի ներկայացուցիչներին, այդպես էլ եր Յեվրոպայում ամեն տեղ, բայց վոչ մեզ մոտ: Հեղափոխությունն ընդդրկեց Ռուսաստանի տնտեսական պարզացման ավելի ուշ աստիճանում, քան յեվրոպական յերկրներից վորևե մեկին: 1848 թվի գերմանական հեղափոխությունը վերջացավ գերմանական փոքրաթիվ կոմունիստների կոչով՝

կազմելու իճիճուրույց բանվորական կուսակցություն, ըստ վորում այդ կոչը գործնական իրականացում ստացավ միայն 20 տարի հետո։ Մեզանում պրոլետարիատի ինքնուրույն կուսակցություն արդեն կար, յերբ հեղափոխությունն սկսվեց։ Բայական և այս յերկու փաստը, վորպեսզի տեսնենք, թե Ռուսաստանում հեղափոխության շրջանում վորքան խորն եր, քան նույնիսկ Գերմանիայում 1848 թվին։ «Մեծ հեղափոխության» շրջանի Ֆրանսիայի մասին խոսել էլ չարժե. այստեղ հեղափոխության սկզբում վոչ միայն բանվորական կուսակցություն, այլև բանվորական դասակարգ, իբր առանձին ամբողջություն, դեռ ամենևին չկար. Ֆրանսական պրոլետարիատը XIX-րդ դարու սկզբներից մեծ չե. նրան հենց հեղափոխությունը ստեղծեց։ Ռուսական դասակարգերի հարաբերությունների այդ ավելի հասունությունն ել այն բանին հասցրեց, վոր մեր արդյունաբերական կապիտալը իր նպատակներին չկարողացավ հասնել՝ իրեն հարկավոր «իրավական կարգին», հենվելով մասսայական շարժման վրա։ Ճշմարիտ է, առաջին րոպեին այդ նա չհասկացավ, նա հույս ուներ մեզանում բանվորներին ոգտագործել այնպես, ինչպես Ֆրանսիայում նրա նախորդները ոգտագործեցին։ Բայց մեծամասնությունն այդ ժամանակ ել այդ ճանապարհով գնալ չուզեց, իսկ յերբ հոկտեմբերյան գործադուլը տարերայնորեն փոխվեց 8 ժամյա բանվորական որի պայքարի, արդյունաբերական կապիտալի քաղաքական դիրքը բոլորովին վորոշվեց. նա կարող եր լինել միայն նրանց հետ, ով «զսպում եր» և վոչ նրանց հետ, վորին «զսպում եյին»։

Այդ պարզվեց այսպես։ Ագնվականների համագումարի ազդեցության տակ Գորեմիկին-Ստոլիպինյան կառավարությունը «հաղորդագրություն» հայտարարեց, ուր ասված եր, թե վոչ մի «հարկադրական ոտարացումը նավոր սեփականատիրական հողերի» չի լինի։ Այդ դումայի աշխատանքի մեջ կոպիտ միջամտություն եր, վորը դեռ չեր վերջացրել ագրարային հարցի քննությունը։ «Հարկադրական ոտարացումը» բոլոր նահանգներում կար և հանկարծ մինիստրությունը հայտարարում է, վոր դուման ինչ էլ վորոշելու լինի, միևնույն է, կալվածատիրական հողին ձեռք չի տրվի։ Զայրացած «ժողովրդական ներկայացուցիչները» վորոշեց կառավարության «հաղորդագրության» պատասխանել «ժողովրդին ուղղված դիմումով», վորը հերքում եր հաղորդագրությունը և իրերն իրենց տեղը դնում։ Կադետները ամաչկ վախեցան.—կադետների իրավաբանները իսկույն ըմբռնեցին, վոր դումայի այդ քայլը Սաոլիպինի ձեռքում կարող է դուման արձակելու ձեվական առիթ դեր խաղալ։ Սակայն պատգամավորների դրությունն այնպես յեր, վոր «ժողովրդին ուղղված դիմումին» կադետները ուղղակի դեմ դուրս գալ չհամարձակվեցին։ Նրանք փորձեցին սարսափած յենթարկել «դիմումը», դումային հրամցնել գաղտնի այնպիսի բնագիր, «վորի գլխավոր միտքը—ս.-դ. ֆրակցիայի ներկայացուցչի խոսքի համաձայն—հանգում եր ժողովրդին կշտամբելուն և հանգստության հրավիրելուն և վոչ թե կառավարական այն բռնություն գործ դնողներին մերկացնելուն, վորոնք դուման անուժ եյին դարձնում»։ Յեվ ահա այդ տարորինակ «հեղափոխական վավերագիրը», վորը ժողովրդին հանգստության եր հրավիրում, քվեարկելիս տեղի ունեցավ սկանդալ. նախագիծն ստացավ միայն կադետների ձայները (124), Աջերը և սոցիալ-դեմոկրատները (52 ձայն) հակառակ քվեարկեցին, իսկ 101 աշխատավորականները ձեռնպահ մնացին։ Անցել եյին արդեն այն ժամանակները, յերբ այդ միամիտ մարդիկը ձայն եյին տալիս ցարին ուղղված կադետական խնդրագրին.—դումայի յերկու ամսվա նիստերը նրանց ել մի բան սովորեցրել եյին։

Տրեպովի համար այդ կայծակի հարված եր պարզ յերկնքից։ Ուրեմն այդ կադետները դումայում ամենևին էլ մեծամասնություն չունին։ Ի՞նչ միտք ունի ուրեմն նրանցից մինիստրություն ունենալը. Ստոլիպինը կարող եր հաղթանակ տանել։ Հուլիսի 8-ին (հ. տ.) ցարի հրամանը յեղավ դուման արձակելու մասին. վորը պատճառաբանված եր նրանով, վոր դուման սկսել ե իրեն չվերաբերող գործերում խառնվել։ Միաժամանակ 1907 թվի հունվարին նշանակվեցին ընտրությունները։ Կազմվեց նաև նոր մինիստրություն. Գորեմիկինը պաշտոնաթող յեղավ, բայց պրեմիեր դարձավ վոչ Միլյուկովը, այլ Ստոլիպինը։ Իր կազմվելիք կաբինետը զարդարելու համար նա նորից փորձեց հրավիրել «հասարակական գործիչներին», բայց այդ այնքան եր նեխած ծաղրի, վոր նույնիսկ հոկտեմբերյանները վիրավորվեցին։ Թեև ստոլիպինյան կաբինետի հետագա քաղաքականությունից չեյին կարող առանձնապես դժգոհ լինել։

Տրեպովի յերկյուղը «կարգի և հանգստության» վերաբերմամբ շատ աննշան չափով արդարացավ։ Պետերբուրգի Բանվորների Խորհրդի պատդամավորների բանտարկությունը ավելի ուժեղ արձագանք տվեց, քան 1-ին դումայի ցրումը։ Սվեյաբորգում և Կրոնշտադտում զինվորական ապստամբություններ բռնկեցին, բայց կառավարությունը դրանց համար նախապատրաստված եր և նրանց ճնշեց ավելի քիչ դժվարությունով, քան 1905 թվին Սեվաստոպոլինը։ Գյուղացիությունը պատասխանեց բավական խոշոր չափի խռովություններով.—հատկապես շարժումը մեծ եր Ստավրոպոլի նահանգում, վորի պատգամավոր Ոնիպկոյին մահվան պատիժ եր սպառնում Կրոնշտադտի ապստամբությանը մասնակցելու համար։ Բայց այդ ել արդեն ավելի սարսափելի չեր, քան այն, ինչ կառավարությունն առաջ եր տեսել։ Պրոլետարիատը, վոր բոյկոտի յեր յենթարկել դուման, այնուամենայնիվ հաղթանակող պետությանն իր գոյությունն հիշեցրեց ընդհանուր գործադուլի փորձ անելով։ Մոսկվան և Պետերը գործադուլ արին բավական հաճախ, բայց հենց գործադուլավորների համար այդ միայն պարզ ցույց եր, վորը վոչ մի կոնկրետ նպատակի չեր ձգտում։ Ամենից ավելի վողորմելի յեր ցրված դումայի հերոսների՝ կադետների պատասխանը։ Ֆինլանդիայի սահմանից մյուս կողմը՝ Վիբորգում հավաքվելով նրանք հրապարակեցին նորից մի «կոչ ժողովրդին»։ Ամենից ավելի լավ և բնորոշել այդ կոչի միտքն ու նշանակությունը կադետների կուսակցության լիդերի խոսքերով. «Վիբորգի մանիֆեստը, վորի մասին այնքան անմիտ բաներ և ասված, նրա գաղափարն եր այն բանի, վոր կարելի յեր անել յելք տալու ընդհանուր տրամադրության։ Ժողովրդական ազատության կուսակցության անդամների համար այդ մի փորձ եր Պետերբուրգի փողոցներում գինված ապստամբության ընդհարումի առաջն առնելու, վորն առաջուց արդեն անհաջողության եր մատնված և ընդհանուր դժգոհությանը տալ արտահայտություն ելով սահմանադրությունը խախտող օրինական դիմադրություն ցույց տալու և հեղափոխության միջև յեղող սահմանի վրա։ Այդպիսի դիմադրության որինակ կար Վենդրիայում ժողովրդական կրթության առթիվ յեղած ընդհարումի հետևանքով։

«Համաձայնելով դումայի ձախ թևի հետ Վիբորգում միասնորեն սահմանադրական յելույթի, սահմանադրական տարրերը Վիբորգից անմիջապես

հետո, Տերիոկիի խորհրդակցության մեջ մերժեցին հեղափոխական յելույթները, ինչպես և դրան հաջորդող Կրոնշտադտի և Սվեյաբորգի ապստամբությունները և այլն։

«Ժողովրդին հրավիրելը, վոր հարկը չվճարե և զինվոր չտա—պայմանական նշանակություն ուներ.—այն դեպքում, յերբ պետական նոր դումայի համար ընտրություններ չնշանակվեն—և այդ միջոցների գործադրությունն անմիջապես չեր սկսվում, այլ ժողովրդի տրամադրությունը պարզվելուց հետո, աշնան զորակոչից վոչ առաջ։ Այսպիսով, իրոք, վիբորգյան կոչը միայն քաղաքական ցույց եր դառնում և մի միջոց ծայրահեղ դեպքի համար, վորը չեղավ, վորովհետև յերկրորդ դումայի համար ընտրություններ նշանակվեցին*)»։

Այս տողերը գրել ե Միլյուկովը 1921 թվին, յերբ նա չեր կարող բացարձակապես վոչ մի առիթ ունենալ իր 1906 թվի հեղափոխականությունը ծածկելու, ընդհակառակը բոլոր հիմքերը կային այդ ավելի ևս խոշորացնելու։ Ջի վոր նա այժմ կադետների ձախ թևի «հանրապետականների» լիդերն ե։ Բայց այս անգամ նրա մեջ բարեխիղճ պատմաբանը հաղթել ե քաղաքագետին, և նա չկարողացավ ծածկել, վոր կադետների միակ «հեղափոխական» կոչն ել հակահեղափոխական նպատակների յեր հետամտում։

Բուրժուական ինտելիգենցիայի քաղաքական դերը թվում եր ընդմիշտ վերջացած։ Սկսվում եր ազնվականության խիստ ռեակցիան, բայց նա արդեն իր համար չեր աշխատում. նա բուրժուական ռեակցիայի ճանապարհն եր մաքրում։ Վերլուծելով «ստոլիպինականության» սոցիալական իմաստը, մենք կտեսնենք, վոր բուրժուական հեղափոխության տեսակետից, ինչպես այդ մենշևիկներն եյին հասկանում, խաղը ամենևին զուտ տարվելու խաղ չեր, չնայելով կադետների պարտության։

---

*) «Три попытки» (Ռուս կեղծ սահմանադրականության պատմությունից) 63—64 յերես։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

1905 ԹՎԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՅՐԱԳԱՎԱՌՅԵՐՈՒՄ

«Ռոմանովների» կայսրությունը, ինչպես բոլորին հայտնի է, ազգային ամբողջություն չեր. ինչպես և բոլոր այն պետությունները, որոնք կազմվել են առևտրական կապիտալի միջոցով. նա ևս մի իշխանության տակ միացնում եր ծագումով շատ բազմատեսակ ժողովուրդների, որոնք դժբախտություն եյին ունեցել ապրելու այն առևտրական ճանապարհների մոտ, որոնք ռուս առևտրական կապիտալին ուղղակի կամ վոչ ուղղակի անհրաժեշտ են յեղել: Բալտիկ ծովի արևելյան, Սև ծովի հյուսիսային և արևելյան, Կասպից ծովի արևմտյան ափերի բնակիչները, այն ցեղերը, որոնք բնակվում են Վիսլայի, Նեմանի, Արևմտյան Դվինայի, Դնեստրի կամ Պրուտի ավազաններում, մարդիկ, որոնք խոսում են այնպիսի լեզուներով, որոնք վոչ միայն ոտար են ռուսաց լեզվին, այլև միմյանց. վրացիները և լեհերը, Ֆինլանդացիք և Ղրիմի Թաթարները, լատիշները և կիրգիզները.— բոլորն էլ ռուս ցարի հպատակներ եյին—և քիչ բացառությամբ—

մասին ստիպված ենք խոսել իբրև 1905 թվի հեղափոխության մոմենտների մասին ընդհանրապես, իբրև բնդհանուր ռուսական հեղափոխության մասին։ Եթե սրան ավելացնենք և այն, որ ազգային լոզունգները 1905 թվի Ուկրաինայի շարժման մեջ գրեթե վոչ մի դեր չեյին խաղում—միայն պահանջ եր դրվում տեղական լեզուն մտցնել դպրոցի և դատարանի մեջ, այսինքն «ազգային-կուլտուրական» ավտոնոմիա, քաղաքական անկախության պահանջը յերևաց միայն 1917 թվին,—ապա ընթերցողը կհամաձայնի, որ «համառոտ ուրվագծում» դժվար է 1905 թվի Ուկրաինայի շարժմանն առանձին բաժին հատկացնել։ Ավելի շուտ կարելի յե պատկերացնել ռուսական առաջին հեղափոխության պատմությունը գրված Ուկրաինյան տեսակետից, բայց այդ արդեն Ուկրաինյան պատմաբանի գործ է։

Բոլորովին հակառակ դրության է ստացվում Լեհաստանի և Ֆինլանդիայի համար։ Յերբ այս գիրքը կընկնի այնպիսի ընթերցողի ձեռքը, որը ծնվել 1914 թվից հետո, այդ յերիտասարդը պարզապես չի հասկանա թե ինչու՞ ռուսաց պատմության մեջ խոսվում է ոտարազգի պետությունների մասի և հենց այդ պետությունների։ Յեթե հեղինակն ուզում է խոսել «հրեաների» մասին, այն ժամանակ պետք է խոսե նաև Ռումինիայի և Տաճդստանի և Պարսկաստանի մասին։ Իսկապես այժմ Լեհաստանը և Ֆինլանդիան մեզ համար պակաս «ոտարազգի պետություններ» չեն, քան, որինակ, Գերմանիան։ Յեվ դժվարությամբ եվ կարելի յե լինում պատկերացնել այն ժամանակները, յերբ վարշավան՝ արտասահմանից վերադարձող ռուսի համար առաջին «ռուսական» քաղաքն եր, իսկ Հելսինգֆորսի վորևե վաճառատան մեջ այս ռուսը կոտրված գերմաներեն լեզվով բացատրելու անհաջող փորձերն անելուց հետո լուում եր լիզվագիտական այդ յերկունքներից զարմացած վաճառողուհու բերանից հարց՝ «իսկ դուք ռուսերեն չէ՞ք խոսում»։

Բայց վորքան եվ Ռուսաստանից առանձնացան այդ «ռուսական կայսրության» յերկու նախկին մասերը վերջին 7 տարուն—Լեհաստանը նույն իսկ վերջին 10 տարում—այնուամենայնիվ 1905 թվի հեղափոխության մեջ նրանք յերկուսն եվ վորոշ տեղ են գրավում։ Վոչ առանց Լեհաստանի, վոչ առանց Ֆինլանդիայի հեղափոխությունը չի կարելի պատկերացնել, թեև ինչպես լեհական կամ ֆինլանդական հեղափոխությունները չի կարելի բացատրել ռուսականից յերևելով, այնպես և ընդհակառակը, ռուսականի բացատրության համար Լեհաստանը և Ֆինլանդիան շատ բան չեն տա։

Լեհական հեղափոխական շարժումը, իբր բանվորական շարժում, յերկար ժամանակ ռուսականից ավագ եր համարվում, քանի դեռ մեր 1870 թվերի քաղաքական կազմակերպությունները սավերի մեջ եյին ճոում։ (Հարավային —Ռուսական և Հյուսային Ռուսական «բանվորական միությունները»). Լեհական «Պրոլետարիատ» կուսակցությունը (1880-ական թվերին) թվում եր ռուսական սոցիալ-դեմոկրատիայի նախնթացը։ Այժմ մենք գիտենք, որ յերկու շարժումները հասակակից են, բայց Լեհական բանվորական շարժումը զարգանում եր ռուսականից արագ, շնորհիվ Լեհական արդյունաբերության եվրոպական տիպի և արևմտյան-եվրոպական շարժմանը մոտ լինելուն։ Զարգացման այդ խոշոր արագությունը, որինակ, այսպիսի տիպի մեջ արտահայտվեց։ 1891 թվի մայիսի 1-ը վարշավայի բանվորները նշանակալից դարձրին փողոցի ցույցերով, մինչդեռ Պետերբուրգի բանվորները ույժ ունեցան միայն խիստ գաղտնի ժողով կազմել հարյուր հոգուց։ Մինչդեռ Պետերբուր-

գում 1905 թվի սկզբին մեծ իշխան Վլադիմիրը ցարի մոտ խոնարհ խնդրով գնացող բանվորներին հրացանների համազարկերով դեպի հեղափոխություն եր քշում, վարշավան արդեն բռնված եր քաղաքական պայծառ շարժումով, իսկ հունվարի 9-ի գնդակահարություններին վարշավայի պրոլետարիատը պատասխանեց համերաշխ գործադուլով և փողոցի ցույցերով, վորոնք միայն Պետերբուրգի գնդակահարություններին տեղի տվող գնդահակարությունով վերջացան։ Մնացած Ռուսաստանի և վոչ մի տեղ նման բան չեղավ։ Մինչև 1905 թվի հոկտեմբերը վարշավան չորս անգամ ընդհանուր գործադուլ տեսավ, և ամեն անգամ հեղափոխական շարժման ալիքներն այնքան եյին բարձրանում, վոր ցարական վարչությունը միայն ակնհայտնի ույժի միջոցով կարողանում եր նրանց զսպել։

Դժբախտաբար հենց այդ կողմից Լեհաստանում ցարական վարչությունը մեծ առավելություններ ուներ։ Իբրև սահմանամերձ շրջան Լեհաստանը զորքով լեցուն եր։ Դրա հետ միասին ցարական կառավարությունը շատ զգուշանում եր լրացնել այդ զորքերը տեղական բնակչության նորակոչներով։ Նորակոչ լեհերին ուղարկում եյին ծառայելու ուր ասես՝ Սիբիր, Կովկաս, միայն Լեհաստանում չեյին թողնում։ Լեհ սպաները նույնպես իրավունք չունեյին իրենց հայրենիքում ծառայելու։ Լեհաստանում գտնվող ռուսական գնդերը լրացնում եյին վելիկորուսներով, ուկրաինցիներով, թաթարներով, կազակներ շատ կային, իսկ վարշավայի կայազորը իր սոցիալական կազմով Պետերբուրգինին շատ մոտ եր. վարշավայում եր գտնվում ցարական գվարդիայի մի մասը։ Այն շարժումները վոր զորքերի մեջ այստեղ եվ առաջ եկան, սովորաբար կապված չեյին տեղական հեղափոխական կազմակերպության հետ և բոլորովին ոտար եյին մնում Լեհական հեղափոխության։

Վերջինս, ամբողջ պատմական դրության հետևանքով, անխուսափելիորեն պետք է կրեր և իրոք կրում եր մի կնիք, վորով խիստ կերպով տարբերվում եր ռուսական հեղափոխական շարժումից։ Լեհաստանում բոլոր մարդիկ եր ռուսական հեղափոխական խմբերի համար և պրոլետարիատի խոշոր մասը համար առաջին տեղը գտնվում եյին ազգային լոզունգները։ Լեհաստանը ռուսական տիրապետությունից ազատելու լոզունգները։ Լեհաստանում ևս կար միջազգային բանվորական կուսակցություն՝ «Լեհաստանի և Լիտվայի Սոցիալ դեմոկրատիա» (կրճատ ՊՍԴ), բայց բանվորների վրա ազդեցություն նրանից ավելի ուներ «Լեհաստանի սոցիալիստական կուսակցությունը» (կրճատ ՊՊՍ), իսկ մանր բուրժուազիայի մեջ վերջինս գերիշխում եր առանց մրցակցի. «Պեպեսովցիների», ներկա բուրժուական Լեհաստանի փաստորեն ստեղծողների, համար «մոսկալներին» (մոսկովցիներին) դուրս անելը առաջին տեղն եր բռնում։ Սրանց ազդեցությունը այնքան ավելի լուրջ եր, վոր Լեհաստանը տարբերվելով Ռուսաստանից, ուներ մանր բուրժուազիայի խիտ շերտ, վորի վրա եր հինված 1863 թվի ապստամբությունը և վորը իր գաղափարախոսությունով վարակում եր իրեն մոտ գտնվող լեհական բանվորների խավերին։ Յերբ հեղափոխությունը անհաջողության ուներ, նացիոնալիզմը վերջին բանն եր, վոր հեղափոխությունից հեռացրեց լեհ բանվորներին համար և նա թեթևացրեց յուրատեսակ լեհական «հոկտեմբերիանիզմի» կողմը՝ լեհական «ժողովրդական դեմոկրատների» (սովորական խոսքի մեջ «ենդեկների») կողմը վորոնց մեջ կատաղի ատելությունը դեպի

սոցիալիզմը միացած էր Լեհաստանի անկախության և հակահեբրայական-ության հետ։ *)

Արտաքին դրությունը, որի մեջ լեհական հեղափոխական կուսակցությունները պետք և պայքարեին, ռուսականից անհամեմատ ավելի դժվար էր։ Լեհաստանը «գինվորական դրությունից» գրեթե չէր աղատվում։ Առանց դատարանի մահապատիժները, որ գեկտեմբերին տեսավ, այստեղ սովորական յերևույթներ էին. և Վարշավայի գեներալ նահանգապետը նույնիսկ ապացուցում էր, որ նա դրա «իրավունքն» ունի։ Նույն գեներալ նահանգապետը, յերբ հարց էր բարձրանում գինվորական դրությունը վերացնելու մասին, հայտարարում էր, թե այդ դեպքում իրեն ուրիշ բան չի մնում, բայց եթե հրաժարական տա, որովհետև նա այդ «դրությանը» վարժվել է։ Վարշավայի պահնորդական բաժինն իր տված տանջանքների կողմից ամբողջ «կայսրության» մեջ գովածն էր. նրա դեմ առաջին տեղը գրավելում կարող էր մրցել միայն Ռիգայինը։

Շարժման քաղաքական ավելի գիտակցության ժամանակ այդ բոլորը պետք է նրա ծայրահեղ ձիջոցների հասցներ։ Անկասկած է, որ յեթե Լեհաստանում լինային 1963 թվի արտաքին պայմանները (երբ Գրուսիան հավարվում էր ամենահուսալի դաշնակիցը և պրուսական սահմանը գրեթե չէր պահպանվում), շարժումն այնտեղ կստանար իսկական գինված ապստամբության կերպարանք։ Բայց Գերմանիայի հետ կապը խզվելուց հետո, 1880-ական թվերի վերջին, Լեհաստանում գտնվում էր 400,000 ռուսական զինվոր և սրանք ամբողջ յերկրում այնպես էին ցրված, որ «բանդաները» (ազատագրական խմբերը) կազմելու փորձը կճնշվեր հենց սաղմի մեջ։ Զինված ապստամբության յեռանդը չգտնելով իր համար մարմնացում, գումարվելով բանվորական մասսաների մեջ, բաժան-բաժան էր լինում և գառնում անգործունակ (տերրոր). ահաբեկման գործողություններ կատարելու տեսակետից Լեհաստանը Ռուսաստանին շատ էր գերազանցում. ուր սակայն 1905 թվի ընթացքում ահաբեկումները ամենօրյա յերևույթ դարձան։ **) Բայց ահաբեկումը այստեղ էլ, ինչպես և ամեն տեղ, ըստինքյան վոչ մի արդյունք չէր կարող տալ. նա կարող էր միայն իշխանության սաստիկ յերկյուղն ավելացնել, որն առաջ էր յեկել մասսայական շարժումի հետևանքով։ Յերբ վերջինս անհաջողության էր հանդիպում, իշխանությունը խրախուսվում էր և ահաբեկման մահափորձերը, չնայելով իրենց հաճախ լինելուն, այնուամենայնիվ շատ էլ չէին նոսրացնում իշխանության շարքերը (Պլևեյի մահից հետո, ներքին գործերի վոչ մի մինիստր հեղափոխության ամբողջ ընթացքում մահափորձի զոհ չդարձավ. Մոսկվայի Դուբասովին սպանելու փորձն անհաջող անցավ. նա միայն վիրավորվեց, իսկ նրա վրա մահափորձ կատարելու համար կյանքից զրկվեցին մի քանի ահաբեկիչներ։ Հունվարի 9-ը կազմող մեծ իշխան Վլադիմիր «Ռոմանովը» մի ճանկռվածք էլ չստացավ, Ստոլիպինին հոգս ցնդեցնելու փորձը շատերին կյանքից զրկելու պատճառ դարձավ, բայց վոչ իրենք ևայլն ևայլն), միայն կատարվող

*) Ավելի մանրամասն լեհական ներքին հարաբերությունների մասին մենք կխոսենք Ստոլիպինի բազաքականության և իմպերիալիստական պատերազմի կապակցությամբ։

**) Այդ տարվա միայն ՕՎՐԻԼ և ՄԱՅԻՍ ամիսներում Ռուսաստանում 116 մահափորձ յեղավ վարչության զանազան աստիճանավորների վրա, ըստ վորում 42 մարդ սպանվեցին, իսկ 63-ը վիրավորվեցին։

խստությունները բարոյական արդարացում էին տալիս «Մեզ՝ վոր մարդի տեղ չեն դնում, մենք ինչու պիտի մարդի տեղ դնենք»։ Լեհաստանում չէր կարող այլ կերպ լինել, քան Ռուսաստանում. լեհական ահաբեկումը յեկը էր տալիս կուտակված վրեժի զգացումին մի կողմից, իբրև արդարացում կատարվող խստությունների մյուս կողմից, բայց նա հեղափոխությանը առաջ չէր մղում և չէր կարող մղել։ Շարժումն այստեղ խաղում էր բուն Ռուսաստանում խաղաղվելու հետ և վերջում «հնդեկները» միանգամայն անվիտ հույսի հասան—գոնե Լեհաստանի ավտոնոմիան ստանան Նիկոլայից։ Մենք վերջում կտեսնենք, վոր այդ հողի վրա վերջինս կարողացավ նույնիսկ վորոշ դիմադրություն առաջ բերել։

Ռուսական հեղափոխության համար լեհական շարժումը համենայն դեպս անհետ չանցավ։ Նախ դեռ 1905 թվին, շարժման ընդհատակյա շրջանում (այդ նորից առաջ յեկավ 1907 թվից հետո, յերբ շարժումը նորից պետք է ընդհատակ մտներ) Լեհաստանը հրաշալի կամուրջ էր հեղափոխության արտասահմանի վարանդինների կենդրոնների և Ռուսաստանի ներսում աշխատող կազմակերպությունների միջև։ Լեհաստանի միջով էին անցնում Ռուսաստանի և Արևմտյան Յեվրոպայի հաղորդակցության ամենակարճ ճանապարհները։ Յեթե Լեհաստանը «խաղաղ ու անդորը» լիներ, ռուսական վոստիկանության համար դժվար բան չէր հսկել այդ ճանապարհներին։

Բայց Լեհաստանում ռուս հեղափոխականը ամեն կողմից շրջապատված էր այնպիսի բարեկամական, համակրական մթնոլորտով, նա այնտեղ այնպես հեշտ կերպով հնարավորություն էր գտնում սահմանն անցնելու կամ արտասահմանից Ռուսաստան մտնելու, գրականություն մտցնելու և այլն, վոր լեհական շարժումը ռուսական ծառայություն էր ցույց տալիս։ Մյուս կողմից լեհական շարժումը ավելի արագ զարգանալով, ավելի սերտ կապերով Արևմտյան Յեվրոպայի հետ, տալիս էր յեփված հեղափոխականապերով Արևմտյան Յեվրոպայի հետ, տալիս էր յեփված հեղափոխականմարքսիստներ, վորոնք դեր էին խաղում և միջազգային բանվորական շարժման մեջ, բայց Լեհաստանի միջոցով սերտ կապված էին Ռուսաստանի հետ ևս։ Բավական է հիշել Ռոզա Լյուքսեմբուրգին, Վարշավայի գիմնազիայի աշակերտուհիներից մեկին, վորը ռուսերեն խոսում էր ռուսից ավելի լավ։ Հետագայում ռուսական և լեհական շարժման այդ ձևի կապը ավելի ընդարձակվեց և Ռուսաստանը Լեհաստանից ստացավ մի շարք աչքի ընկնող հեղափոխականներ՝ ընկերներ Ջերժինսկուն, Ռադեկին և ուրիշ շատերին։

Ֆինլանդիայի հեղափոխական շարժումը Լեհաստանի հետ այն ընդհանուր դիծն ուներ, վոր այն ևս խիստ սրված էր դեպի ազգային լոզունգների կողմը և ֆինլանդացիները*) իրենց մանր բուրժուական մասսայով (իսկ ավելի խիստ ու ավելի ուժեղ էր լեհականից) առաջին հերթին պայքարում էին միապետության դեմ ազգային անկախության համար։ Այդ նրանց համար ավելի հեշտ էր, քան լեհերի համար, վորովհետև անկախության մի քանի միացորդներ սրանք դեռ ունեին։ 1809 թվին Ալեքսանդր I-ը Ֆինլանդիան միացնելով արդեն պատրաստվում էր պատերազմի Նապոլեոնի դեմ (1812 թ.) և ամենից շատ հոգս էր քաշում, վոր Պետերբուրգի թիկունքն ապահովե և Անգլիայի հետ անարգել հաղորդակցություն ունենա

*) Այդ տերմինը պետք է գործադրենք, վորովհետև ֆինները միայն Ֆինլանդիայում չեն ապրում, իսկ Ֆինլանդիայում բացի ֆիններից կան շվեդներ՝ հարավում և արևմուտքում և լոպարներ՝ հյուսիսում։

Բալտիկ ծովով և Շվեդիայով։ Այս բոլորի համար կարևոր եր ունենալ Ֆինլանդիան իր կողմը, դրա համար Ալեքսանդրը Ֆինլանդացիներին «վարժեցնելու» համար թողեց նրանց խաղաղական ավտոնոմիան։ Ֆինլանդիայում կար սահմանադրության նման մի բան, թեև, ճիշտն ասած, շատ հնացած, միջնադարյան տիպի. գոյություն ուներ դասային սեյմը։ Դատարաններում, տեղական վարչության մեջ, դպրոցում, եկեղեցում իշխում եյին տեղական լեզուները՝ սկզբում միայն շվեդական, վորը Ֆինլանդիայի պաշտոնական լեզուն եր մինչև Ֆինլանդիան ռուսների կողմից գրավելը, հետու ռուսական կառավարությունը, վոչ առանց դիվագրիական նպատակների (բաժանիր և տիրիր) քաղաքացիական իրավունք տրվեց նաև Ֆինեականին—գյուղական բնակչության ճնշող մեծամասնության լեզվին։ Վերջապես Ֆինլանդիան փաստորեն ուներ և իր զորքը։ Ճշմարիտ է, նա առանձին բանակ չեր հատուկ զինվորական վարչությունով, բայց Ֆինլանդիայում գտնվող ռուս գնդերը լրացվում եյին տեղացիներից և նրանց հրամանատարական կազմը տեղական եր (առավելապես շվեդական)։ Ֆինլանդիայից դուրս Ֆինլանդացիք չեյին ծառայում։

Այս ծայրից ել Նիկոլայ II սկսեց նրանց դեմ իր արշավանքը, հրավիրվելով իր զինվորական մինիստր կուրոպատկինից։ Ինչ վոր զորափորձի ժամանակ յերևաց, վոր Ֆիրլանդական զինվորները ռուսական հրամանները չեն հասկանում։ 90 տարի այդպես եր. Ռուսաստանը այդ ժամանակվա ընթացքում պատերազմներ է մղել, վորոնց մասնակցել են և Ֆինլանդացիները (որինակ Ղրիմինը. 1877 թվին նույնպես Բուլղարիա գնաց Ֆինական զվարդիական վաշտը) և վոչ վոք դրանից մի փորձանք չտեսավ։ Բայց այստեղ մտածեցին, թե այդ շատ վտանգավոր բան է պատերազմի դեպքում։ Ցեվ ահա 1899 թվին Ֆինլանդացիներին 22-ներորդին մի որենքով, վորի համաձայն նրանք զինվորական ծառայությունը պետք է կատարեյին Ռուսաստանում ցարի մյուս բոլոր հպատակներին հավասար։ Կարելի յե պատկերացնել, թե ինչ կնշանակեր Ֆին գյուղացու համար, վորը վոչ մի խոսք չգիտեր ռուսերեն, ընկնել ռուսական մի զորանոց ինչվոր մի Տուլայում կամ Սարատովում, Չխոսելով արդեն որենքի սկզբունքային ահագին նշանակության մասին—վորին Ֆինլանդացիք առանց ծածկելու «պետական հեղաշրջման» նշանակություն եյին տալիս—դրանով ջնջվում եր քաղաքական ավտոնոմիայի հիմնական նշանը։

Որենքի արդյունքն այն յեղավ, վոր հետևյալ տարին զինվորական ծառայություն կատարելու համար վոչ մի Ֆինլանդացի չերևաց։ Սկսվեց ցարական կառավարությունն ավտոնոմիայի բոլոր մնացորդները ջնջեց, վճռականություն չունենալով միայն ռուսերեն լեզվուն մտցնել դպրոց և դատարան (փոստում և յերկաթուղում բոլորը պարտավոր եյին ռուսերենը հասկանալ)—մի խոսքով Ֆինլանդացիներին առայժմ թողնում եյին միայն կուլտուրական ավտոնոմիա, բայց ռուսական ազգայնականները հասկացնել եյին տալիս, վոր այդ ել «առայժմ է», վոր Ֆինլանդիայի վերջնական ռուսացումը ժամանակի խնդիրը է. մանավորապես առաջ եր մղվում Պետերբուրգին ամենամոտ գտնված Վիբորգի նահանգը անմիջապես «կայսրությանը» միացնելու նախագիծը։

Պայքարը—վորը ցարիզմի շահերի տեսակետից բոլորովին զուր եր

սկսվել, քանի վոր Ֆինլանդացիները մինչև այդ որինակելի «հավատարիմ հպատակները» եյին—պաժանացավ. «կրավորական» դիմադրությունից տրամաբանությունը մղում եր «ներգործականի»։ 1904 թվի հունիսին սպանվեց նոր քաղաքականությունը անցկացնելու համար ուղարկված Ֆինլանդիայի գեներալ նահանգապետ Բոբրիկովը։

Բայց գինված ապստամբության այդ ձևը՝ ահաբեկումը (տերրորը) Ֆինլանդիայում չպատվաստվեց.—բացի Բոբրիկովի սպանությունից հեղափոխության ամբողջ ընթացքում միայն մի ահաբեկման (մահափորձ յեղավ։ Ֆինլանդիայի արդյունաբերության զարգացման հետ այստեղ արագ աճեց պրոլետարիատը (ամբողջովին ֆին եր լեզվով) և զարգանում եր բանվորական շարժումը։ 1903 թվին կազմվեց ֆինական սոցիալ-դեմոկրատական կուսակցություն։ Հեղափոխական շարժման առաջապահը հենց նա դարձավ և վոչ թե շվեդո-ֆիննական «ակտիվիստները», վորոնց գլխավոր քաջագործությունը միայն Բոբրինսկու սպանությունն յեղավ։ Բանվորական շարժում այստեղ, ինչպես և Ռուսաստանում, չմնաց անտեսական աստիճանի վրա, այլ շուտով անցավ քաղաքականին և արդեն 1905 թվի հոկտեմբերին այստեղ մասսայական զինված ապստամբությունը հնարավոր յեղավ։

Ֆինլանդիայում սրա համար բացառիկ նպաստավոր պայմաններ կային։ Անտառոտ Ֆինլանդիայում ամեն մի գյուղացի վորսորդ է և հրացան բանեցնել լավ գիտե. Ֆինլանդիան նվաճելու ժամանակ ֆիննական պարտիզանները գրեթե ավելի վտանգավոր եյին ռուսների համար, քան շվեդական բանակը։ Ծովային ահագին սահմանը, վորը պահպանելը այն ժամանակվա ռուս նավատորմից ել ավելի լավ նավատորմի համար դժվար եր, շատ եր հեշտացնում մաքսանենգությունով զենք ներմուծելը։ Մի քանի շոգենավեր հատկապես դրանով եյին զբաղվում և ռուսական մաքսատներին քիչ եր հաջողվում նրանց բռնել։ Հակառակ Լեհաստանի զորքի, Ֆինլանդիայում ռուսական ցաժաքային զորք շատ քիչ կար. ամենաժոռիկ հարևան Շվեդիան վաղուց եր կորցրել զինվորական լուրջ հակառակորդ լինելու նշանակությունը, և նրանցից պաշտպանվելու համար զորք պահելը ավելորդ եր։ Իսկ նավատորմը, վորի համար Ֆինլանդիայի մայրաքաղաք Հելսինգֆորսը գլխավոր նավահանգստանեբից մեկն եր, այնպիսի արամադրություն ուներ, վոր ավելի շուտ պետք եր յերկյուղ կրել, վոր նա ապստամբությանը կվիանար, քան հույս ունենալ, վոր նա կճնշե այն։ Վերջապես վերջին պայմանը՝ ֆինական լեզուն, վոր շարունակում եր մասսայի առորյա հարաբերությունների մեջ իշխողը լինել, մի անթափանցելի վարագույր եր, վորը ռուս ժանդարմին Ֆինլանդայում անջատում եր դիտողության առարկայից. շվեդերեն ելի մի կերպ կարող եր հասկանալ, բայց ֆիններեն կարելի յեր նրա քթի տակ գոռալ՝«կորչի միապետությունը» և նա միայն աչքերը բաց ու խուփ կաներ։

Այս բոլոր պայմանների հետևանքով ֆինները կարողացան կազմակերպվել և այնպես զինվել, ինչպես և վոչ մի տեղ ամբողջ «կայսրության» մեջ։ Ցեվ յերբ Բոբրիկովի փոխարեն ուղարկված նոր գեներալ-նահանգապետ իշխան Որլենսկին (նույնը, վոր այնպես յեռանդով ծեծում եր 1902 թվին Պոլտավայի և Խարկովի գյուղացիներին) իրեն տեսավ զինված բանվորների ու գյուղացիների ամբողջ մասսայի առաջ, նրան այլ բան չմնաց, քան յերթեւ անձնատուր լինել։ Նրա պնդումի հետևանքով Նիկոլայը 1905 թվի հոկտեմբերին ստորագրեց հրաման,

վորով վոչ միայն վերականգնվում եր ֆինլանդական քաղաքական ավտոնոմիան (բացի, իհարկե բանակից), այլ և միջնադարյան սեյմը փոխարինվեց մի ժողովով, վոր ընտրված եր ռուսական «չորսպոչանու» հիման վրա։ Բանակը չվերականգնվեց, բայց պրոլետարիատը ճնշված զինված՝ կազմելով, առաջին անգամ, ռուսական հեղափոխության պատմության մեջ, կարմիր գվարդիա։ Այդ կազմակերպությունը շարունակվեց դիմանալ մինչև 1906 թվի հուլիսը, յերբ նրան ջարդեցին Սվյաբորգի ապըստամբության ճնշման հետ սպիտակ գվարդիայի մասնակցությամբ, վորը կազմակերպել եր Հելսինգֆորսի շվեդական բուրժուազիան։ Այս յերկու անուններն այդ ժամանակից են ճնում։ Վերականգնված ավտոնոմիան դիմացավ ել ասելի յերկար. Նիկոլայը կարողացավ իրապես նրան փշրել միայն 1909 թվին. (մասնավոր խախտումները սկսվել եյին արդեն 1907 թվից)։ Այս ավտոնոմիան այժմ ել անփոխարինելի թիկունքի պահպանության դեր եր կատարում, բայց արդեն ռուսական հեղափոխության համար ֆինլանդական հողի վրա, վորն սկսվում եր Պիտերից գնացքով 50 րոպե հեռավորության վրա, անարգել կատարվում եր այն ամենը, ինչ վոր «խստիվ արգելված եր» «կայսրության» մեջ —արհեստակցական-քաղաքական միության համագումարներ, հեղափոխական կուսակցությունների ժողովներ, հեղափոխական կոմիտեների նիստեր, հեղափոխական գրականության տպագրություն եայլն եայլն։ Միայն 1907 թվի վերջին Ստոլիպինի կառավարությունը վորոշեց ձեռնամուխ լինել ռուսական հեղափոխության այդ բազային և միայն 1909 թվին ֆին ժողովրդի ավտոնոմիան դադարեց ռուս հեղափոխականներին ապաստարան տալ։ Իսկ ավտոնոմիան փաստորեն պահվում եր ֆին բանվորների և գյուղացիների հրացաններով։ Այսպես ամուր յերևացին զինված ապստամբության հետևանքներն այնտեղ, ուր հաջողվեց կազմակերպել այն, թեկուզ ռոմանովյան «կայսրության» անկյուններից մեկի նեղ տարածության վրա։

Ինչպես տեսանում ենք լեհական և ֆինլանդական հեղափոխությունները որգանական, ներքին սերտ կապով կապված չեյին ռուսական հեղափոխության հետ, յեթե չհաշվենք այն, վոր յերկուսի մեջ ել ղեկավար դերը կատարում եր պրոլետարիատը և վոր ամբողջ աշխարհի պրոլետարական շարժումը միացած և սերտ կապով։ Բայց իրը բուրժուական հեղափոխություններ՝ լեհականն ու ֆինլանդականը կարող եյին նույնիսկ ռուսականի դեմ ուղղել, մի բան վոր պատահեց արդեն մեր օրերում։ Նրանց կապը կենդրոնական Ռուսաստանի շարժման հետ ավելի արտաքին եր։ Հեղափոխությունը արթնացրեց «Ռումանովների» դեմ յեղած ամբողջ ատելությունը. ռուսական ցարի դեմ յեղած ատելության հետ նաև ատելություն «Լեհաստանի ցարի» դեմ և ատելություն «Ֆինլանդիայի մեծ իշխանի» դեմ, վորին վոչ պակաս արժանի եյին։

Կովկասում մենք մտնում ենք հեղափոխական հոսանքի մի հուն, վորը ավելի շուտ որգանապես միացան ռուսական հեղափոխության հետ։ Ամենից առաջ Կովկասում, մի բնության մեջ, վորը ամենից քիչ ռուսական և նույնիսկ ընդհանրապես յեվրոպական բնության նման և, աճեց ընդհանուր ռուսական պրոլետարական շարժման ամենախոշոր կենտրոններից մեկը, վորից խոշորը Ռուսաստանում Պիտերից և կենտրոնական արդյունաբերական շրջանից ու Ուրալից դուրս չենք գտնի՝ Բաքուն։ «Ռուսական կայսրության»

սահմաններում գտնված առաջին նավթահանքների շուրջը աճեց մի մեծ քաղաք, մի ջազդային բանվորական բնակչությունով, ուր կային կովկասի բոլոր ժողովուրդներից, բայց ուր ամենից վորակյալը ընդհանուր ռուսական խավն եր։ Բաքուն մեծ մասնակցություն ունեցավ հարավային ընդհանուր գործադուլին 1903 թվին։ Վորովհետև ձեռնարկատերերի այն ժամանակ խոստացած զիջումները չիրականացան, գործադուլը վերսկսվեց 1904 թվի դեկտեմբերին։ Ձեռնարկատերերի նոր խաբեբայությունները նոր պոռթկումներ առաջ բերին, վորը վերջացավ վերը հիշված ահագին ջարդով և հրդեհով 1905 թվի ոգոստոսին. սրա արտացոլումը ռուսական ներքին շարժման մեջ մեզ արդեն հայտնի յե։

Բագվի միջոցով, ուր կրկնում եմ, ամբողջ Կովկասի բնակչությունը զանազան նմուշներով ներկայացված և, այսպիսով Կովկասը կապված եր համառուսական պրոլետարական շարժման հետ։

Ահա ինչու, յերբ խոսում են կովկասյան հեղափոխության մասին, սովորաբար նկատի ունեն վոչ Բաքուն, այլ մի յերկիր, վորը առաջին հայացքից ավելի շատ և կտրված ենացած Ռուսաստանից, իր ամբողջ անցյալով, քան նույնիսկ Լեհաստանը և Ֆինլանդիան և այնուամենայնիվ ռուսական հեղափոխության հետ, գուցե, ավելի սերտ կապված, քան նրանք։ Այդ յերկիրը Վրաստանն եր, ավելի ճիշտն ասած, նույնիսկ նրա արևմտյան մասը, մի փոքրիկ անկյուն, վորի բնակչությունը միլիոններով չեր հաշվում, այլ միայն հարյուր հազարներով՝ Գուրիան, վորը ռուսական հեղափոխության յերկու նմուշ տվեց՝ բալշևիկներին—զինված ապստամբության յերկու նմուշ, մենշևիկներին՝ նմուշ նրանց «հեղափոխական ինքնավարության»։

Վրաստանը, մի յերկիր եր շատ հին կուլտուրայով (վրացական պատմությունը սկսվում է Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակից, այսինքն հազարից ավելի տարի առաջ, քան Ռուսաստանի մասին յեղած առաջին տեղեկությունները են) զժբախտություն ուներ գտնվելու յեռուն առևտրական ճանապարհների խաչաձև կտրվելու տեղում, Սև ծովից մինչև Կասպիցը և Յեվրոպայից մինչև Ասիա։ Դրա համար ել նրա պատմությունը անընդհատ արշավանքների և նվաճումների պատմություն է։ Մակեդոնացի նվաճողից հետո այդտեղ գնացել են և Հռոմայեցիները և պարսիկները և Բյուզանդացիները և տաճիկները և նորից պարսիկները։ Վերջին յերկու նվաճողների զանազան տեսակները հատկապես ավելի խիստ ավերումներ կատարեցին. Պարսիկները 18-րդ դարի վերջին Թիֆլիզում թողին միայն յերեք տուն, ենացած բոլորը այրվեց մինչև վերջը։ Դրանից հետո Ռուսաստանն այլևս կարիք չունի նվաճելու Վրաստանը—ցարական զորքերը նրան պարզ կերպով գրավեցին (1801 թ.). վրացիները շատ եյին թուլացել, վոր կարողանային վորևե լուրջ դիմադրություն ցույց տալ։ Ցարական կառավարությունը հավատացնում եր, վոր ինքը իր զորքերով Վրաստանը գրավել և նրան «պաշտպաններն» ի հարկե վոչ մի գավառ չունեյին վրացական անցյալի, վրացական կուլտուրայի մասին։ Վրաստանը կառավարվում եր իբրև ռուսական նահանգներից մեկը. բոլոր պաշտոնները

ծնացորդները, կար բազմաթիվ ազնվականություն և ճորտական իրավունք։ Վրացի ազնվականներին ուս գեներալները համաձայնում էին մարդ հաշվելու, թեև յերկրորդ տեսակի. վրացական բազմաթիվ կալվածատիրական դասը, վորն իր կազմով լինական շյախտային շատ նման եր,—մի քանի մագնատներ, վորոնք ռուսական իշխանի տիտղոս ստացան և մեծ թվով մանրը կալվածատերեր՝ տասնյակ գեսյատին հող ունեցողներ—դարձան ուս կառավարության ապարատ, վորի ոգնությունով ուս իշխանությունը, վորը վրացերին չգիտեր, կարող եր Վրաստանում «կարգ հաստատել»։ Մագնատները ուսական գեներալներ էին դառնում, իսկ մանր կալվածատերերը բավականում էին պրիստավի և նույնիսկ ուրյադնիկի պաշտոններով։

1864 թվին ճորտական իրավունքը վերացվեց նաև Վրաստանում, բայց վրաց ազնվականները ամենալայն չափով ոգտագործեցին և իրենց դրությունը յերկրի մեջ և ուս կենդրոնի կատարյալ ապիտությունը վրացական կարգերի վերաբերմամբ։ Վոչ մի տեղ «ազատությունը» այնպես չափերանների չարժեր, ինչպես այստեղ։ Մի քարի ուս հեղինակներ նույնիսկ հավատացնում էին, վոր Վրաստանում ճորտական իրավունքը վոչ թե վերացվեց, այլ միայն մի քիչ մեղմացավ և նրանք ճշմարտությունից շատ էլ հեռու չէին, քանի դեռ վրացի գյուղացիների վրա ծանրանում էին միջնադարյան բավական պարհակներ։ Գյուղացիները անհավատալի քիչ հող ստացան, մինչև թվով մի տունը մեկ ու կես դեսյատինից վոչ ավելի։ Թիֆլիզի նահանգում, ուր $1\frac{1}{4}$ միլիոն դեսյատին հող եր ծնացել ազնվականներին, գյուղացիները ստացան $\frac{3}{4}$ միլիոն դեսյատինից պակաս։ Իսկ յեկամուտը «ազատության» ժամանակ «ուստավնի գրամատանների» այսպես բաժանվեց. Թիֆլիզի նահանգում կալվածատիրոջ բաժինը, զանազան տուրքերի ձևով, մի դեսյատինից հասնում եր 13 ռ. 50 կ. վոսկով. իսկ գյուղացուն—8 ռ. 50 կ. Քութայիսի նահանգում (այդ յերկու նահանգները միասին կազմում էին Վրաստանը) կալվածատերերին բաժին ընկնում եր 16 ռ. 60 կ, իսկ գյուղացուն՝ 13 ռ. 30 կ. բավականաթիվ զաղթական-գյուղացիները (խիզաններ) բոլորովին սեփական հող չստացան և կալվածատերը կարող եր նրանց քշել, յերբ խելքին փչեր։

Միանգամայն հասկանալի յե, վոր այդպիսի պայմանների մեջ դրված գյուղացիությունը կարող եր միայն քաղաքում ձեռք բերած աշխատանքով ապրել. «Գուրիայի գյուղացիության խոշոր մեծամասնությունը ինքնուրույն տնտեսատեր չեն, դրանք ավելի շուտ կիսապրոլետարներ են կամ նույնիսկ իսկական պրոլետարներ. նրանց հողագործական տնտեսությունը հողային այն պայմաններում, վոր առաջ յեկան ճորտական իրավունքը վերացնելուց հետո, ամենալավ դեպքում հնարավորություն եր տալիս միայն սովից չմեռնել»։ «Այնպիսի գյուղեր, ինչպիսին են՝ Խիղխաձվի, Ամաղլեբա, Սուրեբի, Զոխատաուրի և ուրիշները իրենց բանվորական ձեռքերի մեծ մասը ուղարկում են Կովկասի արդյունաբերական կենդրոնները, մեծ մասով՝ Բաթում, Փոթի, Նովորոսիսկ։ Սև ծովի ափերի արդյունաբերական բանվորների մեծ մասը կազմում են գուրիացիները. շատերն են գնում նաև Բագվի պրոմիսլանները, նաև Թիֆլիզ և այլ քաղաքներ։ Կարիքը նրանց ցրել է ամբողջ Ռուսաստանում և նույնիսկ քշել է մինչև Ասիայի արևելքը, ուր նրանք մի քանի տասնյակ հազար հոգի յեն հաշվվում»։*) Այդ քաղաք չվե-

*) Каландадзе и Мхеидзе, «Очерки революционнаго движения в Гурии».

լու ժամին մի քանի թվեր գաղափար կտան. գուրիական գյուղական մի հաստարակության 520 «ձխից» (տուն) դատումի յե գնացել 322 մարդ, մի ուրիշ 350 «ձխից»—266, յերրորդից 473—300. հայլն։*)

Չարևան Բաթումը լիքն եր գուրիացի բանվորներով և Բաթումի մեծ գործադուլը 1902 թվին, վորը վերջացավ գնդակոծությունով (19 բանվոր սպանվեց) առաջին զարկը տվեց Գուրիայի հեղափոխական շարժմանը։ Գյուղացիները առաջ էլ պայքարում էին կալվածատերերի դեմ սովորական գյուղական միջոցներով. «կարմիր աքաղաղով», անասունները կոտորելով, արտերն արածացնելով, անտառը կտրատելով։ Բաթումից «հայրենիք» քշված բանվորները վորոշ միաք ու կազմակերպություն մտցրին այստեղ (հենց բանվորների ազդեցության մասին մենք դեռ ատիթ կունենանք մեջ բերելու «ականատեսի ցուցմունքները, վորոնք հետաքրքիր են)։ Արդեն 1903 թվի ապրիլին Գուրիայի գյուղերում կազմվում էին հարյուր հոգուց բաղկացած գյուղացիների ցույցեր կարմիր դրոշակով և սոցիալ-դեմոկրատական լոզունգներով։ Հետևյալ տարվա հունվարին Գուրիայի կազմակերպությունը ձևականորեն էլ կուսակցության մեջ մտավ։ Քաղաքական մտիտնգներն այնքան սովորական դարձան, վոր յերբ 1904 թվի ապրիլին վոստիկանությունը այդ մտիտնգներից մեկը ցրեց, այդ ընդհանուր դժգոհություն առաջ բերեց, իբրև արդեն վորոշ նվաճած իրավունքի խախտում։ Այդ դեպքում սպանված բանվորների թաղումը հոյակապ ցույց դարձավ, իսկ մի ամիս հետո Գուրիայի վոստիկանությունը գործ ունեցավ մի դեպքի հետ, վորը Ռուսաստանում շատ էլ սովորական չեր՝ գյուղացիական մայիսի մեկի ցոնա-կատարության հետ։ Այդ տարվա դեկտեմբերին (հիշեցնենք, վոր գործը ռուսյապոնական պատերազմի ամենաառաջ ժամանակին եր) Գուրիան արդեն տոռակոչներ չեր տալիս և հարկեր չեր վճարում։ 1905 թվի հունվարի 9-ը նշվեց փոքորկալի մտիտնգներով և ցույցերով։

Նույն տարվա փետրվարի 18-ին Գուրիայում հայտարարվեց պատերազմական դրություն։ Սակայն միաժամանակ Գուրիա ուղարկվեց նահանգապետական մի ատիճանավոր գյուղացիների «պահանջները» քննելու։ Ատիճանավորը, ի հարկե, գյուղացիների հետ վոչ մի համաձայնության չեկավ. իբրև գյուղացիական պահանջներ նա ստացավ ՌՍԴԲԿ նվազագույն ծրագիրը։ Ատիճանավորը հեռացավ, իսկ գյուղացիները սկսեցին ծրագիրն իրականացնել «հայտարարված կարգով»։ Իրար յետևից այրեցին բոլոր «գյուղական վարչությունները» (միայն 10 որվա ընթացքում 1905 թվի մարտի 1-ից մինչև 11 ը, այրեցին 16-ը), զուրս քշվեցին կամ վոչնչացրին պրիստավներին և ուրյադնիկներին, կալվածատերերը թուլացան և սկսեցին գյուղացիների հետ պայմաններ կապել, վորոնցով գյուղացիների վճարումները վորոշվում եր հողի յեկամտի $\frac{1}{10}$. կալվածատերերը ուրախ էլին, վոր գյուղացիներն ընդհանրապես համաձայնում էին գոնե վճարել... կազակների ոգնությունով շարժումն ընկճելու փորձերը, գուրացիների ամբողջապես, թեև վատ պինված լինելու պատճառով վոչ մի հետևանք չեր տալիս։ Առաջ շարժեցին հետևակ զորքը և հրետանին։

Բայց Կովկասում ձեռք չեր առնված այն նախազգուշական միջոցը, վորը ցարական կառավարությունը ձեռք եր առել Լեհաստանում, Կովկասում

*) Шахназарян, «Крестьянское движение» в Грузии.

գտնվող գնդերում կային շատ տեղացիներ։ Զորքերը յերկար կանգ առնելով Գուրիայի սահմաններին վրա—արշավանքը մասամբ իրենք կալվածատերերը կանգ առնել տվին, վախենալով, որ իրենց կըմորթեն—պրոպագանդայի յենթարկվեցին և հուլիսին իշխանությունը, վախենալով զինվորների խռովությունից, նրանց Գուրիայի սահմաններից հանեց։ Գուրիան փաստորեն ճեաց ապստամբած բնակչության ձեռքին։

Այն կարգերը, վոր այստեղ հաստատվեցին, ամենից յավ է նկարագրել անկողմնապահ ականատեսի՝ բուրժուական պրոֆեսոր Ն. Ցե. Մարրի խոսքերով, վորին կովկասյան մի քանի ընկերներ նույնիսկ մեղադրում են յին ընդդեմ սոցիալ-դեմոկրատների ագիտացիա մղելու մեջ։

Դրանով ավելի գնահատելի յե այն, ինչվոր նա յե պատմում. դրան ավելացնենք և այն, վոր Մարրը ինքը ծնվել է Գուրիայում և շատ լավ գիտե նրանց լեզուն և ամբողջ նիստ ու կացը։ Ահա թե նա ինչ է ասում այդ տեղերի մասին, ինչպիսին նրանք եյին 1905 թվի ոգոստոսին. «Գյուղերում հասարակական յեռուն կյանք կա։ Ժողով ժողովի յետևից է լինում և զարմանում ես, թե ինչպես գյուղացիները, ծանրաբեռնված լինելով գաշտային աշխատանքներով, ամեն տեղ հասնում են, վիճաբանությունների մեջ կենդանի մասնակցություն են ունենում և ամբողջ ժամեր, յերբեմն և որեր նիստերին ներկա յեն լինում։ Այսոր գատ է, վաղը հասարակական սկըզբունքային հարցերի քննություն շրջիկ նշանավոր հռետորի ճառի հետ, յերբորդ որը տեղական հարցերի վճռում՝ դպրոցական, ճանապարհի, հողային։ Կրկնում եմ տեղերում հին իշխանություններ չկա, իսկ ուր եկան, այնտեղ նրանք անգործության են մատնված և աշխատում են, վոր իրենց չնկատեն, կազմում են իրենց տեսակի գաղտնի ընկերություն։ Այդ պատճառով տեղական բնակիչները իրավունք ունեն հակառակ հակառնալու, յերբ փոխարքայի ամենավերջին կոչում ժամանակն է համարվում դադարեցնելու գաղտնի ընկերությունների և կազմակերպությունների գոյությունը։ Գուրիայում այժմ գաղտնի ընկերություն ասելով հասկանում են՝ վոստիկանություն, ատիճանավորների ընկերությունը եյլեն։ Գուրիան բոլորովին հայտնի կերպով շրջանների յե բաժանված, վորոնցից ամեն մեկը մի մարդու իրավասության տակ է։ Շրջանի պետին, վորին գուրիացիք պարզապես «ռայոն» են անվանում, յենթարկվում են «ներկայացուցիչները» (ցարմոմազնալի)։ Ամեն մի ներկայացուցչի իրավասության տակ կա—յերեք գյուղ։

Գյուղի գլուխ է հարյուրապետը (ասիս-թավի—«հարյուրի գլուխ»), վորին յենթակա յեն տասնապետները (աթիս-թավի—«տասի գլուխ»)։ Տասնապետը տասից կազմված խմբի (ցրի) գլուխ է, ինքը տասներորդն է։ Նա բերանացի խմբի ամեն մի անդամին հայտնում է առաջիկա նիստի ժամին, հավաքում է իր խմբի անդամավճարը, ամեն մի անդամից ամիսը 10 կ. (առաջ 20 կ. եր), զեկուցում է հասարակության, այսինքն ավյալ գյուղի բնակիչների, կամ մի քանի գյուղերի, նայելով ինչ հարց է, ժողովում է իր խմբի անդամներից վորևե մեկի գանգատի մասին։ Գրավոր գործավարություն բոլորովին վերացված է։ Բոլոր գործերը բերանացի յեն կատարվում։ Դատարանը ամեն տեսակ բողոքներ ընդունում է և վճռում է գործեր, վոչ մի կոպեկ չպահանջելով։ Վճիռը իրականացվում է առանց վորևե առարկության. չկատարելու դեպքում հասարակությունն ինքն է չլսողին դեմ դուրս գալիս» ...«Ժողովի գալիս են կանայք ազատարդկանց հավասար։ Ժողովը, նայելով յեղանակին, լինում է բաց յերկնքի տակ կամ շենքում, որինակ՝ դպրոցում կամ յեկեղեցում։ Ուշացողներին շտապեցնում են յեկեղեցու զանգը խփելով։ Հետաքրքիր են այն ժողովները, ուր քննվում են սկզբունքային, հասարակական և նույնիսկ գիտական հարցեր։ Այդպիսի ժողովներին գալիս են բոլոր գյուղացիները և գեղջկուհիները, թեև նրանցում ներգործական մասնակցություն կարող են ունենալ ավելի զարգացածները —սովորաբար քաղաքի բանվորները, վորոնք ինքնակրթությունով են ըզբաղվել, և տեղական ինտելլիգենտները։ Գյուղում զարգացած բանվորների մեջ կան վերին աստիճանի համակրելի տիպեր, վորոնք գիտության ծառայ ունեն և գիտությունը բարձր են գնահատում, անկախ նրա գործնական, ոգտավետ նշանակություն ունենալուց։ Իմ զարմանքին և գիտողությանը, թե այդպիսի հայացք քիչ է պատահում ինտելլիգենցիայի մեջ, վոր գիտությունը կրթված հասարակության մեջ էլ գնահատվում է նրա նյութական վոր աստիճանի ոգտակար լինելու տեսակետից, այդպիսի բանվորներից մեկնինձ նկատեց, թե ուրիշ վերաբերմունք ժամանակակից ինտելլիգենտներից չի յել կարելի սպասել, վորովհետև ժամանակակից ինտելլիգենտները բուրժուական ծագում ունին կամ բուրժուական աշխարհայեցողության տեր են. բնական է, վոր նրանք գիտության վրա յել բուրժուական ոգտակարության տեսակետից են նայում»... Սակայն պետք է նշել վոր մի քանի գործիչներ յեթե չեն զգում հողևոր զարգացման այդ հակառակ բացը, ապա զգում են ժողովրդի կրթության պակասը, վորը յերբեմն ծայրահեղ տպիտության է հասնում։ Ցեվ այդ մի քանիսը, ի զարմանս իմ, ինտելլիգենտներ չեն, այլ բանվոր դասից. կրթված բանվորները առանձին դառնությունով են վոզբում այդ բացը, ավելի մոտ լինելով ժողովրդին և ավելի լավ գնահատելով այդպիսի բացի հնարավոր հետևանքները զարգացման գործը ամրապնդելու դեպքում։

«Մեր ցավն այն է,—ասում եր ինձ այդպիսի զարգացած բանվորներից մեկը,—վոր ազատությունը մեզ հանկարծակի հասավ. նա մեզ մոտ ավելի շուտ յեկավ, քան կրթությունը»։ «Ցեվ այնքան ավելի յեռանդով են զբաղվում նրանք, այդ բանվորները, ինքնակրթությունով, այդ նպատակով կազմելով խմբակներ և ընկերություններ,—զբաղվում են նույնիսկ այժմ, պայքարի ժամենամին»... «Գուրիացիները իրենց մասավոր հորիզոնը աշխատում են լայնացնել լսելով զանազան ժողովներում սկզբունքային բանակռիվները, վորոնք իրենց տեսակի ժողովրդական համալսարանների սաղմեր են։ Այդպիսի ժողովներից մեկում գաստրոլի յեր դուրս յեկել շրջանում հայտնի հռետոր Խթիս-Ծղալոբան, վորն իրոք աչքի յեր ընկնում իր պարզ բացատրություններով և գործը հասկանալով։ Սոցիալ-դեմոկրատական կուսակցության այսպես կոչված «մենշևիկության» և «փոքրամասնության» ֆրակցիաների վեճ կար։ Խթիս-Ծղալոբան «մենշևիկության» հռետորն եր, բայց միակ հռետորը, նրա դեմ դուրս յեկան մի շարք հռետորներ։ Վիճաբանությունները հիշեցնում եյին համալսարանական դիսերտացիա ներկայացնողի բանավեճը, վորը հատկապես իր թեման մշակել և հասարակության միջից բազմաթիվ սկզբունքային հակաճառողների հետ բանավեճի յե բռնվում։ Խթիս-Ծղալոբի հակառակորդները աշխատում եյին իրենց կողմը գրավել անպատրաստ և քիչ ըմբռնող հասարակությանը՝ նրան հետաքրքրքրող հասարակական հարցերի մասին բարձր, շռայլ ֆրազներ ասելով։ Մեր

հռետորը, սակայն, իր խաղաղությունը չեր կորցնում և քայլ առ քայլ աշխատում եր ջախջախել իր հակառակորդներին։ Ներկաներից շատերը հորանջում էին, ինչպես և մեզանում դասախոսությունների և բանավեճերի ժամանակ, բայց շատերն էլ լուռ էին, շունչները պահած։ Թեման մեծ չափով բանվորների և Մարքսի դերի հարցն եր գիտական սոցիալիզմի մշակումի մեջ։ Ժողովրդի ընդհանուր հետաքրքրությունը կարելի չե պատել նրանով, որ վիճաբանությունները տևեցին ճաշից հետո ժամի չորկուսից սկսած մինչև գիշերվա ժամի մեկը և ժողովականների մեծ մասը մինչև վերջը նստեց»։ *)

Հետագա պատմությունից, որը վերաբերում է մի ցույցի, չերևում է, որ իշխանությունը, իսկապես, Գուրիայում միացել եր, բայց շատ յուրատեսակ դեր եր կատարում։ «Պատմում էին, որ պրիստավը շատ եր վախենում, չլինի թե իրեն սպիտակեն կարմիր դրոշակը չերթի առաջից տանելու»։

Փոքրիկ չերկրի, մի հարյուր հազարից մի քիչ ավելի բնակիչներով, իր սեփական ուժերով ցարական լծից ազատվելը մեր բոլոր բնակիչներին 1905 թվի ամառը և աշունը շատ մեծ հիացմունքով եր լցրել։ Մենշևիկներին թվում եր որ այստեղ իրականացել չե իրենց «հեղափոխական ինքնավարության» իդեալը. Թիֆլիզում նստած և ցարական փոխարքան, իսկ Գուրիայում Թիֆլիզի քթի տակին, կատարյալ ազատություն և թագավորում։ Ցեվ կովով ձեռք բերած ազատություն,—ավելացնում էին բոլշևիկները,—ահա ձեզ Ռուսաստանում հնարավոր հաջող գինված ապստամբության որինակ։

Ցեվ սրանք և նրանք, անկասկած, շատ ուժում էին կարծելով որ տեսնում են իրենց իղեալի իրականացումը։ Ամենից առաջ Գուրիան, լեռներով կտրտված, անտառներով ծածկված, իր բնական պայմաններով չեր կարող համեմատվել կենդրոնական Ռուսաստանի հետ։ Բարբիկադ չունեցող Գուրիա մտնելը ավելի դժվար եր, քան Մոսկվայի վորևե բարբիկադով պատած փողոցը։ Ցեվ չերկրորդ՝ միայն հեռվից կարող եր թվալ, որ Գուրիական անկախությունը կանոնավոր գինվորական ուժի դեմ մղած պատերազմով է ձեռք բերված։ Ճշմարիտ է, ամեն մի գյուղական վարչություն «լիկվիդացիայի» չենթարկելու դեպքում հրացաններն ու ատրճանակները խոսում էին։ Բայց հակառակ կողմը սարաժնիկների և կազակների մանր խմբեր էին. ամենամեծ կռվում, Նոսակերալիի մոտ (1905 թ. հոկտեմբեր) գործում եր պատուհասների (հեռահար կազակների) մի հարյուրակ 30 լավ գինված գորիայի գրուժիններն և մի քանի հարյուր մի կերպ գինված գյուղացիների դեմ։ Իրապես դա ավելի խաղող կռիվ չեր, քան նույն տարում դեկտեմբերին Մոսկվայի փողոցներում չեղածները, ուր, ի դեպ ասած, նույնպես պակաս մասնակցություն չեր ցույց տվել վրացական դրուժինան։ Ռուսական ուժեր առաջ շարժել Կովկասի փոխարքան չեր համարձակվում—մենք գիտենք ինչու։ Ցերը նրան ուղարկեցին Ռուսաստանից «Թարժ», պրոպագանդայի չենթարկված զորքեր, նա գեկտեմբերին հարձակման գիմից և առանց իր կողմից մեծ կորուստներ տալու «կարգը» վերականգնեց, որի չերքը Գուրիայում նշանավոր դարձավ այլվող գյուղերով և գնդակահարված մարդկանց դիակներով։ Ցեվ գուրիացիների համար վատ մխիթարանք եր այն, որ «խաղաղացնելու» հրամանատար, ցարական դահիճների առաջնորդ գեներալ Ալիխանովը հետագայում սպանվեց անարեկիչի ռումբից։ Գուրիայում այդ ժամանակ արդեն գերեզմանային հանգստություն եր իշխում։

Այդ պատճառով Գուրիայի գեպքերը չեյին կարող որինակ ծառայել վոչ հոգուստ գինված ապստամբության (այդ որինակը տվեց «կայսրության» հակառակ ծայրում գտնվող Ֆինլանդիան) և վոչ էլ հոգուստ հեղափոխական ինքնավարության։ Նրանց նշանակությունն այն է, ինչ նույնիսկ բուրժվական պրոֆեսորի աչքին է զարնել, որ այդ խիստ հազվադեպ գյուղացիական շարժման, որ դեկտեմբերում է պրոլետարիատը։

Կար Ռուսաստանի ևս մի ծայրագավառ, ուր պրոլետարական և գյուղացիական շարժման այդ կապը գրեթե այդ չափով սերտ եր. այդ ծայրագավառը Լատվիան եր։

Լատվիան «Ռոմանովների» ժառանգական կալվածք դարձավ Լենասանից, Ֆինլանդիայից և նույնիսկ Վրաստանից էլ առաջ։ Ցարական զորքերի առաջին անգամ Լատվիա ներխուժելը վերաբերում է դեռ նախառոմանովյան ժամանակին, 16-րդ դարին («Լիվոնիայի կռիվը»)։ Յերկրորդ Ռոմանովը՝ (իսկական, առանց չակերտների) Ալեքսեյը, 17-րդ դարի կեսին փորձեց Ռիգան գրավել, բայց անհաջող։ 18-րդ դարի սկզբին, հենց «Ռուսական կայսրության» կազմվելու մոմենտին, Լատվիան Եստոնիայի հետ կայսրության կազմի մեջ մտան և բաժանվեցին միայն «կայսրությունը» քանդվելու հետ, 20-րդ դարում։ «Ռոմանովներին» տիրապետությունն այնտեղ այնքան ավելի հաստատուն եր, որքան նա այստեղ պատրաստ հող գտավ. յերկու յերկրներն էլ վաղուց ազատ չեյին, նրանց գրավել եյին դեռ 13-րդ դարից գերմանացի «խաչակիրները», որոնք տիրող դասակարգ դարձան և նոր նվաճողները կարող էյին հների վրա հենվել։ Լիվոնիայի և Եստոնիայի գերմանական ազնվականությունը դարձավ «ռոմանովների» ավելի հավատարիմ ծառա, քան վրացականը։ Վերջին ցարերը նրան ռուսականից ավելի վստահելի եյին համարում և պալատական, այլև վոստիկանական բարձր պաշտոնները նրանց ժամանակ «ոստզեյան» *) ազնվականության մարդկանցով եր բռնված։ Վերջին ցարի ամենամոտ մարդկանից մեկն եր բարոն Ֆրեդերիկսը—պալատի մինիստրը, մի բոլորովին անընդունակ մարդ, բայց ցարի ընտանիքում բոլորովին «իրենց» մարդ։

Ոստզեյան ազնվականները ռուս ազնվականների ուսուցիչներն եյին շատ լավ գործերում. որինակ՝ նրանցից կենդրոնական Ռուսաստան մտավ ռոզդին Մոսկովյան «բատոզների», այսինքն գավազանների փոխարեն։ Դարձյալ նրանցից սովորեցին ռուս կալվածատերերը, թե վերքան ոգտակար է իրենց ամբողջ հացից ոդի պատրաստել, քան իրրև հացահատիկ կամ այլուր շուկա ուղարկել. «մի ձին այնքան ոդի կտանի, վորքան վեց ձին հաց կտանեն»։ Նրանք առաջինը որինակ ցույց ավին, թե գյուղացիներին ինչպես պետք է «ազատել»։ Գյուղացիներին Լատվիայում և Եստոնիայում

*) Проф. Н. Марр, «Из гурийских наблюдений и впечатлений».

*) «Ոստզեյ» «արևելյան ծով» Գերմանացիները ասում են Բալթիկ ծովին, որով հետև նա Գերմանիայից արևելք է գտնվում. այս պատճառով էլ Եստոնիան և Լատվիան «Ոստզեյան գավառներ» են կոչվում։

1819 թվին ազատելիս, նրանցից խլեցին ամբողջ հողը, այնպես որ այդ ժամանակից սկսած, եստոնական կամ լատվիական գյուղացիները կարող էին լինել միայն պարոնի հողի վարձակալ կամ այդ հողի վրա աշխատող բատրակ։

Այդ գյուղացիությունը գերմանացի բարոնների աչքում ուղղակի ցած տեսակի ցեղ էր։ Մինչև դարում այդ յերկիրը նվաճող «ասպետների» ժառանգները չէին կարողանում նույնիսկ այն մտքին վարժեցնել իրենց, որ լատիշը կամ եստը նույնպես մարդ է. ճորտատիրական շրջանում հարաբերությունները մոտավորապես այնպիսի յեր, ինչպես Ամերիկայում սպիտակ-ստրկ-պլանտատորի և նեգր-ճորտի մեջ էր։ Ցավ, ինչպես և այնտեղ, պլանտատորին ոգնության էր գնում քահանան (ներկա դեպքում նախ կաթոլիկ քահանան, մինչև 15-րդ դարը, ապա լյութերականը) և ճորտերին քարոզում էր խոնարհություն և հեզություն։ Ռուս ցարերի ժամանակ նրանց հետ սկսեց մրցել ուղղափառ քահանան։ Գյուղացիները տեսնելով յերկու քահանաների կռիվը, քիչ էր մնում ուրախանային և սկսեին հուսալ իրենց վիճակի բարելավումը. մասնավորապես լատիշները սկսեցին ուղղափառություն ընդունել։ Բայց շուտով նրանք պետք է համոզվեին, որ վորքան էլ քահանաները իրար հետ կռվեին. կալվածատերին վոչ մի մրցում չի ըստանում և յեթե նույնիսկ «պատորին» բոլորովին դուրս անեն, «բարոնը» (այդպես եին անվանում այդ յերկրներում «պարոնին»-барин), մնում է, կմնա։ Դրանից հետո գյուղացիները ուղղափառությունից սառեցին։ «Ռուսացումը» այն ժամանակ, ինչպես արդեն հիշվել է, տեղական լեզուները հալածելու մեջ էր *) և յերկիրը ռուս աստիճանավորներով վողողելու, վորոնք բնակիչների հետ խոսում եին թարգմանի միջոցով։

